




I-484







ԱՐԱՔՈ

ՊԱՏԿԵՐԱՁԱՐԴ ՀԱՆԴԵՍ

1890

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԳԻՐՔ Ա

ՅՈՒՆԻՍ



Ս. ՊԵՏԵՐԲՈՂԻՋ
Տպարան կ. հ. ՍԿՈՐՈԽՈՂՈՎԸ
1890.

Дозволено цензурою. С.-Петербургъ, 15 апрѣля 1890 года.

Типографіа И. Н. Скороходова (Надеждинская, 43).

Մ Ի Ե Ր Կ Ո Ւ Խ Օ Ս Ք

Ինչպէս յայտնի է, «Արաքսի» իւրաքանչեւր գրքի մէջ զնում
ենք այս կամ այն դրութեանը վերաբերող զանազան նկարներ,
ժուռվ 8-10, զլիաւորապէս հայկական կեանքից: Աակայն նա-
խորդ գրքում մենք զետեղել ենք նոյնաէս և մի քանի գեղ-
արուեստական նկարներ, որոնք, ինչպէս տեղեկանում ենք, լաւ
ընդունելութիւն են գտած մեր ընթերցողների կողմից:

Դ նկատի առնելով գեղարուեստական նկարների կրթիչ
նշանակութիւնը ժողովրդների լուսաւորութեան գործում, մա-
սաւանդ մեղլ հայերիս, նման մի ժողովրդի համար, որը,
ընդհանուր առմամբ, գեղարուեստական միջոցներից զուրկ է,
մենք «Արաքսի» այս տարուան առաջին գրքից սկսեալ բացում
ենք մեր հանգիստում և գեղարուեստութեանը յատկապէս
նուիրած մի բաժին, որտեղ դնելու ենք սոսկ գեղարուեստա-
կան զանազան նկարները: Այս նկարները, անտարակոյս, իրենց
խմաստի կողմից մասնաւորապէս ոչ մի կապ չեն ունենալու հան-
գիսի մէջ տապարուելիք զրուածների բովանդակութեանց հետ:
Գեղարուեստական բաժին մէջ, պարզ է, որ աշխատելու ենք
դնել առաջնակարգ նկարիչների գործերը, որոնցով իսկապէս
հայ ընթերցողը, ի միջի այլոց միջոց կունենայ ծանօթանալու
արգի գեղարուեստութեան զանազան ներկայացուցիչների ար-
տադրութեանց հետ:

«Գեղարուեստական բաժնում յայտնի նկարիչների ընտրե-
լազոյն նկարների օրինակների հետ միատեղ կ' տպենք նաև թէ
տրուելիք նկարների և նկարիչների մասին զանազան բացատրու-
թիւններ և թէ գեղարուեստական նկատողութիւններ: Անշուշտ,
մենք բաւականանալու չենք միայն հայ, ուռւս նկարիչների գե-
ղարուեստական գործերով այլ հարկ եղածին պէս կ' զնենք և
եւրոպացի նկարիչների ստեղծագործութիւնների նշանաւորնե-
րը: Այս գրքի նկարների մասին մենք կիսունք յաջորդ զրքի
մէջ արուելիք նկարների հետ միասին: Աւելորդ չենք համա-
րում նաև յիշել որ յիտաղայ զրքերում, գեղարուեստական

բաժնում, կդնենք ի միջի այլոց բացի Յ. Այվազովսկու գործերից, նաև ԼՀմ. Մղոսեանցի և Բաշինջաղեանցի նկարներից:

Խօսք չկայ, որ մեզ ցանկալի էր «Երաքտում» դնել շարունակ այնպիսի նկարներ, որոնք իրենց իմաստի կողմից միանգամայն համապատասխանէին հանդիսի նպատակին, որպէս և սպասելի է. բայց չնայելով մեր աշխատանքին, զանազան դրագրութիւններին, այնուամենայնիւ մինչև այսօր մենք կարող չեղանք ձեռք բերել հայ աշխարհի դիւթիչ բնութեան զանազան տեսարանները և նկարները. սակայն նպատակ ունենալով «Երաքսի» միջոցով ներկայացնել մեր ընթերցողներին մաս առ մաս չայաստանը և պատկերազարդ, ուստի մենք մեր այս ցանկութիւնը իրագործելու համար ձեռք ենք առնելու նորանոր միջոցների, որպէս զի օր առաջ կարող լինենք բաւականութիւն տալ բնմթերցող գասակարգի և այս կարեւոր պահանջին:

Իւրաքանչիւր պարբերական հրատարակութեան յաջողութեան գլխաւոր պայմաններից մինն է համարվում ի միջի այլոց և որոշեալ ժամանակին հրատարակուելը. սակայն սա որքան լաւ տպաւորութիւն է թողնում ընթերցողի վերայ և նորա հետաքրքրութիւնը զարթեցնում, այնքան էլ կարեւոր և շահաւետ է հրատարակչի համար. բայց չնայելով այս իրողութեանը, հայ պարբերական մամուլի մէջ երեւմն, եթէ չասենք, յաճախ, տեղի են ունենում այս տիսուր երևոյթները:

«Երաքսը» իր երեալու օրից սկսեալ հակառակ մեր բուռն ցանկութեան, երբէք նշանակեալ ժամանակամիջոցում չէ հրատարակուել, այլ իւրաքանչիւր անգամ մի կամ երկու ամսով շարունակ ուշ: Անշուշտ սա ունի իր զօրաւոր պատճառները, որոնց առաջ առնելը միշտ մեր ուժից վեր են եղել օր. յիշենք այստեղ միայն այգելքները, որոնք տեղի ունեցան ներկայ գրքի նկատմամբ:

«Երաքսի» այս գիրքը մենք, ինչպէս խօստացել էինք, ամենայն գիրութեամբ հրատարակէինք մայիսի վերջին, եթէ նախ տեղի չունենար միակ ոռու գրաշարի երկշաբթեայ հիւանդութիւնը, յետոյ «Երաքսի» գործածելիք թղթի պակասութիւնը, որից մինչև գործարանի հասցնելը, նորից մօտ 20 օր կորուստ ունեցանք. այնուհետեւ գիրքը բոլորովին պատրաստ էր յունիսի 18-ին և մենք մտադիր էինք լոյս ընծայել, ինչ նոր արգելք առաջ եկաւ յան-

ձինս պարո՞ն գրաքննիչի, որի բացակայութիւնը ստիպեց մեզ յեւ տաձգել «Արաքսի» այս գրքի հրատարակութիւնը մինչև օդոստ. Յ: Իսկ այնուհետև ուշացաւ մինչև այսօր, աեա, մէկը, հայկական շարժումների մասին մտցրած գրութիւնների պատճառով:

Ծմերես աւելորդ չլինի յայտնել մեր ընթերցողներին, որ «Արաքսը» նախ տպագրվումէ և ապա տպագրուած թերթերը ներկայացնվում գրաքննին, որի թոյլտվութիւնից յետոյ միայն վերջնականապէս տպագրվում են հանդիսի մաքուր թերթերը:

Վենք յուսով ենք, որ հայ ընթերցողը ի նկատի առնելով մեզ շրջապատող այս բոլոր ձախորդ պայմանները, հայ մարդին յատուկ բարեսրութեամբ ներողամիտ կ'գտնուի դէպի մեզ մեր ակամայ տեղի տուած պարտազանցութեանը: Վիայն այսպիսի յարաբերութիւնների վերայ վստահացած, «Արաքսը», որպէս գեռ նոր հրատարակութիւն, կարող կ'լինի յարատել իր գոյութիւնը մեր ներկայ գրականական ոչ նախանձելի ասպարիզում: Անշուշտ, «Արաքսի» ընթերցողի ներողամտութեանը մենք գիմումենք և հանդիսի այլ պակասութիւնների համար, որոնցից անշուշտ նա ևս չէ կարող զերծ լինել: Իսկ մենք էլ մեր կողմից աշխատելու ենք մեր ջանքին չափ գրաւել հայ ընթերցողի համակրանքը, որը անշուշտ, մեզ համար շատ թանգէ լինելու: Այսպէս «Արաքսի» կատարեալ յաջողութիւնը հայ ժողովրդի ընդարձակ համակրանքից և ուշագրութիւնից է կախուած. տայ Աստուած, երկու կողմից էլ յաջողութեամբ կատարուի մեր այս բաղձանքը, որով միայն «Արաքսը», հաստատ հողի վերայ կանգնած կ'լինի, որը և անշուշտ, մեր փայտայած ցանկութիւնն է:

Գյալով մասնաւորապէս «Արաքսի» բովանդակութեանը, պէտք է ասենք, որ մենք ամեն կերպ աշխատած ենք նորան հետաքրքրական գարձնել նիւթերի կողմից, սակայն առանց շեղուելու մեր գլխաւոր նպատակից՝ զբաղուել գլխաւորապէս Տաճկահայաստանի հայ ժողովրդի ուսումնասիրութեամբ:

Իւրաքանչիւր անաչառ ընթերցող, նախ քան խստօրէն քննադատելու «Արաքսը», մոռանալու չէ, որ մեր հանդէսը տարին լոյս է տեսնում երկու անգամ և ամեն մի գիրքը բաղկանալու է 12 տպագրական թերթից. ուստի, պարզ է, որ 12 թերթից բաղկացած վեցամսեայ մի հանդիսում խիստ գժուար է գոհացում տալ խստա-

պահանջ թէև բարեմիտ ընթերցողի բոլոր պահանջներին, որքան
էլ նոքա իրաւացի լինէին. օրինակ, եղան մարդիկ, անշուշտ բարի
զգացմոնքից գրգրուած, թէ ի՞նչու «Արաքսի» առաջին տարուայ
երկու գրքում բացի Տօլստոյի մի առաջից չկային և այլ բելե-
տրիստիական մեծ գրուածներ. սակայն դոքա մոռանալու չէին, որ
33 թերթից (Ա. տարին մենք 9 թերթ աւել տուինք, որով և վես
ունեցանք անշուշտ) բաղկացած երկու գրքերում արդէն տպած
էինք Շէքսպիրի «Լիր թագաւորը», որը 14 թերթի ծաւալ
ունեցաւ, ուրեմն մացեալ 18 թերթերը (մօտաւորապէս մի թերթ
բունած էր Տօլստոյի առաջը) պէտք է՝ որ վերջապէս յատկացնէինք
և այն գրութիւններին, որոնք թէ հանդիսի գլխաւոր նպատակին
էին վերաբերում և թէ հանդէսը հետաքրքրական դարձնելու հա-
մար գրականական ուրիշ բաժիններին:

Եյսու ամենայնիւ իրազեկ ընթերցողը, յուսով ենք, տեսնում
է, որ մենք մեր գլխաւոր նպատակին ծառայելուց զատ և աշխա-
տում ենք մեր կարողացածին չափ («Արաքսին») աւելի թարմ կեր-
պարանք տալ: Ենշուշտ, այս ուղղութեամբ առաջ ընթանալով,
մանաւանդ ի նկատի առնելով մեր ժամանակակից կեանքի բարդ
ու բազմակողմանի պահանջները հայկական և ընդհանուր քաղա-
քակրթական տեսակետով, «Արաքսը» շարունակ կոկուելու և յա-
ռաջադիմելու ընթացքի մէջ է գտնուելու թէ բովանդակու-
թեան կողմից և թէ տեխնիկայի: Ենտարակոյս, եթէ միայն ըն-
թերցող դասակարգը չխնայէ մեզ իր բարերար աջակցութիւնը,
մենք «Արաքսը» նաև տպագրութեան և նկարների կողմից օր ա-
ռաջ մտադիր ենք դնելու այնպիսի պայմանների մէջ, որ մրցել անգամ
ամենաշքեղ եւրոպական հրատարակութիւնների հետ:

Ի նկատի առնելով հայկական խնդրի առիթով յառաջա-
ցած իրաց այժմեան յուղից վիճակը, յոյժ կարեոր գտանք ար-
տատպելու «Արաքսին» ներկայ գրքում (157—169 եր.) «Հայաս-
տան» լրագրի անցեալ տարուայ յունուար համարից ի Տէր
հանգուցեալ Ներսէս պատրիարքի հոչակաւոր ատենախօսու-
թիւնը, որը արած է նա Բերլինի վեհաժխղովից Ամեն. Խրի-
մեան Հայրիկի և Գերասակ. Խորէն Նարպէյի վերագառնա-
լուց յիտը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐԻ ԱՌԻԹՈՎ:

Սորանից մօտաւորապէս մի քսան երկուուն տարի առաջ հայ ժողովրդի կեանքով և Հայաստան երկով հետաքրքրուող անձանց թիւը ու բաղձանքը այնքան սահմանափակ և համարեա չնշն էր, որ սակաւները գիտէին, թէ գոյութիւն ունի մի ստուար մեծամանութիւն հայ ժողովրդի, որը ապրում է իր հայրենի երկրի վերայ բայց թէ ի՞նչ վիճակ ունէր այդ հայ երկրագործ ժողովուրդը, ի՞նչ պայմանների մէջ էր ընթանում նորա խորհրդաւոր կեանքը աւազակարարոյ ցեղերի մէջ և վերջապէս ի՞նչ ապադայ էր սպասում այդ համակրելի ժողովրդին—զրեթէ ոչ ոք դիտէր և գիտենալու էլ կարիք չէր զգացվում։ Այդ ժամանակները Հայաստանը և հայ ժողովուրդը վերացական անուններ էին համարվում բոլորի համար և դոքա միայն հայոց պատմութեան մէջ գոյութիւն ունէին։ Հայ ազգը այդ միջոցում, չնայելով որ ամեն ուրեք լրագրներ էին հիմնվում ու երեխն ազգութեան վերայ ճառեր խօսվում, քաղաքականապէս խոր քնի մէջ էր մրափում։ Նրան այդ քնից սթափեցնելու համար, այն էլ մի շատ չնշն ժամանակամիջոցում, ուժգին հարուած էր հարկաւոր։ Խւ ահա այն, ինչ որ հայ ժողովրդի յառաջադէմ ոյժերը անկարող եղան տարիներով առաջ անելու, արաւ ժամանակը, որը միանգամայն բոլորը վերափոխն ու հայ ժողովրդի կենաց շրջանը դրեց իր կանոնաւոր շաւզին մէջ։

1876 թ. ոռւս-թուկք պատերազմը, անշուշա, զօրաւոր ազգեցութիւն ունեցաւ տաճկահայերի վերայ մասնաւորապէս և ամբողջ Հայութեան վերայ ընդհանրապէս։ Այդ ժամանակ խսկապէս կենդանութիւն առաւ «Հայկական խնդիրը» որը այժմ այնքան յօւղում է Թուրքիային, որքան նոյն և արեմուեան Խւրոպացին։ Յայտնի է, որ չնորհիւ և բարեհանդութեամբ Աղէքսանիլի Պ. Մարդասէր կայսեր, Ասն Ատեփանոյի մէջ կնքուած գանձագրի 16 երրորդ յօդուածով, Թուրքիան պարտաւորվում էր բարւոքել տաճկահայատակ հայերի վիճակը։ Այնուհետև Բերլինի դաշնագրութեամբ Թուրքիան աւելի ևս մէջ պար-

տաւորութիւն յանձն առաւ մեծ պետութիւնների առաջ անյապաղ մտյնելու պահանջուած բարենորոգումները հայաբնակ դաւառներում և ապահովելու հայերի կեանքը չէրքէզների և քրտերի դէմ:

Սակայն այդ ժամանակից անցել է ամբողջ տասն և երեք տարի և Ռերլինի գաշնապրութեան 61 երրորդ յօդուածը ոչ միայն չէ դործադրուել այլ աւելի ևս անտանելի է դարձրած երկարութ հայ ժողովրդի կացութիւնը իր մայրինի հողի վերայ: Այդ օրից սկսած Տաճկահայաստանը հայ մարդի համար խօսքի բուն նշանակութեամբ արիւնահեղութեան և հարստահարութեան կատարեալ ասպարէզ դարձած, ուր աւազակաբարոյ քրտերի ու չէրքէզների արիւնարբու հրոսակները էլ ոչ հայի սրբութիւն—եկեղեցին ևն թողնում, ոչ հայ օրիորդների կուսութիւնը և հայ կնօջ համեստութիւնը յարգում, ոչ արտեր ու կալուածներ, և տուն ու տեղ խնայում, այլ բոլորը պատահածին պէս քանդում ու պղծում, այրում ու աւերտում, սպանում ու թալանում ոչ միայն կալուածտէրը և վաճառականը, այլ և խեղճ մշակը ու երկրագործը, պանդխոտութիւնից վերագրածող թշուառ բանուորը ու ուսուցիչը, գեղջուկը ու գեռահաս մանուկը: Խսկ թուրք տգէտ և մոլեռանդ պաշտօնեաները, որոնք որպէս մի պատուհաս, կոչուած ևն կտուավարելու անմեղների արիւնով ներկուած մի արդիւնաւոր երկիր իր քրիստոնեայ ազգաբնակութիւնով, իրենց կաշառակերութիւնով, օրինազանցութիւնով, զանազան լրբութիւններով և գարշելի միջոցներով հօ աւելի ևս հարսահարում ևն բնիկ հայ ժողովրդը և ոյժից միանգամայն ձգում: Խւ այլապէս էլ սպասել անկարելի է, քանի որ Թուրքիան փոխանակ Ռերլինի դաշնադրութեան համաձայն երկրի մէջ բարենորոգումներ մարցնելու, իր հպատակ հայերին պաշտպանելու քրտերի և չէրքէզների դէմ, ընդհակառակը Խւրոպից քթի տակ ամենասոսկալի ծանր միջոցներով հայերի վնասելուն ու երկրից նոցանուազացնելուն է նպաստում և այդ խաղաղ ժողովրդի տեղ չէրքէզներ բնակեցնում, որով աւելի ևս անտանելի կացուցանում թշուառ ժողովրդի վիճակը:

Ի հարկէ տասներեք տարուայ ընթացքում Խւրոպան շատ առիթներում կարող էր ստիսպէլ Թուրքիային գործադրել նորա

յանձն առաջ անցետաձգելի պարտաւորութիւնները հայերի նկատմամբ, սակայն ինչպէս փաստերը շարունակ ցոյց են տալիս, Եւրոպան խիստ սառն է վերաբերում իրեն վերաբերելիք այդ յօդուածի պաշտպանութեան վերայ. այլ նա կարծես այն ժամանակն է ուղղում մի երկու խօսք ասել ու մի կերպ շարժուել երբ Հայաստանցի անպաշտպան երկրագործը թշուառութեան անդունդի մէջ այլ ևս անկարող լինելով տանել թրքական լուծը, համարձակվում է դիմել զէնքի ոյժի, գեթ այդպիսով մի կերպ ազատութիւն գտնել սպառնացող օրհասից:

Ենշուշտ, եթէ Թուրքիան հասկանար իր կենսական շահերը, եթէ նա ճիշտ ըմբոնէր իրեն կատարելիք գերը գէպի իր հպատակ ազգութիւնները և ըստ այնմ ապահովէր իր կազմակերպութիւնը, որպէս այդ վայելէ ներկայ դարու ամեն մի օրինաւոր պետութեան, հասկանալի է, որ նա այնպիսի անմիտ և ապերախտ կերպով չէր վերաբերուի գէպի իր ընտիր ու խաղաղ հայ հպատակ ժողովուրդը, որը չնայելով և իր 2-3 միլիոն թուոյն, իր արդիւնաւէտ աշխատանքով պետական գանձին աւելի գանձ է նպաստում, քան Թուրքիոյ բոլոր միւս հպատակ ազգութիւնները միասին վեր առած: Միթէ Թուրքիան իր պետական մարդիկներով մինչեւ հիմայ չէ կարողանում հասկանալ այն մի ամենատարբական ձշմարտութիւնը, որ իւրաքանչիւր պետութեան ոյժը նորա հպատակ ժողովորդի բարութեան մէջ է կայանում. ուստի որքան կանոնաւոր, և ծաղկած վիճակի մէջ լինի մի պետութեան հպատակ ժողովուրդը, այնքան ևս նոյն պետութեան ոյժն ու զօրութիւնն է աւելանում և հաստատ գիլք բռնում. ընդհակառակը մի տէրութիւն երբէք չէ կարող երկար ժամանակ գոյութիւն ունենալ և նա ոյժից օր առաջ կընկնի, երբ նորա հպատակ ժողովուրդը խեղճ, հարստարուած ու կեղեքուող պայմանների մէջ է անցկացնում իր վիճակը: Միթէ փորձերից և շարունակ իրողութիւններից յետոյ Թուրքիան գեռ չգիտէ որ հպատակներին հարստահարելը, նոցա միշտ կեղեքելը ու անարդարութեան մատնելը վերջապէս սաստիկ գրգռում է առաջ բերում նոյն իսկ ամենախաղաղ և զէնքից խուսափող ժողովորդի մէջ. իսկ թէ շարունակ զրգութմները որ աստիճան վսասակար և տխուր հետեւանքներ են առաջ բերում, դա ևս

կարծում ենք պարզ պէտք է լինի իւրաքանչիւր մարդու, և
ոչ միայն պետութեան:

Եյդ ծանր և տխուր հետեանքները այժմ օր օրի վերայ
աւելի բնական և զգալի են գառնում, քանի որ ինքը թուր-
քիան է մեծ եռանդով նպաստում դոցա երեան գտլուն: Մին-
չեւ այժմ թուրք պաշտօնեաները իրենց կեղեքութներովը ու
օրինաց պարտաղանցութիւններովը հանդիրձ այն աստիճան
լիրք քայլ չէին արած, որ թոյլ տային իրենց անակաս առնել
սութաններից չորհուած առանձնաշնորհումները և արձակ
ու համարձակ յանդգնութիւն ունենալ ոտք կոխել մոլի ամ-
բոխով ու զինուորներով հայու նուիրական սրբավայրերը և
տեղի տալ այնաեղ իրենց պիզծ ու ստոր արարտունքներին:
Իշարկէ այսպիսի գէպքերում, խաղաղ ժողովուրդը տեսնե-
լով, ամեն ինչ սրի ու հրոյ ճարակ անելուց յետոյ և իր զա-
րաւոր աւանդութիւնների ու սրբավայրերի գէմ զաղանային
սոսկալի բռնաբարութիւնները, անկասկած, նա այլ ևս հար-
կաւոր առիթներում անկարող է զսպել իր խոհականութիւնը
ու կրքերը և զէնքը ձեռքին չպաշտպանել իր ամենաօրինաւոր
իրաւունքները:

Ընթերցողներին լրագրութիւններից անշուշտ յայտնի են
այն յայտնի և խիստ յուղեւ գէպքերը մեր հայրենակիցների
հետ, որ այժմ մեր աչքի տուած տեղի են ունենում Տաճկա-
հայտապահնի զանաղան յայտնի և անսոյտ կենդրոններում: Ա-
լոշիերա, Երզում, Պան, Մուշ են, և այլն, ահա այն կեն-
դրոնները, ուր մեր հայրենակիցների արիւնն է հոսում, սրբա-
վայրերը պղծվում և հայ օրիորդների ու արիւնանց կուսու-
թիւնը ու ամօթիածութիւնը անտես առնվում զաղանային
վայրի արարտունքների առած:

Եյս բոլոր գէպքերի, մանաւանդ Պօլսոյ մէջ տեղի ունե-
ցած հուժկու ժողովրդային ցոյցի պատճառով նորից եւրո-
պական քաղաքականութեան հողածութեան առարկայ է գառ-
նում Հայկական խնդիրը: Նորանոր խժեժութիւնների առի-
թով, ոչ միայն հայերը, այլ և ամենահեռաւոր երկների հասա-
րակութիւնները սկսում են յուղգիլ և մեծ հետաքրքրութեամբ
սպասում, թէ արդեօք ի՞նչ ելք կ'արտուի այս բոլորին և վերջ
կ'լինի գէթ այժմ թուրքից հայերի տանջանքներին թէ ոչ:

Հայկական խնդրով հետաքրքրվում են բոլոր պետութիւնները, մանաւանդ, ինչպէս և սպասելի է, Անգղիան և Ռուսաստանը: Օր չէ անցնում, ինչ եւրոպական թերթիւններ, առաջնորդող յօդուածներ Հայկական դատի պատճառով: Անգղիացոյ և ռուսաց թերթիւր ընդհանրապէս մեծ համակրութեամբ են խօսում հայերի մասին և Թուրքիոյ ուշաղրութիւնն են դարձնում այս եղելութիւնների առաջն առնելու վերայ:

Հեռագիւններից և զանազան թղթակցութիւններից յայտնի է, որ մեծ տէրութիւնները, մանաւանդ Անգղիան, իրենց գետանների միջոցով խիստ ծանուցազրիր են ուղղել Հայկական ինդրի առիթով Բարձրագոյն Դրան: Յայտնի է նոյնպէս, որ Պօլսոյ Խորէն պատրիարքը վերջին դէպքի առիթով սուլթանին ներկայացրած հրաժարականը ոչ մի կերպով չէ ուղում յետ վեր առնել այլ պնդում է միշտ իր հրաժարման վերայ: Չնայելով սուլթանի երկիցս առաջարկութեանը, Աշրջեան պատրիարքը հրաժարվում է մինչև անգամ ժամանակաւորապէս վարել պատրիարքական աթոռը, քանի որ տէրութիւնը չէ համաձայնում ընդունել պատրիարքի ներկայացրած պայմանները, որոնց հիման վերայ սուլթանի կառավարութիւնը պարաւորելու է երեք ամսուայ ժամանակամիջոցում կատարել այն բոլոր բարձի թող արած խնդիրները, որոնք յիշած է պատրիարքն իր ներկայացրած յիշաակազրերի մէջ:

Վեծ պետութիւնների ծանուցազրիրց յետոյ, սուլթանը, ցանկանալով իբր գոհացում տալ իր հպատակ հայերի պահանջներին և այզպիսով հանգստացնել վերջին դէպքերի առիթով առաջ եկած հստարակութիւնների յուղիչ վրզով մունքները, կազմել է անուանի հայերից մի յանձնաժողով Հայաստանի մէջ իբր մացնելիք բարենորոգման ծրագիրը մշակելու համար: Եյդ անուանի հայերն են ի միջի այլոց, գանձային նախարար Յակոբ փաշան, արտաքին գործոց նախարարի օդնուկան Նրթին փաշան, արդարագատառութեան նախարարի օդնական Վահան Էֆէնդին, Անրվիչն Էֆ. Լայլ: Աորա հանգէպ, Խըլտղի ապարանքում սուլթանի նախագահութեան ներքոյ կազմուած է մի այլ յանձնախումբ, որը քննելու է «Հայաստանի բարենորոգման միջոցները մշակելու առիթով կազմուած յանձնա-

ժողովի ծրագիրը։ Այս երկրորդ յանձնախումբը կազմուած է Տերվիշ և Ֆէվէդ փաշաներից և թլքացած Շահպաղ էֆ։ Ինչպէս եւրոպական մամուլը հաղորդում է, հայերից կազմուած յանձնաժողովը իր առաջին աշխատութիւնը արդէն ուղարկած է քննիչ յանձնաժողովին, որը, նոսյելով առաջ բերուած բարենորոգութիւնից համեստ կիրապարանքին, այնուամենայնիւ կարծում են, թէ դժուար համաձայնուի նոցա հետ։

Մեր կարծիքով, դոնէ որքան որ գիտենք և ճանաչում ենք այժմեան Թօռլքիային, ներկայ պայմաններում այս բոլոր յանձնաժողովներից և զանազան խոստութիւններից յօգուտ տաճկահայ դիւղացուն բնաւ ոչ մի բան յուսալու չէ շատ և շատ յարգելի պատճնառներով։ Նախ այս վերջին տամներեք տարուայ ընթացքում այսպիսի յանձնաժողովներ նոյն հայկական խնդրի առիթով կազմուել ու լուծուել է շատ և շատ անգամ և, անշուշտ, միշտ բացասական հիտեւանքով. երկրորդ, յանձնաժողովները միայն այն ժամանակ են ունենում իրենց կարեւորութիւնը ու նշանակութիւնը, երբ յիրաւի կազմվում են իսկապէս գործ տեսնելու և ոչ թող փելու ու խաբերայութեան նպատակով ժամանակ շահելու. մանաւանդ որ քաղաքական յանձնաժողովի անդամները լինելու են մի որոշ քաղաքական սկզբունքի տեր անձինք և ազատ մտածելու ու գտատելու համար խուսափելու վիճակի մէջ չեն զտնուելու. բայց թէ այս բոլորը, մանաւանդ վերջին երեսյթը, որ աստիճան սեղմուած դրութեան մէջ է գտնվում Թօռլքիայում, դա կարծեօք ոչ ոքի համար գաղտնիք չէ, ուրեմն ի՞նչ կարելի է սպասել մանաւանդ, այնպիսի մի յանձնաժողովից որի առանց այն էլ խղճալի աշխատութիւնները ևս կոչուած են քննադատելու այնպիսի մոլիուանդ և տղէտ անձինք, ինչպէս են Վերվիշ փաշայ և իր ընկերք։ Ծիծաղելին այն է, որ այս քննիչ-մասնաժողովի անդամներից մինն էլ աղջուրաց Շահպաղ էֆ. է, որի միակ ներկայութիւնը այդ խմբում զղուանք է ազգում։

Եթէ այժմեան Թօռլքիոյ պետական անձինքների մէջ, որոնք անտարակոյս բարձրագոյն պաշտօնների գլուխ են անցած, գտնվէին իրենց մոլիուանդութեամբ հանդերձ քաղաքական հասուն գլուխներ, կամ բարձրագոյն եւրոպական կրթութիւն առած մանսագէտներ, դեռ ևս կարելի էր փոքր ի՞նչ

բան յուսալը բայց ցաւը հենց նորա մէջ է կայանում, որ Թռութիոյ արդի պետական անձինք բոլորն էլ՝ Քեամիլ և Սայիս փաշանելը իրենց պարագուխ ունենալով (ի հարկէ բայց հայերից, որոնք ներկայ պայմաններում ոչինչ էլ չեն կարող անել ոլքան էլ նոցա չյանձնեն Հայաստանի բարենորոգումների ծրագիրներ կազմելու), տողորուած են ասիսկան փթած հին զաղափարներով, և մոլեռանդութեան ու տղիտութեան սարսափելի տիուր հետեանքներով։ Եյլապէս, Թռութիան օր օրի վերայ այսպիսի տիուր պատկեր չէր ներկայացնի իր ամեն մի ինդրում, մանաւանդ Տաճկահայաստանի նկատմամբ։

Եյլապէս, մենք ի նկատի առնելով, որ Սուլթանի յանձնաժողովներից և նորա պետական մարդիների քաղաքականութիւններից բնաւ երբէք բան յուսալու չէ, ինչ խոստումներ էլ որ չանեն, մանաւանդ որ գործի զլուխ գանուող արդի պետական անձերն իրենց հայատեացութեամբ ևս գեռ Զէյթունցոց խնդիրների ժամանակից լաւ յայտնի են, ուստի միակ և եթ միջոցն է հայկական խնդիրը Թջաղցային աշխարհ-նեանց ժողովն չենցնելը այս աեսակէտով պատրիարքական փոխանորդի առաջին գործը սա է լինելու. օր առաջ ոյժ դրուելու է այս խնդիրն և անդագար գորա իրականացման համար աշխատելու։ Սորա հետ միասին աղոյու միջոցներով հրաւիրելու է Սուլթանի Ռարձր ուշագրութիւնը ժամ առաջ հրահանգներ հանելու Տաճկահայաստանի մէջ տիրող անիշխանութիւնը վերջ տալու նպատակով, որպէս զի թշուառ ու տառապեալ հայ ժողովուրդը գեթ մի վայրկեան հանդիստ ունենայ իր մայրենի հողի վերայ։ Մենք ցաւում ենք, որ Երդուլ Համիդի նման խելացի սուլթանը տարիներով առաջ աչք է դոցել տեսնելու տաճկահայի թշուառութիւնը ու նորա անտանելի վեճակը, որով և առիթ տուեց վերջապէս խեղճ երկարործ հային իր անտիրական վիճակում գեթ ինքը իրեն զէնքը ձեռքին պաշտպանէ իր պատիւր, ստացուածքը և կեանքը անօրէն աւազակների և կաշառակեր ու մոլեռանդ տաճիկ պաշտօնեաների դէմ։ Մեր հաստատ համոզմունքն է, որ տաճկահայը երբէք չէ կամեցել ներկայ պայմաններում զատուել Թռութիոյ պետութեան շըջանակից, այլ նա իր մայրենի երկրի վերայ կեղեքիչ և հարստահատուած վիճակից ցանկանալով ա-


զատուիլ և մարդավայել կեանք վարել հազար անգամ իր վեհապետի օգնութեան է դիմել զանազան աղերմներով. բայց քանի որ նոյն աէրութեան շահերին նպաստարար այս օգնութիւնն ևս մերժուել է հայ գիւղացուն, ուրեմն մի՛թէ զարմանալու տեղեք կայ, և մի՛թէ բնական չէ, որ հայ գիւղացին ստիպուած լինէր վերջ ի վերջը պահպանողական գիւղը բռնելու և ի դէպս յարձակողականի անցնելու:

Հայ գիւղացու շարունակ հարստահարութեան վերայ, մեծ պետութիւնները ի հարկէ պարտաւոր էին և պարտաւոր են մեծ ուշադրութիւն դարձնել, քանի որ նորա Տերլինի դեսպանաժողովում կազմած 61 յօդուածով այդ պարտաւորութիւնն յանձն են առած իրենց վերայ: Իացի սորանից 1878 թ. յունիսի 4-ի դաշնադրութեամբ, որով Աիսլուս կղզին անցաւ Ենգղեոյ ձեռքը, Վահկորիսյ թագուհու կառավարութիւնը մասնաւորապէս յանձն առաւ հսկելու և աջակցելու Տաճկահայաստանում բարենորոգութիւնը մտցնելուն մէջ: Իայց աշխարհին յայտնի է, որ այս ուղղութեամբ ոչինչ չեղաւ և հայ գիւղացու թշուառութեան մէջ Ենգղեան ևս իր մաս յանցանքը ունի: Եյտեսակէտով իհարկէ Ենգղեան գէմէտ այժմ, եթէ նա չէ ուզում ապերախտ գտնուել գէպի հայ գիւղացին, զօրաւոր միջոցների ձեռք զարնելու է թէ իր պարտաւորութիւնները կատարելու Աիսլուսի դաշնադրութեան համաձայն և թէ մեր թշուառ ժողովրդի դատը պատար պաշտպանելու համար:

Մեր կարծիքով, այժմ աւելի քան երեք նպատակայարմար է թէ մեծ աէրութիւններին ընդհանրապէս և թէ Ենգղեային մասնաւորապէս յիշեցնելու իրենց պարտքը. ուստի Տաճկահայոց պատրիարքարանը թող ամեն միջոցներ ձեռք առնի հրաւիրելու աէրութիւնների ուշադրութիւնը իրենց այս պարտաւորութեան վերայ և խնդրէ միջազգացին դեսպանաժողով կազմել հայկական թերի մնացած լինգիրը վճռելու:

Դործի մեծ կարևորութիւնը ժամանակի չէ սպասում, ուստի սկսելու է իսկոյն, մասնաւանդ որ Ենգղեան ու Ուռստատանը կաջակցեն տաճկահայերին իրենց այս խնդրում: Յանկանք ուրեմն շուառով իրազործուած տեսնել հայ ժողովրդի բարօրութիւնը առաջ բերող դրական միջոցները:





Ա. Է. ՀԱՄԻԼՈՆԻ

ՕՐՅԱԿԻԹԻՒՆ ՍՐԲԱԼՈՅ ՄԻՒԾՈՆԻ

Ներկայ 1890 տարւոյ սեպտեմբեր 30-ին
ի տօնի Վարագայ Ս. Խաչի՝ ըստ յաջողելոյ
Տեառն Աստուծոյ՝ Վեհափառ և Սրբազնա-
զոյն Կաթողիկոսն ամենայն Հայոց Տ. Տ. Մա-
կար մտադրեալ է Ս. Միւռօն օրհնել:

Ս. Միւռօնի օրհնութիւնը Հայաստան-
եայցս եկեղեցւոյ նուիրական արարողու-
թիւններից առաջին լինելով, Վեհ. Հայրա-
պետք բարեհաճեցաւ կանխաւ ի լուր ամե-
նեցուն հրատարակել, որպէս զի ցանկացող
բարեբաշտ հոգևորականք և աշխարհականք
ըստ նախնի սովորութեան ի ժամանակին
ժամանեն ի Մայր Աթոռս և վայելեն Ս.
Միւռօնի օրհնութեան շնորհը:

—♦—

*

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ԽՐԻՍԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ ԵՈԹԱՆԱՍՆԱՄԵԱՅ ՏԱՐԵԴԱՐՉԻ ԱՌԻԹՈՎ:


«Ներկայ տարուայ ապրիլ ամսի 4-ին կատարուեցաւ հայ ազգի ամենաժողովը գական ու նշանաւոր անձի եօթանասնամեայ տարեդարձն։ Ով գործում է այսօր հայութեան հասարական ասպարիզում, ով որ հետաքրքրվում է հայութեան կեանքով նորա բաղմազիմի երեսյթներում, նա անշուշտ այդ օրը սրտանց մասնակցել է այդ մեծ անձի տարեդարձի հանդիմն, և մաղթել պատկառելի ծերունուն դեռ շատ երկար և երկար տարիներ ի շահ հայ գործին։


«Երաքսի» առաջին տարուայ երկրորդ զբքում մենք արդէն տպազրած ենք Գ. Ե. Ա. եպիսկոպոսի գողտորիկ գրչով զրուած Խրիմեան Հայրիկի հետաքրքրական կենսադրութիւնը, որը նախընտրելի է միւս կենսադրութիւններին մէջ իր լիութեամբ և ճշգրտութեամբ։

Վիենոյն զբքում խօստացել էինք յաջորդ գրքերից մինում տեղաւորել Հայրիկի գործունէութեան ընդարձակ տեսութիւնը իբրև եկեղեցականի, գրադէտի և ազգային վարչական գործիչն։

Այս մեր խօստումը մենք անշուշտ կատարելու էինք այս զբքում, սակայն մեզնից անկախ պատճառներով զա այժմ ևս յետաձգվում է կարճ ժամանակով։

«Երաքսը» որ դեռ իր երեալու օրից ողջունում էր Խրիմեան Հայրիկին, ինչպէս մարմնացած հայութեան տիտարի, անտարակուսելի է, որ թէև փոքր ինչ ուշ այնուամենայնիւ այսօր ևս այս տարեդարձի պատեհ առիթով նուիրական պարտականութիւն է համարում մաղթել Ասապուրականի Խրծուին դեռ շատ երկար ու երկար տարիներ։







ԱՐԱՐԱՏԻ ԴԱՅ

Հրատ. «Արարա» Հանգիսի



ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Ինչպէս յայտնի է, այսօրուան օրս զանազան պետութիւնների հապատակ հայերի յառաջադիմութիւնը և ինքնաճանաչութեան գաղափարի զարգացումն ներգաշնակ վեճակի մէջ չեն գտնվում: եթէ փոքր ինչ լրջօրէն նայենք, կտևնենք, որ ամենուրեկ յաճախ տեղի են ունենում մի կարգ ձախորդ պայմաններ այս ու այն ներքին ու արտաքին պատճառներից յառաջայած, որոնք խիստ վատ ազդեցութիւն են ունենում մեր ժողովրդի յառաջադիմութեան վերայ և որոնք արգելք են լինումնորա ինքնաճանաչութեան կանոնաւոր զարգացմանը:

Այսպիսի բացասական պատճառները, անշուշտ բնական են ամեն ազգի կեանքում, մանաւանդ փոքր և այն էլ հապատակ ազգութիւնների մէջ նոցա ինքնաճանաչութեան առաջին քայլերում: և որքան բարգ ու մութն են այս պատճառները, այնքան աւելի ևս նոցա թողած վնասակար հետեւանքը անժխտելի են: սակայն այսպիսի ազգերի տոկոնութիւնից և բարոյական ներքին ոյժիցն է կախուած ուսումնասիրելու այս պատճառների շարժառիթները և կարողացածին պէս դիմադրել սպառնացող վտանգին ու վերացնել այդ վտանգները առաջնող պայմանները: Այսպիսի գեպքերում, քաղաքականապէս ոչ զարդացեալ ժողովրդների մէջ ի հարկէ, երեան են զալիս գործելու հասարակութեան յառաջադէմ ոյժերը, որոնց մէջ նշանաւոր աեղ են բռնում կրօնի ներկայացուցիչները, որոնք մօտ առնչութիւն ունենալով ժողովրդի առանին կենաց հետ, նորա միակ մասնելի ոյժերն են ներկայանում:

Մանաւորելով մեր խօսքը հայ ազգի կրօնական ներկայացուցիչների մասին, պէտք է ասել, որ հայ հողեւորականութեան դերը հայ ժողովրդի մօտաւոր և բարոյական կեանքում, էլ չենք ասում կրօնական, միշտ նշանաւոր է եղած և լինելու է,

քանի որ մինչեւ այսօր էլ մեր ներկայ պայմաններումնա է այսպէս թէ այնպէս մեր ժողովրդի՝ եթէ ոչ ամբողջի, գեթ ստուար մեծամասնութեան՝ մտաւոր առաջնորդողը հանդիսանում: Եւ սա շատ հասկանալի է: ըստ որումմի ժողովուրդ, որի ստուարացոյն մեծամասնութիւնը երբ գեռ գտնվումէ քաղաքակրթութեան ստորին աստիճանի վերայ, երբ ազգային խնդնաճանաշութեան դադասիարն անդամնորան համարեա անդրոնիլի է, մասնաւանդ երբ այսպիսի մի ժողովուրդ չունի և քաղաքական անկախ դրութիւն, պարզ է, որ այդ ժողովրդի ազգային կրօնական կրթական խնդրում միակ գործիքը ներկայանայ հոգեւորականութիւնը ու corpose. Սորանից հետեւում է և այն, որ այսպիսի ժողովրդին ծառայելու համար այժմեան պայմաններում ինքը կեանքը արդէն ցանկացողի համար գծել է և այսուղիղ ճանապարհը—հոգեւորական ասպարէզը:

Ուրեմն քանի որ հայ հոգեւորականութեան կոչումը այսքան նշանաւոր է ու ազգեցիկ և ընդարձակ գործունեութեան համար նպաստարար, անշուշտ սպասելի է, որ այս կոչման պատկանող անձինք օգտուելու են իրենց պատկառելի դիրքից և աշխատելու իրենց ստանձնած նույիւական պաշտոնին մէջ շօշափելի զարկ տալ ժողովրդի կենսական հարցերին, որով միւնցն ժամանակ ազդի առաջ կրարձրացնեն և իրենց կոչմաննշանակութիւնը ու հետեւապէս աւելի պատուաւոր դիրք կ' բռնեն:

Եյսպէս գործունեայ հայ հոգեւորականը մեր կեանքի պայմանների շնորհիւ մօտ յարաբերութիւնների մէջ գտնուելով հայ գիւղացու, արշեստաւորի, նոյն և վաճառականի հետ, կարող է մեծ դիւրութեամբ կենսական նշանակութիւն ունեցող շատ գործեր տեսնելու ի շահ իր հօափ կարիքներին: Բացի կեանքի պայմանները, նոյն ինքը ժողովուրդը իր ուղղափառ եկեղեցովը հանդերձ հայ հոգեւորականին դրած է դարերից ի վեր, նոյն իսկ քրիստոնէութեան ազգովին ընդունելու օրից սկսած այնպիսի մի վիճակի մէջ, որ հայ քահանայի և հայ մարդի մէջ կազմուել է այն բարցյական մեծ կապը, որը կայ և այժմ մայրենի հողի վերայ: Եւ այս կապը ամենուրեք զօրաւոր է եղած այն ժամանակիները, երբ իրենք հոգեւոր հայրերը կարողացել են շարունակ բարձր պահել իրենց կոչումը արժանավայել գործերով: Եյս կապը միշտ աւելի ազգեցիկ է

եղել այն ժամանակ օրինակ, երբ հայ ժողովրդին որևէ վտանդ
է սպառնացած թէ ներսից և թէ դրախ: Եւ սա շատ բնա-
կան է: Անհատի, հասարակութեան, նոյն և ազգի բարոյա-
կան մեծութիւնը աւելի աչքի է զարնում այն ժամանակնե-
րում, երբ կեանքը ուժեղ մաքառում է առաջ բերում և ժո-
ղովրդին ձգում լարուած վիճակի մէջ. սակայն որքան բա-
րերազդ և որքան մէծ է այն ժողովուրդը, որի մէջ նորա աղ-
դային բարոյական մէծ արտայացառութիւնները երեան ևն գա-
լիս կամ կանոնաւոր զարգացում ունենում ոչ միայն ճգնա-
ժամերում, այլ նորա կեանքի և խաղաղ ընթացքի միջոցներում:

Նթէ այսպիսի մի երջանիկ վիճակի մէջ ընթանալը և հայի
նկաքին կեանքը, խօսք չկայ, որ նա այժմեան իսկ ցիր ու ցան
վիճակի մէջ աղջային կրօնական — բարոյական տեսակէտից
կ'կազմէր այն մարմինը, որը պահպանելով նորա գոյութիւնը,
իւրաքանչիւր բարեկիրթ հայի բաղդանքը համարելու էր և ո-
րին բնաւ սպառնալ չէին կարող ոչ Նիւ-Նորքի և Անդիայից
հեղեղած ոսկիները և ոչ կաթոլիկութեան աղդամնաս վար-
տապետութիւնը, և ոչ այլ և այլ վտանդներ:

Կհա թողնելով մի կրղմը քաղաքակրթութեան այն ամեն
տարելքը, որոնց միջոցաւ կարողութեան չափ աղջը այժմ իր
բարոյական կեանքի զարգացմանն է ձգուում, մեղ կարեւոր և
անհրաժեշտ է միևնույն ժամանակ յառաջադիմութեան ներդաշ-
նակ հոսանքի առաջը չառնելու համար ուշադրութիւն դարձ-
նել և այն բնական ոյժի վերայ, որը ներկայումն իր գործու-
նէութեամբ աղդի գոյութեան պահպանմանն աւելի քան ով
կարող է նաղասակը:

Եյդ ոյժը, պարզէ, որ հայ հոգեւորականութիւնն է: Եյժմ
տեսնենք թէ նա ո՞րքան է համապատասխանում մեր ներկայ
կեանքի պահանջներին: Եյս հարցին պատասխանելու համար,
աւելորդ չէր լինի, մի թոյլ հայեացք ձգել և մեր մօտաւոր
անցեալի վերայ: Խօսք չկայ, որ սորանից մօտաւորապէս մի
քառասուն, յիսուն տարի առաջ հայ հոգեւորականութիւնը
ընդհանուր առմամբ կրթութեան և զարգացման կողմից հա-
մեմատարար աւելի տգէտ և աւելի նեղ հայեացքների տէր էր,
քան այժմ մեր օրերում, թէև կենցաղաւորութեան կողմից

աւելի համեստ ու պարկեշտ. միևնոյն ժամանակ զիտելու է և այն, որ այն ժամանակուայ հայ հասարակութիւնն էլ աւելի ևս սահմանափակ ու նեղ կեանքով էր ապրում և այժմեան հայերից քաղաքակրթութեամբ և ազգային ինքնաճանաչութեամբ աւելի ստոր աստիճանի վերայ գտնվում: Այսպէս, հայ հոգեւորականը սորանից կէս դար առաջ նայելով իր սահմանափակ կրթութեանը, նա այնուամենայնիւ ներքին աշխարհահայեցողութեամբ, մտաւոր պաշարով համարեա միշտ բարձր էր կանգնած իր հօտի վերայ, որի պատճառով էլ հայ հոգեւորականի վարքն էլ անշուշտ, ժողովրդի աչքում միշտ բարձր էր: Եւ իսկապէս ասած ժամանակակից հայի կեանքն էր գծել այդ ճանապարհը իր հոգեւոր հովուի համար, ըստ որում ժողովրդին վերաբերեալ ինչ գործեր կամ ինսդիրներ չ'արուցուելին, միշտ հայ հոգեւորականը մասնակից էր այդ բոլորին. առանց նորան ոչ մի հանդէս, ոչ մի գործ կատարել չէր կարելի, ինչու որ հայ հոգեւորականը խօսքի բուն նշանակութեամբ իր հօտի հասարակական մարդը, գործիչն էր ներկայանում: Ով որ փոքր իշատէ ծանօթ է մեր թէ մօտակայ և թէ հեռաւոր անցեալի հետնա անշուշտ միևնոյն եղթակացութեանն է գալու: Վեր առնենք նոյն իսկ մեղ ոռւստհապատակ հայերիս. մեր հասարակական կեանքի, մամուլի սկզբնապատճառները, գեռ այնպիսի մի ժամանակ, երբ տասնեակ թուով բարձրագցն ուսումաւարտներ ունենաք, համարեա թէ կրկին հոգեւորականներն ևս ներկայանում յանձննս Գաբրիէլ քահանայ Պատկանեալցի, Ստեփաննոս քահ. Մանդինեանցի և այլոց: Սակայն ժամանակի ընթացքում օր առաջ յառաջադիմութեան հոսանքի աղեցութեան ներքոյ հայ հոգեւորականը կրթութեան կողմից շարունակեց մնալ իր սահմանափակ նախկին շրջանին մէջ, այն ինչ ժողովուրդը դարաւոր թմրութիւնից սթափուելով սկսեց կամաց կամաց յառաջադիմել և դեռ վաթսունական և եօթանասանական տարբիներում հայ աշխարհական դասը արդէն անհամեմատ գերազանցում էր հոգեւորական դասից, ի հարկէ ընդհանուր տեսակէտից նայելով, ըստ որում, ի պատիւ մեր հոգեւորականութեան ասելու է, որ նորա մէջ մեր ակնարկած ժամանակն էլ եղել ևս բացառութիւններ, որոնց առաջ ծշմարիտ հայը միշտ երախտագիտութեամբ է լցուած:

Այսպէս ժամանակի հետ փոխուել են և փոխվում ե. մեր կեանքի բազմակողմանի կենսական պահանջները: Խթէ կէս դար առաջ հայ հոգեւորականներից պահանջվում էր միայն իր եկեղեցական պարտաւորութիւնների մէջ անխախտ լինել և փոքր ի շատէ օրինաւոր վարք ունենար, այժմ մեր օրերում բայցի այս պարտաւորութիւններից, պահանջվում է նորանից զլիսաւորապէս և մի որոշ աստիճանի դրական կրթութիւն, լայն աշխարհահայեցողութիւն, որ նա կարող լինի թափանցելու, հասկանալու իր հօտի կարիքը և ըստ այժմ բաւարարութիւն տայ այդ պահանջներին. այլապէս, ինչպէս նա կարող է հովուել մի հասարակութիւն, որը մօտաւորապէս նրանից բարձր է և որի շահելը նա հասկանալ չէ կարող: Ուստի որ հայ հոգեւորականը կարող լինի իր հօտի յառաջադիմական գործին ծառայել, նորա մէջ գիտակցութիւն զարթեցնել լսու ազգեցութիւն ունենալ նորա մէջ կրօնական զգացմունքը վառ պահել տալ և ազգային եկեղեցու պայծառութեանն նախանձախնդիր գարձնել պէտք է որ նա՝ լինի քահանայ, վարդապետ, եպիսկոպոս իր կոչմանը համապատասխան ուսմունք ու կրթութիւն ունենայ, և գործունէութեան սէր զգայ ազգային եկեղեցական տապարիզում:

Եժմեան հայ հոգեւորականներից կեանքը մեծ պահանջներ ունի, մեր ժողովուրդը յառաջադիմական այն աստիճանների վերայ է գտնվում, որ նորան նորա ամեն մի քայլում զեկավար, առաջնորդ է հարկաւոր, առանց որին նա անել վիճակի մէջ է ընկնում: Նրին պարագն է կամ ով աւելի միջոց ունի ժողովուրդի հետ ամեն օր շփուելու, նորա վիճակին տեղեակ լինելու, եթէ ոչ հայ քահանան ահա, որտեղ է և ինչ պայմանների մէջ է ներկայանում հայ հոգեւորականի զօրութիւնը:

Եյսպէս, հայ հոգեւորականութիւնը այժմեան մեր պայմաններում կարող է մեծ դեր խաղալ հայ ժողովուրդի մօտաւոր և բարոյական կեանքում, եթէ միայն նա ըմբռնի իր կոչման էութիւնը. և անշուշտ ըմբռնելու է ու ամեն ձիգ գործ զնելու այդ ուղղութեամբ լինթանալու իր ասպարիզում:

Մեր կեանքի ներկայ բարդ պայմանները ուրեմն ինքնին պահանջում են օր առաջ հոգեւորական կոչման մէջ տեսնել ուսեալ և կրթեալ եկեղեցականներ, որոնք որ կարող լինեն ժո-

զովրդի մտաւոր առաջնորդները ներկայանալու նորա բաղմագիմի կենաց խնդիրներում:

Այս տէսակէտով խիստ ուրախալի երևոյթէ, որ այս կարեւոր հարցի վերայ ուշագրութիւն է դարձել վերջին ժամանակներս և թէ ժողովուրդը մամուլը և թէ մասամբ մեր բարձրագոյն հոգեորականութիւնը: Աւստի յուսալի է որ այս ուղղութեամբ ընթանալով զործը, մի ժամանակամիջոցից յետոյ մեր հոգեորականների մէջ կկապմուի ուսեալ եկեղեցականների մի գտասակարդ, որը ժամանակի պահանջմանց համաձայն կոչուած կլինի առաջնորդելու մեր ժողովուրդը նորա կրօնական պարտաւորութեանց հետ միասեղ և նորա քաղաքակրթական գործում: ուսեալ եկեղեցականութեան արտգ զարգացմանը շօշափելի զարկ տալու համար, խիստ ցանկալի կլինիք, որ բայցի Ներսիսեան դպրանոցի և Գէորգեան ձեմարանի ընթայաւարտներից, որոնց վերայ է խսկապէս մեր յցյոր, քահանայական կոչում ընդունէին և արքունի բարձրագոյն դպրոցներում աւարտած երիտասարդները, որոնց ներկայութիւնն մեծ զրաւական կարող է լինելի նպաստ նոյց զործունէութեան:

Այսպէս ցանկանալով ապագայում հայ ազգին լուսաւոր ու իրենց կոչման համապատասխան ու արժանաւոր եկեղեցականներ ունենալու, այժմ գտանակը մեր ներկայ հոգեորականութեան: Վի երկու խօսքով կարելի է ասել որ ներկայ հայ հոգեորականութիւնը, թէև ընդհանուր առմամբ միանդամայն չէ համապատասխանում ազգի իրական պահանջներին, բայց այնուամենայնիւ ի նկատի առնելով որ ձեռի մի շարժուածքով հնի տեղ խիզյն նորը չէ կարելի կանգնեցնել որքան էլ այդ ցանկալի լինիք, պէտք է ամեն միջոց զործ գնել օգտաւել դէմ եղածից որքան միայն կարելի է, քանի որ կեանքն է դա պահանջում: մանաւանդ որ իրենց կոչման անհամապատասխան նկատուած հոգեորականների մէջ ևս կայ մի որոշ թիւ հովիւների, որոնք թէ և անտարբեր են վերաբերվում դէմի իրենց շուրջը կատարուող երևոյթները, հօտի ազգային—եկեղեցական կարիքը և իրենց հօտին առաջնորդելու փափաք ևս չեն ցոյց տալիս, այնուամենայնիւ զոքա ևս իրենց ասպարիզում կարող են նշանաւոր ծառացութիւններ անել եթէ միայն զոցա ղեկավարիչ մի ոյժ, մի մարմին լինի, դեռ թող

մի կողմը ևս այն, որ այժմ էլ մեր հոգեորականների մէջ կան բացառութիւններ տասնեակ թուերով որոնք միանդամայն պատիւ և յարգանք են բերում իրենց դասին *):

Մեր ազգութեան զինաւոր խարիսխը լինելով հայ առաքելական եկեղեցին, մանաւանդ մեր կեանքի ներկայ պայմաններում մեր բարոյական պարտականութիւնն է աշխատելու հայ ժողովրդի աչքում ըստ կարելցն բարձր հեղինակութեան մէջ պահել տասնուշինգարուց աւելի սրբադրծուած հայի այդ նուիրական հաստատութիւնը: Որքան սերտ կապով կապուած լինի հայ մարդը իր եկեղեցու հետ, որքան եկեղեցին պարտու պատշաճ վիճակի մէջ գտնուի, այնքան ևս կարելի է պնդել, որ ազգի գոյութեան ամենակենսական տարրերը ապահովուած կլինեն: Մէնք հայերս ասխայի ժողովուրդ ենք, մեր ժողովրդի մեծամասնութիւնը, որը այսօր ապրում է իր հայրենիքում հոգագործութեամբ, իր կրօնի, եկեղեցու մէջ է տեսնում իր ազգութիւնը, այլապէս էլ կարելի չէր սպասել քանի որ նա զուրկ է և գարելից ի վեր զուրկ է եղել լուսաւորութեան ամեն միջոցներից, սուրան իբր ապացոյց ի միջի այլոց այն, որ այսօր հայ մարդը, հայ դիւզային երբ թոգնում է իր եկեղեցին տղիտութեամբ կաթոլիկ վարդապետութեան զիրկը ընկնելով, նա այլ ևս գտադրում է իրեն հայ համարել այլ անուաննում է փրանք, այս տիտուր երեւոյթը առաջ է

*) Սակայն ցաւելով յիշատակելու ենք և այն, որ մեր մէջ այժմ էլ արդի հայ հոգեորականութեան մէջ եղած ընդունակ և գործունեաց հոգեորականներից ևս շատ յաձափ չեն կարողանում օգտուել Յիշենք շատ օրինակներից մինը. Մեզնում շարունակ գտնատվում են, որ և շատ իրաւացի է, թէ կրօնափիտութիւնը տաձկահպատակ հայերի մէջ անում ու տարածվում է սոսկ այն պատճառով, որ մենք չունենք գործունեաց և ընդունակ հոգեորականներ, որոնք կարող լինեին զնալ հայաստան գիմատրելու օտարակրօն բազմաթիւ բարողիչների ազգավնաս գործունեւթեանը: Բայց սորահանդեպ ի՞նչ ենք տեսնում: Հարք եղած միջոցները քչից շասից անտարբերութեանը մասնուած հոգեորականների մէջ գտնվում էն արժանաւոր եկեղեցականներ, ընդունակ համիներ. և ի՞նչ եք կարծում, սաց ուր են ուղարկում Տաճկահայաստան, կամ նոյն իսկ Այնթապ և Կիլեիս այլ հայաբնակ վայրերը, ուր որպէս սողուններ, վիստում են կաթոլիկ և բողոքական վարդապետութիւնների անթիւ քարոզիչները և ուր կրօնական մրցութեան մէջ է լողում տեղելոյն ազգաբնակութիւնը, ոչ այլ այդ գործունեաց և եռամդրու հայ հոգեորականներն ուղարկում են կամ անմիտ նուիրակութիւններով այս ու այն քաղաքը կամ հնուո ովկիանունների միւս կողմն... հովուելու բախտահնդիր մի խմբակ հայերի, սորանից յետոյ արի ու մի զարմանար մարդկանց գործերի գերաց փոխանակ գործունեաց հոգեորականներ ուղարկել հայրենիք պաշտպան և օգնական լինելու երեսի վերայ ձգած անտերունջ հայրենակիցներին, այս ուղարք անտես է առնվում և ում համար. մի խումբ բաղդախնդիրների...

Եկել աղքային եկեղեցու անդամների հալածումից թէ կաթուլիկ հոգեորականների մոլեռանդութիւնից, դա մեր խնդրին չէ վերաբերում, ըստ որում մենք արձանագրում ենք այստեղ սոսկ փաստը: Ոչ միայն հայերը, այլ բոլոր մահմետական աշխարհը, որը շրջապատած է մեզ ամեն կողմից, նա ևս իր աղդութիւնը, ինչպէս յայտնի է իր կրօնի մէջ է գտնում: Ի՞նչու միայն ասիացի աղքերի վերայ մատնացոյց լինել այսօր նոյն խակ եւրոպիոյ գօրաւոր աղդութիւնները իրենց աղքային կենսական շահերը պաշտպանելու խնդրում շատ յանձնի կրօնի ոյժին են զիմում: Եթէ այս այսպէս է մեզնից անհամեմատ զարգացեալ և զօրաւոր անկախ ազգերի համար, ապա ի՞նչու մենք բացառութիւն պէտք է կազմենք, քանի որ բացի այդ մեր ներկայ վիճակը, նոյն իսկ մեր կեսնքը, պատմական անցեալը մեր ազգութեան զինաւոր յենարանը եկեղեցին է գասած. ուստի ի նկատի առնելով մեր ներկայ վիճակը, մեր համեստ կարծիքով ամեն մի հայ, ամեն մի գործիչ ի՞նչ կուսակցութեան էլ նա պատկանի, ինչ հայեացքների տէր էլ լինի, եթէ միայն նա ուզում է զարթեցնել հայ մարդի մէջ ինքնաճանաչութեան և գիտակցութեան գաղափարը, եթէ, ճշմարիտ, նա ուզում է ծաղկած ու մշակուած տեսնել հայ լեզուն ու գրականութիւնը, եթէ նա ցանկանում է նորան յատուկ յատկանիշները զարգացնելով աղնիւ հայ տեսնել նորա մէջ, անշուշտ, ամեն մի այսպիսի գործիքը կամ ճշմարիտ հայը պարտաւոր է միջոցներ որոնելու ասլահովել հայ ժողովրդի մէջ նախ և առաջ նորա աղքային եկեղեցական կառածը:

Եյսօր եթէ հայ աղզը ցիրուցան վիճակի մէջ դեռ պինդ է մնում է իր աղզութեանը, եթէ նա շարունակում է խօսալ ու զրել իր մայրենի լեզուով եթէ այսօր դեռ անաղարդ են մնում մինչեւ անդամ հետաւոր վայրերում աղքային աւանդութիւնները և ուվորութիւնները, եթէ հայ անունը դեռ չէ ջնջուել լուսաւոր երկիններում ապրող հայերի մէջ են, այս բոլորը անշուշտ հետեւանք են հայ մարդի աղքային—եկեղեցական ուղղութեան, այսինքն այս բոլորը դեռ շարունակում են գոյութիւն ունենալ սոսկ շնորհիւ հայ աղքային—առաքելական եկեղեցուն. թող այսօր հայ ժողովուրդը գագարի յաճախելու իր աղքային եկեղեցին, թող աղքային—կրօնական զգայ-

մունքը սառի նորա մէջ, թող թուլանայ ամեն մի կապ հայի կրօնական սրբատեղիների հետ և չյափշտակուի նա հայ եկեղեցու վեհ վարդապետութիւնով ու նորա նշանաւոր ազգային հայրապետներով, այն ժամանակ և ինքնին կ'վերանան մեր ուսումնարանները, լեզուի, ազգային գրականութեան տարածումը հանգերձ մամուլով խակ այդ դէպքում հայի գիտակցութեան և ինքնաճանութեան մասին խօսելն էլ հօչքարժէ:

Այսպէս քանի որ այժմ մեր ազգի գոյութեան միակ խարիսխը ներկայանումէ ազգային եկեղեցին, ուրիմն պարզէ, որ հայ եկեղեցին ամենուրեք գտնուելուէ իր պարտ ու պատշաճ վիճակի մէջ, հայ ժողովուրդը ունենալուէ արթուն եկեղեցականներ, հայ հասարակութիւնները ամենուրեք սերտ կապով կապուած են լինելու Ա. Եջմիածնի հետ շնորհիւ հայ հոգեռուրական բարեցութեան. հայ նուիրակների յաճախ ներկայութիւնը և նոցաքարոզները աւելի մուերմութիւն և ազգային—կրօնական համերաշխութիւն են զարթեցնելու ցիրուցան հայերի մէջ, մի խօսքով իւրաքանչեւր հայ պատկառանքով և ակնածութեամբ վերաբերելու է իր եկեղեցին, Ա. Եջմիածնը և հայ եկեղեցու Պետր: Աակայն ցաւօք սրաի, հակառակ այս բոլոր իրաւացի և բնական պահանջներին, ի՞նչ ենք մենք տեսնում և ինչ տեսարանների ականատես լինում շնորհիւ թէ մեր եկեղեցականների տգիտութեան, թէ անտարբերութեան և որ ամենազլիսաւորն է հայ հոգեռորականութեան վերայ բնաւ հոկտոն-նիւն լինելուց և դիսցիպլինայի բացահայտութեանից:

Այսօրուան օրս որ գիւղե, քաղաքի, երկրի, տերութեան հայ հասարակութիւնները վերցնէք, ամերուրեք դոցա եկեղեցական կեանքում միայն ախուր իրողութիւնների, տարածայնութիւնների և ազգավասար երեւյթների կհանգիստէք. Համարեա դժուար է ցոյց տալ մի հասարակութիւն, որի եկեղեցական կեանքը իր բնական, անգորը վիճակի մէջ անցնի: Եւ այս բոլորը գլխաւորապէս առաջ է գալիս ոչ այնքան մեր հոգեռորականների տգիտութիւնից, նոցա անպատրաստականութիւնից, այլ գլխաւորապէս նոցա վերայ հսկողութեան չլինելուց և դիսցիպլինայի բացահայտութիւնից, բայց թէ որքան է

տուժում բնդհանրապէս հայութիւնը, իսկ մասնաւորապէս հայի յառաջագիմութիւնը այս շարունակ վէճերից ու տարածայնութիւններից, դա ինքնին պարզ պէտք է լինի իւրաքանչիւր ընթերցողին: Աակայն տգիտութեանը մատնուած հայ ժողովրդի հոգեոր հովեւի թէ տգիտութեան և թէ զիաւորապէս անտարբերութեան պատճառով որքան կորուստներ է ունենում հայութիւնը կրօնափոխութիւնների միջոցաւ, դա ևս պարզէ: այսպէս, շնորհիւ մեր հոգեոր անտերունջ վիճակին և անպարտաձնաւ հոգեորականութեան, այսօր մեր եկեղեցին ու նորա հօտը շարունակ հարուածներ են կրում ամենուրեք և ամեն կողմից: թէ եկեղեցիները շատ տեղեր սակաւ առ սակաւ վորբաթիւ աղօթողներ են ունենում, թէ հայ մարդն է սառում դէպի իր եկեղեցին, թէ ազգային կրօնական զգացմունքն է թուլանում նորա մէջ և վերջապէս կամ անտարբերութեան մատնվում կամ կրօնափոխութեան դիմելով ազգային եկեղեցուն ու նորա անդամներին թշնամի գառնում: անշուշտ սյսպիսի դէպքերում, ոչինչ զարմանալու բան չկայ, եթէ այսօր զանազան կրօնի ներկայացունեները իրենց ուշադրութիւնը մեզ վերայ են դարձրած և հարմարաւոր դէպքում հարիւրներով անջատում ազգային եկեղեցու զրկիցն նորա անդամներին:

Ա. Եջմիածինը, որ մեր ազգային եկեղեցու կենդրոնավայրն ու հիմքն է կազմում ուր յառած են ամենուրեք ցրուած հայերի յոյսն ու տենչանքը, որը և սյս պատճառով բարոյական պարտականութիւնունի հոգեորապէս պահպանելու ու միսիթարելու հայ ժողովուրդը, որտեղ էլ նա չ'գտնուի, կարծում ենք, որ ոչ միայն պէտք է, այլնաև պարտաւոր է մասնաւանդ ներկայ անցածող հանգամանքներում մասնաւոր ուշադրութիւն դարձնել իրաց սյս ախուր կացութեան վերայ և ամեն կերպ ջանալ ապահովելու հայ ժողովրդի ազգային եկեղեցական կեանքը: Եթէ հայ ժողովրդի սյսպիսի անձուկ վիճակում Ա. Եջմիածինը աշխատէ մասնաւոր հոգս անել զանազան պարտ ու պատշաճ միջոցներ որոնելու ամենուրեք տեղի ունեցող այս տիսուկ երեսյթների առաջը առնելու և աջակցելու իր հօտիննորա հոգեոր կարիքների մէջ, անշուշտ, նա սորանով նշանաւոր ծառայութիւն արած կլինի թէ ժողովրդին նորա կրօնա-

կան աղքային կեանքում և գոյութեան խնդրում և թէ կը ոկնակի Մայր Եթոռին:

Օ անազան երկիրնելում ցիրուցան բնակութիւն հաստատած հայ ժողովրդի եկեղեցական գործերը բարդ ու պատշաճ վիճակի մէջ դնելու և նորան աւելի սերտ կապով կապելու համար Ա. Եջմիածնի հետ, անտարակից, նախ և առաջ կարեռ է դիմել հայ ժողովրդի աղքային-եկեղեցական կեանքի լորձ սահմանակրութեան: Առ անհրաժեշտ է, ինչու որ մենք մեղ թցը ենք տալիս ենթագրելու, որ Ա. Եթոռը ոչ միայն շատ տեղերում ծանօթ չէ իր հոգեսոր հօտի կրօնական կացութեան հետ, այլ նոյն իսկ Ա. Եջմիածնից մի քանի քայլ անդամ հեռու վայրերում տեղի ունեցող տխուր դէսքերի հետ ծանօթանում է միայն կամ վտանգը սպառնած ժամանակը կամ վտանգին մօտալուտ վերջին րոպէներին. որպէս օրինակ յիշենք «Նոր-Դարի» յունիսի տասներկու թուահամարում Հին-Կամսիջեանից հազորդած այն լուրը որ Երասմի ափերում գլանուող Պ. Վ. Վ. շախ և Պ. Ամբարքեանդ գիւղերը, որոնցից առաջինն ունի 27 և վերջինը 50 տուն զուտ հայ բնակիչ չունեն ոչ եկեղեցի և ոչ քահանայ և չգիտեն անդամ հայերէն Եղուով խօսել և ահա այս թշուառ մեր հայրենակիցների անմիտմար վիճակի վերայ միայն այս օրերս է ուշադրութիւն դարձած և Ա. Հայտիառ Հայրապետին տեղեկագրած:


Եյս սահմանակրութեանը, որի անհրաժեշտութիւնը ակըն-յայտնի է, և որը լինելու է կրօնական տեսակէտից, անշուշտ, մեր առօրեայ կեանքի մէջ շատ տխուր և հետաքրքրական տեսարաններ երեան կրհանէ ու կապարդէ ընդհանուրի առաջ. և որքան շուտով ձևոնարկել այս ուսումնասիրութեան, այնքան աւելի մեծ և արդիւնաւէտ կինսի հայ ժողովրդի բարոյական գործին արած ծառայութիւնը. սյս կրօնական ուսումնասիրութիւնը մենք կարծում ենք, բնաւ գժուար պայմանների մէջ դնելու չէ ազդիս Հայրապետ Տ. Տ. Մակար սրբազնադյն կաթողիկոսին սոսկ այնու, որ իւրաքանչիւր թեմի ուսումնասիրութիւնը, կարելի է յանձնարարել թեմուկան առաջնորդներին, որ նոքա ձեռնհաս եկեղեցականների միջոցաւ ձևոնարկեն այդ ուսումնասիրութեանը, համաձայն եկեղեցու Պետից արուած հրահանգին, իսկ այն հայաբնակ վայրերը

որոնք ոչ մի թեմի չեն պատկանում, օրինակ Ռողարիոյ, Առու-
մինիոյ, Եւստրո-Մաճառաստանի, այդ կողմերի հայերի ու-
սումնասիրութիւնը կարելի է յանձնել Ա. Եջմիածնից ուղար-
կուած մասնաւոր նուիրակի, որը և միւնցն ժամանակ այցե-
լելով ու հովուելով տեղի հայերը նոցա մէջ կարող կ'լինի
վառել նոցա ազգային-կրօնական զգացմունքը դէպի Մայր
Եթոուք: “Նոյն այս կերպով վարուելու է և Պարսկաստանի,
Հնդկաստանի ու Շիլմանիոյ հայերի նկատմամբ, իսկ ինչ վե-
րաբերում է տաճկահպատակ հայերի կրօնական ուսումնասի-
րութեան, սա հօ դործունէութեան մի ամբողջ աշխարհ է,
այնքան այստեղ մտաւոր ու նիւթական ոյժ ու եռանգ է հար-
կաւոր ոչ միայն պահպանելու հայ հօար Հայաստանեայց եկե-
ղեցու գրկում ու զանազան կրօնների ներկայացուցիչների ճան-
կերի ու խարդախութիւնների դէմ, այլ նաև նշանաւոր
մրցութեան ձեռնարկելու յիշեալ կրօնների ներկայացուցիչների
քարոզութիւնների դէմ: Տաճկահպատանի կրօնական ու-
սումնասիրութիւնը միանդամայն յանձնարարելու է Ա. Պոլսց
Պատրիարքին, որը նորհիւ իր քաղաքական դրութեան աւե-
լի նպատակայարմար միջոցների կարող է դիմել այս ծանր դր-
ծում:

Ենտարակցու երբ ուսումնասիրած տեղեկագիրները ստա-
յուին Ա. Եջմիածնում, այն ժամանակ, մեզ թոյլ ենք տալիս
յուսալ որ Տ. Տ. Մակար կրարեհածէ կազմել մի մասնախումբ
դործին տեղեակ ու ընդունակ հօդեռականներից, որոնց աշակ-
յութեամբ ձեռնարկելով ուսումնասիրութեան նիւթերին, իր
մշակուին միջոցներ, և կ'ձեռնարկուին նոցա դործադրութեան
համաձայն հայ առաքելական եկեղեցու և հայ ժողովրդի ազ-
գային-կրօնական ամենակենսական շահերին:

Յուսանք, որ Վահագափառ Կաթողիկոս Տ. Տ. Մակար կ'բա-
րեհածէ ուշադրութիւն գարձնել որդիական ակնածութեամբ
արած մեր այս առաջարկութեան վերայ, որի դործադրու-
թեամբ յաւիտեանս երախտագէտ կը կացուցանէ բովանդակ հայ
ժողովուրդը դէպի Հայ եկեղեցու ներկայ Հովուապետը:







ԱՅԵՑԻ ՀԱՅԵՐ

Հրատան. «Արտաքս» Համեղիսի

Դօզ. դեշ. ԾԱԲ. 6 ավգուստա 1890 թ.

Տպ. Թդ. Գոլլե, Յանես. լր. № 59.



ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Մ Ա Խ

Մուշ քաղաքը որը Հայաստանի գլխաւոր քաղաքներից մինն է հաշվում, գտնվում է 39° երկայնութեան և 39° Հայնութեան աստիճանների վերայ/Հաստատուած է Սիմբարձր լեռան ստոլոստմէ ։ Նա ընկած է երկու փոքր բլուրի մէջ, որոնց միջով անցնող վասկը քաղաքը բաժանում է երկու մասի. այսպիսով Վշյ զիկվը ձորի մէջ է։ Հայերը իրենց բնակութիւնը հաստատած են արևելեան կողմի բլուրի վերայ, այն ինչ հակառակ կողմը—արևմաեան բլուրի վերայ, որ բացօթեայ և աւելի լաւ տեղն է, վասած են թուրքերը։ Անմիջապէս քաղաքի սահմանից դուրս սկսվում է Վշյ ընդարձակ և հրոշակաւոր դաշտը իր բազմաթիւ հայ զիւղերով։ Այդ լայնատարած դաշտը, որ անուանի է իր արդասաբեր հողով, զանազան կողմերից ոռոգուած գետերով և առուներով շրջապատուած է ձիւնապատ, շղթայակապ լեռներով։ Դաշտի հարաւային մասը ողողում է իր օձապարոյտ սահմանով Վեղըի-գետը, Գալասու, որն իր սկիզբն առնում է Բաղնունեանց լեռներում, իսկ դաշտի հիւսիսակողմում անցնում է Արածանին, Մուրագչայ։ Երածանու ակունքները գտնվում են Կարսոյ Բինդեօլ կոչուած լեռների մէջ, դաշտի կենարօնում այդ երկու գետերը միանում են և Արածանի ընդհանուր անունն են կրում։ Վշյ դաւառի բնակիչները բացառապէս, հայեր և քրդեր են, իսկ քաղաքինը հայ և թուրք, վերջինների մեծագոյն մասը ծագմամբ քուրդ են, սակայն մասամբ տիրող տաղբի ազգեցութեան ներքոյ, մասամբ դաւանութեան միութեան շնորհիւ, ժամանակի ընթացքում, ձուլվել է թուրքերի հետ և իրեն բոլորովին թուրք է համարում։ Քաղաքի ընդհանուր բնակչաց թիւը հասնում է, մօտաւորապէս, 2,500 տան, որից 1,000 տուն հայեր են, իսկ մնացեալը թուրք։ Հայերը ապրում են Յ առանձին թա-

զերում, իսկ թուրքերը 6, սակայն, ինչպէս ասացինք, թուրքերի
բնակուած տեղը ամեն կողմից գերազանց է հայերից, որոնք
ամփոփուած են ձորի մէջ միմեանց մօտ, այն ինչ թուրքերը զբա-
ւած են գաշտի սկիզբը և այնտեղ շինած իրենց տները: Մուշը
Ռաղէշի կուսակալութեան մէջ է գտնվում և նորա սանջակներից
մինն է կազմում, ուստի կառավարվում է մուտեսարիֆով: այս
սանջակի մէջ գտնվում են հետևեալ կայսակամբէները՝ Ռուլանդ
(նախնի Ապահունի) Խոնուս, Վարդօ, Գինջ, ուրեմն Տուրուքե-
րանի մեծ մասը: Մուշը օժտուած է առողջարար և կազդուրիչ
օգով: Զմեուը սկսվում է նոյեմբերի կիսից և շարունակվում է,
զրեթէ, հինգ ամիս, միայն զատկից յետոյ են տեղի ունենում
ճանապարհների կանոնաւոր հաղորդակիցութիւնները, երբ բնու-
թիւնը բոլորովին բացվում է իր ձմեռային շղարշեց: Գարնանը
տեղում են օրհնաձիր և յորդառատ անձրեներ, լեռները զար-
դարվում են հոտաւէտ և գեղեցիկ ծաղիներով, գաշտերը պա-
րարտանում և զուարթանում են թարմ գալարով, այգիները
ճոխանում մրգաւէտ ծառերով. լեռների բարձրաւանդակից
ձիւնահալին յորդառատ առուները իջնելով ցած, թափառում են
ձորի խորքում հոսող գետը որը խլացուցիչ և սարսափելի աղ-
մուկով անցնում է քաղաքի միջով: Այդ լեռները և մանա-
ւանդ ձորը, կարելի է ասել, տալուայ մէջ շարունակ եօթ
ամիս միակ զբոսավայրերն են քաղաքացիների համար. ամառը
բարեխառն է, միայն յուլիսի և օգոստոսի կիսին տօմեր են լի-
նում, բայց հինգ որ երեկոն մօտենում է ամբողջ գիշերը փշում
է զովարար հովը, որ իր ախորժութեամբ միանալով ծաղիկ-
ների բուրման հատ՝ մոռացնել է առիս բոլորովին ցերեկուայ
տօթը. մաքուր, ականակիտ, սառցյցի պէս պաղ աղբիւրների
ջրերը, թէ քաղաքում և թէ շրջակայքում պատահում են ա-
մեն քայլափոխի մէջ որոնք ախորժալի տպաւորութիւն են
թողնում շոգից նեղուող մշեցու վերայ:

Մշց երկրի արտազրած հայահատիկների բոյսերը զանա-
պան են, սակայն որոնց մէջ նշանակելի են գլխաւորապէս, ցորեն,
կորեկ, գարի գրագրը: Նուաս տարիներում ցորենի գինը շատ
էժան է, կօտը, որ 20 ֆունտ է կշոռում, աճէ 30—40 կոպ.
իսկ երաշտ տարիները ցորենի կօտը վաճառվում է 1 ռ. 50 կ.
և աւելի. այդ սոսկալի զանապանութիւնը գների մէջ գիւրաւ

բացատրվում է տեղական հանգամանկքներից և կախուած է ժողովրդի կացութեան պայմաններից. մի կողմից գորա պատճառը օրինաւոր ձանապարհների բացակայութիւնն է, որոնք ձևեռուայ ժամանակ համարեա ընդհատվում են. այնպէս որ, եթէ մի նահանգում հացահատիկների պակասութիւն է զգացվում, միւս նահանգից ուր հունձքը առատ է եղել հնարաւոր չէ լինում փոխազբել հացահատիկների պաշար, միւս կողմից ժողովրդի մէջ չկան փոխազբարձ և ինքովնութեան համար հաստատութիւններ իսկ Ճնշող հարկերը ստիպում են նորասն ամենաշեման գնով վաճառել իր գոյութեան համար անհրաժեշտ պիտոյքները վաշխառուներին, որպէս զի իր ժամանակին հատուցանէ թուրք հարկապահննջն ծանր հարկերը. գորա մէջ պէտք է որոնել պատճառը, որ եթէ մի տարի առատութիւն չեղաւ, հետեւեալ տարին գները անհամեմատ բարձրանում են և զիւղացին ստիպուած է հնդապատիկ բարձր գնով գնել իր վաճառած ցորենը վաշխառուից: Անցեալ տարի լրագիրները հաղորդում էին, թէ Մշյ աշխարհում սովէ է. այդ սխալ էր և չափազանցութիւն՝ սով չեր կարող լինի, ինչու որ ցորեն շատ կար, բայց թէ նա ժողովուած էր հարուստների շտեմարաններում և գների բարձրութեան պատճառով անմաշելի էր գիւղացուն. այդպիսի տառապալցց տարբներում զիւղացին ստիպուած է պահպանել իր գոյութիւնը. մի տեսակ հացահատիկով որ կոչվում է զրւգը սորանից պատրաստած հացը լինում է աւաղուտ և հումի և զժուալամարտ, այնպէս որ նա անսովոր մարդի ստամքսը վեստում է: Միւս բոյսերից յաջողաբար մշակվում են կտաւատ, շուշմա, ծիսախոտ և այլն: Օխախոտի մշակութեամբ գլխաւորապէս պարապում էն թուրքերը: Օխախոտից մեծ շահեր է ստացվում և դա կապմում է Թուրքիայի գլխաւոր թէ արդինաբերութեան և թէ արտահանութեան ճիւղը: Ինչպէս յայտնի է, կապալով ծխախոտի մենափաճառութիւնը յանձնած է եւրոպական ընկերութեան, որը ունի իւրաքանչեւր քաղաքում մասնածիւղեր իր պաշտոնեաներով, որոնք գնում են արդիւնաբերողներից ծխախոտը, ուղարկում որոշ կեղբոնները, հսկում, որ նա վաճառուի փաթեթներով. զանցաւոլներից ոստիկանութեան միջոցով պահանջում են առւգանք: Զնայելով այդ հսկողութեանը գրեթէ

բոլորը ծխումնն անփաթեթ ծխախոտ, որովհետեւ գա տասնապատիկ էժան է: Այդեպանութեամբ, պարապումնն, զլխաւորապէս, քաղաքացիները, խաղողի այդիները քաղաքում տընկածնն են լեռան զառիվայրների վերայ. վազը ամենեւին երկիւղ չունի մրտելուց, ուստի ձմեռը նա մնում է բաց օդի տակ. գալնան սկզբին նորան կտրումնն և շուրջը փորում: Հայերը այդիներից ստացած արգասիքը՝ զինին, բուքը, մրգերը տանն են գործածում: Մշց ամենամեծ այդին ամենաշատը քսան կարս (մօտ զեց տակառ) զինի է տալիս. այդիները մշեցու համար մի տեսակ ամարանոց են: Զատկից յետոյ նորանք տեղափոխումնն այդիները և մնումնն այնտեղ մինչև այգեկութիւնիցը: Ինկըզ բրինձ, ափին, բամբակ մշակելու փորձերը թէւ եղել են, բայց ներկայումս դորանք չեն կաղմում ժողովրդի արդիւնաբերութեան ճիւղերը. մասամբ, ի հարկէ, այդ կախուած է հողեց և կիմայից, բայց կայ և ուրիշ պատճառ, այդ բոյսերի մշակութիւնը յօյժ մանրակրիստ է, տնտեսական նեղ վիճակը և բարցական հարուածները Ճնշումները մտցրել են գիւղացու մէջ մի տեսակ անտարբերութիւն, յուսահատութիւն և ծուլութիւն: Նեղուած տասանորդական տուրքերից՝ հայ դիւղացիները շատ անդամ պարարտ մարդագետների խոտը կիսով չափ թողնումնն անքաղ որովհետեւ թուրք միւլտազիմները խոտի փոխանակ պահանջումնն զրամ և այդ գնասհատումնն ուղեցածին պէս. այդպիսի արագմունքներից և անիրաւութիւնից յետոյ, էլ ինչ սիրտ կը մնայ: Բայց ցաւը դորանում չէ, զրաւ զրած հողերը օր ըստ օրէ անցնումնն թուրքերի ձեռքը, հարկերը խստութեամբ են պահանջում, ոչ մի տեղեց հայը ըստ սպասելով իր վիճակի բարւոքման, փախչումէ իր հայրենի հողեց, դիմումէ դէպի պահպիստութեան. ծերեր, կանայք և երեխաներ, ահա որոնք են համարկա մնում զիւղերում:

Պատմումնն, որ հնումը Մշց լեռները ծածկուած են եղել անտառներով, ներկայումս, ցաւօք սրտի, պէտք է տաել որ դորանք բոլորովին դատարկուած են այդ բնական հարստութիւնից, ժողովուրդը առանց արդելքի սպառել է այդ անտառները թէ վառելափայտի և թէ շինութիւնների համար. հիմայ իբր վառելափայտ գործ են ածում կաղնին: Աաղնու-

ոստելը նյոյնպէս առանձին են վաճառվում և կոչվում են ցախ, վերջապէս իբր վառելափայտ գործ է ածվում ևս կաղնու արմատները շնչպերի համար գործածվում է բարտի ծառը, տախտակը փոխադրվում է Սողանլուղի անտառից: Մշց լեռներում կան երկաթի հանքեր, աղահանք, քարածուխի հանք: Գաւը կոչված լեռնոտ վայրի երկաթի հանքը ժողովրդի ձեռքումն է. Մշց դաշտում կան նշաններ նառթի գցութեան, սակայն ինչպէս և միւս բոլոր բնական հալասութիւնների արդիւնագործութիւնը, դա եւ բարձի է թողի արած: Մշց երկրում կան ամեն տեսակ բնատանի կենդանիներ և վայրենիներից գայլ, աղուէս, նապաստակ: Եյստեղ առաջ ենք բերում կենդանիների մի քանի արտադրած նիւթերի գներն, որոնք վիսաւորապէս արտահանվում են. ոչխարի ձերմակ բուրդ, օխան 18 զրուշ և անլուայ տեսակը 8 զրուշ գոմիշի թաց կաշին լիտրը 20-25 զրուշ եգինը թէ թաց և թէ չըլ լիտրը 20 զր. ոչխարինը և այծինը թաց և չըլ, 5-6 զր. սանսարի կաշին, որ գործ է ածվում մուշտակի համար, սեագոյնը, հատը 35-40 զրուշ գայլի, աղուէսի կաշին հատը 10-15 զր. վերջինի գինը փոփոխական է և կախում ունի տարիից. նապաստակ շատ սակաւ է ճարպում: Մեղուապահութիւնը Ճնշուած է ծանր հարկերով, իւրաքանչիւր փեթակից կառավարութիւնը պահանջում է երեք զրուշ ինչպէս և իւրաքանչիւր ոչխարից. մեղրի լիտրը վաճառվում է 25 զր: Մեղուապահութեամբ, զիսաւորապէս, պարապում են լեռնացի հայերը՝ Ասունցիք և Գաւըցիք, որոնց այդ պարապմունքը աւելի ձեռնատու է:

Մշց նահանգի հայ աղդաբնակութեան զբաղմունքներն են՝ երկրագործութիւն, արհեստաւորութիւն և վաճառականութիւն. թուբքերը, մասամբ կալուծատէրներ մասամբ պաշտօնեաներ են արքունի հիմնարկութիւններում. ուամիկ գասակարգը մշակում է իրանց բոստանները, ծիախոտի արտերը, խաղողի այգինները և գորանցով հայթայցթում է ապրուստի միջոցները. թուրքերը յափշտակել են նյոյնպէս իրանց ձեռքը ձորի գետակի բոլոր ջրաղացները. քրդերի մի մասը հողագործ է, միւսը սատանական կեանք է վարում. պարապում է խաշնարածութեամբ և աւաղակութեամբ: Մշց դաշտի արգաւանդութիւնը յայտնի է. նա շրջակայ դաւառների շտեմարանն է. առատ տա-

լիներին գիւղացին արտերից ստանում է մէկին տասը, միջակ տարին մէկին հինգ կամ վեց. կան տարիներ, երբ արդէն հասած հասկերը չորսնում էն և ճարակ գառնում արեւելիսն քամուն, որին ժողովուրից անուանում է մահու քամի: Ընդարձակ արօտատեղիներում իւրաքանչիւր գիւղացի իրան պէտք եղածին չափ տուար է պահում: ոչխալ, կոփ, զոմէշ, եղ, այծ և այլն: Նրմտիքը տեղից տեղ փոխադրելու համար դործ են ածվում սայլեր, իսկ ձեռոր սահնակ: որտեղ սայլի ճանապարհ չըկայ, ապրանքները փոխադրում են ձիերով, ջորիներով և էշերով: Մշյ ընդարձակ գաշտի վերայ կայ, մօտաւորապէս, 120 հայաբնակ գիւղ որոնց բնակիչները պարապում են երկրագործութեամբ: Երկրագործութեան մէջ, ըստ մեծի մասին, ընդունուած է միրիպայութիւնը: Կյդի տեսակ ընկերական ձեռնարկութիւն է, որը կայանում է քաղաքացու և գիւղացու մէջ հետեւեալ պայմանով: Հողատէր միրիպան տալիս է սերմը և վճարում հողային առորքերը, իսկ մշտկութիւնը յանձն է առնում գիւղացին, տասանորդը վճարելուց յետոյ, հասայթը համահաւասար բաժանում են: Հողային տուրքերը շատ ծանր են, օրինակ մի կալուածատէր, որի կալուածքը կատավարական մատեաններում գնահատուած է 25 հազար ոռոքի և պարունակում է 2,500 արտաւար հող՝ վճարում է 100 ոռոք: տուրք, այն ինչ այդպէս բարձր գնահատուած կալուածքի տէրը ուրախ կրինէր, եթէ 5 հազար ոռոքի կալողանար վաճառելիր կալուածքը: Մշյ վաճառականութիւնը և արհեստները աննախանձելի գիճակի մէջն են. արտահանվում են, սովորաբար, հում վաճառեղէններ՝ կաշի բուրդ, ծխախոտ և մեղրամում աննշան քանակութեամբ: Ներառածիալ ապրանքների արժէքաւոր քանակութիւնը հասնում է մօտ 60 հազար լիրայի: (յիւրան մօտ 9 ոռոքի է) և են. շաքար, մշակած կտաւելին, բրդեղէն բամբակեղէն, չուխա, քարիւղ և այլն: Կապրանքները արտահանվում և ներածվում են Կարնոյ վերացով Տրապիզոնի նաւահանգիստից: Երհեսանները և վաճառականութիւնը, կարելի է ասել բացառապէս, հայերի ձեռքումն են. զիսաւոր արհեստներն են՝ զինագործութիւնն, մուշտակագործութիւնն, դերձակութիւնն, կօշկակարութիւնն, տարազագործութիւնն, ձուլածութիւնն և այլն: Մուշը Կարինից

48 ժամ՝ Հեռաւորութիւն ունի, Ռազմէշից 12 ժամ, Խարբերդից
40 ժամ, Երիզայից և Տիգրանակելտից 50 ժամ:

Մշյ սանջակը, ինչպէս ասացինք, կազմումէ Հայաստանի
Տուրուբերան կոչուած նահանգի մեծ մասը: Տարօնը կամ Տու-
րուբերանը պատկանումէր Մամիկոննեան իշխաններին, այստեղ
էին նրանց ամրաշին բերդերը (Մուշեղի, Վահանի, Աստղան
և Ողկան բերդեր) իրանց պայազատութիւնը արտաքին թշնա-
միներից պաշտպանելու համար, այստեղ էին նրանց շքեղա-
զարդ պալատները, պանչևի ասպարանքները, այստեղ էին նր-
րանց պաշտած սրբավայրերը. իսկ հիմայ սոսկալի և շարու-
նակ, վայրենաբարոյ ազգերի հրոսակների աւերտմներից յի-
տոյ ամեն ինչ աչքից արտասունք և սրաից հառառանք է
կորզում բարձր բերդերից մնացել են այժմ աւերակների բե-
կորները, որոնք, կարծես, ողբում են որբացած հայի վեճակը:
Հնումը երկրի տէրը բարձրակառցյ բերդից հսկում, հովանա-
ւորումէր իր հաւատարիմ հպատակներին, իր սիրած ժո-
ղովզին, իսկ այժմ բերդի աւերակն է հովանաւորում և պատ-
սպարում աւագակ քրդերին և վայրենի բուերին. քարուքանդ
պարիսպներ, մասուխլապատ կամարներ և խոնաւ սաղմերկլեայ
անցքեր՝ ահա բերդերի մնացորդները. նշանաւոր մարդկանց
ծննդավայրեր կամ բոլորովին չը կան կամ որոնք էլ կան, նո-
քա էլ թուրքի գիւղեր են, կամ թուրք կալուածատէրերի
սեպհականութիւն. սրտի բաբախմամբ ուղում ես հանդիպեր
դոնէ, մի հեաքին, մի նշցյլին այն վագեմի ժամանակներից մնա-
ցած, սակայն դորա փոխարէն տեսնում ես սոսկալի իրակա-
նութիւնը՝ խեղճ գիւղացուն բարցյապէս և նիւթապէս ճըն-
շուած, այստեղ մի գերգաստան յրտաշունչ ձմեռից նեղուած,
այնտեղ մի ուրիշ ընտանիք անօթութիւնից կամ հարստա-
հարութիւնից հոգիսպառ, գառնացած և վշտացած հեռանում
ես այն տեղից, որ հեռուից եղել է փայփայելու և փարկու-
վայր: Տարօնը հնումը հոչտաւած էր իր վանքերով. վանքերի
մասին առանձին հոգացորդութիւն ունեին թէ բարձրագիր հո-
գերականները և թէ ախտող իշխանները: Վերջինները բաշ-
խումէին վանքերին բազմաթիւ զիւղեր, առատ հողեր, զար-
դարումէին վանքերը անօթներով, թանկազին եկեղեցական
զգեստներով, վանքերումն կից եկեղեցու պետերը կառուցա-

նումէին անկելացնոցներ, հիւանդանոցներ, պանդուխաների իջևաններ, վանքերի, տաճարների գաւիթումէին հանդստանում մահից յետոյ իշխանների մարմինը, այստեղ էին կանգնում նրանց գամբարանները. այժմ այդ փառաւոր անցեալից մնացել են կամ բոլորովին աւերակ, կամ խարխուլացած վանքեր անպահցած և կիսաքանու շինութիւններով, ուսումնասէր և ժողովրդասէր հոգեորականներին փոխարինել են անդործ և տգետ վարդապետներ:

Իսյց ժողովուրզը իր անցեալի հօյակապ մնացորդների հետ կապուած է ջերմ կապերով, վանքերը նորա պաշտած ու ստատելիները և, միևնոցն ժամանակ, հազուազիւտ զքօսավայրերն են. նու պահումէ նրանց, նու չէ զամնում իր կալուդութեան չափ նպաստել վանքերին: Տարօնի նշանաւոր վանքերի թուումն է՝ Ա. Կարապետի վանքը Խնակեան Ա. Կարապետի վանքը գտնվումէ Մշեց ութ ժամ հեռաւորութեան վերայ, Մշեց դաշտի հիւսիսարևմտեան կողմում: Ներան բարձրաւոնդակի վերայ կառացուած է Յովհաննէս Վկրաչի հօյակապ տաճարը, իսկ սողուտում գտնվում են վանքի փակահները, որտեղ պահվում են վանքապատկան տուարի նախիրները և ոչխարհների հօտերը: Հայ վանքերի մէջ Ա. Կարապետի վանքը յայտնի է իրբե նշանաւոր սրբավայր: Գարունը սկսելուն պէս զատկից յետոյ բազմաթիւ հայ ուխտաւորներ զանազան երկիրներից հետզհետէ գալիս են Ա. Կարապետի վանքը իրանց ուխտը կասարելու: Ա. Կարապավասին, Պայծառակերպութեան տօնին, շուքով և փառաւոր կերպով կատարվումէ վանքի տօնախմբութեան հանդէսը: Կովկասից այդ օրը դադիս են ուխտադրութեամբ բազմաթիւ ձիաւոր երիաւասարդներ, մշեցիք, դաշտեցիք մի շաբաթ առաջ են ուղեորդում վանքը, որպէս զե ներկայ լինին հանդիսին և տեսնուեն եկոզի հայերի հետ, իմանան զանազան լուրեր, հետաքրեւուեն նրանց կեանքով, պատմեն իրանց վեշաելքը, շարժեն եղբայրակիցների կարեկցութիւնը: Մանրավաճառները, մրգավաճառները, խոհարարները, շատապումէն տանել վանքը ապրանք, մրգեղին, ուտելեղին, որովհետեւ այդ շաբաթուայ մէջ լինումէ վանքի շուրջը շահաւէտ առեսուր և տօնավաճառ: Նմէն տեսակ զուարձութիւններ անպակաս են այս հանդիսաւոր օրերին:

Մէկ աեղ աեմնում ես քէֆ են անում, երգում, միւս տեղ նուազուածուների ներդաշնակութեամբ մի մեծ խումբ երիտասարդների և օրիորդների շըջան են կազմում և պարում, փոքր ինչ հեռու լարախաղացը զբաղեցնումէ ամբոխին, դուրսը զինախաղութիւնէ, շատերը երիտասարդներից ցցյ են տալիս իրանց հունարը հրացանաձութեան մէջ։ Այս հանգէսներում հաւասարապէս հայերի հետ ուրախանում են և այլազգիները, որք չափազանց անպատճառ կելապով են վերաբերվում գէպի սըրբատեղիները, ամեն մի նշին թուրք թշլէ տալիս իրան լիսի անկարգութիւններ անել վանահայրի խնդիրքները ոչինչ նշանակութիւն չունեն, այդպիսի անկարգութիւններ պատահում են և միւս վանքերում տօնախմբութիւնների ժամանակ շատ անգամ դրա պատճառով հայերի և այլազգիների մէջ պատահումէ իրապանցում։ Խնդիքս տասցինք Ս. Կարապետ եկող ուխտաւորների թիւը Առուսիսյից շատ է, առաջին տեղը դրանց մէջ բանում են Նոր-Նախիջևանցիք, որոնք իրարուգերազանցում են նուիրատուութիւնների մէջ, եթէ փոքր ինչ դրանք ուշանում են և համնում են զատկից յետոյ կամ սովորականից սակաւ են գաղես, վանքի միաբանութիւնը արքումումէ թէ վանքի եկամուտների և թէ սեփական արդիւնքի պակսելու համար։

Բացի այդ նուիրատուութիւններից վանքը ստանումէ իր վիճակներից, մօտաւորապէս, 600 քիլա ցորեն (քիլան 8 կօտ ունի). վանքի վիճակներն են՝ Բուլանդ Վշյ գաշտը, Վարդո և Խնուս և իր սեփական արդերից 400 քիլա։ Վանքը ունի մօտ 1,000 ոչխար, որոնցից 500 կթվում են, ունի բազմաթիւ թանկանին եկեղեցական անօթներ և, ի միջի այլոց, 1,000 լիրայի չափ պարտք։ Վանքը շըջապատող լեռները ծածկուած են կաղնիով, կաղնին միաբանութիւնը գործ է ածում վառելափայտի համար, կաղնու վերայ յունիսի մէջ իջնումէ մի տեսակ քաղցրահամ հիւժ, որից պատրաստում են մանանայ կամ կաղնին և րուբ։ Կազմինը այսպէս է պատրաստավում՝ կաղնու տերենները չորացնում են, թափ են տալիս վերան իջած քաղցր հիւժը, մաղրում են, յետոյ լցնում են պարկի մէջ և գնում տաք տեղ, հիւժը հետղհետէ հալվումէ և կազմում բուգը պատրաստում են այսպէս՝ կաղ-

նու կորած ճիւղերի տերեները լրւանում են և ստացուած քաղցր ջուրը եփում են մինչև թանձրանալը:

Ա. Կարապետի վանքի թէ արտաքին և թէ ներքին տեսքը վայելուչ է, վաստակաւոր վանահայրերը, ըստ երեսյթին, միշտ աշխատել են նորոգել քայլայուած տեղերը և աւելացնել նորանոր շնութիւններ, ինչպիսին է մի ընդարձակ շինութիւն իր առանձին սեփական բակով դպրոցի համար, որ մինչև այժմ կիսակառոց է և ծառայում է ուխտաւորների օթեանելու համար: Վանքի նուիրական սրբութիւնն է Յովհաննէս Միքայէլ գերեզմանը, վանքից դուրս գտնվում են Սուրբ Յարութեան տաճարը, որը կասուցել է Ա. Գրիգոր Լուսաւորիչը, Օ. Ենոքի, Թ. օթիկ ճինաւորի գերեզմանները եօթը խոտաճարակաց նահատակութեան վայրերը: Վանքի դաւիթում հանգչում են Մամիկոնեան տոհմի մի քանի իշխանների կմախքները: Ա. Յովհաննու վանքը գտնվում է Մշոյ հարաւարեմտեան կողմը, երեքուկէս ժամ հեռաւորութեան վերայ, այս վանքում պահվում են Յովհաննէս Մկրտչի մասունքները, Քրիստոսի ոտները օծած իւղի շիշը և մի կտոր Ահեաց փայտից, այս սրբութիւնները Հայաստան իր հետ բերել է Թաղէսոս առաքեալը և ամփոփել է ներկայ վանքի սահմանգծից փոքր ինչ հեռու, այդ սրբավայրը հիմայ էլ կայ, դա վանքի շրջապատից փոքր ինչ հեռու է և ներկայացնում է մի փորուած տուրածութիւն երկու քառակուսի սաժէնի չափ և պարսպուած է: Ա. Յովհաննու վանքի զիճակներն են՝ Տիգրանակերտի գաշտի գիւղերը, որ կոչվում է ժողովրդի լեզուով Ներքին դաշտ: և Սիլիվան ու Խիան կոչուած քըրդախօս տեղերը: Վանքը միջին թուով իր վիճակներից ստանում է 200 քիլա ցորէն: Վանքի ժառանազաւորաց գոլոցում սովորում են գաւառացի տղաներ, լեռնաբնակ հայեր, դպրոցը անկանոն և ողբեմելի վիճակի մէջ է և, շատ անդամ, գոյցում է միաբանների և ուսուցչաց մէջ ծաղած անհամաձայնութիւնների և խոռովութիւնների պատճառով. սակայն որբան մեծ կարեսորութիւն ունի փոքր իշատէ օրինաւոր կերպով կրթել այդ պատանի լեռնականներին, որոնք մի քանի տարի վանքում աիրացութիւն անելով, դարձեալ ցրվում են իրանց ծննդվայր գիւղերը, յայտնի է ինքն ըստ ինքեան:

Մէկ ժամ ու կէս հեռաւորութեամբ քաղաքից, հարաւարեմանեան կողմը, լեռներում գտնվում է Ա. Առաքելոց վանքը, որ կոչվում է և Թարգմանչաց վանք, որովհետեւ այնտեղ պանծացել են գրական գործունեութեամբ սքանչելի և երանելի թարգմանիչները: Առաքելոց վանքի նույնական արբութիւններն են. Վուկաս ու Մարկոս աւետարանիչների գերեզմանները, վանքի մէջ նոյնպէս թաղուած են Մովսէս Խորենացին և նորա եղբայր Մամբրէ վերծանողը. վանքի շրջապարապից դուրս արևելեան կողմէ Դաւիթի Ենյաղթի գերեզմանն է, որի վերաց մինչև այժմ կանգուն է մնում մի սքանչելի փառաշեղ խոչքար. վայելուչ արձանագրութեամբ սոյն բովանդակութեան, թէ գերեզմանում ամփոփուած են Ենյաղթի Փիլիսոփայի նշխարները: Վանքի զլիսաւոր հնութիւնն է զէպի սեղան տանող դուռը, որը շինուած է աբանոս փայտից և ամբողջապէս փորագրուած է հիանալի քանդակներով, որոնք ներկայացնում են սպառազինուած հետիւոտ և հեծելազօրքի թագակիր և շքեղազգեստ իշխանների պատկերներ. վերեւում փորագրուած է, թէ դուռը շինուած է Վուկաս քանդակագրութիւնի ձեռքով՝ 12 դարում. սյս թանկագին և փառաւոր հնութեամբ, պատմում են վանքի միաբանները, թէ անդղիացի ծանապարհորդները հիանալով ուզեցել են ձեռք բերել և առջարկել են մեծ դումար:

Եյս հոչակաւոր վանքը չունի փոքր ի շատէ, կանոնաւոր գպարոց. երբեմն գժուար տարիներին եկամոււաի և հասոյթի սակաւութեան պատճառով գպարոցը փակվում է, որովհետեւ այդ ժամանակ վանքը չունի միջոցներ ուսուցիչներին վարձ հատուցանելու համար և ստիպուած է յետ ուզարկել իրանց տուն աշնկերաններին, որոնք, ըստ մեծի մոսին, սաստնցիք են, որովհետեւ վանքի զլիսաւոր փեճակը Սասունն է: Առաքելոց վանքը, ինչպէս ասացի, շատ մօաէ քաղաքից, միւս կողմում մօաիկութեան պատճառով զատկից յետոյ շարունակ մինչև աշնան վերծերը, սովորաբար, մշեցիք թէ հայ, թէ թուզք գալիս են այստեղ զուարձանալու, քէֆ անելու և շատ ուրախ ժամանակ են անցկացնում: Վանքի ինչպէս ասմարը, նոյնպէս և շինութիւնները կարօս են նորոգութեան, բայց կարելի է մնածել նորոգութեան մասին, երբ տարեց

տարի վանքի եկամուտները պահասում են, իսկ կառավագութիւնից պահանջուած հարկերը աւելանում: Միւս վանքերն են՝ Մատնայ վանքը, սուրա տաճարը բոլորովին քայլայուած է: Մատնայ վանքը տափարակ գաշտի վերայ գտնուելով համեմատապէս աւելի է ենթարկուել վայրենի ազգերի հոտսակներին և կողոպտումներին: Վանքը ունի ընդարձակ հոգեր, այս վանքում պահվում են նոյնպէս Յովհաննէս Մկրտչի մասունքները: Մատնայ վանքից մի ժամ հեռու գտնվում են Սուրբ Սահակյ վանքի աւերակները, նախնի Եշակատի տեղում շինուած է Դերիկ գիւղը, վերջինի անունով ժողովաւրդը կոչումէ և վանքի աւերակները:

Հիմայ մի համառօտ հայեացք ձգենք կրթական վիճակի և հասարակական կեանքի վերայ: Յայտնի է, որ Հայաստանի բազմահայ և իրանց զիրքով նշանաւոր գաւառներում ուսում և կրթութիւն են ծառալում Միացեալ ընկերութիւնները: Մշտմ ընկերութիւնը ունի արական և իդական գաղոց, երկուսի մէջ ուսանում են մօտ երկու հարիւր աշակերտներ և աշակերտուհիք. արական գաղոցը կրչում է կենտրօնական, որովհետեւ պատրաստում է զիւղական գաղոցների համար ուսուցիչներ, գալրնթացքը վեց տարուայ է. աւանդվում են երեք լեզու. հայերէն, ֆրանսերէն և առարկաներ. մանկավարժութիւն չէ գասահօսավում: Չնայելով, որ գաղոցը կրում է կենտրօնական անունը, նորու մէջ ուսանում են, զիւղաւորապէս, քաղաքացոց երեխանները, շատը վաճառականի որդիք: Կյո վերջինների վերայ ծնողների խրամները և օրինակները աւելի մեծ ազգեցութիւն ունեն և շատ շուտ են արմատախիլ անում ասուցիչներից աւանդուած ինքնաճանաչութեան հրահանգները: Թաղական ծաղկոցները անմիսիթար կացութեան մէջ են, նրանց թէ արտաքին և թէ ներքին վիճակը ողորմելի է. գաղոցը ըունի ոչ նստարան, ոչ զբանախառակ, մութն է, խոնաւ, ցուրտ. աշակերտները փսխաթի վերայ են նստածած բոլորը մի սենեակում: գասազբաքեր չկան, աշակերտները ստանում են գասազբաքեր ոչ թէ ուսուցչեց, ոյլ ծնողներից, այնպէս որ մէկը սաղմոսէ կարգում, միւսը ժամագիրք, երրորդը հեղարան, չափորդը մայրենի լեզու և այն, ուսուցիչները պարտաւորվում են միւնոյն ժամանակ տիրացութիւն

անելք բոլորոցին կախում ունեն թաղականներից, վերջինները
պահանջում են ուսուցչից կատարեալ հնագանդութիւն. պա-
տահումէ, որ ոռօնթիկն էլ են կորում ազնիւ և գործունեայ մար-
դուն գժուարէ այդ ասպարիզում ծառայել և, մեծ մասամբ
վարժապետութիւն են անում այդ ազաների կրքերին և ախ-
տերին փայփայող անձինք: Գիւղերում երբեմն պատահում
են անձնանուելի ուսուցիչներ, որոնք զիւղում ունեն հեղինա-
կութիւն, երիսասարդները այդպիսիներին շատ են յարգում
և սիրում: Աստարակափան հաստատութիւնները նոյնպէս
յուսահատութեան մէջ են, ինչպէս և ամբողջ ժողովուրդը
ներկայացուցիչները արգարացնում են իրանց սոյն խօսքերով
«ինչ նշանակութիւն ունի մանր իննդիրներով պարապել երբ
ժողովը գոյութեանը սպառնումէ կորուստ, երբ բոլոր մեր
բողոքները հարստահարութիւնների մասին մնում են առանց
հետեւանքի» և, յիրաւի, Մուսա-բէղի եղենագործութիւնների
ժամանակ, երբ ժողովուրդը շատ յուղուած էր, նորա պարա-
զը ուները երեսփոխաններից պահանջում էին, խանգարելով
նիստը, որ ժողովը աւելի լուրջ ուշադրութիւն դարձնի կա-
տարուող անցքերի վերայ. և թողնի մի կողմ զանազան կաշա-
ռակեր և օրինազանց քահանաների պատճելու իննդիրները:
Երեսփոխանական ժողովները լինում են առաջնորդի նախա-
գահութեամբ և աշխարհականի ատենապետութեամբ և ունին
Մուշ երկու բաժին՝ քաղաքական և կրօնական: Կառտվա-
րութեան անտեսական խորհրդարանում որը մէջլիսի իդարէի
և կոչվում, հայերից ևս կան ներկայացուցիչներ:

Ելեւուս:


ԱՄԿԱՅԱՑԱՏԱՆԻ ԱՐԴԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Աան ինդիլներ, որոց վրայ խորհրդածելէ և տեսութիւններ արտայայտելէ առաջ, պէտք է զգուշաւոր և մանրակրկիտ ուսումնասիրութեան առարկայ ընել զայնա. այս կարգի խրնդիրներէն մին կը հանդիսանայ մեր երկրի հողագործ գասուն նիւթեական թէ բարոյական արդի կացութիւնն: Արկրագործական հարցն ամեն աշխարհի մէջ ալ կը յուզուի, զի իւրաքանչիւր ազգ այսօր որոշապէս ըմբռնած է թէ իւր հարստութեան գլխաւորագոյն աղբիւրն երկրագործութեան և նորայարակից ճարտար արուեստից մէջ պէտք է որոնել բայց մեր և օտարաց կացութեան և խորհելու եղանակին մէջ հիմնական տարբերութիւն մը կայ. օտարք՝ երկրագործական ինդիր ասելով ընդհանրապէս կը հասկանան այն գիտական միջոցներու կիրառութիւնն՝ որոցմով կարելի կը լինի ամ ըստ ամէ հողի արդիւնաբերութիւնն բազմապատկել բեկրերու որակն աղնուացնել, և ձեռաց ծանր աշխատութիւնն մեքենական ցյժով փոխանակել. իսկ մեր երկրագործական ինդիրն այդ չ' այդ կարգի առաջդիմական ձգտմանց յաջողութիւնն թէպէտ այլոց համար ապահովեալ՝ մեզ համար սակայն լոկ երազ մ' է տակաւին. երկրագործական հին զրութեան յեղաշրջումն, եթէ ոչ իսպառ անկարելի, գէթ բաւականէն աւելի հեռի է մեզմէ. գոհ ենք առ այժմ այն նահապետական գրութենէն, որ հին բարի ժամանակաց քաղցր յիշատակն կը զարթուցանէ ի մեզ. մենք «Պոր ալորով գործեմք զերկիր». շոգին, մեքենայն սատանայի հնարքներն են մեզ համար. Ի այց մենք նոյն իսկ այդ նախնական զրութեամբ չ' ենք կարող յաջողել: Մինչ հարիւրաւոր տարիներ առաջ, մեր նախահարք մեզմէ քիչ շահելով հանդերձ, իրենց կենաց ամբողջութիւնը կամ մեծագոյն մասն հայրենի վառարանին շուրջն կ' անցունէն ամուսնոց և զաւակաց անոյշ սիրով օրօպուելով, մենք այժմ—նոցա սերունդը—նոյն միսիթարութենէն զրկուած ենք և որ ցաւալին է գեռ հազիւ կենաց գարունն թեւակոխած, բաժ-

նուելով ընտանի յարկէն, թողլով ամեն ինչ որ մեր սրտին կը խօսի, նժդեհական կենաց սկզբնաւորութիւնն կ'ընենք և յածախ անգամ այդ վիճակին մէջ մեր կենաց լապտերն կը շիջանի զուրկ ծնողական կամ ամուսնական ինստիքէ, հեռի բարեկամներէ, մեր միակ ընկերն, միակ յուղարկաւորն կը լինի զարիպ քահանաց մը, և մենք կ'երթանք հանգչել «Պալըքլը» ներու հինաւուրց հանգստարանն, ուր մեր վոսյ կը հսկեն միայն երկնուղեշ լսոյանիք և նոոջիներ: Հայրենիաց մէջ ստացուածոց տէր լինելով հանդերձ, ի պանդխտութեան աշխատութեանց ամենէն նուասոն, ամենէն տաժանելին ստանձնելու յանձնառու կը լինինք. ահագին ծանրութեամբ բեռանց նկրիւ հնե՞ իշե կքելով, գեռ երիտասարդ՝ ծերութեան նշաններն կը կրենք. Փիղեքական անխնաց աշխատութեամբ և առողջապահիկ կենաց բացարձակ բացակայութեամբ վաղ ընդ փոյթ կը կորսնցունենք մեր բնաձիր կորոնն. երեմն իսկ, չը դիտեմ որպիսի պարագայներու ազգեցութեամբ ողորմութեան ձեռն կը կառկառենք փողոցներու անկիւնն. և այս ամենն՝ մինչ անդին ի հայրենիս մեզ կ'սպասեն մշակելի արտեր, այգիներ և այլն և այլն: Երդ սոյն բոլոր գտան իրողութեանց առջեւ «ինչո՞ւ» մը զետեղել պէտք է, որոց ամբողջութիւնը կը կազմէ մեր երկրագործական հարցը, որն որ, ինչպէս յայտնի է՝ շատ ու շատ տարբեր է եւրոպացւոց երկրագործական հարցէն: Յիշեալ վնչուաներուն գոհացուցիչ պատասխաններ գտնելը մտնաւանդ զանոնք բառնալու համար գործական առաջարկներ ներկայացնեն մեր երկրագործական հարցն լուծել պահել է: Իսկապէս զիտուն և տնտեսագիտ անձաւորութեան պէտք ունինք որք երկրին չորս կողմը ձամբորդելով, ժողովորդին վեճակն սւսումնասիրեն, թշուառութեան բուն գաղտնեաց թափանցեն և պալատապէս կարող լինին իրենց ըմբռնած եղանակաւ հիմնական բարեփոխումներ ի գործ գնել: ի հարկէ այդ կարգի բարերար անձնաւորութիւններ իրենց ձեռնարկին մէջ լիովին յաջողելու համար պաշտօնական հանգամանք կրելու են. մեր երկրին մէջ գոքա կը պակսին դժբաղդաբար, և քանի որ իրաց վիճակն անփոփոխ է, առանց ունէ յաւակնութեան, կը համարձակենք մի քանի իրողութիւններ պատմել մեր երկրագործ ժողովրդի նիւթականին նկատմամբ և այս առթիւ

ընդհանուր և պարզ տեսութիւն մ' ընել սոյն դասու բարցականին վրայ խօսելն ուրիշ առթի վերապահելով:

Պաւառացւոց պանդխտութեան գլխաւոր կեղոնավայրն Պօլիսն եղած է և է: Հոն կը դիմեն վանեցին, մշեցին, բաղեցեցին, սեբաստացին և այլն, որով իւրաքանչիւր հետաքրքիր մարդ՝ կարող է նոցա վիճակն ուսումնակրել փոքր ի շատէ: Երբ քանի մը ամիս շարունակ իրենց վարած կեանքին և զանազան ներքին խնդիրներուն հետեւինք ուշազլութեամբ, առանց մեծ ձգանց կրնանք ըմբռնել պանդխութեանց գլխաւորագոյն պատճառն, ամիսն կամ երկու ամիսն անգամ մը պանդխտին կը ներկայանայ խոժոռ գիմօք մարդ՝ մը, բարկութեամբ կը խօսի, աղմուկ, շփոթ յառաջ կը բերէ, պանդուխտն կը շուարի, կը յուսահատի, վերջապէս պատասխան մը տալ, ճար մը խորհել պէտք է, անծանօթ անձն կը մեկնի զրեթէ. շարունակ դգոհ, գէթ յարտաքուստ այդպէս ցոյց կուտայ, նորա գէմքն բնաւ չը ծիծաղիր, խստաբարոյ լրջութիւն մը, զրեթէ անդժութիւն մը կ'արտայայտէ: Աը հարցնես, «Մարտիրոս աղբար, Վարդան աղբար, այս մարդն ովկէ, ի՞նչ կուզէ»— Ե՞ս, աղա, բօլիսանն է, պարտք ունիմ, պարտքս կ'ուզէ: Միայն պանդուխտ մը կրնայ ըմբռնել այս բօլիսանն իսկական նշանակութիւն և նա միայն կրնայ զգալ սորա աղդած սոսկումն. այս բառն բաւական է լուծելու պանդխտութեանց խնդիրն. և արգարե պանդուխտներու հարիւրին իննսուն և հինգն պարտքի համար կը դիմեն օտարութեան. թէ կը յաջողին իրենց նպատակին համել պարտքերնուն աղատել գոնէ իրենց կենաց վերջին մասն հանգստութեամբ անցունել սոքա տալբեր ինդիրներ են. փորձառաբար գիտենք որ մինչեւ տասն և հինգ և աւելի տարիներ չարաշար տշխատութեամբ Պօլիս բնակող պանդուխտներ կան, որոց և հայրենիս վերադարձած պահուն, ճիշդ նոյնչափ պարտք կայ որչափ ի սկզբան և երբեմն իսկ աւելի: Պաւառացւոց պանդուխտ գասուն պարտքերն շատ կը նմանին դիցաբանական եօթնազլիւեան վեշապին, որոյ մէն մի զլուին եթէ կարուէր՝ տեղը եօթն հատ ևս կը բուսներ: Երդ խօսքերնիս ամփոփելով, մեր զրելեքը կը բաժնենք հինգ զլիսաւոր կէտերու. (ա) Թէ յաջողութեան տարիներու մէջ երկրագործին շահածն մեծ բան մը չ'արժէր





ՅՈՒՐԴԵՐԻ ԽՈՒՄԲ

Հրատ. «Արարա» Հանդիսի:



(բ) թէ նորա կամքէն անկախ պարագայներ փոխառութիւն ընելու կ'ստիպեն զինքն (գ) թէ փոխառուած դրամն հատուցանելու անյաղթելի դժուարութիւններ կան (դ) թէ երկրագործութեան յետագիմութեան զլիսաւոր պատճառն է պանդիստութիւնն և (է) թէ ի՞նչ դարմաններ կրնան լինել պանդըխտութեան առաջքն առնելու համար:

Առաջին կէտն լաւ մը բացատրելու համար օրինակ մը առնունք: Խնժագրենք թէ զիւղացի մը հինգ Քվէց ցորեն սերմանելու մեծութեամբ արտ մը, տուն մը, ջուխտ մը եղ և երկու հարիւր տուար ունի: Խնչլէս յայտնի է՝ Հողի պտղաբերութեան աստիճանն շատ մը տեղական հանգամանքներէ կախութն ունենալով՝ առհասարակ ամեն գաւառի մէջ նոյնը չը լինիր, իւր մեծագոյն պտղաբերութեան աստիճանն ի այսատան և ի Փոքր Եսիա 16 առ մէկ, իսկ նուազագոյնն՝ 2 առ մէկ և միջինն՝ զոր պիտի ընտրենք մեր օրինակն բացատրելու համար, մէկին տեղ վեց կամ հօթն է միայն, չափելու դրութիւնն ալ կանոնաւորեալ չ'է, և արդէն իսկ կանոնաւորութիւնն չ'ակնկալուիր, ըստ որում նոցա հեղինակն տգէտ ժողովուրդն է: Խակուտ երկրին զանազան նահանգաց մէջ ի կիր առնուած չափերն ընդհանրապէս իրարու նմանութիւնն մունին՝ բայց մանրամասնութեանց մէջ կը տարբեկին, նոյն իսկ միւնոյն գաւառի չափերն հետի նախաբերական ճշդունիւն ունենալէ. օրինակի, համար մէկ չափանուն կ'արժէ 22 կամ 24 օխա, իբր թէ 22 և 24 թուկրուն մէջ տարբեկութիւն չը լինէր, կամ տարբերութիւնն կարեւորութիւնէ զուրկ լինէր: Մենք ի ստորեւ կը նշանակինք երկու զլիսաւոր չափական աղիւսակներ, մեր ծանօթութեան սահմաննին մէջ մին Վանայ կուսակալութեան և միւսն Փոքր-Եսիայ մէջ կը գործածուի:

Վանայ կուսակալութեան ՚ Փոքր-Եսիա գործածելի

մէջ գործածելի

1 քիլէ = 8 չափ 1 քիլէ = 16 լըպլառ

3 չափ = 6 կամ 7 լիտր, 1 լըպլառ = $3^2/3$ լիտր կամ
22—24 օխա

1 լիտր = 6 օխա 1 լիտր = 6 օխա

Երդ մեր հնժագրած երկրագործ իւր հինգ քիլէնց արտէն «Երաբու».

պիտի ստանայ 35 քիլէ ցորեն, որմէ $12\frac{1}{2}/_0/(4^3/8)$ պէտք է վճարէ կառավարութեան իբր տասանորդական տուրք, 5 քիլէն պահէ յաջորդ տարուան սերմին, $4\frac{1}{2}/_2$ քիլէ՝ ընտանեաց տարեկան սնունդին, սոցա բոլորին գումարն՝ $13\frac{7}{8}$ քիլէն վերոյիշեալ 35 քիլէն հանուելով, երկրագործին ձևք կը մնայ 21 $\frac{1}{8}$ քիլէ: Յորենէն զյացեալ յարդն անասնոց պիտոյից կը գործածուի, հետեարար շահու աղբիւր ըս կրնար նկատուիլ: Տուարն, զոր վերի օրինակին մէջ 200 հատ ենթագրեցինք՝ կէս առ կէս մաքի և այծ է, ի գաւառս, մանաւանդ ի այցաստան, տուարաց տեարք իւենց ձեռքով չ'են բուժաներ տուարներն. այլ անոնք որ աղքատ լինելով գուրի են ստացուածքէ՝ սոցա բոլոր հոդն կ'ստանձնեն և ամեն խնամքն կը տանին, ի փոխարէն տարեկան շահ մը տալով կալուածատիրոց: Իւրաքանչիւր մաքիի փոխարէն գիւղացին կ'ստանայ տարին երկու օխա իւղ և երկու օխա պանիր, խսկ իւրաքանչիւր այծի փոխարէն 1 $\frac{1}{2}$ օխա իւղ և 1 օխա պանիր, որով 200 տուարէն պիտի ստանայ 350 իւղ և 300 օխա պանիր: Իւղէն ու պանիրէն 50-ական օխա իւր տան գործածութեան յատկացնելով՝ կը մնայ 300 օխա իւղ և 250 օխա պանիր: Գիւղացիք իւենց մաքիները տարին միանդամ և եթ կը խուզեն, իւրաքանչիւրն մէկ օխաէ աւելի չ'արտազրէր, ուստի 100 մաքիէն՝ 100 օխա բուրդ. արդ մէր ընտարած օրինակին մէջ գիւղացւոյն եկամուտի աղբիւրներն վերոյիշեալներն լինելով՝ ի ստորև նշանակինք նոցա ամբողջութիւնն և արմէջը:

$21\frac{1}{8}$	Քիլէ	ցորեն	= քիլէն 80	զբուշի հաշուով	2253 դշ.
100	օխա	մաքիլի	բուրդ = օխան	5	զբուշէն 500 »
300	օխա	իւղ	= » 5	»	1,500 »
250	օխա	պանիլո	= » 2	»	500 »

Այժմ անցնին կարածողական պրոց: — Վերը նշանակուած տասաննորդական տուլքին զատ, կայ նաև զինուորական տուլքն. Թուլքից մէջ ամեն արու քրիստոնեայ առանց տարիքի խորութեան պարտաւորեալ է վճարել զինուորական տուլքն

որ թէպէտ տարեկան 35 զուրուշ՝ սակայն իւր յարակից ծախքելովն 50 զուրուշի կը յանդի. արդ եթէ գիւղացին գոնէ երկու արու զաւակն ունի, զինքն ալ միասին հաշուելով տարին պարտի վճարել 150 զուրուշ։ Աղնամի կամ ովասրի տուրք մալ կայ, ոչիսար զլուկի տարին 3¹/₂ զուրուշ կը վճարուի, արդ 200 ոչխարին 700 զուրուշ։ Կապահածակն բուռչ, կառավարութիւնն ինքն կ'որոշէ կալուածներու արժեքն, և ⁴/₁₀₀₀ տուրք կ'ստանոյ. եթէ գիւղացւոյն տունն ու արտն միասին արժեն 2,000 զուրուշ, տարին պարտի վճարել 80 զուրուշ։ Սոցա բոլորին գումարն՝ 930 զուրուշ գիւղացւոյն տարեկան հասոյթէն զեղջելով կ'ունենանք 3,823 զուրուշ։ Հայ գիւղացւոյն տուրքերն տակաւին չը վերջացան, կը մնայ քուրտին ևս վճարել։ Փոքր Ասիոյ գաւառներն այս արտասովոր տուրքն աղաս մնացած են, սա պարզ պատճառաւ որ իւրենց երկրին մէջ քուրտ չ'կայ. բայց մնաք հոս մեր խօսքը կը մասնաւորենք Հայաստանի գաւառաց, որոց իւրաքանչիւրին տուաել կամ նուալ պարտասովով լինել սոյն տուրքն վճարելու. Ճշդիւ չը գիտենք թէ իւրաքանչիւր գաւառ ի՞նչ կը վճարէ, կամ աւելի շիտակը խօսելով չ'ենք ալ կարող գիտնալ ըստ որում քմահացոյքէ կախումն ունենալով ամեն տարի կը մնայ փոփոխութեանց ենթակայ լինել։ Միայն թէ մասնաւորաբար ծանօթ լինելով Վանայ շրջակայ գիւղօրէից ոմանց վճարած տուրքին՝ զայն յառաջ պիտի բերեմ հոս. այս գիւղերն են—Աւաշուց, Բախնիք, Սարէ, Բախուանց, Մջկանց, Խրորտենց, Տապ, Մուլք, Ցկոր, Որիդ։ Ամառուան եղանակին մէջ այս գիւղերու բարձրավանդակներուն վրայ կը բնակին վըանաբնակ քրտեր Տի-տէրէտան և Եղիսան յեղերէն. որքա աշնան մօտ կը գաղթեն աւելի տաք կլիմայներ, ուր ձմեռելէ զինի, գարնան եղանակին կը վերադառնան իրենց նախկին բնակավայրերը։ Սոյն քրտերուն իւրաքանչիւր գիւղացի ընտանիք պարտի տարին վճարել մէկ քիլէ ցորեն, մէկ մաքի, երեք օնսա իւղ և երկու ջուխտ բրդէ գուլպա, որոց բոլորին արժեքն 150 զուրուշէ աւելի կը լինի. և եթէ սոյն գումարն ևս գիւղացւոյն շահած զբամթն զեղջուի, ամեն յաջողութեան տարի պիտի մնայ իւրեն միմայն 3,673 զուրուշ։ Թէ ինչու և ի՞նչ իւրաւամբ քուրդն գիւղացիներէ տուրք կը պահանջէ և գիւղացին կը համակերպի

նմա, տեսականապէս չ'է կարելի այս հարցն լուծել. բայց գործնական կենաց մէջ գիւղացին կը նայ ապացուցանել թէ ինքն ոչ մեքենայ է և ոչ ապուշ այլ համակերպելէ զատ ուրիշ ճամբայ չ'ունի. Տեղական կառավարութիւնը կը պատուիրէ որ ըստ օրինի բացի իրմէ ոչ ումեք տուրք վճարուի, գիւղացւոյն ուղածն ալ այդ էր. բայց քուրդն ասոր վրէժն կը լուծէ գողութեամբ, աւարառութեամբ. կը բողոքուի կառավարութեան. եթէ դեպքը գիշեայն տեղի ունեցածէ վկայ ըստ գտնուիր որ հաստատուի ՞՞ զի ամեն ոք կը քննանար. եթէ ցերեկ ժամանակ տեղի ունեցածէ վկայից վկայութեանց մէջ ինչ ինչ հակասութիւններ ՞՞ նշմարուելով դարձեալ ըստ հաստատուիր. հետեւ արար երկու չարեաց փոքրագոյնն ընտրելով խոհեմութիւնէ քրդին համակերպելէ. Դեռ անցեալ տարի Ապրէ գիւղին գիւղացիք երկու հոգիէ բաղկացեալ պատգամաւորութիւն մը կը զրկին Եղթամարայ Կաթողիկոսին, յայտարարելով որ երկու տեղ տուրք չ'են կարող վճարել—կամ քրդերուն կամ կառավարութեան վճարելու են. Կաթողիկոսն խորհուրդ կուտայ որ միմիայն կառավարութեան վճարեն, նոքա ալ այնպէս կ'ընեն, բայց քրդերն գիշեր մը կուգան խեղձնուուն 17 ոչխարն կը յափշտակեն մինչ նոքա ի քուն էին: Ապրէ միայն հինգ տունէ բաղկացեալ գիւղ մ'է: Եյս գէպք ունէ արդիւնք չ'ունենար, ի չգոյէ վկայից: Երդ բոլոր վերոյիշեալ նկարագրէն դիւրին է մակաբերել թէ յաջողութեան ամեն պայմաններով, մէկ կողմէն արհեստին յառաջդիմութեանց նկատմամբ կատարեալ տգիտութիւն և միւս կողմանէ տեղական անյալթելի պարագայներ երկրագործին առիթ չ'են տարօգուտ քաղելու հողին տրդիւնքէն, և նա կը հարկադրի միայն համեստ շահերով բաւականանալու:

Անցնիք երկրորդ կէտին. — Ուամկական առածը կ'ըսէ «Քահանայն միշտ կարկանդակ չ'ուտեր»—Ամեն տարի յաջող չ'երթար. եթէ ձախորդութեան և յաջողութեան տարիներու վեճակագրութիւնն ունենայինք՝ առաջնիք վերջններէն աւելի պիտի երեւին. սորա պատճառն կը նաև մասամբ իւիք դարձեալ տգիտութեան վերագրել զի հողէն ամեն ինչ կ'առնենք առանց սպառումն ունէ կիրափիւ փոխարիննելու. բնութիւնն միայն պիտի վերանորոգէ հողին զօրութիւնն, արեգակ ծա-

գելու է, յորպառատ անձրեներ տեղալու են, ցող իջնելու է, հողմունք պէտք է փշն այս ինչ կամ այն ինչ ուղղութեամբ, միասին բիրելով աղաղուն տերեներ, գոսացեալ Ճիւղեր և այլն. Վերջապէս շատ մը բնական զօրութիւններ հաւաքաբար իրենց գործակցութիւնը նուիրելու են հողին որ կարենայ իրմէ պահանջուած արդիւնքն արտագրել և եթէ ըստ նուիրեն... մենք բնական զօրութեանց վրայ իշխելու կարողութիւն ունինք: Իբր միջանկեալ պարագայ յիշենք աստ թէ, վերջերս Նւկու պայէն եկած կարդ մը երկրագործական գեղօրեք արգելուեր են Պոլսոյ մաքաստան մէջ իբր մեսասակար հանրային առողջութեան, ըստ գիտենք թէ նուրիէ ստացեր են այդ համբաւառոր գասը: Ննցնինք սակայն մեր իննդրացն, ձախող տարի մը կրնայ երկրագործին հաշիւներն վեր ի վայր շրջել կառավարական առուրբերն մէկ կողմէն, անօթութիւնն միւս կողմէն, և ուրիշ բազմադիմի պէտքեր ամենքը միասին զինքն կը նեղն. եթէ նուազութիւնը սովի ստահճանին բարձրացած է՝ դրամը չ'օգտեր, միմիայն մէկ ընտանիքի համար 2—300 և աւելի ոսկիներ պէտք են տակնապն անցունելու համար. իսկ եթէ նուազութիւնը չափաւոր է գոնէ 50—60 ոսկի մը ունենալու է. արդ ի զգոյէ սոյն դրամին՝ փոխ առնուլ պէտք է. կը դիմէ յայնժամ վաշխառուին. կարելի չէ երեակայել թէ ի գաւառս դիւղացիք ի՞նչ սակով փոխառութիւն կ'ընեն. բաւական է ըսել թէ 30—40 ոսկւոյ դրամազլիսով վաշխառուներ քանի մը տարի զիւղացւոյ հետ դործ ընկով իրենց բաղդը կը շնեն, մինչ անդին խեղճ դիւղացին կը տուժէ. չ'էք հաւատար եթէ ըսեմ թէ դիւղացին հարիւր առ հարիւր կամ հարիւր յիսուն առ հարիւր սակով դրամ կը գտնէ և ի՞նչ ընէ, դրամատեալք այնչափ անզութ են որ եթէ օրինաւոր տոկոսով դրամ վիստուն ենէ՝ ոչ մէկ տեղ կարող է գտնել: Արդ եթէ վաշխառուն մէկու մը 20 ոսկի փոխ տայ տարի մը յիտոյ 40 ոսկի ստանալու պայմանաւ պարաւամուր հակ կ'ընդունի. դրամը կորսնցունելու երկիւղ ալ չ'ունի, զի արդէն պարտատիրոջ կալուածներն երաշխաւորութեան տակ առած է: Արդ դիւղացին պիտի կրնայ յաջորդ տարին պարտքն ամբողջովին վճարել գուցէ անյաջող լինի հունձքն, կամ նոյն իսկ եթէ յաջող ալ լինի ոչ ապաքէն տուրքեր կան վճարուե-

լիք, տան ուտեստ և այլ ծախքեր ունի. դոցա բոլորն զեղ-
ջելով ի՞նչ պիտի աւելնայ իրեն որ մուրհակն ազատէ. բայց
եթէ այն տարին ըս վճարէ, մուրհակն պէտք է վերանորոգուի,
և 40 ոսկւոյ տեղ արձանազբուի 80 ոսկի. յայնժամ գիւղա-
ցին կը մտածէ, կը մտածէ, և իբր նոր իմն Արքիմէտէս յան-
կարծ կը գոչէ «էվրէքա էվրէքա»—գտայ, այսչափ մարդ Պո-
լիս կ'երթան շատ գրամ կը շահին, ինքն ինչու չ'երթայ, քիչ
ժամանակ պանդխտութիւն կ'ընէ, ամբողջ պարոքը վճարելէ
զատ, բաւական ալ գրամ կը հաւաքէ և շուտով հայրենիք
կը վերագառնայ. ծրագիրն պատրաստուած է. առաջին բա-
ժանումն ծանր կ'ըլլայ, վերջապէս արտասուքներ կը հեղուին,
համբոյրներ կը փոխանակուին, դիւղացին Աստուծոյ ապաւի-
նած ձամբայ կ'ենէ, բայց երբ անգամ մը Ա. Պոլիս կը հաս-
նի՝ ի՞նչ յուսախաբութիւն... Եռաջին տեղն ուր կը դիմէ
Պոլսոյ մաքսատունն է, զի հոն պիտի գտնէ իւր հայրենակից-
ները, իրեն նման դժբաղդ պանդուխաներ. ի՞նչ դործի պիտի
ձեռնարկէ այս նորեկ պանդուխտն—անշուշա բեռնակութեան
—զի աղկէ գուրս ուրիշ գործ ձեռքէն ըս գար. իրեն կ'ըսուի
թէ օրականը հինգ զրուշ պիտի լինի. հինգ զրուշ եթէ այդ
դրամն ամբողջովին ինայէ իսկ՝ տարին հաղիւ տասն և հինգ
ոսկի ի հաշիւ իւր պարտուց վճարում կինայ ընել մինչզեռ
գարձեալ մայր գումարը պիտի մնայ, մուրհակն վերանորոգել
հարկ պիտի ըլլայ, տոկոսն պիտի բանի բաղադրչեալ բո՞յսէ
գժոխային կանոնով. բայց արգէն հինգ զրուշն հաղիւ իւր
օրական ուտեստին կը բաւէ, ինչպէս կարելի է տարեկան տասն
և հինգ ոսկւոյ ինայողութիւն ընել է՛հ, վերջապէս անգամ
մը եղածն եղած է, պէտք է սկսել կինսամարտն, չարաչար աշ-
խատիլ ուտեստի համար. երբ բօլիսածին գայ՝ մուրհակին
վրայ քանի մը ոսկի ևս աւելացնել և ծամբել տղայք երկիրն
են թող անոնք աշխատին և պարոքն հոդան մասամբ, մինչեւ
որ մեր պանդուխտ եղբայրն Պոլսոյ մէջ աւելի յարմար գործ
գտնէ, ամիսներն կ'անցնեն, բաղձացեալ յաջողութիւնն չ'այ-
ցելիր մեր նժդեհին. ի՞նչ յուսախաբութիւն, լաւ չէր միթէ
բնաւ Պոլիս ըս գաղթել հայրենիքի մէջ աւելի կընար շահել
արդարեւ Պոլսոյ մէջ շատ ոսկի կար, այդ ուղիղ էր, բայց
ինքն միայն այդ ոսկւոյ պարկերն կընելու վեճակեալ էր.... Տա-

ըիներ կ'անցնին, իւր վիճակին փոփոխութիւնը խիստ ան-
նշան է, հիմայ մի քիչ բան—ամիսն 50 դրուշ—կրնայ խնայել
այդ ալ բօլիսածիին տոկոսն է, օրին մեկը պանդուխոն ցուրտ
կ'առնե, գլուխը կը ցաւի, մարմինը կը տկարանայ, զարմանալի
բան. երկիրը ձմեռ ժամանակ երգիքի վրայ կը պառկեր և չ'եր
հիւանդանար. այս Պոլիսն ի՞նչ տեսակ կլիմայ ունի. Պատը
զիւղէն Սթամպոլ կ'անցնիս, ճամբայն հարբուխ կ'առնես—
Եհ, Պոլիս ծովեղերեայ քաղաք է, օդն միշտ ենթակայ է փո-
փոխութեան, զգոյշ կենալ պէտք է. Պոլիս հարուստի քաղաք
է, դու աղքատ մարդ, կենաց պայքարին մատնուած, տաքին
ցուրտին չը նայելով այսպէս հիւանդ կը լինիս—այսպէս մեր
պանդուխոն կը հիւանդանայ: Եթէ մի վաճառականի քով
կ'աշխատէր՝ վաճառականը կըսէ «Եյժմ որ հիւանդ ես, ինձի
չես կարող այլ ևս ծառայել զնա աղեկցիր, յետոյ գարձեալ
եկ, եթէ տեղդ ուրիշ մարդ բերուած չ'է դքեղ կ'ընդունիմ: Եյս
խօսքելով և հանդարտ խղճանքով կը ճամբէ զնա.
բայց զիտէք առողջութեան ժամանակ ի՞նչպէս կ'աշխատէր
խեղճ բեռնակիրն. ձմբան ամենասաստիկ եղանակին, կարճ
պարեգոտ մը հագած սառսալով, դողլոջելով օրն ի բուն կը
վաղէ մէյ մը Պալաթիա Պանք օթօման, մէյ մը զրուէտի Լիօ-
նէ, մէյ մը Պալք բազար, մէյ մը շուկայ, այժմ հեռադ-
րատուն, քիչ վերջ նամսկատուն, այսպէս մինչև երեկոյ, և
ի՞նչ կ'ստանայ ի փոխարէն այս աշխատութեանց, ամիսն Եպ-
իոն անձ. հիւանդութեան ժամանակ կամ խանի մանկիւնը
զաղըալի անկողնոյ մը մէջ՝ կամ եթէ բարեբազդէ՝ ազգային
հիւանդանոցին մէջ կը հեծէ. թէ որ հիւանդութիւնն ան-
յուսալի է՝ Պալքը իրեն պատրաստէ, իսկ եթէ յցս կայ՝
յայնժամ բժիշկն կը յանձնաբարէ նմա հայրենիք վերադառ-
նալ բայց ճամբու ծախք՝ 10 տարի աշխատէր է չ' կրցած
ճամբու ծախքն իսկ աւելցնել հայրենակիցներն իրենց մէջ
զրամ կը հաւաքին և զինքն հայրենիք կը ճամբէն. երբ հայ-
րենի տուն կը համնի՝ ուրախութիւն և տրամութիւն իրար
կը խառնութիւն. տասն տարուան ժամանակամիջոցին մէջ որպիսի
փոփոխութիւն. կայտառ մարդն, գեղներ, մարեր, բոլորովին
ծերացեր է. դոնէ քսակն պարապտ ետ գարձաւ. յուսախա-
բութիւն, մի տասն փարայ իսկ չ'կայ...:

* * *

Խնչպէս կ'ուզէք ուրեմն որ այսպիսի պարագայներու մէջ մեր երկրագործութիւնը զարգանայ, մեր ժողովուրիդ յառաջադիմէ, պանդխտութեանց շարքը դադրի։ Դիւղացի երկրագործն քիչ շատ բարեկեցիկ ապրելու համար երեք ամենատարրական բարեփոխմանց պէտք կայ.


Ա. Պէտք է Ա. Պոլսոյ Երկրագործական Դրամատունն զօրացնելով՝ իւր նպատակին ծառայեցնել. այս գաւառաց բոլոր զլիսաւոր քաղաքներուն մէջ մասնաձիւղեր բանալով՝ առառաւելն 9% տոկոսով դրամ փոխ տալ գիւղացւոց և իբր ապահովութիւն՝ նոցա ստացուածքն դրաւ առնուլ։

Բ. Վրդերու հարստահարութեանց միանգամ ընդ միշտ վերջ տալ զի կառավարութիւնն ինքվինքն խաբած կ'ըլլայ և իրեն իսկ մնաստ՝ եթէ կը կարծէ թէ հարստահարութիւնք վերջացած են և ամենուրեք կնաց և ընչեց ապահովութիւն կը տիրէ, մինչդեռ ամենօրեայ դէպքեր հակառակը կ'ապացուցանեն։

Գ. Երկրին զլիսաւոր կեդրոնները ծովեղերքին հետ երկաթուղեսվ կամ վերջապէս խօսքի ընդարձակ նշանակութեամբ օրինաւոր խճուղիներով միացունել որպէսզի խեղճ ժողովուրգնին ձեռքի ապրանքը քիչ շատ բան մը արժէնայ և իւր աշխատութիւն յումպէտս վատնուած չ'ըլլայ։

Մինչև որ այս երեք նախնական բարեփոխումներն ի դործ ըլ դրուին, ժողովրդի նիւթականն ամենեին ըլ կրնար յեղաշըջել ի լաւ անդր, մինչդեռ երկրագործական նոր դրութեանց կիրառութիւնն, և առ այս հարկ եղած բազմադիմի բարեփոխումներն յաւիտեան կը մնան իբրև երազ։







ԱՏԵՓԱՆՆՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ, ԱՌԱՋՆՈՐԴ ՆԻԿՈՍԻԴԻՈՅ

Հրատ. աՌայքոս Հանդիսի:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՍՏԵՓԱՆՆՈՍ ԵԳԻՍԻՈԳՈՅ

ԱՌԱՋՆՈՐԴԻ ՆԻԿՈՄԻԴԻԱՑ

Մեծ մարդոց փառքը պէտք չէ՝ դատել
նոցա ասողինի բարձրութենէն, հապա ի-
րենց բեղմնաւոր գործերէն որ ինպաստ հան-
րութեան:

Ճշմարիտ առաջնորդ մէ սա, որ բոլորանուէր կ'աշխատի
իւր ժողովրդի բարեկազմութեան համար և հայրենասէր մէ
բոլոր հոգւով այլ առանց երբէք արտասանելու ազդ, հայ-
րենիք, աղջութիւն և հայրենասիրութիւն բառերը: Աըլսորչի
այս բառերէն և Անդրաշի կոմսի նման, այն հաւատքն ունի
թէ մեծ մասամբ այս մեծ բառեր հնչեցնել սիրողներն ոչ այլ
ինչ բայց եթէ գծուծ փառասէրներ և ողորմելի գործիչներ են,
որ իրենց կարծեցեալ աղջասիրութիւնը վաճառքի պէս կը
ծախէն: Իւր ժողովրդի համար շատ անվամ ծայրայել զրբ-
կանաց և ծանր վտանգներու ենթարկած է իւր անձն, առանց
յաւակնութեան, առանց ցուցանութեան:

Եյսէ աշա կատարեալ նկարագիրն այս եկեղեցականին, որ
ի ստորև պիտի տեսնուի իւր օրինակելի կենսագրութենէն:

Ստեփաննոս եպիսկոպոս Յովակիմեան ծնած է ի Նիկոմի-
դիա 1846 թ, յունիսի 12-ին, և մլրատութեան անունը պառած
է Սուրէն: Պատանի հաստկում իւր հօր որոշմամբ կ'երթայ
մերձակայ Նրմանշի վանքն ուսանելու. անդ Սուրէն մի կողմէ
կը սովորի և միւս կողմէ տիրայութիւն կընէ ըստ ժամանա-
կակից սովորութեան: Վանքի նշանաւոր միաբաններէն Պէտրի
վարդապետ, որ յետոյ վահանայր եղաւ, խոռվութեան պատ-
ճառաւ կը հեռանայ Զմիւռնիա և ապա իւր մօս կը կոչէ
Սուրէն տիրացուն: 1865-ին Հայնազարեան Կարսապետ վար-
դապետ Փարիզէն Պոլս երթալուն, հիւանդութեան պատ-
ճառաւ կը հարկադրուի մնալ ի Զմիւռնիա առաջնորդարանի

մէջ, ուր ինն ամիս շարունակ կը իննամուի տիրացու Սուրէնի ձեռամբ։ Շահնազարեան, Սուրէնի եռանգուն հոգածութեան համար, շատ կը սիրէ զնա, իւր կինաց քաղցր և տիրալի պատահարները կը պատմէր նմա և իբր վերջաբան միշտ սա խօսքերը կը կրինէր «Արայէդ կ'երեկ որ վարդապետ լինելու համար ծնած ես ուստի ապագային նայէ որ Խրիմեանի ազգասիրութիւնն ունենաս, բայց անոր պէս եռանգդ ցցց չը տաս աշխարհի, ամեն գործոցդ մէջ ունեցիր լիակատար խոհականութիւն և լուրթիւն։ Զէյթունի պատերազմի ժամանակ մեծաքանակ դրամ հաւաքեցի, քանի՞ց նապոլէոնի ներկայացայ, այլ այն ժամանակ ոչ ոք իմացաւ և հիմա է որ կը պատմեմ։ Ինն ամսուան կենակցութենէ յետոյ Շահնազարեան լարով և շնորհակալու զգացմամբ կը մեկնի Զմիւռնիայէ ի Պոլիս, նուիրելով նմա իւր լուսանկարն աշխարհական հագուստով։ Տիրացու Սուրէն այն օրէն իւր սրաի վրայ կը քանզակէ Շահնազարեանի այդ իրատը յամենայնի հետեւելով այնմ։

Գէորգ վարդապետ Նրմաշ վերագառնալուն՝ իւր հետ կը տանի Սուրէն, այլ սա չկարենալով կենակցիլ միաբանութեան հետ կը հեռանայ Ա. Պոլիս, ուր քիչ ժամանակէն կ'սպառէ իւր դրամն, որոկ կը պարտաւորի երթալ Զուգուր-Զէշմէ խանն ապրել բալուցիներու հետ, զորս կը ճանաչէր Նրմաշն։ Արբակի օրերը բոլոր բալուցիք կը հաւաքուէին խանի մէջ և Սուրէն իբր վարդապետ քարոզ կը խօսէր նոցա. և իւր ոգեւորիչ զգացմամբ ամենու սիրտը դրաւած էր։ Թէկ 23 տարին կ'անցունէր, սակայն տակաւին ուսման ջերմ փափաք մ'ունէր և այս նպատակի համար կը դիմէր ուր կարելին էր։ Պատրիարքի տեղակալն յանձն առաւ որ Սուրէն յաձախէ Մայր եկեղեցւոյ վարժարանն, այլ նոյն միջոցին Նրմաշի միաբաններէն մէկը իբր խոռվարար մը ամբաստանելով Սուրէն, տեղակալին յետ կ'առնու իւր որոշումն և Սուրէն վերստին կը դատապարտուի յուսահատութեան։

Եւ օր մ'ես Շահնազարեանի բարիացակամ հոգին իրեն ապաւէն կոչելով կը դիմէ Շահնազարեան վարժարանն և դրաբառ աղերսագիր մը կը մատուցանէ Խասգիւղի քարոզիչ և վարժարանի խնամակալութեան նախագահ Ներսէս եպիսկոպոս Վարժապետեանին։ Ներսէս ի նկատ առնելով նորա

ուսման՝ բուռն սէրը, հակառակ աշակերտի ամեն անյարմա-
րութեան կրնդունէ զնա իբր աշակերտ, այլ իւր լու հայկա-
բանութեան համար կը տնօրինէ, որ ի փոխարէն ինքն ևս
միանգամայն հայկաբանութեան օդնական դասատու լինի: Այս-
պէս ահա Առւրէն իբր աշակերտ և իբր դասատու կրնդու-
նուի ՀաՀնաղարեան դպրոցի ժառանգաւորաց ձիւղին մէջ,
ուր սակաւ ատենէ մը յետոյ կսկսի կիրակի օրերն քարոզներ
արտասաննել ժառանգաւոր աշակերտաց: “Ներսէս իրեն քար-
տուղարն և սարկաւագն կընէ զնա, մինչ տակաւին դպրոցի
մէջ էր: 1871-ին, երբ գեռ գպրոցական էր Առւրէն սարկաւագ,
“Ներսէս կ'ընտրուի առաջնորդ Նիկոմիդիոյ և նոյն թուին
կը մեինի իւր նոր պաշտօնավայրն, հետք տանելով նաև Առւ-
րէն սարկաւագ իբր իրեն ձեռնասուն աշակերտն և օդնական.
«Դպրոցը պիտի թողուս և դաս, պէտք ունիմ քեզի, և աւելի
պէտք ունիմ զի Նիկոմիդիացի ետք: Այսպէս Առւրէն իւր
հոգեոր հօր, “Ներսէս Վարժապետեանի հետ կ'երթայ Իզմիտ*),
ուր կը լինի նորա աջ բաղուին և այդ ժամանակէն կ'սկսի
իւր գործունէութեան շրջանն որ երթալով իրաւամբ առ-
աւելութիւն մը սահցած ունի մեր նախնի և ժամանակակից
մի կարգ գործիչներու բաղզատամամբ:

Տաղ-Գիշ:—1872-ին Առւրէն սարկաւագ, “Ներսէս եպիս-
կոպոսի հրամանաւ, կ'երթայ Տաղ-Գիշ խովեալ ժողովուրդն
խաղաղելու, եկեղեցւոյ բեմէն քարոզներ կը խօսի, բացատրե-
լով նոցա բարեկեցութեան անհրաժեշտ պայմաններն, և երբ
կը յաջողի տիրանալ զիւղացիներու սրտին, անմիջապէս կը
ձեռնարկէ հանդանակութեան և այնու կը կառուցանէ դպրոց
մը, զոր ցայն վայր չունէին Տաղ-Գիշիք: Ի նկատ ունենա-
լով վիճակին չքաւոր և անկանոն կացութիւնը “Ներսէս կսկսի
յուսահատիլ: Առաջնորդարանի նորոգման համար իւր գըր-
պանէն կը ծախսէ 1,200 ռուբլի և այս չի յաջողիր ստանալ
գաւառուի ազգ. սնառուկէն, միւս կողմէ ևս 1,500 ռուբլի թեմի
աղջային տուրք կը պարտէր պատրիարքարանին, որ շարու-
նակ ձանձրոյթ կը պատճառէր “Ներսէսին, իւր պահանջում-
ներով:

*.) “Նիկոմիդիայ այժմեան գործածական անունն է Իզմիտ:

Առաջնորդական վիճակի բարւոքման համար՝ Ներսէս կը խորհի իւր ձեռնասունի հետ ընդարձակ շրջագայութիւն ընել ամեն կողմէ թեմի կէս մասն ման գալէ յետոյ կը վերաբառնայ Իզմիտ, ուր Սուրբէնը վարդապէտ կը ձեռնադրէ 1873 թ. փետր. 21-ին և յետոյ, անմիջապէս, նորընծայ Ստեփաննոս վարդապէտի հետ կը շարունակէ իւր շրջագայութիւնն, կընէ ինչ որ կարելի էր ընել այդ կարձ ժամանակում. սակայն իւր հաւատքն ու եռանդը տկարացած էին այնպիսի խղճալի առաջնորդութեան մը վրայ, ուստի կ'որոշէ հեռանալ. և մի օր կը դառնայ իւր ձեռնասունին. «Ստեփան վարդապէտ, երկու տարի չկայ առաջնորդութիւնս, բայց ահա այսօր պարտքերուն մէջ կը խեղտուիմ, այս ընթացքով պիտի պարտաւորիմ» Պոլսոյ տունս ալ ծախել. Ալ չեմ կրնար մնալ. պաշտօնս քեզ կը յանձնեմ ու ևս Պոլիս կ'երթամ այլ ևս չգալու պայմանաւ։ Եւ արդարեւ Ներսէս 1873 մայիսի վերջին կը հեռանայ Իզմիտէն, իրեն փոխանորդ նշանակելով Ստեփաննոս վարդապէտ Յովակիմեանը.

Ստեփաննոս վարդապէտ քսանեօթնամեայ հասակում կընգունի այն քայլացուն թեմի հովութիւնն զոր յուսահատօրէն լքած էր Ներսէս. Մինչեւ այդ տարիքն Ստեփաննոս ստացած էր այն խոհականութեան և փորձառութեան ծշմարիտ գիտակցութիւնն որ իւրաքանչիւր հանրային մարդու գործունէութեան ուղեցցյը լինիլ պարտի։

Գիտէր թէ առաջնորդանիստ քաղաքում կինալով անկարելի է իրական ծառայութիւն մատուցանել իւր վիճակի ժողովրդեան, որ ամենուրեք թէ նիւթապէս և թէ բարցյապէս շատ ցաւալի կացութեան մէջ կը գտնուէր, գիտէր թէ քաղաքէն չէր կարող ծառայել այն գիւղացւոց, որ եկեղեցի չունէին, որ գալոց չունէին, որ բաղնիք չունէին, որ ջաղացք չունէին, որ առողջարար ջուր չունէին խմելու, որ թշուառ գաղթական էին և տուն չունէին, և որք մի խօսքով այս ամենի հետ միասին և ոչ ալ դրամ ունէին, ուստի կը վճռէ մէկդի թողուլ դրիչն ու մելանն, որ մեր առաջնորդներու միակ գործունէութիւնն է, և իւր կեանքն անցունել գիւղացւոց մէջ և գիւղացւոց համար։ Գաւառազլիսի ամեն ժողովներն և գործերը կարգ ու կանոնի տակ կը դնէ ըստ սահմանա-

գրութեան, իրեն վտօնանորդ մը կը նշանակէ և այնպիսի տնօրինութիւն կը հաստատէ որ վիճակի ամեն պաշտօնական թղթակցութիւններն կամ որոշումներն անպատճառ իւր գիտութեամբ լինի և ամեն թուղթ իւր ձևոքէն անցնի ուր և լինի ինք: Այս գրութիւնն հաստատելէն յետոյ այլ ևս հոդչունէր եթէ ամբողջ աարին իսկ բացակայ մնար քաղաքէն:

Նիկոմիդիա:— Ներսէսի մեկնելէն մի երկու ամիս յետոյ Սահմաննոս վարդապետ Նիկոմիդիոյ հայ հասարակութենէն կը հանդանակէ 1200 ոռորդի և միւնցն տարին կը նորոգէ քաղաքի երկսեռ վարժարաններն: Ապս այլ և այլ ժամանակի ընթացքում շինած է եկեղեցւոյ խաչկալը, հիմնած է բազմութիւն օգտակար ընկերութիւններ, որպէս են Ասքանազեան, Աղքատախնամ, Հայկուհեան, Տարեգործական, Ուսումնասկրաց, Տարեսիրաց, Գողրաց գասի, Թանգարանի և այլ ընկերութիւններ, որոցմէ իւրաքանչիւրն ըստ կարողութեան մատուցած է արժանաւոր ծառայութիւն, սակայն ամենէ աւելի յիշատակութեան արժանի է Տարեսիրաց ընկերութիւնը զոր կը կազմէ առաջնորդը ձկնորսներէ և այլ համատիճան տղէտ մարդիկներէ, նպատակ ունենալով պարսպել և վայելչապէս զարդարել հայոց ծառալարդ գերեզմանատունն, ուր 1877-ին առաջնորդի կամեցողութեամբ մեծ հանդիսիւթաղուեցան 6—7 երեելի անզլիացի զինուորականներ: Ննկէ ի վեր ամեն տարի անզլիական շոգենաւ մը յատկապէս կ'երթայ Նիկոմիդիա այցելելու այդ քաջ զինուորականաց գամբարաններ: Սաեւան վարդապետ տղէտ ձկնորսներու օժանդակութեամբ զեղեցիկ պարիսպ մը կը քաշէ գերեզմանոցի չորս կողմն և քսան վայրկեան չեռուն լեռը փորել տալավ կը յայտնուի ընտիր ջուրի տուատաբուխ ակ մը զոր խողովակներով բերել կուտայ մինչեւ գերեզմանատունն, ուր գրան առաջ մարմարիոնի զեղեցիկ աղբիւր կը շինուի: Այսօր այդ ջուր քաղաքի ընտրելագոյն ջուրը կը համարուի և ամեն ոք անկէ կը զործածէ խմելու բաց աստի գուրսէն և ներսէն կը նորոգէ Նիկոմիդիոյ եկեղեցին, որ իւր ներքին գեղեցկութեամբ եթէ ոչ գերեզմանց, անտարակցյա, հաւասար է Պոլսոյ ամենազեղեցիկ եկեղեցիին, և ներքին նորոգութեան ամբողջ ծախքն կատանայ Վրիգոր Ոսկանեան բարեգործ անձէ մը նախապէս ամեն ջանք և համազում թափելով:

Ստեփաննոս տակաւ առ տակաւ կը ձեռնարկէ ընդհանուր վիճակի բարւոքման, կը յաջողի վճարել Ներսէս եպիսկոպոսի 1,200 ռուբլի անձնական պարագն, զոր թեմը կը պարտէր նմա և նմանապէս հատուցանել նորա ժամանակէն մնացեալ պարիալքարանի 1,500 ռուբլին։ Եյս չնչին հաշիներ տեսնելէ յետոյ 1874-ին կակսի այն մեծ շրջագայութեան, որ քան և եօնն տարիէ ի վեր կը շարունակի տակաւին։

Աղաբայազար. — Նիկոմիդիոյ վիճակի ամենէ հայաշատ քաղաքն է այս, ուր կը գտնուի աւելի քան 2000 հայ տուն։ Մինչև 1874 թուականն այդ բազմաթիւ հայ աղբաբնակութիւնը ունէր միայն մի երկու ողորմելի ուսումնարան աղայոց համար, իսկ իգական սեռն բացարձակապէս զուրկ էր ամեն ուսումէ և կրթութենէ միանգամայն. փոքր և մեծ աղջեկներ իրենց ժամանակը կանցունէին փողոցի փոշիի և ցեխերու մէջ, որպէս ցարդ սովորական է տեսնել արարատեան գաշաի գրեթէ ամեն գիւղերում։ Կանայք ծոյլ էին և անպարտաձանուած տնային տնտեսութեան և մաքրակիցութեան մասին. իսկ արք պարբերական յարաքերութիւն ունենալով Պոլսոյ հետ, իւրացուցած էին առաւելապէս մայրաքաղաքի կենաց վատթար յատկութիւնները. զինեմոլութիւնն և խաղամոլութիւնն նոյա սիրելի առարկայն էին, որով զուրկ կը մնային մարդկային պարտաճանաչութեան գիտակցութիւննեն. թէե տատ պարտինք խոստովանիլ թէ այդ գիտակցութեան պակասութիւնն ընդհանուր է մեր աղջի մէջ։

Ստեփան վարդապէտ, որ նախապէս իւր Հոգեւոր Հօր Ներսէս Վարժապէտեանի հետ այցելած էր ամբողջ վիճակի, անտարակյս նշմարած լինելու էր Եղաբաղարի հայոց այդ կացութիւնն, որովհետեւ 1874-ի սկզբին երբ առաջին անգամն իր առաջնորդ կ'երթայ այլտեղ, իւր հանրույին քարոզներով և պաշտօնական զօրութեամբ կ'արծարծէ ընկերային բարեկազմութեան խնդիրը։ Երական սեռի վարժարանները ըստ կարելցին կանոնաւոր ընթացքի մէջ կը զնէ և կը կառուցանէ առաջին աղջկանց վարժարանն Սուրբ Լուսաւորիչ թաղի մէջ, որմէ անմիջապէս յետոյ կը հասասաէ կիրակնօրեայ լարաններ կանանց համար։ Դիւրին է երկեակայել որպիսի գժուարին գործ մէ կանանց լարանի հասասաւու-

թիւնն այնպիսի երկրի մը մէջ ուր կանայք և ոչ իսկ կարդալ գրել գիտէին. այնուամենայնիւ կարելի եղած պայմաններով յառաջ վարեց այդ նշանաւոր ձեռնարկն և կամաց կամաց նմանօրինակ լսարաններու թիւը հասուց չորսի, իւրաքանչիւր թաղի համար մէկ լսարան: 1887-ի սեպտեմբերին բաղդ ունեցաց տեսնել այդ լսարաններն, որոց համառօտ մի նկարագիրն, այն ժամանակ, ըրի «Արևելքի» մէջ. շատ ընթերցողներ և մասնաւորապէս Խրիմեան Հայրիկ հիացմամբ կը կրկնէր Խզմիտի առաջնորդի այդ գործը:

Կիրակի օր մ'էր մի բազմամարդ ընտանիքի տուն հիւրէի. գիւրաւ կարելի էր նկատել թէ իգական սեռի համար արտակարգ օր մ'է այդ: Տնային ամեն գործ հապճէպով կը կատարէին և կ'շտապէին կերակուրի, թէև տեղեակ էի որ լսարան ունին. սակայն երբեք չ'էի երեսակայցէր թէ իրենց այդ ստիպազականութիւնը լսարանի համար լինէր. ուստի հետաքրքիր էի իմանալ: Տան ծերունին, Ատեփան աղա Խոմքուլեան պատախանեց «Օ», չ'ք զիտէր. ամեն կիրակի կնիկներու մեծ օրն է. լսարան կ'երթան, կէս օրին քաղաքի ոչ մէկ տան մէջ կնիկ չ'ս կրնար գտնալ. ամենքը հոն են. անիրաւները շատ անգամ մեզի անօթի կը ձգեն ու կը թողուն կ'երթան: Յիւսւի, որպէս յետոյ շատեր ևս հաստատեցին, ժամ 12-ին տունի մէջ դժուար թէ իգական սեռի անհատ մը գտնուի: Վաենքը գուրսն կ'ելնեն տունէն, և հօթնամեայ աղջիկն սրկուալ մինչև զառամեալ պառաւն կը զիմեն լսարան: Կէս օր տակաւին չկար, այլ լուսամուտէն կը նշմարէինք սպիտակ շըղարշներով կանանց բազմութիւն մ'որ հետպէտէ կանցնէր փողոցէն՝ ախնածութեամբ: Ի տես այս երեսյթին խորհրդաւոր վարանք մը պատած էր ուշա կը խորհէե թէ այսպիսի թերակիրթ հասարակութեան կանայք ի՞նչ զօրութենէ մշեալ արգեօք զարգացյեալ Վամբիկայի կանանց նման այնպէս ջերմագին եռանդով ու սիրով կը զիմեն այդ կը թական վայրերը:

Վարական սեռին իրաւունք չկայ ներկայ լինել կանանց լսարաններուն, սակայն իբր օտարականի արտօնութիւն արտած էր ինձ: Ժամ 12-ն անցել էր երբ հասանք Ա. Կարապետ թաղի լսարանն, ուր շուրջ 700 կանայք և աղջիկներ հաւաքուած կային. ընդարձակ սրահի բոլոր նստարանները զրաւեալ էին

և շատեր ոտքի վրայ կը մնային: Հանդիսականք երեք դասի բաժնուած կ'երեւեին, դպրոցական օրիորդներ, բուն երգեցիկ խումբ, և սովորական բազմութիւն: Վաճենի առաջ զրուած կային զրքեր, թուղթ և զրիչ Վարդապետ մը կ'ընթեռնուր աւետարանի այն կտորն, որ կը բացատրէ արանց և կանանց ամուսնութեան նշանակութիւնն ու պարտաւորութիւնն: Եպա քարոզիչն սկսաւ պարզ ոճով բացատրել իւր կարդացած աւետարանի իմաստն, առաւելապէս ծանրանալով մայրական պարտաճանաչութեան վրայ: Իւր քարոզն աւարտելէ յետոյ մեկնեցաւ վարդապետն և կանայք միահանուռ սկսան նուագել նախ ազգային երգեր, շարականներ և պատարագի ժամասցութիւն, կովկասեան շատ մը երգեր, որոց դոյութեան վրայ իսկ չէի խորհնչեր այս հեռաւոր երկրում, յաճախակի կը ցընցէին մարդուս հողին դուրս ելնելով Եղաբաղարի կանանց դաշնականայն բերանէն: Մի խօսքով եւրոպական քաղաքակրթիչն կենաքէն, եւրոպական սովորութենէն հետի եղող այս կանայք և ատամնալուրի պառաւներն անգամ բերանացի զիտեն նուագել մեր ժամանակակից գրեթէ բոլոր ազգային երգերն, զիանն թնդացնել օգը մեր հարց հոգեցունց շարականներով և պատարագի քաղցրալուր արարողութեամբ: Երգեցողութիւնն յաճախ կընդհատի փոքրիկ աղջիկներու բեմբասցութեամբ այլ և այլ նիւթերու մասին: Մայրերն ու պառաւներն ուրախութեան անսահման ժպիառվ կը զիտէին իրենց զաւակներն և անտարակոյնէ որ կը վատէին ուսման սիրով: Եսկէ յետոյ կ'սկսէին ընթերցանութիւնն. կորաքամակ պառաւներն իսկ նստարանի առաջ նստած կարգալ զրելու դասեր կ'առնեին: Վերստին կը թնդար սրահն կանացի բարձրաթոիչ երգեցողութեամբ և այս ընթացք կըտեւէր մինչև ժամ չորս և երբեմն հինգ որմէ յետոյ կ'աւարտէր լսարանն:

Լսարաններու շնորհիւ այսօր Եղաբաղարի խպական սեռն զրեթէ ամբողջովին զիտէ նմանապէս կարգալ և զրել և մինչ 1887 թուականն քահանաց կամ վարդապետ քարոզներ կուտար լսարաններու մէջ իւրաքանչեւր քարոզի համար ստամալով մեկ ոռորին, անկէ ի վեր կանայք են որ լսարանի բացման ժամանակ աւետարան կը կարգան և քարոզներ կը խօսին: Առեփան եպիսկոպոսի ոյն նշանաւոր հաստատութեան շնորհիւ

ոյժմ բոլորովին կերպարանափոխ եղած է Առաքաղարի կանանց բարք ու վարքն, և իդական սեռն աշխատութեան մեծագոյն բաժինն ունի ընտանիքի պահելու մասին: Նւելի աշխատահեր և աւելի գործունեայ է քան արտիան սեռն և ամուսնոյ մը գործերն եթէ ձախորդութեան մատնուած լինին, կինն է որ իւր ձեւագործներով կը խնամէ տունը: Ասարանի բացումէն ի վեր կանայք միանգամայն կազմած ունին զանազան ընկերութիւններ, որոցմէ մին իւր դրամով վարժուհի կը պահէ: Խտական սեռի այս յառաջաղիւնական ձեռնարկութեանց առթիւ խստապարանոց այրերն ամօթահար եղած էին, առաջնորդն քաղցրութեամբ կը դատապարտէր նոցա յուի ընթացքն, մինչեւ որ նորա ևս սկսան կաղմել մի քանի կրթական և առաւելապէս մոլութեանց գէմ մաքառելու, և շահասիրական ու խնայողական ընկերութիւններ, այնպէս որ այսօր ամեն Առաքաղարցի հայ փոքրէն մինչեւ յետին ծերունին ո և է ընկերութեան անդամէ: Խթէ պատունի է, մինչև 35—40 տարին բաւական զբար հաւաքած կը լինի ընկերութեան սնդուկին մէջ, եթէ ծերունի է իւր մահէն յետոյ իւր զաւակներու և ընտանիքի համար կարեսոր դրամազլուս կը թողու ընկերութեան մօտ: Ահա այս ընտիր պայմաններն, որով հասարակութիւնն մը կարող է յառաջաղիմել հզօրատպէս, և որոնք Նիկոմիդիոյ Առաջնորդի գործունելութեան առաջին և զիսաւոր նպատակը կը կազմեն: Ուստի 1874-ին երբ կ'երթայ Առաքաղար չի բոհանու լոկ լարանի և վարժարանի հաստատութեամբ, հապա նոյն ժամանյն կրթականի հետ միասին ի նկատ կառնու և առողջապահականն և նիւթականը: Դպրոցները, կարելի է ըսել, զուրկի էին հաստատուն եկամունաներէ:

Ընդպարձակ քաղաքում հայք իրենց մասի մէջ չունէին բաղնիք և կանայք միշտ հարկազբեալ էին երթալ հեռուն թուրքաց թաղի խորերն բաղնիքի համար, որով յաճախակի հայ կանանց համեստութիւնը կը վերաւորուէր թուրք սրիկաններէն: Առաջնորդն այն չարկի առաջքն առնելու հաստատուն որոշմամբ, կը ձեռնարկէ բաղնիքի շնութեան, զոր Ներսէս ևս կը փափաքէր երբ առաջնորդ էր: Դրամ չկար, աւկային Նիկոմիդիոյ առաջնորդի լեզուն և նամանաւանդ դերազնոյ գործնականութիւնը քարերէն իսկ կարող է դրամ

«Երաքս».

Հանել: Միևնույն տարւոյ սկիզբին, այն է 1874-ին, կ'սկսի հանգանակութեան և միանդամայն բաղնիքի հիմնարկութեան: Եյս առթիւ պարզեցաբար կը ժողովէ 30,000 ռուբլի և ծանր նեղութիւններէ յետոյ կը կառուցանէ վառաւոր բաղնիք մը, և եկամուան, տարեկան 2,500—3,000 ռուբլի ար կը մշտնջենաւորէ դպրոցին: 30,000 ռուբլի հաւաքել աղքատ ժողովդէ մը գիւրին բան չէ: Տեղացիք կը պատմէին թէ Ստեփան վարդապետն ինքն անձամբ ցերեկները խանութէ խանութ և գիշերները, քաղաքի մեկ կամ երկու նշանաւոր մարդոց հետ, տուննէ տունն շրջելով հանգանակած է այդ ահագին գումար: Ի աղնիքն աւարտելու միջոցներում, ձմեռը թէկ կը մօտենայ, այլ առաջնորդը կը վճռէ անպատճառ աւարտել սակայն 3,000 ռուբլի կը պակասէր և տեղացիք ալ ստակ չին ուղեր վճարել մինչեւ ամառ: Ստեփան վարդապետ որ ամեն անկարելի բաններու ձարը անմիջապէս դանելու ընդունակութիւնն ունի, կիրակի օր մը կը ծանուցանէ թէ երեքշաբթի օր կանանց համար մասնաւոր քարոզ պիտի խօսի, ուստի որչափ կին ու աղջիկ կայ, թող գան Ո. Կարապետի եկեղեցի: Երեքշաբթի օր եկեղեցին կը խոնուի կանանց հոծ բաղմութեամբ, առաջնորդը կանչած կը լինի նաև քաղաքի բոլոր քահանաներն և երբ եկեղեցւոյ մէջ կը տիրէ ընդհանուր հանդարտութիւն կը հրամայէ փակել ժամի գոները: Ապա գտանալով կանանց նախ նպատակաւոր ընտիր քարոզ մը կ'արտասանէ, նախանձախնդրութեան ողբով կ'ողեսը բոլոր կիներն և այնուհետեւ կը յարէ, «բաղնիքը լմացնելու համար 300 ռոկի կը պակասի, ձեր ամուսիններն ալ ստակ չեն տար հիմա, ըսելով թէ ստակ չունինք: Աը աեսնեմ որ գուք ձեր ամուսիններէ շատ հարուստ էք, ամենուդ վեզը ոսկի շարոցներ կ'երեքն, չեմ կ'արծեր թէ գուք անոնց պէս արծաթասէր ըլլաք որ գրամ չուաք բաղնիքն աւարտելու համար: Հիմա ամենքդ ալ մէկիկ առջեկս պիտի անցնիք, մկրատը Տէր-բաբայի ձեռքը տուածեմ, ով շատ ունի շատ պիտի առնեմ և ով քիչ քիչ: Սակայն թէ որ գուք ձեր աղքատ կամքով մեր ուղածէ աւելի տաք ալ աւելի շնորհակալ պիտի ըլլամ...»: Բոլոր կանայք միտհամուռ կը ձայնէն «որչափ ոսկի ուղեք, հայր սուրբ, պատրիաստ ենք տալու: Եւ անմիջապէս իրենց

աղաս կամքով ոմանք կը պոկեն իրենց վղի ոսկիներն, ոմանք իրենց մատանիներն և այլք իրենց ուեէ գոհարեղինն. և այսպէս կէս ժամուան մէջ առաջնորդը կը գանձէ 3,000 ռուբլի արժէքով ոսկի և հետեւեալ օր կը շարունակէ շինութիւնն և ձմբան միջոցին պուխ կը հանէ այդ մեծ ու գեղեցիկ բաղնիքն. Երեկոյին ամբողջ քաղաքն կիմանաց առաջնորդի խաղ և ամեն ոք խնդալէն կը ճամի: Գունդագունդ և ծիծաղերես կը զիմեն Ստեփան վարդապետի մօտ և շնորհակալութիւն կը յայտնեն իրեն այս անականիալ ճարպիկութեան առթիւ: Եյսօր Աստաբազարյիկ մեծ երախտագիտութեամբ կը յիշեն առաջնորդի այս գործն: Հայոց թաղի մէջ աղքիւրներ չը լինելով Ստեփան վարդապետ բաղնիքի կառուցման պահուն մի քանի աղբիւր ևս կը հաստատէ, որով հայք կազատին ջուրի նեղութենէն:

Առաջնորդը սովորութիւն ունի որ եթէ ուեէ տեղ երթայ և քիչ մնալու լինի առնեն օր քարող կը խօսի եկեղեցւոյ մէջ, իսկ եթէ շատ մնայ՝ շարժու մէջ գարձեալ 3—4 անգամ կը խօսի: Համոզելու և ոգեսորելու մեծ ձիրք ունին իւր խօսքերն, ուստի կեղրոնական վարժարանի մը անհրաժեշտ կարերութիւն ցոյց տալէ յետոյ, կը յաջողի բանալ: Բաց աստի կը նորոգէ Ա. Արարապետ թաղի գորոցն և Ա. Հրեշտակապետ թաղի մէջ ևս կը կառուցման աղջկանց վարժարան, որով կարծ միջոցում Աստաբազարի մէջ կը հիմնէ իգական սեռի երկու ուսումնարան: 1888-ի յունիսին աղքիւրի ջուրերն փոքր ինչ նուազած լինելով Ստեփան վարդապետ կիմիներէ կը հաւաքէ գուլպայ, շապիկ և վերջապէս ինչ որ կանացք կրնան գործել ու շինել կանանց սոյն նուէրները ծախելով տեղացի հայ խանութպաններուն, գոյայեալ զրամով ջուր բերել կուտայ և չըրս աղքիւր կը շինէ հայոց մասում իրարմէ հազարական մեթք հեռաւուղութեամբ:

Երկրաշարժի պատճառաւ շատ տուներ և առաւելապէս աղքատ մարդոց տուներ վլած էին. առաջնորդ, չը խնայելով ուեէ չանք կարող հասարակութեան օժանդակութեամբ վերականգնել կուտայ այդ չքաւոր ընտանեաց բնակարանները: Աստաբազարի մասին այսքանն բաւ կը համարիմ զանց առնելով Ստեփան վարդապետի անդ կատարած ուրիշ սովորական գործերը:

*

Առաջնորդն ի նշան գոհունակութեան, որ գործերն միշտ յաջողութեամբ պատկուած են անդ և բարի սերմեր տուած են, Կոտաբազարը կանուանէ Կապուածայիշալ Քաղաք:

1873-է մինչև 1875 Առեփան վարդապետ այնքան նշանաւոր գործեր կը կատարէ իւր թեմի այլ և այլ գիւղերում, որ կ'սկսի մեծ ժողովրդականութիւն ստանալ և Ներսէս որ վհատելով խոյս տուած էր անախ, սքանչացմամբ կը գիտէր իւր ձեռնասունի օգտաշատ գործունէութիւնն և անձնուիրական ջանքերն. ուստի 1875 յունվար 10-ին պատրիարքական փոխանորդ Յովհաննէս աւագ քահանաց Մկրեանի ձեռամբ Հետեւալ պաշտօնագիրը կը յղէ նմա. «Հոգեւոր Օնողն մեր, «Արքազան Պատրիարք Հայուն Ներսէս, լուեւալ զքաջագոտի աշխատութիւնն Զեր ի բարեկարգութիւն վիճակիդ, զոհ եղեւ յցի, և հրամայեաց ինձ առաքել Զեր զցուպն (ասսայն) իւր, «զի այսուհետեւ կրեսջիք զայն ի ձեռին ի գնալ և ի գառնալն «Զեր յեկեղեցի և յայլ պաշտօնական տեղիս ի նշան լիակատար Հովուութեան»...

Ուստի մինչ այս նամակն կը լնդունէր, ինք մի ուրիշ մեծ ձեռնարկութեան սկսած էր: Կատաբազարէն 7 ժամ հետի 10 ամըդդ գիւղը կը գտնուէր. փայտաշն խարխուլ մատուռ մը կար հոն, գիւղացիք անկարող կը գտնուէին վիրանորոգել զայն, դրամի անգյութեան պատճառաւ: Իսկ առաջնորդն բոլորովին քանդել կուտայ մատուռն և տպա կը յայտարարէ թէ «Խոր փառաւոր եկեղեցի ոլիտի շինենք. գիւղացիք որ մէկն ի մէկ տեսած էին մատուռի քանդումը շուարած կ'ըսէին. «ինչ կ'ընէք, հայր սուրբ, ստակ չունինք եկեղեցի շինելու համար.—Առակ ի՞նչ պէտք է, դուք ինքներդ ստակ էք արդէն»: Արքակի օր մը իւր հետ կառնու գիւղի ամբողջ ժողովուրդն, աղջիկ, տղայ, երիտասարդ կին և պառաւներն ու ծերունիները և կը դիմեն շրջակայ լեռներ: Ենդ ամեն ոք թեթեապէս նախաճաշելէ յետոյ, ոտքի կ'ելնեն և կ'ունինդրն Ծաաջնորդի քարոզն, ուր այդ նոր Մովսէսը կը բացաարէ թէ բնաւ մեղք չէ Ծատուծոյ Տաճարի համար կիրակի օր աշխատելն»... կիրակի օրեր մանաւանդ աւելի փափաք կ'ունինաք ողորմութիւն տալու աղքատաց, իսկ որչափ առաւել մեծ և վեհ է այն ողորմութիւնն զոր մարդ կրնայ

տալ Աստուծոյ փառաց համար: Դուք ստակ չունիք, սակայն ձեր այս աշխատութիւն իբր հոգեբուխ ողորմութիւն մը պիտի ընդունուի Աստուծոյ կողմէ: ուրեմն այսուհետեւ մենք ամենքս կիրակի օրեր այս լեռները պիտի գանք և ինչ հում նիւթ որ պէտք է եկեղեցւոյ շինութեան, մեր ուսերու վրայ շալկած դեղ պիտի տանինք... առաջին օրինակն ինք կուտայ, ում կը հետեւի և գիւղացւոց ոգեսրեալ բազմութիւնը: Եղջիկներն իրենց գողնոցներու մէջ աւաղ լցուցած, կանայք իրենց մէջքերը քարտաշներու կորած քարերով բեռնաւորած և արք վիթխարի գերաններ ուսի վրայ առած կ'սպասն առաջնորդի հրամանին ճանապարհ ընկնելու, և առաջնորդն նախ կ'օրհնէ ժողովուրդն և աւաղ բազիատարած կը գոչչ «Օգործս ձեռաց մերոց ուղեղ արա ի մեզ Տէր, և զգործս ձեռաց մերոց յաջողնա մեզ»: Եյնուհետև ինդապին ամրօնն վայր կ'իջնէ լեռնէն իւր բազմատեսակ բեռներով: Եյս ընթացքով ահա Ստեփան վարդապետ քիչ ժամանակում, առանց մէկ զրամ ծախսելու կը պատրաստէ շինութեան քարը, աւազը, կիրը, փայտն, և այն: Սյն կարևոր պատրաստութենէն յետոյ կ'սկսի հանգանակութեան այրերէն և կիներէն միանգամայն: Եյս առթիւ կ'երթայ և Ետաբազար, ուր ևս բաւականաչափ հանկանակելէ յետոյ կը գառնայ Թամբոդ և կը ձեռնարկէ քարաշն եկեղեցւոյ մը հիմնարկութեան, չորս հարիւր քառակուսի կանգուն ատրածութեամբ: Սովորական օրերն ըստ կամայ էր ձրի աշխատութիւնն, սակայն կիրակի օրեր փոքրէն մինչեւ տարեց եղող երկսեռ զիւղացիք իբր պարզ մշակ կը բանեին Ստեփան վարդապետի տեսչութեան ներքեւ: Եյս եղանակաւ Թամբոդ գիւղն կունենայ քարաշն փառաւոր եկեղեցի: Ենութիւնն երբ մօտ էր աւարտելու կիրակի օր մը առաւտեան յանկարծ կը փիլ կամարի մի մասն, առանց ուեէ արկած մը պատճառելու: Եռաքել պատուելի անուն բողոքական մը յարմար առիթ համարելով զայս՝ թղթակցութիւն մը կը զրէ բողոքականաց Եռաքելը լրադրին թէ, Նիկոմիդիոյ առաջնորդը կիրակի օր ժողովուրդն աշխատացնելուն համար Աստուած բարկանալով եկեղեցին փլցուց: Եռաջնորդն վերստին կ'սկսի կործանեալ կամարի շինութեան և կիրակի օր մի զլուս կը հանէ բոլորովին: Եպա իւր մօտ կը կանչէ Եռաքել պատուելիին և

կ'ըսէ «Ճօ ուրտեղէն իմացար որ Աստուած վրաս բարկանաւ-
լով եկեղեցին փլցուցեր է, Պարբիէլ հրեշտակապէ՞ար քեզի
լուր բերաւ, հիմա ալ անմիջապէս կը հրամայեմ քեզ որ Ա-
ռաջերն գրիս թէ Ստեփան վարդապետը կիրակի օրով ժողո-
վուրդն աշխատցնելով աւարտեց եկեղեցին, և սակայն եկեղե-
ցին չը փլաւ այս անգամ... կը հասկնամ թէ դուք պատուե-
լիներդ ինչու այսքան նախանձախնդրութիւն կը ցուցնէք կի-
րակի օրուան սուրբ պահելուն. կ'ուզէք ժողովրդին պարագ
ժամանակ վաստկցնել տաք որպէս զե քարողելով նոցա հա-
ւատացեալներու թիւը բազմացնէք»...

Թամըզդի եկեղեցւոյ օծման առթիւ տեղացիք 21 կառք
կը զրկեն ընդ առաջ Ստեփան վարդապետի յԱստաբաղար, ուր
կը գտնուէր այդ պահուն: Առաջնորդն այդ հանդիսին կը հրա-
ւելէ Աստաբաղարի նշանաւոր հայելն, քսան կառքերը կը գնէ
նոցա տրամադրութեան տակ, ամեն ոք կը կարծէր թէ միւս
մէկ կառքի մէջ ալ ինքն պիտի նստի, սակայն Աստուածած-
նայ օծեալ պատկերն միայն կը զետեղէ անդ և նշան կընէ ճա-
նապարհ ընկնելու: Ամեն կողմէ կ'սկսին ձայնիլ «Հապա դուք
չէք նստիր, հայր սուրբ»: «Ճս ոտքով պիտի գամն կը պատաս-
խանէ Ստեփան վարդապետ: Կայծակի արագութեամբ լուրը
կը տարածուի քաղաքի մէջ թէ առաջնորդն ոտքով կ'երթայ
մինչեւ Թամըզդ, եօթն ժամի ճանապարհ: Անմիջապէս մի եր-
կու հազար անձննք առաջնորդի այս վարմունքէն չափազանց
ոգեսրեալ կը հետեւին նմա վեթիւարի թափոր մը յօրինելով
մինչեւ Թամըզդ: Առաջնորդի նպատակն ալ այդ էր. նշն երե-
կոյ իսկ մասնախումբ մը կը կազմէ և հետեւեալ օրն եկեղեցւոյ
օծման հանդիսին այդ ուխտաւորներէն կը ժողովէ 3000
ուուրդի, որով կը գնէ նորակառոյց եկեղեցւոյ համար արծա-
թեայ սպամներ և կարեսոր զարդերը:

Եյուհեաւ կը նորոգէ տեղւոյն վարժարանը, զոր շինել
տուած էր Յովհաննէս ամիրա Տատեան. բաց աստի կը կա-
ռուցանէ երկու ջաղացք, որոց եկամուտն ալ կը յատկացնէ
դպրոցին:

Մեջի-նը. — Օուա թլքական զիւղ մ'է այս և կընկնի
Աստաբաղարի և Թամըզդի միջև: Թամըզդի եկեղեցւոյ շինու-
թեան առթիւ Ստեփան վարդապետ ստէպ անցուգարձ կ'ընէր

այգտեղէն: Գիւղացիք այգպիսի ժողովրդասէր մարդ տեսած
ըս լինելով, շէյխէ մը աւելի կը պատուէին զնա: Ամեն անց-
նելուն կը լինդրէին որ փոքր ինչ հանգիստ առնու իրենց դիւղի
մէջ: Եյդ գէպքում առաջնորդը բոլոր զիւղացիները կը ժո-
ղովէր հովասուն ծառերու ներքեւ և կ'ըսկէր քարոզ խօսիլ
նոցա: Մի անգամ ևս սցցելիով ճամին սարդի ոստայնավ
պատած կը գանէ պատերն, անմիջապէս երկար աւել մը բերել
կուտայ և ինքն անձամբ կը մաքրէ սարդոստայներն. և բուռն
քարոզով կը կշտամբէ զնոսս թէ ուղղափառ մուսուլմանի չի
վայելէր որ այս աստիճան խարխուլ և անմաքուր վիճակի մէջ
պահէ իւր սրբավայրն: Գիւղացիք միահամուռ կ'աղաջն առ-
ռաջնորդին որ իրենց գլուխ կենալով շինել տայ նոր ծամին և
դպրոց: Ատեփան վարդապետ յանձն կ'առնու, սակայն այս առ-
թիւ պէտք էր կառավարական արտօնութիւն ստանալ: Օր
մը Ատարազարի գայմադամ «Օ կուչթիւ բէյ կը պատրաստէ
մեծ խնջոյք ի պատիւ առաջնորդին և այլ երեկի մար-
դոց: Աեղանի ամբողջ սպասները արծաթէ կը լինին: Ճաշի
միջոցին կը տեսնէ որ Ատեփան վարդապետ չ'ուտէր: Ատե-
փան վարդապետ կը պատասխանէ մօտաւորապէս «Ի՞՛յ էֆէն-
տի, այս համակ արծաթեայ սպասները կը յիշեցունէ ինձ խեղձ
Ակցիւթիւ մուսուլման գեղն, որ ոչ ճամփ ունի աղօթելու
և ոչ գպրոց, աղջիկներն ու տղայք մինչև իրիկուն կը թափա-
սին փողոցներու մէջ, կը խնդրեմ որ կամ հրաման տաք ինձ
որ երթամ շինեմ նոցա ճամփն ու գպրոցն և կամ դուք
խօսք տաք ինձ թէ յանձնառու կը լինիք շինել: Վինչե որ
հաւանական պատասխան չ'առնում «Զեր վսեմութենէ չեմ
կը նար մասնակցիւ սեղանին...» Օ կուչթիւ բէյ ծերունի մ'էր
կը պատասխանէ, «Քեսպոտ էֆէնտի, մօւսուլմանէ մ'սւելի
նախանձախնդրութիւն կը ցուցնէք մուսուլմանութեան նկատ-
մամբ, աղնիւ խօսք կուտամ Զեր թէ յանձնառու կը լինիմ
շինել տալ այդ զիւղի գպրոցն ու ճամփն: Եւ խօսառումը կը
կատարէ, բայց յաշս այդ մահմետական հասարակութեան ի-
րմնց գպրոցն ու ճամփն շինողը «Նիկոմիդիոյ առաջնորդն է: Ի
նշան երախտագիտութեան պատգամհաւորութեան մը միջոցաւ
ամեն պատրաստականութիւն կը յայտնին առաջնորդի հրա-
մանաց հնաղանդելու: Ատեփան վարդապետ նոցա զիւղը հան-

զիաղելով կ'ըսէ նոցա՝ «մարդկային պարտք» միայն կատարեցի,
թէ որ իմ կատարած լաւութեան փոխարէնը կուզէք հատու-
ցանիլ անպատճառ, ուստի ձեր ձեռքէն եկած լաւութիւնն
ըրէք ձեր զբացի հայ գեղացիներուն. ինչ որ նոցա ընէք, ինձ
ըրած պիտի լինիք»:

Հայոց ՔԵՐ. — Նիկոմիդիա թէև մերձաւորագոյնն է Ա. Պոլ-
սոյ, սակայն այս հանդամաննք ո և է բարերար արդիւնք չի
մատուցանէր այդ գտւառին, և ընդհակառակն ՝ Նիկոմիդիոյ
վիճակն ուրիշ հայ վիճակաց բազգատմամբ աւելի շատ ան-
պատեհութիւններու ենթակայ է բարեկեցիկ կացութեան հաս-
նելու, որովհետեւ ամբողջովին կազմուած է գաղթական հայերէ
ոլք յետին չքաւորութեան մէջ պարբերաբար եկած հաստա-
տուած են այդ կողմեր: Եյդ գաղթականներէ ոմանք հին են
և ոմանք նոր:

Թուրքօ-ոռւս պատերազմի սկզբին, Տրապիզոնի կողմերը
կատարելապէս հարստահարեալ և ծայրացեղ թշուառութեան
դատապարտուած 75 հայ ընտանիք կ'ապաւինին ՝ Նիկոմիդիոյ
գաւառն, զուրկ նիւթական տմեն ապրուստէ, զուրկ մինչե-
իսկ անկողինէ: Ատեփան վարդապետ իւր համայն ուշն կը
կելլոնացնէ այդ տարաբազդ ազգայնոց վիճակի վրայ: Անմի-
ջապէս կառավարութենէ ձրի հրամանազիր կ'առնեն նոր գիւղ
մը հաստատելու և ինք անձամբ գործի զորւս կանգնելով կը
հիմնարկէ զիւղ մ'այդ մերկ ու ողորմելի գաղթականաց հա-
մար և կ'անոււանէ զայն Հայոց-Գիւղ: Այնուհետեւ ժողովրդի
ֆիղլքական աշխատութեան շնորհիւ և ընդհանուր հանգա-
նակութեամբ կը կառուցանէ փայտաշէն մատուռ մը, քահա-
նայ չկար՝ քահանայ կը ձեռնազրէ, եկեղեցւյ համար սպասներ
ու զարդեր կը գնէ, վարժարան կը հիմնէ և այս առթիւ ու-
սուցիչ բերել կուտայ դուրսէն:

Հայոց-զիւղի հիմնարկութեան առաջին տարիները, երբ
առաջնորդն մի երկու հոգւով այդ զիւղն կ'երթայ, ժողովուր-
դը տակաւին այն աստիճան աղքատ էր, որ կերակուրի ամանն
մէկ տունէ կը բերէին, գտալ՝ ուրիշ տունէ ևայլն: Խսկ այսօր
13—14 տարի յետոյ իւրաքանչիւր տնուորը կ'ապրի օրինաւոր
բարեկեցութեամբ, կը մնայ մէկ անդամէն 15—20 օտարական
հիւրասիրել: Ժողովուրդը կզբաղի երկրագործութեամբ և եր-

ջանիկ կեանք կը վարէ և այս կարճ միջոցում այնքան աճած է, որ զբկթէ մօտ է կրկնապատկուելու: Վիւզն ամփիթէատրոնի ձև ունի. Ստեփան վարդապետ զիւղի մէջտեղն բաց թողած էր այն ժամանակ, ապագային փառաւոր եկեղեցի և ուսումնարան շինելու մատագրութեամբ. և ասկէ 4—5 տարի առաջ կը խորհի ձեռնարկել քարտաշէն եկեղեցւոյ մը կառուցման: Այս առմիւր հարկ լինելով հրամանագրի, Նիկոմիդիոյ կառավարիչ փաշան կուտայ իւր կատարեալ հաւանութիւնն և առաջնորդի բաղձանաց համապատասխանող պաշանագիր մը կը յղէ Ռ. Դրան ու պաշանագրի թուահամարն ևս կը զրկէ պատրիարքարան, որպէսզի սա Փիրմանն առնու Ռ. Դռնէն ըստ օրինի: Ասկայն այդ հրամանագիր գեռ կը մնայ անկատար քանիցս առաջնորդը նամակներ զբածէ ի պատրիարքարան որ երթան Ֆիրմանն առնուն, բայց ում հոգն է. «Ի՞նչ կըլլայ, զիւղ մը եկեղեցի չունի եղեր, աս ալ բան է» կը մատածեն մեր ազգային մեծ փերանորոգիչները: Առաջնորդն յոյսը կտրած պատրիարքարանէն վերստին կը իննդրէ փաշային, որ կը պատասխանէ. «Քիչնտիմ, յանցանքը ձեր պատրիարքարանին է, սիրով հետամուտ չեն ըլլար գործին, միայն թէ կարելի է, կ'երթան կը հարցնեն ու դուրս կ'ենին. իսկ այդպէս գործ չի տեսնուիր»:

Արած-Գեղ.—^{Հայոց-Գեղի} հաստատութենէն մի եղկու տարի յետոյ վերստին կ'սկսի զաղթականութեան հոսանք Տրապիզոնի Օրգու գաւառէն. մօտ 40 հայ ընտանիք, յետին ծայր չըտառ, կը զիմէ Նիկոմիդիա և կը հաստատուի Պէրեղլի զիւղի մօտ Վարագույ Վարչութւու ըստած աեղն: Ստեփան վարդապետնոյն ժամայն կ'երթայ այգտեղ և կարելի եղած միջոցաւ նախ կը պատապարէ զնոսա. ստիպողական գործով մը կը մեկնի շուտով և քիչ միջոցէն կը վերադառնայ նորէն. ճանապարհին, երբ կը համնի ծանօթ թուրք գեղն, գեղի երևելք կուգան Ստեփան վարդապետի ոտքը կ'ընկնին յայտնելով թէ նոյն օր իրենցմէ շատեր զիւղն գտնու ժամանակ չերքէզները կողոպատած են իրենցմէ մեծաքանակ թանկադին իրեղէններ, և կը իննդրէն որ գեսպոտը այս բանի ճարը տեսնէ: Առաջնորդն անմիջապէս իւր ուղեկիցներէ մին, որ նմանապէս չերքէզ մ'էր, կը զրկէ չերքէզաց գեղի մեծերուն: Առաջնորդի սուրհանդակն

անդ հասնելով կը ժողովէ չելքէզոց պետերը և կը յայտնէ թէ հայոց գեսպուր սաստիկ բարկացածէ և զիս զրկեց ձեզ իմաց տալու որ եթէ այդ թուրքերէն յափշատակուած իրեղէնները ըստ վերադարձնէք, ձեզի ամենուդ այս երկրէն պիտի աքսորէ, որովհետեւ Ստամբուլ իրթալուս Սուլթանի Սատրագամի հետ կը տեսնուի....» խայջն իրեղէնները կը դժնուին և կը բերուին թուրքաց զիւղն երբ գեռ այնտեղ էր առաջնորդն: Գիւղացիք հիացած վարդապետի այս կարգի զօրութեան վրայ մէծ ու փոքր կը զիմեն իւր մօտ և կը հրաւիրեն ճամփն որ քարոզ խօսի իրենց, և միանդամայն երախտազիտութեամբ կը յայտնին թէ պատրաստ են իրենց անձը նուիրել հայոց գետպոտին: Ստեփան վարդապետ օգուտ քաղելով այս յարմար պարագայէն, իւր քարոզի մէջ կ'ըսէ, «Հիմա այստեղ մօտը ունինք նոր հայ դրացիներ, որ բոլորովին աղքատ են և զուրկ բնակարաններէ, ևս ալ հոն կ'երթամ զիւղը շնչնելու. օգնութեան կարօտ են, ուստի թէ որ ինձի աղեկութիւնն մը ընել կուղէք, անոնց օգնուցէք, և հաշա ապրեցէք նոցա հետ....» Նուաջնորդի մեկնումն յետոյ այդ թուրքերն իրենց սայլերը կը լծեն, ձիերը կը պատրաստեն և լեռն երթալով կը բեռնաւորեն զայնս շնչնութեան գելաններով ու ճանապարհ կ'ընկնին դէպ նորեկ հայ գաղթականաց բնակավայրը. այնուհետեւ շատ պարագայից մէջ թուրք զիւղացիք կարելի եղած աջակցութիւնը կը մատուցանէին հայ գաղթականաց:

Իսկ Ստեփան վարդապետ անդ հասնելէ յետոյ կ'աշխատի զիւղի հաստատութեան. զործի զլուխ անցած իբր զործաւոր կը բանեցնէ մեծ ու փոքրն թէ այր և թէ կին հաւասարապէս, կը կառուցանէ երկսեռ գլուց և փայտաշէն մատուռ. կը ձեռնազրէ և քահանայ մը: Կլեւրն աղալու համար ջաղացք մը կը շնէ և հկամուտը կը յատկացնէ ուսումնարանին. բաց աստի խորհուրդ կուտայ զիւղացւոց որ լեռնէն 3,000 շադանակի և այլ պաղատու ծառատունկեր բերելով տնկին զիւղի շուրջը և արդիւնքը յատկացնեն դպրոցին: Նուաջնորդն այս զիւղն ամենայնիւ բարեկարգելէ յետոյ, անունը կը զնէ Աբամ-Գեղ:

Երամ գեղէն վերադարձն կը հանդիսի իւր վիճակի ամենէ աղքատ զիւղն, ուր կար հին ու խարխուլ վարժարան մը, և բոլորովին կը նորոգէ զայն:

Օվաճռք.—Այս գիւղ 1,000 ռուբլի վագրֆի պարտք ունէր, որի համար քսան տարիէ ի վեր ծանր տոկոսներ կը վճարէր շարունակ, քանի մը գիւղերէ իւր գանձելի առաջնորդական տուրքէն կը հաւաքէ 1,000 և այսպէս իւր քսակէն կը հատուցանէ այդ պարտք:

Այս գէաքռվ բոլորովին կը տիրանայ ժողովրդի սրտին և այնուհետեւ գիւղի մեծերն ամեն իրիկուն իւր մօտ կը հրաւիրէ, կը համոզէ թէ դպրոցն եկամուտ չունի և հաստատուն կալուած պէտք է. հանգանակութեան կը ձեռնարկէ և ժողովրդի ձրի աշխատութեան հետ միասին եկեղեցւոյ պարսպի մօտ կը շնուի չորս խանութ, իբր սեփականութիւն դպրոցի:

Սակայն ինչ որ եկեղեցիէն և դպրոցէն աւել կենսական կարեւորութիւն ունէր Օվաճռդի համար, ջուրն էր այդ: Գիւղը բաւական տարիներ սյրեցաւ մեծ մասամբ, ջուր չկար կրակի առաջքն առնելու համար: Ոչ միայն կրակի այլ և խմելու համար նոյն իսկ ժողովուրդը սաստիկ կը նեղուեր. կար միայն սակաւածուր աղքիւր մը, որի մօտ կանայք ժամերով կ'սպասէին որ հերթն իրենց գայ. և այս առթիւ, բնականաբար, կանացի սոսկալի կոխներ տեղի կունենային յաճախ: Մտեփան վարդապետ երկրաչափ բերել կուտայ և ամբողջ գիւղն սյր թէ կին իւր առջև ձգած մօտակայ լեռան ժայռերը ծակել տալով ջուրի առատաբուխ ակ մը կը գտնէ և ջուրն խողովակներով գիւղ բերել կուտայ. և այսօր գիւղի ամեն կողմ կառուցուած են աղքիւրներ, որ լիտաւատ և առողջարար ջուր կը մատակարարէ գիւղացւոց և իրենց անասուններուն:

Վաղաճէդ.—Գեղատեսիլ ընդարձակ գիւղ մ'էր այս լերանց բարձր ստորոտի վըայ. ինչպէս ամենուրեկ նոյնպէս և այստեղ Մտեփան վարդապետ կ'ուզէր թողուլ իւր գործունեութեան հետքը, նախ եկեղեցւոյ համար կը շնուի զանգակատուն, ապա ի նկատ առնելով գերեզմանատան լքեալ վիճակն, ժողովրդի հետ միասին շըջակայ անտառները կ'երթայ և 3,000 ծառ կտրել առաջ ցանկով կը պատէ գերեզմանոյն և յետոյ կը զարդարէ: Տեղւոյն վարժարանը բոլորովին զուրկ էր եկամուտէ, Մտեփան վարդապետ երկու հոգի իւր հետ առած կը պատի գիւղի բոլոր տուններն, մէկ տունէ շերամ, միւս տունէն ո և է գործուած, զօր. գուլպա, կտաւ, գոփեոց, գիշերանոց հանդա-

նակելով մի մասն կը ծախէ և միւսներն վիճակահամեռութեան կը դնէ անգլիացւոց, որ այդ միջոցին իրենց զբահաւոր նաւերով կը գտնուելին ի Նիկոմիդիա, և այսպիսի եղանակաւ կը գտնձէ 2,500 ռուբլի և կը դնէ անդ եղող մետաքսի գործարանի շէնքին կէմն, իւր սեփականութիւն վարժարանի. և գոլորշն տարեկան 500 ռուբլի է աւելի եկամուտ կ'ստանայ իւր այդ անշարժ կալուածէն: Եյս միջոցաւ Ստեփան վարդապետ կ'ազատէ ուսումնարանն իւր ողորմելի կացութենէն և կը բարեկարգէ ըստ կարելոյն:

1886 նոյեմբեր 22-ին Ասլանբէդ կ'այրի ամբողջովին մետաքսի գործարանէն զատ: Անմիջապէս Առութան Համիլի կայսրն, որ մեծ բարեկարտութիւն ունի այսպիսի պարագայից մէջ 10,000 ռուբլի կը զրկէ այդ տարաբաղդ հայերուն և Իւր հովանաւորութեան տակ եղող կայսերական յանձնաժողովն ես շուրջ 20,000 ռուբլի կը զրկէ թուրքէ և հայէ կազմեալ պատուիրականութեան մը միջոցաւ: Պոլսոյ հայ լրագիրներն այրուելէն գեռքանի մը օրեր յետոյ և ոչ իսկ այս առթիւ հրաւելը կը կարդային հայութեան օդնելու իրենց այրիացաւեր հայրենակիցներուն, մինչդեռ «Ացելէ» լրագիրն նշյն միջոցին ամենայն օր ահազին սիւնակներ կը նուրիբէր ֆրանսական թատերական խումբի գերասանութիւնների նկարազութեան: Պարտիզակի Տէր Պրիգոր քահանայն կը պատմէր ինձ թէ «Արբազանը, Ասլանբէդի այրման ժամանակ մէր գիւղն, գիշեր միջոցին բոլոր քահանաները հետոն առած տունէ տուն շըջեցաւ ու հայ ժողովնց, բեռնաւորեց ձիերու վրայ և միասն մեկնեցանք գէպ Ասլանբէդ. աղայի մը պէս կուլար շարունակ, նամանաւանդ երբ հասանք գեղն և բոլորովին այրած գտանք. ամբողջ օր ոտքի վրայ էր և մօտ 30 ժամէ ի վեր նստած չէր և ոչ ալ պատառ մը բան բերանը դրած ունէր: Ձէի կրնար բաժնուիլ իրմէ, չէր թողուր նստեմ և անօթութենէ կը տանջուէի, մութն արդէն կոխելու վրայ էր. ալ չը գիմանալով յանդքնեցայ ըսել սրբազն քիչ մը բան ուտենք: «Ո՞ւր է հայ որ ուտենք» պատասխանեց բուռն սրբամատութեամբ. «Հայէն աւելի ի՞նչ կայ, ըսի, ամեն կողմերէ լեցուն հայ բերած են» Այս մէր հայը չէ, յարեց առաջնորդը, այլ այս թշուառ մարդոցն է, իրաւունք չունինք պատառ մ'իսկ ուտելու: «Դիշեր էր արդէն վիրադար-

ձանկը ձեռվ. Ճանապարհին միայն զգաց սրբազանն իւր սաստիկ յոգնութիւնն, առութի մը քով իջաւ և գիթեան զօրաց պէս պառկելով սկսաւ ջուր խմել բերնով աման չը լինելուն պատճառաւ. 35 ժամե վերջ միայն հայ կրցաւ ուտեր:

Հետեւեալ օրը շըջաբերական զրկեց թեմի կողմերն, որ հացով, հագուստով, անկողինով և առհասարակ ամեն հնարաւոր կերպիւ նստաստեն հրկիզեալ զիւղացւոց. 5,000 կտոր հանդերձեղէն այս առթիւ կը հաւաքուի Նիկոմիդիոյ գաւառէն. բաց տսաի առաջնորդն Երմաշի միաբաններէն երկու վարդապետ կը զրկէ իւր թեմի զիւղերը զրամ հանգանակելու: Դրամ ժողովելէն յետոյ կը վերագառնան Երմաշ աւանց իրենց հանգանակութեան հաշիւն և զրամն տալու. շատ ժամանակէ մը ետքն մի մասը կուտան, իսկ միւսն կմնայ տակաւին: Քանիցս, այս նկատմամբ, կը զրուի Երմաշի վանահօրն, սակայն ի զուր: Տարի մը վերջ այն է 1887 հոկտ. 25 թուականաւ անորոշ նամակ կը զրէ Իզմիտի թաղ. խորհրդոյ տտենապետ Ո՛ուրէն Գապասագալեանի, թէ զրամի մէկ մասն ասոր, մէկ մասն անոր, մէկ մասն Պոլիս և մէկ մասն ալ առաջնորդին զրկած է. միւս մասերու առթիւ կարելի չէ բան մը ըսել քանի որ անորոշ են, սակայն ես առաջնորդիէն տեղեկացաց թէ ինք ու և է զրամ ընդունած չէ Երմաշի վանահայրէն:

Յիշատակելու է նմանապէս և այն, որ Երմաշու նախկին վանահայրն, որ Նիկոմիդիոյ առաջնորդի բուռն հակառակորդն է, անանկ կը կարգադրէ որ ի նպաստ Ասլանիրէդի հրկիզելոց Խղիպտոսէն և Պոլսէն հանգանակուած 3,000 ռուբլի գումարն առաջնորդի ձեռքը չ'ընկնի, այլ ինքը գործածէ եկեղեցւոյն և գսլրոցի շնութեան վերայ, որ գեռ չէ սկսուած, թէև քանի մը տարիներ անցան: Եյսպէս ահա Ասլանիրէդ իւր թշուառ կացութեան մէջ օդնութիւն ստացաւ կառավարութենէն, Նիկոմիդիոյ վիճակէն և 500 ռուբլի չափ Զամունիայէն Մուրատեան Մելքիսեդէկ սրբազանի ձեռքով. իսկ հայութեան օգնութենէն համարեա զուրկի մնաց բոլորովին. երեք հարար ռուբլի նոյն միջոցին և եթ հարկ էր հասցնել իւր տեղն. անտարակոյս այս էր և նուիրաառներու միակ բաղձանքը ևս. բայց ինչ կրնաս ըսել... չորրորդ տարին կը լրանայ և գեռ այդ զրամն ի Պոլիս կը մնայ. զիւղացիք երեք չորս

անգամ Պոլիս եկած են ստակն խնդրելու պատրիարքէն, ստկայն միշտ ետ են դարձել ձեռնունայն մօտաւորապէս հարիւր ռուբլի ալ ճանապարհի ծախք ընելով այդ ամեն երթևեկութեանց համար: Վերջես միայն երբ խնդիրն յերեան ելաւ աստ, պատրիարքն ուղած է այդ դրամով շինելիք դպրոցի յատակադիմք: Ենչուշտ սա ալ դեռ անկախ պիտի մնայ, Եստուած գիտէ մինչեւ երբ:

Այս յունուար ամսում Քրիստոսի Անուանակոչութեան տօնի օրն, բարեկամի մը հետ մեխեցանք Սոլանքէզ գիւղն, արեն մայր էր մտել երբ գիւղ հասանք, մատուոի գուռն բաց լինելով տակաւին, ներս մտանք, երկսեռ խուռն բազմութեամբ լի էր եկեղեցին և վարդապէտ մը քարոզ կը խօսէր. Ատեփան եպիսկոպոսն էր: Գերահրաշ տպաւորութիւն մը զգացի. աշխարքէն հեռու տարաբաղդ գիւղի մը մէջ և այն ալ հանդիսաւոր տօներուն, թեմին հովուապէտը Աստուծոյ սեղանի առաջիւր քարոզներով կը մսիթարէր ժողովուրդն: Եյսպիսի պարագայից մէջ մարդ պէտք է անձամբ ներկայ գտնուի, որպէսզ զգայ և հասկնայ թէ ինչ մեծ միմիթարութիւն է այդ:

1880 թ. հոկտ. 17-ին բոլոր երեսփոխանք հաւաքուելով ի Նիկոմիդիա միահամուռ պաշտօնապէս առաջնորդ կը հռչակեն զՍտեփան վարդապէտ Յովակիմեան, որ մինչեւ սյդ ժամանակ Ներսէս պատրիարքի տեղակալն կը համարուէր, թէկ սպատրիարքարարանն ըստ օրինի ուրիշ ընտրելեաց ցանկ ևս դրկած էր:

Պարսկական. — 1,300 տունէ աւելի է այս զուտ հայկական գիւղն և կը գտնուի Նիկոմիդիոյ դէմ ծոցի հանդիպակաց կողմն: Ունէր իր յիսուն տարի առաջ շինուած երկսեռ վարժարան մը որ քայլայման վտանգաբեր վիճակի հասած էր այլ ևս. բաց աստի արդէն անբաւական էր պարփակելու գիւղի բոլոր աշակերտները: Ատեփան վարդապէտ իւր մտագրութիւնն կը յայտնէ նոր դպրոց մը շինելու, այլ տեղացիք կը պատճառաբանեն յետաձգել առժամանակ մի: Եսոր վրայ առաջնորդն 10—15 բանուոր կը կանչէ և գիշերայն կը հրամայէ փլցնել վարժարանն. արշալցաբին գիւղացիք կ'արթնուան և կը տեսնեն որ առաջնորդը կը փլցնէ դպրոցն. «Հայր սուրբ, հապա տղաքնիս հիմա ուր պիտի երթան կարդալու, կը

Հարցնեն գիւղացիք. «Եկեղեցւոյ մէջ, մինչև որ շինենք նոր դպրոցը, կը պատասխանէ Ստեփան վարդապետ։ Ամբողջ գիւղն արգէն այդտեղ հաւաքուած լինելով հետաքրքրութեան համար, առաջնորդը եկեղեցի կը հրաւիրէ զնոսա և անդ իրեն յատուկ ճարտասան լեզուաւքարով խօսելէյետոյ 9,000 ռուբ-լիի հանգանակութեան տումար կը բանայ և անդէն կ'սկսի ստորագրել տալ։ Քանի մ'օր վերջ կը ձեռնարկէ դպրոցի հիմ-նարկութեան 1,000 քառակուսի կանգուն տարածութեամբ։ Նե-տեւեալ կիրակի օր քարոզէն յետոյ գիւղի մի քանի հազար երկսեռ բազմութիւն—զինուած, ուրագներով, կացիներով և սղոցով— և բոլոր քահանացները իւր ետեւ ձգած՝ կ'երթայ մէկ ժամ հեռի անտառապատ լեռները, շինութեան կարեոր փայտերն բերելու։ Ամեն ոք հետն առած ունէր քիչ շատ ուտելիք. ուստի նախ համովիսաւոր լեռնային խնձոյք կը կատարէն. Ստե-փան վարդապետ քաջալիրական խօսքերով գիւցագնական սիրա ու հոգի կը ներշնչէ ամենուն. որմէ յետոյ բոլորեքեան աղջեկ, կին, երիտասարդ ու ծեր ցնծութեան աղաղակներով կ'սկսն դործի, և սղոցներու, ուրագներու և կացիներու ձայները միախառնուելով գիւղացւոց ուրախապին աղմուկի հետ կը թնդացնէր անտառն. Սոաջնորդն ևս նոցա հետ միասին կ'աշ-խատէր։ Երբ ամեն ոք կը պատրաստէ իւր բեռն, Ստեփան վարդապետ կը դառնայ քահանացից ըսելով քարձրացուցէք սա գերանը, տեսնեմ... ուսիս վրայ դրէք և գուք ալ տակը մտէք, որ ճամբայ ենենք...»։ Ուշաւան, կը գոչն հաղարաւոր ձայներ, և կը հետեւին իրենց քաջարի վարդապետն։ Եւ այս ընթաց-քով բեռնադրուած ինք և իւրայինք գիւղ կը մտնին մինչև դպրոցի կառուցման վայրն։ Ասկէ զատ, ուրիշ շատ անգամներ ևս Ստեփան վարդապետ լեռները կը գնայ նոյն նպատակաւ։

Այսպիսի եղական ջանքերով ահա Ստեփան վարդապետ ի գլուխ կը հանէ Պարտիզակի դպրոցն որ այսօր թէ վիճա-կին մէջ և թէ ուրիշ գաւառներ նմաներ չունի իւր հսկայ և փառաւոր շինուածքով և որ կարժէ աւելի քան 30,000 ռուբ-լի։ Այս վարժարանն հիմա կը գտնուի ընդ տեսչութեամբ Եղիշէ վարդապետ Դուրեկանի, եղբայր Պետրոս Դուրեկանի, որ համեստ և աշխատասէր անձ մ'է և ամեն հոգ կը տանի վարժարանի բարեկարգութեան։ Մէկ տարի առաջ տեսայ այդ

ուսումնարաններ 1,200 է աւելի աշակերտ կայ. Հայր Դուրեան ցոյց տուաւ մահմետական աշակերտ մը զոր ծնողքն իրենց զիւղէն զրկած են Պարտիզակի գպրոցը կարդալ սովորելու. տղան մաքուր հայերէն կը խօսէր ու կը կարդար: Ուրիշ մահմետականներ ևս առաջարկած էին հայոց այս վարժարանն զրկել իրենց տղաքը: Ուսումնարանի գետնայարին թատրոն է. ունի չնորհքով բեմ և ընդարձակ թատերասրահ նստալաններով հանդերձ. բարեկենուդանին և մեծ տօներին գպրոցի տղաքը ներկայացում կուտան այդտեղ, ուր գիւղական խուռն հանդիսատեսներ կուդան այդպիսի գէպքերում:

1881 թուին աւարտած է այս մեծ գպրոցն, որի ամբողջ շնուռթեան միջոցին ներկայ և մասնակից էր Ստեփան վարդապետ առաւտօնէն մինչև երեկոյ, իբր վերակացու միշտ քաջալերական խօսքեր ուղղելով թէ ձրի և թէ վարձուոր աշխատողաց:

Դարեզբէն. — Տարեզրտական կարդաւ անկարելի է ներկայել աստ Նիկոմիզիոյ առաջնորդի անթիւ և բեղմնաւոր ձեռնարկութիւններն, որովհետեւ գորա համար երկար և ընդարձակ ուսումնասիրութիւն պէտք է, սակայն այդ մեծ գործունէութեան Շշրիստ նկարագիրն ընկլու նպատակաւ ջանացի շըջել բոլոր տեղերն և իբր ականատես մը ստորագրել: Զկայ զիւղ մ'ուր չ'երեխ առաջնորդի գործունէութեան ականաւոր հետքն, արդիւնք անկեղծ և անձնութիւրական իղձերուն: Դուրդակէն չ'ունէր աղջկանց վարժարան, բնականաբար և ոչ ալ ու և է զրամագլուխ: 400 ուռւլի առաջնորդական տուրքէն առնելիք ուներ զիւղի վրայ, կը հաւաքէ խւր այդ ստակն. միւս կողմէ հանգանակութիւնն կընէ, մէկ մաս մ'ալ ուրիշ տեղէ կը ճարէ և սոյն հաւաքական գրամով ու ժողովրդի երբեմնակի ձրի աշխատութեամբ կը կառուցանէ աղջկանց ուսումնարանը:

Եյս գպրոցի համար անշարժ կալուած մը զնելու որոշում կուտայ, և սոյն նպատակաւ բարեկամութիւնն կը հաստատէ մերձակայ Նոհիսար թուլք զիւղի մահմետական ծերունի բաղնեսէրին հետ. իրկայն ժամանակ կը համոզէ զնա, որ բաղնիքն իրեն ծախէ, ի վերջոյ ծերունին խօսք կուտայ բաղնիքն աժան զնով վաճառելու հայոց գեսպոտին (առաջնորդին), որի նկատմամբ առանձինն սէր և պատկառանք սկսած էր տածել:

Ստեփան եպիսկոպոս 1888-ին հանգանակութեամբ մի քանի հազար ռուբլի կը գանձէ և կը դնէ այդ նշանաւոր բաղնիքն, որի նման նոր մը 15,000 ռուբլով հազիւ կարելի է շնորհ Բաղնիքն և իւր տարեկան եկամուտը կը սեփականէ դպրոցին:

Երծիւի պէս կը սրանայ անդ, ուր կրօնափոխութիւն լինելու գէպէկը պատահին: «Նիկոմիզից գաւառն մերձաւորագոյն վիճակն լինելով Պոլսոյ հետ, կրօնափոխութեան առաքեալներն խելքին վչելուն պէս իսկոյն կ'արշաւեն այդտեղ: Եւ սակայն ամեն անդամ ևս անցածող ելած են չնորհիւ Ստեփան եպիսկոպոսի: Գիւղական երկպառակութեան մ'առթիւ ոմանք կաթողիկ կը լինին. առաջնորդն վրայ կը հասնի, դարձի կը բերէ կրօնափոխներն, և այս պատճառաւ այնպիսի սոսկալի վտանգի կ'ենթարկի, որ քիչ կը մնայ գաշունահար սպանուելու պիտի:


Արմա-Եր.—Ուգանման վտանգէն աղատելէն յետոյ կը մեկնի Աէյվէի կողմն, ուր Եգասար փոքրիկ գիւղին մօտ գաղթական հայեր հետզհատէ գալով բնակութիւն հաստատած էին: Ստեփան վարդապետ անդ երթալով, զիւղն բարեկազմութեան մէջ կը դնէ և կ'անուանէ Երմանիք: Եպա Զալըքեան Եղիշէ անուն հարուստ ծերունիին սիրտը վառելով Վատուածապաշտութեան և աղքասիրութեան ջերմեռանդ զգացմամբ, 20,000 ռուբլի ծախսել կուտայ նմա և կը կառուցանէ եկեղեցի, որմէ ցայն վայր զուրկ էին գիւղացիք: «Նաև, առաջնորդի խորհրդով Զալըքեան իւր բոլոր շարժական և անշարժ կալուածներն աղքին կը կտակէ ողջութեան ժամանակին: Սակայն 1888-ի վերջին պատրիարքարանի հրամանաւ այդ կողմերն զրկուած անարժան վտրդապետ մը, Զալըքեանի աղքականներէն կաշառուելով, կը փոխէ բարի ծերունուոյն միաքը. այրել կուտայ հին կտակն և նոր կտակաւն իւր ամեն ստացուածքը կը յանձնէ աղքականաց: Մահէն յետոյ միայն խարդախութիւնն յերեան կ'ելնէ: Վուաջնորդն գատաստանի միջոցաւ ի վերջոյ կը յաջողի ստացուածքի մէկ երրորդ մասն միայն աղքային սեփականութիւն դարձնել.

Պալ.-—Ստեփան վարդապետ 1883-ին կը մեկնի Ա. Էջմիածին եպիսկոպոս օծուելու, սակայն Գէորգ կաթողիկոսի վերահաս մահուամբ կը սպարտաւորի ետ դառնալի Պոլիս, ուր

կը մնայ քանի մ'օր: Այս միջոցին Փոքր Ասիոյ մէջ Նիկոմիդիայէն մի քանի օր հեռի եղող Պոլու քաղաքի հայոց միջեւ ծանր խովովութիւններ կային. և տեղացի շատ նշանաւոր ամենք բանդարկուած էին զիրար մատնելուն պատճառաւ: Պոլուի թեմն առաջնորդ չունէր որ երթար խաղաղէր: Ներսէս մերձակայ վիճակի մը առաջնորդին գրել էր այս մասին այլ ապարդիւն: Դադարկապորտ եկեղեցականներով լի է Ա. Պոլիս, որոնք բամբասելու, ինտրիգաններ սալքելու, գործեր խառնակելու համար միայն կ'ապրին և սակայն երախտադիտութիւն կը ծախսն ազգին: Ներսէս պատրիարքը կը զիմէ այդ ամեն եկեղեցականաց, որ Պոլու երթան, այլի գուրք ուստի Ստեփան վարդապետ, որ Ճիշտ այդ միջոցին կը դառնալ Եջմիածնէն, հրաման կ'ընդունէ Պոլու երթայ. «Ամենուն հրամայեցի, ինովրեցի, որ երթան այդ խեղճ մարդիկը հաշոեցնեն, բայց պարապը ելայ, ոմանք կը մերժեն և այլք 50 ոսկի (մօտ 500 ոուրլի) ճանապարհածախս կուղեն... հոդ չէ նորէն գուն գնայ...»: Եւ Ստեփան վարդապետ առանց ո և է ճանապարհածախս առնելու իւր թեմի մէջէ կամաց անցնելով կը հասնի Պոլու, ուր մէծ գժուարութեամբ վերջ կուտայ խովովութեանց, կը հաշոեցնէ թշնամի կուսակցութիւնները, կ'ապատէ բանդարկեալներն և ապա ի նշան հաշութեան, ըստ ինովրանաց տեղացւոց, պատարագ կը մատուցանէ: Այս առթիւ 40 ոուրլի ժամոց կուտան Ստեփան վարդապետին, այլ սա չի ընդունէր և այդ աղքատ ու օտարական աեղի մէջ. ևս հանգանակութիւն բանալով 500 ոուրլի է աւելի դրամ կը հաւաքէ և վերօյթեալ. 40 ոուրլին ալ վըտն գնելով կը գնէ սրճարան մը և կը սեփականէ դպրոցին, որ մինչև այն ժամանակ չունէր ո և է կալուած ու հաստատուն եկամոււտ: Այս սրճարանն ամեն տարի մօտ 200 ոուրլի հասոյթ կուտայ գպրոցին: Բաց աստի կը յաջողի նաև եկեղեցւոյ համար սպասներ շինել տալ: Այսպէս, ամեն հնարաւոր բարեկարգութիւն ներմուծելէ յետոյ կը վերադառնայ:

Ա երջը երկրորդ գրքում:

Պ. Տեսայեանցանց:





ԱՄՊԵՏՆ ԱՍՏՈՒԱՉԱՏՈՒՐ ԶՈՒՆԴ

Հրատան. Յ. Շահարուհի Համբարձուկի

ԱՍԳԵՑՆ

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԶՈՒՆԴ

Վերջին ժամանակ Թառլքիոյ հայոց կրթական կինաց համար ծնունդ առաւ այնպիսի մի մեծ երեցիթ որ արժանի է ընդհանուր հայ ազգի խորին ուշագրութեան։ Ասպետն Աստուածատուր զը ֆունդ ի վաղուց սահմանած ունէր եղական տևասկի հիմնագրութիւն, որի գոյութեան մասին հազիւթէ երկու ամիս առաջ սկսան լրւրեր տարածուիլ: Հիմա, այլ ևս փարասած է ամեն տարակյա և կատարելապէս ստոյգ իրողութիւն մ'է թէ այդ պատուական անձի դրամաղթլիսի տոկոսով ամենայն տարի մշտնջենաւորաբար, մի երկու տասնեակ հայազգի և ազգային ուղղափառ եկեղեցւոյն պատկանող ազքատ երիտասարդներ պիտի ուսանին Խւրոսլիոյ համալսարանաց մէջ, ի-բատանչ-ըն ընդունելով տարեկան Եղիսաբետար ֆրանքի թոշակ մը:

Եյս մասին՝ թողլով ի ստորե խօսիլ ընդարձակօրէն, սա չափն միայն արժէ նկատողութեան առնուլ թէ ց'այսօր սակաւ գտնուի ուեէ կտուկ կամ բարեգործութիւն որ այս աստիճանն ազգօգուա և այսչափ խորհրդաշատ յղայում ունեցած լինի։ Յայանի է թէ Թառլքիոյ հայք, տակաւին ներկայ գարու սկզբը բին, ունէին քիչ շատ իրենց յաստեկ գրականութիւնը, մինչ զիս Առուսիոյ հայերն գեռ յիսունական թուականին, բան մը չունենալէ զատ, մեծ մասամբ ևս անտեղեակ էին մայրենի լեզուին. և Թառլքիոյ հայք, հակառակ իրենց կրթական անբաղդատելի առանձնաշնորհմննց, այժմ շատ յետ մնացած են Կաւասիոյ հայերէն։ Առա պատճառը զիսաւորապէս վերապրելու է այն տարբերող հանգամանքներուն, որ ծագումն ստացան այդ բաժան հասարակութեան դաստիարակութեան եղանակին միջև։ Թառլքիոյ հայք, զուրկ մնալով հիմնա-որդապէս ուսեալ տարբերէ, չը կարողացան արժանաւոր ուղղութիւն տալ իրենց գպրոյներուն հետեարար և իրենց հանրացին

*

զարգացման, իսկ Ոռուսիոյ հայք՝ ընդհակառակն օժտուելով այդ առաւելութեամբն՝ հիմնական փոփոխութիւն մը յաջող զեցան յառաջ բերել իրենց կենաց մէջ, հարկաւ գլխաւորապէս շնորհիւ բանիբուն հայ համալսարանական տարրին:

«Ֆունդեան Հիմնադրութեան» շնորհիւ ևս համալսարանականաց յաւխտենական հոսանք մը դիմելով Հայաստան՝ անտարակուսելի է թէ քիչ ժամանակէն պիտի բարեփոխուի թըրքահայոց հանրային կացութիւնը:

Այսպիսի վեհ ձևոնարկի մառթիւ հարկ անհրաժեշտ պարտաւորութիւն մէ ընդ միշտ արձանադրեալ պահել նորս Հիմնադրի մանրախոյզ կենսագրութիւնն իբր նուիրական յիշատակ թէ մեր ապագայ սերնդեան և թէ մանաւանդ այն անթիւ ուսումնատենչ երիտասարգայ որ իւր սաները լինելու բաղդին պիտի արժանան դարուց ի գարս պարբերաբար:

Եհա այս տեսակէտէն մղեալ հայ հասարակութեան ընթերցող դասին կը ներկայինք յիշատակաց արժանի սոյն կենսագրութիւնը:

Ասպետն Խատուածատուր գը Ֆունդ Ճնածէ 1825 օդոսառու 14-ին: Իւր հայրն սերեալ է Ֆունդեան հնագոյն մի ընտանիքէ որ, Հայաստանի յարատե ասպատակութեանց և Անի քաղաքի աւերման ժամանակ ՃՊ. դարու մեծ գաղթականութեան հոսանքի հետ, նախ կը զիմէ Նեհաստանի Գալիցիա գաւառն, ուրկից ապա Նիկոլեապիոսի կրօնական հայածանաց պատճառաւ, ուրիշ շատ ընտանեաց հետ ի միասին կը հեռանայ և կը հաստատուի Բուլկովինայի Առւշաւա քաղաքը: Իւր հայր, ինչպէս նաև իւր համազգիներէն շատեր, կը զբաղէր անսասնաբուծութեամբ և անսանոց ընդարձակ առուտուրով Աւստրիոյ մայրաքաղաքին հետ: Իսկ մայրը կը պատկանէր գը Պրունկուլ գերդաստանին, որ իւր ազնուականութեան տիտղոսն ընդունած է Մարի Թէրէզա կայսրուհիէ: Զորս ու կէս ամեայ հասակի մէջ իւր մայրն կորուսանելու գմբադդութեան կ'ենթարկի:

Փոքրիկն Սստուածատուր, այսպէս մնալով որբ իւր միամօր քրոջ հետ, կ'սկսի մէծնալ իւր մէծ-մօր և ամուրի հօրեղօր գորովալիր խնամոց տակ որովհետեւ հայրն, գործին պատճառաւ շարունակաբար բայցակայ լինելով ազատ ժամա-

նակ չէր ունենար մասնաւորապէս զբաղելու իւր զաւակի դաստիարակութեամբ։ Մանկութեան տարիքէն սկսեալ իւր բարեբարոյ ընթացքով ու սրամութեամբն սիրելի ու պաշտելի կը դառնայ ազգականաց և քաղաքի բոլոր ծանօթ շրջանին։ Չորս տարի յաջողապէս կը շարունակէ իւր դասընթացն Սուշաւայի հայոց վարժարանի մէջ և բարքի ու յառաջդիմութեան առաջին մրցանակ կ'ատանայ։ Եյնուհետեւ կը մտնէ տեղւոյն գերմանական դպրոցն։ Առ ժամանակ մի յետոյ, իւր հօր որոշմամբ կը պարտաւորի կիսատ թողով և ենել այդ ուսումնարանէն։

Հայրը, վերջին ուղևորութեան պահուն ի Վիեննա, այցելելով Միթարեանց գպրոցն կ'որոշէ իւր զաւակն անդ զրկել պայմանաւ որ լուրջ և միանգամայն զուտ ազգային դաստիարակութիւն արութ նմա, առանց կրօնական ստիպումներ ի գործ գնելու տղայի մոաց վըայ։ Հօր սցն որոշում կարի անհաճոյ տպաւորութիւն կ'ազդէ բոլոր ազգականաց որք, իբր անարատ ազգասէր և բուռն նախանձախնդիր հայեկեղեցւոյ սրբազն տւանդութեանց, կը վախենային թէ մի՛ գուցէ այն տեղի դաստիարակութեան շնորհիւ խախտի նորահաւատքը։ Սակայն հայրն բոլորովին կը հանգստացնէ նոցասիրաը, բայցատրելով ամեն պայմաններն, և ապա Սստուածատուր կը զրկուի Վիեննա, 1837 թուին։

Ընդում մը, կը մտաբերեմ, Սստուածատուր գը ֆունդ յուզեալ զգացմամբ կը պատմէր այդ առաջին բաժանման սրտաճմմիկ տեսարանն և կը յիշէր հօր սոյն հանդիսաբու խօսքերը։ «Գնա՛, զաւակս, Սստուածոյ և հօրդ օրհնութիւնը թողքեղ հետ լինի միշտ։ Զը ծուլանաս բնաւ, և աշխատէ լուրջ կրթութեան հետեւ որպէս զի ասլազային նշանաւոր մարդ լինիս, եթէ ոչ աղէկ զիացիր թէ զինուոր զրել պիտի տամքեղ որովհետեւ չեմ կամենար որ գու՝ ալ ընդդրկես իմ արհեստն, որ այնքան դառնութիւններ^{*)} պատճառածէ ինձ...»։ Սբուասուաթոր աչք այս անկեղծ ու գորովալի խօսքերն արտասանել։ յետոյ

*) Հատ անդամ անասնոց մեծամեծ կոտորած եղած է և առեւտրական այլ ձախորդութիւններ, որոնք խորին վեշտ պատճառած էին իրեն։

կը գրկախառնէ իւր փոքրիկ զաւակն, որ փոխադարձաբար ուսուցչի ձեռամբ շարադրած վերջին մնաս բարեի ճառ մը կ'ուղղէր իւր հօր, սրդիական սիրոյ և երախտագիտութեան զգացմամբ զեղուն:

Եյսպէս փոքրիկն Աստուածատուր կը թողու այն ամենն, որ սիրելի էր իրեն և տասն մէկ ու կէս տարեկան հասակի մէջ զաստիաբակի մը հետ կը մեկնի գէպի Վ իրենա: Ճանապարհին մտաբերելով իւր ազգականներն ու ընկերակիցները կուլար յանախակի: Յայնժամ ի Ռուկովինա տակաւին երկաթուղի ըլ լինելուն պատճառու, ուժ օրուան երկարածիդ ուղերութենէ յետոյ հազիւ կը համնի Վ իրենա և կընդունուի Մ իր թարեան դպրոցի առաջին զասարանը: Իւր ուշիմութեան ու ջանասիրութեան շնորհիւ տակաւ առ տակաւ կ'սկսի փայլուն յառաջդիմութիւն դործել ուսման բոլոր Ճիւղերու, մասնաւորաբար պատմական և փիլիսոփայսկան Ճիւղերու մէջ: Սակայն հօր անփոխարինելի կորուան գառն տիրութեամբ կը պատէ իւր համայն էութիւնն. այնուհետեւ տեսակ մը տարտամ տիրութիւն և բուռն զգացում մը յարտամ վեր ի վայր յուղելով նորա թարմ Հոգին այդ օտար կեղրոնի մէջ, կ'ազգէ նաև իւր առողջական վիճակի վրայ: Կազզուրման նախատիաւ Ճանապարհուգութիւն կընէ ի Ատիրիա, Գրաց քաղաքը կ'իջևանէ, ապա իւր առողջութիւնը կատարելապէս կաղզուրելու համար կը մեկնի Զ միւռնիա: Ժամանակէ մը վերջ Զ միւռնիայէնի անցնի Ա. Պոլիս և ապագարձեալ Վ իրենա: 1850 ին, այն է տասն երկու տարուան բացակայութենէ յետոյ ուղղակի կը վերադառնայ իւր մայրենի քաղաքը: Զ երնու վեցի մէջ բարեկամէ մը կը տեղեկանայ թէ հետեւեալ օր պիտի կատարուի իւր քրոջ ամուսնութեան հանդէն. ուստի վիշերայն սաստիկ սառնամանի օդով բալիսիր նստած կ'շտափէ ի Սուչաւա: Կանգ կ'առնու վարասվերայի խանութի մը առաջ, որ երբեմն իւր հօր վարսավիրան էր և մազերը կը յարգարէ, վարսիվիրան պատահաբար կիմանայ ով լինեն և ամեն ինչ ձգելով կը վազէ հայոց մօտակայ եկեղեցին աւետելու նորա գալուստը, միւս կողմէն քոյրը կուլար այդ պահուն որ ամուսնութեան հանդիսաւոր վայրկենին իրմէ հետու կը գտնուի իւր կաթողին եղբայրն: Վ ետաբեր լուրն կայծակի արագութեամբ

կը տարածուի եկեղեցւոյ մէջ և ազգականք կշտապէն խանութ
և կ'առաջնորդեն բնակարանն, ուր լի էր հանդիսականաց խուռն
բազմութիւն։ Հայլ ի հայլ զարդարուն օրիորդաց միջև իւր
քոյրն կը փնտուէր այլ չէր ճանաչեր, մինչև որ բերկասապա-
տար քոյրն առաջ անցնելով կը դրկախառնուի իւր կարօտա-
կէղ միակ հարազատին հետ։

Սուշաւա վերագտոնալուն պէս, ըստ զբաւոր խնդրանաց
և թափանձանաց տեղւոյն նշանաւոր ազգայնոյ, իւր վրայ
կ'առնու հայոց վարժարանի վերին տեսչութեան պաշտօնն
ընկերակացութեամբ իւր ազգական Փօն Խլիսս զլ Պրունկուլ
ազնուականին։ Տոգորեալ հայսախրական զգացմամբ, կը ջա-
նայ իւր արենակիցներու նոր սերունդն զարգացնել կատարե-
լապէս ազգային ողուզ և ոյժ տալ հայ լեզուին որ տակաւ
անհետանալու վրայ էր։ Եյս նապատակաւ կը յաջողի կառա-
վարութենէն արտօնութիւն ստանալ որ հայոց վարժարանի
շրջանաւարտ աշակերտներն առանց քննութեան, այլ միայն
տեսչութեան վկայականաւ, իրաւունք ունենան մանել կա-
ռավարական գալրոցներու երրորդ դաստրանն։ Նոնկ Նապետն
Զունդ բնականաբար մեծագոյն բարութիւն կը մասառցանէ
իւր հայրենակցաց, որ այնուհետեւ հայ տղաները, փոխա-
նակ ուղղակի պետական գալրոց երթաւու, կը մանեին նախ
հայոց վարժարան, ուր պատեհութիւն կ'ունենային ընդու-
նելու ազգային դաստիարակութիւն, ուստանելով հայ լիզուն
և հայոց պատմութիւնն։ Իրաւամբ ուրախալի գործ մ'է այս,
որով այսօր կրնայ մխիթարուիլ Ա. զը Զունդ։

Որչափ և մեծ սէր ունենար իւր մայրենի երկրին վրայ,
սակայն մի տեսակ սրտնեզութիւն կ'զգար անդ մնալով մի
ժամանակ մեծափարթամ ընտանեաց զաւակ էր, իսկ հիմա
պալստառեալ էր անշունք կեանք մը վարել։ Իւր անձնասիրու-
թեան շատ ծանր կը թուէր իւր արդի կինյազն և լաւագոյն
կը համարէր օսար երկրի մը մէջ աննշան ասլրիլ քան Սու-
շաւա մնալ։ Եյս մտածումներէն մզեալ՝ 1853-ին կը հեռա-
նայ և վերջնապէս կը հաստառուի ի Պոլիս, ուր սակաւ ժա-
մանակի մէջ, իւր համակրելի բնաւորութեան և ընտիր կրթու-
թեան շնորհիւ կը ծանօթանայ Ա. Պոլսոյ բարձր դասի բո-
լոր հայ ընտանեաց հետ, սակայն մասնաւոր սէր յարդանք

կ'սկսի վայելել Գարաքէհիս գերդաստանէն, ուր կընդունուի իբր ընտանեաց անդամ. ցերեիները կը զբաղէր վաճառականութեամբ, իսկ երեկոյեան հոդ կը տանէր տան կրտսեր զաւակի գաստիարակութեան: Կարձատու ժամանակէ մը յետոյ Գարաքէհիս անդրանիկ տղայի Երբահամի (Հիմա Երբահամ փաշա) հետ կ'ուղեղորի Փարիզ: Ճանապարհին՝ Վիեննայի մէջ կը հանդիպի Երբահամ փաշայի քեռայր Նուպար փաշային: Եւ այդ օրէն ոերտ բարեկամութիւն կը հաստատուի սոյն երկու ականաւոր անձնաւորութեանց միջև:

Սացագրի խնդրի մը պատճառաւ առ ժամանակ կը պարտաւորի մնալ ի Վիեննա: Իւր անցագիրն Սուչաւայէն մինչեւ Ա. Պոլսայ համար էր Փարիզ երթալուն՝ աւատրիական հիւստատուսարանը կը ծանուցանէ թէ հարկ չկայ կրկին վաւերագրելու, այդպէս կարելի է Փարիզ երթալ սակայն այդ պահուն անցագրի բացարձակ խստութիւն լինելով Վիեննայի ոստիկանութիւնը գժուալութիւններ կը յարուցանէ, իբր թէ քաղաքականութեան կատկածելի անձ մը լինէր: Վատուածատուր զը ֆունդ այս առթիւ ուղղակի կը ներկայանայ Վատուրից ներքին գործոց նախարարին, ոյր առաջ հզօրապէս կը պաշտպանէ իւր իրաւունքն: Նախարարը մտիկ կընէ հաճութեամբ, այնուամենայնիւ պինդ կը մնայ օրինաց յայտնի կանոնագրութեան վրայ. և այս անդամ իբր կատարեալ համոզմամբ, կ'առարկէ թէ բացարձակ պատճառներ ունի տարակուակլու իւր վրայ որովհետեւ, կը յարէ նախարարն, որպէս ձեր վկայականները կատացուցանեն բարձր ուսում առած էք և այն ևս մէջ յաջողութեամբ, կատարելապէս լաւ կը խօսէք դերմաներէն, ֆրանսերէն և իտալերէն, ուսումնասիրած էք լսուիներէն, ուլրազերէն և թուրքերէն լեզուները, իսկ մենք պէտք ունենք ձեզ նման մարդոց: Երգ ինչո՞ւ չէք մտած կառավարական պաշտօնի մէջ. և բնականաբար չէք կարող պատճառաբանել թէ այս սապարէզն նուազ պատուաբեր և նուազ երեկելի է քան երիտասարդի մը մենտորի պաշտօնն: Զեր այդ ընթացքն անսարակուելի ապացոյց մ'է թէ դուք չէք համակրի կառավարութեան և հակառակ էք անոր: Նախարարի այս ճարտարամիտ դիտողութեան պ. դը ֆունդ ևս ոչ նուազ սրամտութեամբ կը պատասխանէ, հաւաստելով նախարարին նախ և առաջ,

թէ ինք շատ կրսիրէ իւր տղին. Հետեւաբար անկարող է միեւնցին զդացմամբ թէ տէրութեան ծառայել և թէ ազգին ուղղել սրտով։ “Կարձեալ կը յաւելու թէ ինք արծաթասէր է, և չունենարվ բարձր պաշտպանութիւն չը պիտի կարենայ յառաջդիմել գիւանազիտական ասպարէզի մէջ և թէ հետեւաբար աննշան գիրքի մէջ պիտի ստիպուի ապրիլ մինչդեռ ինք զինքն տալով վաճառականութեան—իւր նսպատակակէտին,— կը հաւատայ թէ մի օր կարենայ օգտակար լինել թէ իւր անձին և թէ հանրութեան և միաժամանակ գիւրակեցիկ և անկախ կենցաղ մունենալ. «Ահա այն երկու պատճառները, կը յարէ պ. գը ՞ունդ ժպտելով՝ որ կ'առաջնորդեն բանականութեանս՝ կենաց այս կամ այն ասպարէզի ընտրութիւնն կատարելու նկատմամբ»։ Նախարարն Ռառոն Արաւա զդածեալ այս անկեղծ խօսքերէն, անմիջապէս հրաման կուտայ տնօրինել անցազրի կնճիռը։

Ա. գը ՞ունդ այսպէս ինքնակամ հրաժարելով իրեն առաջարկուած գիւանազիտական ասպարիզէն մեծ սխալ մը կը գործէ, որովհետեւ ինք ի բնէ աւելի գիւանազիտական յատկութեամբ օժտեալ էր քան թէ վաճառականական, և Երբահամ փաշայի հետ կը մեկնի Փարիզ ուր շատ շուտ կը յուսագրիպի։

Ուուրքո-ռուս պատերազմի առթիւ պահ մը չէր համարձակած վաճառականութեան հետեւել անակնկալ ձախորդութիւններէ վախնալով։ Ասկայն եւրոպական տէրութեանց միջամտութեան շնորհիւ վաճառականի կայութեան վիճակն ապահովուելէ զատ առեւտրական ընդարձակ և յաջող գործեր ևս կը բացուին։ Այս միջոցին իւր հօրեղօր որդին պ. Գէորգ ՞ունդ Ա. Պոլակն նամակ նամակի հաւեէ կը գրէ իրեն անմիջապէս վերազառնալ ի Պոլիս, առեւտրական ընդարձակ գործի ձեռնարկելու։ Պ. Ա. գը ՞ունդ բնականաբար կը փախաքի ճգել Փարիզ և մեկնել ի Պոլիս և այս առթիւ քանից նամակ կը գրէ Վարաքէհիային հրաժարելու իւր պարտաւորութենէն, բայց Վարաքէհիա զանազան յուսալի խոստումներով կ'ստիպէ մնալ մինչեւ որոշեալ ժամանակամիջոց մի, որով կը փախցնէ իւր նսպատակակէտի սոյն ընտիր առիթը։

Պատերազմէն յետոյ, և երկք տարուան բացակայութենէ վերջ կը վերադառնայ, ուր ի նորոյ, դարձեալ կը ձեռնարկէ

վաճառականութեան։ Աւ կարճաաւ ժամանակը ընթացքում կը վաստիի ընդհանուր համակրանք և յարդանք առեւարական բոլոր շշանակներու մէջ։ Վկնածելի անձնաւորութիւն մը կը գտանայ ոչ միայն հայոց, հապա նաև Ա.Պոլսոյ աւտորիական գաղթականութեան համար, որոյ նշանաւորագոյն և ամենէն սիրեցեալ անդամներէ մին կը լինի։ Մասնաւոր յարգանք կը զրաւէ նոյնպէ։ Օսմաննեան կառավարութեան մօտ, որի հետ փայտի ընդարձակ և կարեռ վաճառականութիւն մը հասաատած ունէր, իւր ամենամերիմ բարեկամ և կայսերական աւտոդ ճարտարապետ Պալեան Նիկողոս բէյի միջոցաւ։

Պ. Ա. գը Թունդ, առեւարական ասպարէզի վրայ, աւանձինն ոյժ կուտայ փայտի մէծագունակ վաճառականութեան։ Իւր կորովամտութեան և յարատեւութեան շնորհիւ կը հանդիսանայ աւստրիական փայտերու միակ ներմուծողն համայն արևելից մէջ։ Միմիայն ինքն է որ Թուրքիոյ կայսերական պալատներու և նաւարանի շինութեանց և մինչեւ իսկ Սուեզի ջրանցքի ու Եգիպտոսի երկրագործական ընկերութեան մատակապարած է այդ կարդի նիւթեր, փոխազրելով զայնս իւր շոգենաւով և նաւերով։

Ի բնէ արդարասէր և կատարելապէս խողամիտ լինելով իւր յանձնառութեանց գործազրութեան և կնճռալի գործոյ մէջ, որ շարունակ կը պատահէին իւր երկարատե վաճառականութեան միջոցին, միշտ ջանազիր եղած է խոյս տալ անձողոպելի գժուարութիւններէ և կամ պատուաւոր եղանակաւ ի զլուխ հանել ամեն ինչ։ Այսպէս՝ կայսերական պալատներու շինութեանց համար Օսմաննեան կառավարութիւնն 15,000 ոսկի կը պարտէր ար Ա. գը Թունդի, և երեք ապառան յապաղումէ վերջն ևս կուզէ քոնսոլիգով հառուցանել այսինքն իսկական արժենութիւնի $78^{\circ}/_0$ վնասով։ Այդ շինութեանց առթիւմ մասցած ուրիշ պարտքեր ալ կային և որովհետեւ Նիկողոս Պալֆա վախճանածէր, ուստի պարատաեարք իւր հօրմէն—Արապէտ Բէյէն կը պահանջէին։ Պետական գանձն անձուկ վիճակի մէջ լինելով Կարասկետ Ամիրա ճալասհատեալ խոստում կուտայ կառավարութեան քոնսոլիգով գոհայնել պարտատէրերը։ Կարապէտ ամիրայի թշնամիններն պատեհ առիթ կը համարին բոլորովին խորտակելու զնա, ուստի երբ նոյն

Ժամանակի աւստրիական գետպան բառոն Պլոկէշ դ'Աստէն այս մասին բացատրութիւն կը պահանջէ նախարարաց ժողովէն, սա իւր կողմէ պատասխանազիր յղելով գետպանին, խորհուրդ կուտայ որ պ. Ա. Ֆունդի եթէ բողոքագիր մ'ուղղէ Կարապետ ամիրայի նկատմամբ, պիտի կարենայ 15 օրուան ընթացքում գետպանատունէն առնել իւր 15,000 ոսկեց պահանջքն ամբողջապէս: Դեսպանն սոյն պարագայն կը ծանուցան է պ. դը Ֆունդի, սյլ նա վեհանձնաբար կըսէ պատգայն կը համարիմ պահանջքիս 100-ին 78-ը կորուսանելքան թէ բարեկամիս նկատմամբ գէշութիւն մը գործել: Եւ յանձնառու կը լինի աշազին մնասով քոնսողիդ առնել ի սէր բարեկամութեան: Բաց աստի Նգիստոսի երկրագործական ընկերութեան հետ բանակցութեան մտնելով մեծաքանակ փայտ կը զրկէ նմա, որ յետոյ անհաստատ կը դառնայ իւր խօսքի վրայ, այս պատճառաւ սյդ ապբանքն անորոշ վեճակի մէջ կը մնայ: Այդ միջոցին հեռագիրը կը հազորգէ Նկազուի մերձաւոր յորդութիւն կտուավարութիւնն անմիջապէս կ'սկսի թումբելով պատել տալ Նեղ մն և շատ բարձր զինով կ'առաջարկէ պ. Ա. դը Ֆունդի զնել իւր գերանները: Պ. դը Ֆունդ իւր նախակին բերանացի խոսաման վրայ հաստատ՝ մի անգամ ևս կը զեկուցանէ երկրագործական ընկերութեան, որ նոյն ժամայն առաջուան անհամեմատ ստորինն արժեքով կ'առնէ ապբանքը և ապա կը փոխանցէ կտուավարութեան 100,000 ֆիորինի շահ մ'ընելով զոր կրնար և իրաւունք ալ ունէր ընելու պ. Ա. Ֆունդ, քանի որ ընկերութիւնն առաջի անգամ խախտեցաւ իւր պայմանի մէջ...

Վհա այս և նմանօրինակ բազմաթիւ պարագայից մէջ, Սապետն դը Ֆունդ շատ անգամ ի վեր հանելով իւր մարդկային զգացման վսեմութիւնն հանդէս վաճառականութեան իսկ, առակի կարգն անցած էր. և սոյն բացառիկ առաւելութեանց շնորհիւ կը շահի ամեն անոնց մեծաքանքն որոց հետ յարաբերութեան մէջ կը դանուէր: Այս պայմաններու մէջ անգամ կը տիրանայ բաւական մեծ հարատութեան մը:

1872 ին Ասպետն Ա. Ֆունդ կ'ամսւսնանայ Կ. Պոլսոյ պատուաւոր ընտանիքի հայ օրիորդի մը հետ Այլ որչափ և ամենայնիւ երջանիկ՝ սակայն իւր անզաւակ կացութիւնն ծանր

վեշտ կը պատճառէ իրեն։ Այն նպատակաւ ընդարձակ ու ղերութիւն մը կը կատարէ յեւբոպա, և կը տեսակցի այդ ճիւղի բոլոր նշանաւոր մասնագիտաց հետ գժբաղդաբար ի զուր կ'անցնին իւր համայն ջանքեր։ Մի տեսակ յուսախարութեան ննթարկեալ այդ վիճակէն, այլ ևս յագեցած կ'զգայ բնքղնք ամեն կարգի շահընկալութիւնէ, որով և 1876-ին վերջնականապէս կը լքանէ առեւտրական ասպարէղն և այնուշետեւ ընթերցմամբ կ'սկսի զբաղել և միանդամայն բազմաթիւ յայտնի և անյայտ բարերարութիւններ մատուցաներ, ըստ իւր բնածին սովորութեան։ Ազնուափայլ Ասպետի սյս առաքինութիւնն հանդածանօթ է ոչ միայն մեր՝ այլ նաև շատ մը իւրուպական ազգայ, որոց լրադրութիւնն ժամանակ առ ժամանակ մեծամեծ զրուատիքներով յիշատակած է նորա բարի անունն և բարեգործական վեհ հոգին։

Իւր բարեգործական նպաստներն և ձեռնարկները նկարագրելու համար ընդարձակ թերթերու պէտք են և միանդամայն զրեթէ անհնարին է, որովհետեւ զերծ լինելով ցուցամոլութիւնն, իւր բարի գործոց մեծադրյն մասն գաղտնապէս կատարածէ և կը կատարէ, որպէս կը հաստատէ այն համական բուռն զգացումը զոր Ա. Պոլսոյ, Հայաստանի և այլ կողմերու հայ հասարակութիւնը կը տածէ այդ ազնիւ անձի վերաբերմամբ։ Սա չափն միայն բաւ է զիտել տալ թէ, եթէ օտարաց առաջ բարեգործի մեծ համբաւն կը վայելէ, հաստարչափ ուրեմն առատասիրու եղած լինելու է դէպի իւր ազգն զոր, բովանդակ էութեամբ, սիրած է մանկութիւնէ ի վեր։ Վրդէն դժուար է և նոյն իսկ հարկ չկայ վկայութեան համար յառաջ բերել այդ փաստերն քանի որ իւր արդի մեծ ձեռնարկն իբր իւր հայրենասիրական ճշմարիտ զգացման լրումն և անմահութեան պսակը կարելի է համարել ամենայն իրաւամբ։

Օտար հպատակ լինելուն պատճառաւ, ըստ սահմազրութեան չէր կարող ազգային պաշտօններու մէջ գտնուիլ սորս համար է որ իւր անուն աղղային վարչական գործոց մէջ այնքան չէ կրկնուեր, այնուամենայնիւ այս մասին նաև կատարած է յիշատակելի գերեր։ Դեռ առաջին անգամ Փարիզ եղած ժամանակ, կը յուղուեր Մուրատեան կտակի և նոյն վարժարանի խնդիրն, պ. Ֆունդ մի շարք յօդուածներով հզօ-

բազէս կը պաշտպանէ մեր աղջային իրաւոնքները, Առաջին
մէջ: Եւր այս գրութեամբ ընդհանուր ուշազրութիւն կը գրաւէ
ի Պոլսա, ուստի երբ կը վերագրաւունայ, Ա. Պոլսայ բոլոր գրա-
գէտ և բարձր գասերը կը հետաքրքրութիւն և փափաք կ'ունենան
ծանօթանալ նորա հետ: Բաց անտի խորին մտերմութիւն
ունեցած լինելով Շահնազարեանի հետ, նորա առաջարկու-
թեամբ կը թարգմանէ գերմաներէն Ergaenzungsblattի մէկ գրու-
թիւնն՝ որ ընդհանուր տեղեկութիւններ կը պարունակէր հայոց
պատմական և ժամանակակից բոլոր գէպերու, հայ լրագրու-
թեան, հայ գաղթականութեան և, ի վերջոյ, աղբազրութեան
մասին: Մինչեւ այդ ժամանակ եւրոպական գրականութեան
մէջ հայոց վերաբերմանի լցոյ տեսած ամենէ նպաստաւոր
գրութիւններէն էր այդ, զոր ապա, Պ. Զունդի Փարիզէն մեկնե-
լին յետոյ, Շահնազարեան կը հրատարակէ գրքոյի ձեռվ: Պ.
Զունդի գրական աշխատութեանց մէջ առաջին տեղը կը
գրաւէ Առաքէլ պատմիչի գաղիերէն թարգմանութիւնն նոյն
չափ ստուար և հետաքրքիր ծանօթութիւններով, արդիւնք եր-
կարամեայ մոնիրախոյդ հետազոտութեանց և ուսումնասիրու-
թեան: Սակայն յետոյ ինկատի ունենալով որ Շոռոսէ ևս թարգ-
մանած էր, արժան կը համարէ այնպէս անտիպ թողուլ թէկ
լաւագոյն էր հրատարակուած տեսնել, որով հետեւ Շոռոսէինն
պարզ թարգմանութիւն է, մինչդեռ պ. Զունդինն, ինչպէս
յիշեցինք, թարգմանութիւնէն գուրս յաւելցուցած է իւր կողմէ
բազմուղղմանի ուսումնասիրական ծանօթութիւններ, որ մեծ
կարևորութիւն կրնան ունենալ մեր պատմական հետազոտու-
թեանց համար: Պ. Զունդ գրադիտառութեան քաջալերող և
գրասէր լինելէ զատ, հմուտ պատմաբան է նաև, և մեր պատ-
միներու մէջէն առանձինն ուշազրութիւն կ'ընծայէ Առաքէլ
պատմիչինն, որն որ, կըսէր մի անդամ մասնաւոր կարևորու-
թիւն տուած է ոչ միայն պատերազմական գէպերուն և իշ-
խանաց արագիներուն, այլ և բուն ժողովրդի ներքին կեանքի
զանազան երեսյթներուն: Նմանապէս լատիներէնէ թարգ-
մանած է Փլորուս հեղինակի Հոռվմիական պատմութիւնը:

Պ. Զունդի աղբային մեծագոյն գործերէն մին եղած է
Ա. Փրկչէ Հիւանդանոցի անկետալ կացութեան վերակազմու-
թիւնն: 1860 ին երբ Թուլբքիոյ հայք Օսմանեան կառավարու-

թենէն ընդունեցին տեսակ մը ազգային ինքնավարութեան նոր օրէնքն՝ Սահմանադրութիւնն՝ իրաց վիճակն բոլորովին կերպարանափոխ եղաւ և ամեն գործ ժողովրդի իրաւասութեան ենթարկուելով վերջ տրուեցաւ զօրաւոր անհատներու բոնակալ կամայականութեան։ Ի մէջ այլոց, այդ ժամանակ յայտնի կը լինի Ա. Փրկչեան Հիւանդանոցի անկերպարան և տխուր վիճակն։ Պ. Մատաթիա Գարագաշեան իւր «Աէր» թերթի մէջ հոգեցող յօդուածաւ մը ընդհանուր ուշադրութիւն կը հրաւիրէ այդ նուշիրական հաստատութեան վրայ և իւր խօսքն կ'աւարաէ հետեւեալ տողերով. «...Փրկչի ներկայ վիճակին վրայ ողորմած ակնարկութիւն մ'ընելու կը հրաւիրէնք այն բարերար անձերն որք կարողութիւն ունին լինելու և եղած են և կը հաւատանք թէ միշտ պիտի լինին հայր անոր մէջ պատապարուած ողորմելիներուն»։ Միւս կողմէ «Նկարագիր Ա. Փրկչի Ազգ. Հիւանդանոցի» անուշամբ ուրիշ նոր զբքոյկ մը աւելի սոսկալի գոյներով կը նկարագրէր այդ հիմնարկութեան վիճակը։ Իրաց այս կացութեան մէջ առաջին անգամ լինելով պիտի ընտրուէր Սահմանադրական առաջին հոգաբարձութիւնն, և ժողովրդի հաւատքով այս «ողորմելիներու բարեգութ հայրն» պ. Զունդ միայն կրնար լինել ուստի Պապոս-Նիւն Ա. Փրկչի Հիւանդանոցին կը զբէս և վերջը 1860 նոյեմբերին Հիւանդանոցի Սահմանադրական առաջին հոգաբարձութիւնը կազմուեցաւ և այս հոգաբարձութեան տտենապետն և ամենէն աւելի եռանդուն և գործոն անդամն եղաւ պ. Զունդ, յարատե գործակցութեամբ Շխեան Պուկաս ազգայի։ Պ. Զունդի առաջին գործն եղաւ հիմնովին բարեփոխել ամեն ինը։ Արձակեց շատ մը պորտաբոյծ և անձեռնհաս պաշտօնեայներ, որ պաշտպանութեամբ անդ մտած էին լոկ ամասկան առնելու համար։

Հիւանդանոցի հասոյթի մէծ մասն այդ կարգի պաշտօնէից կը տրուէր, որով պատսպարեալ հիւանդները, զառամեւարները, խելագարներն անօթի կը մնային։ Ահա թէ Ա. Փրկչի պատմութիւնն ինչպէս կը զբէ և այս առթիւ... «Կարեոր բարեկարգութիւններ ըրաւ, աւելորդ պատսպարեալները ճամփելով ծախսերը պակսեցուց։ Նշանակած կարգի զբաւ։ Մաքրութեան, առողջապահութեան, ուտեսարից սննդականութեան և

կանոնաւորութեան մասին ալ օգտակար տնօրէնութիւններ ըրաւ։ Կրտական բարիք մը եղաւ՝ այս հոգաբարձութեան նելքե օրն երկիցս տաք կերակուր կարենաւ տպուելը, — բարեբախտութիւն մը յորմէ շատ ժամանակէ ի վեր զուրկ մնացեր էին և այս հոգաբարձութենէ ետքն ալ զուրկ մնացին... Հինգ ամսի միջոցում բոլոր պատուպարելոց հանդերձներն և անկողինները վերէն ի վար շինեց, միսիթարութիւն որ այնչափ զգալի էր որչափ անկողինք գարշահոտ, փոտեալ և անդործածելի էին. հանդերձները պատուառոտուն և բգեկ բգեկ, ճերմակեղինք հին և պակաս, այնպէս որ ըստ թուոյ պատուպարելոց դէմ մէկ շապիկ և մէկ շապկրներ չկար...։ Ա. Փրկչի հիւանդանոցը մինչեւ այս ժամանակ էապէս չէր ծառացեր իւր նպատակին. հիւանդներն ալ կողմնակցութեամբ կ'ընդունուեին և այս ևս առաւելապէս Ա. Պոլսէն. մինչդեռ պանդուխտ և չքաւոր հայերն, վիրաւոր և թշուառ հայ բեռնակիրներն խաներու մութ անկիւններում կը մեռնէին զուրկ ամեն տեսակ առողջարար սնունդէ, զուրկ ուե է խնամատարութենէ։ Պ. Թունդ վերսնշանակեալ կարգի պատսպարեաները հիւայնելով ընդհանուր հրաւեր կը կարգայ «խաներու աղտոտ անկիւնները տառապող պանդուխտներուն՝ ամենայն վստահութեամբ դիմել ի հիւանդանոց, մանաւանդ հիւանդութիւնն իրենց վրայ չը հիմնուցած։ Այս հրաւեր լսելի եղաւ. գարման և պատսպարան խնդրելու եկող հիւանդաց թիւն զգալապէս աւելցաւ։

Հիւանդանոցի մէջ հիմնեալ կայ վարժարան մը Հայաստանի և Ա. Պոլսոյ անտէրունջ որբ աղայոց համար։ Այդ ուսումնարան չէր ծառացէր իւր նպատակին, յաճախ կը մերժուեին աղքատ որբերն և թոշակաւոր ու ձրի աշակերաներ կ'ընդունէին Ա. Պոլսէն։ Պ. Թունդ այդտեղ ևս արմատական անօրէնութիւններ ըրաւ, ճամբեց բոլոր թոշակաւոր և քիչ շատ կարող ճնողաց տղաքներն, նոցա փոխարէն անպատսպար որբերն հրաւելիելով. ապա «միջնակարգ ուսումներն և լեզուաց աեսակները զեղջեց, և հաստատեց կօշկակարութեան, գերձակութեան, գարբենութեան և հիւանդութեան արհեսանելը, որոշելով իւրաքանչիւր Ճիւղի համար մէկ մէկ վարպետ բանել և մէն մի վարպետին 10—15 աշակերտ յանձնելը որոնք գալուց մէջ նախնական ուսումներ և եթ սովորէն. հայերէն, ֆրանսի-

րէն, աշխարհագրութիւն, թուաբանութիւն ազգ պատմութիւնն եսցին: Իսաց աստի որբ աղջկանց համար ևս դպրոց մը կը սահմանէ:

Պատմութիւնը կը յիշէ թէ պ. Ֆռունդի հոգաբարձութիւնն, գրամական նեղութեան և պատրիարքարանի անտարբերութեան պատճառաւաւ, կը հրաժարի և պ. Ֆռունդ կը մեինի Փրանսաւ: Պատմութիւնը կըսէ նաև թէ՛ պ. Ֆռունդի օրով հիւանդանոցն ենթարկեցաւ հիմնական բարեփոխութեան և թէ՛ նորս օրով քաշած դրամական նեղութիւնն ցոյց տալու համար սա միայն կը բաւէ յիշէլ թէ քանիցս Քաղաքական ժողովոյ և Տնտեսական խորհրդոյ դիմելով կըսէր. «իուսանակ 7—800,000 զուրուշի, կարող ենք 350,000 զուրուշով մատակարարել Հիւանդանոց, բայց այն իսկ չենք կրնար գոնել և մեր գրապանէն 70—80,000 զուշ տալ հարկադրած ենք»:

Եզնուախայլ Ա. Ֆռունդի առանձինն յիշասակութեան արժանի մէկ յոյժ գնահատելի գործն եղաւ կազմութիւնն հայ նշանաւոր Տիկնանց Խնամակալութեան մը, որ ստանձնեց առհասարսկ Հիւանդանոցի մաքրութիւնն, զգեստեղինաց և կահ կարասեաց մասին խնամատածութիւն և մասնաւոր հոգատալութիւն նամանաւոնդ կանանց մասի վրայ: Պ. Ֆռունդի հոգաբարձութեան այս ձեռնարկ ամենայն մասամբ նախախնամութիւն մը եղաւ սցդ զթութեան յարկին համար: Տիկնանց սոյն խնամսկալութիւնն տարեկան մօտ 4,000 ռուբլի կը հանգանակէր և կը մատակարարէր տարաբաղդ պատսպարեալներու պիտոյից, սակայն երկար կեանք չունեցաւ. և պ. Ֆռունդի անտարբեր յաջորդաց ընթացքէն զզուած՝ քայքայուեցաւ այդ օգտաշատ ընկերութիւնը: Ա. Փրկչէ պատմութիւնը կը շարունակէ և յաւելուլ թէ «Մահմանադրութեան առաջին հոգաբարձութեան կաած գժուարութեանց մեծագոյն ապացոյն այն էր որ երբ հրաժարեցաւ, ոչ ոք համարձակեցաւ անոր տեղը բոնէլ, Եւ արդարե մինչև 1863 առանց հոգաբարձութեան կառավարեցաւ. պատրիարքարան և ազգի երեկի անձինք միացած հաղեւ հազ կը կարենացին գործ տեսնել և ի վերջո չը գիմանալով կը հրաժարին և Հիւանդանոցն կատարեալ անիշխանութեան կ'ենթարկի մինչև որ 1863 նոյեմբերին կը կազմուի սահմանադրական երկրորդ հոգաբարձութիւնն,

գարձեալ պ. Աստուածատուր Ֆունդի ատենապետութեան ներքեւ: Առա ժամանակ Եզիստոսի Խորիմն 4,000 ռուբլի կը նուիրէ Հիւանդանոցին և 2,000 ևս Սուլթան Եզիզի մայրը: Հոգաբարձութեան խնդրանոք, կայսերական կառավարութիւնն կը հրամայէ ելեմոից նախարարութեան, որ Հայոց Հիւանդանոցին անխափան վճարուի մատ դիմու որ երկար ժամանակէ ի վեր գաղբած էր: Պ. Ֆունդի այս երկրորդ հոգաբարձութեան օրով ուրիշ շատ նուելներ մատուցուեցան Հիւանդանոցին, հարկաւ իւր Կատենապետի ազդեցութեան և եռանդուն գործունեութեան շնորհիւ:

Հիւանդանոցի բոլոր հասոյթը պատրիարքարան կ'երթար, իսկ պատրիարքարանն մասամբ կէսն և յաճախ աննշան գումարներն կը յանձնէր հոգաբարձութեան: Պ. Ֆունդ տառապետ և շուարեալ զանազան առաջարկներ կը մատուցանէ պատրիարքարանին Հիւանդանոցի բարեկեցութեան նկատմամբ, և ըստ դիմանալով Առա անտարբեր ընթացքին և իւր անձնականէն ըրած մեծամեծ ծախքերուն, կը հրաժարի վերջնապէս: Խօնէ առաջին և թէ երկրորդ հոգաբարձութեան ժամանակ, յորում հիւանդանոցը զբանական ծանր նեղութեանց մէջ էր, պ. Ա. Ֆունդ ամենայն զոհողութեամբ նպաստած է անոր պահպանութեան և փանդեալ զոյութեանը. և այս ամենէ զատ, իւր անձնական ծախքով շնորհ տուածէ խելադարուհեաց պատսպարտնը:

Կապեան Ֆունդ մեծ բաժին ունինաւ Կուպար-Շահնազարեան վարժարանի հաստատման խնդրի մէջ: Կարսապետ վարդապետ Շահնազարեան վախճանելով կը թողու 10,000 ռուբլի արժեք ունեցող զանազան զօյքեր և իրեն կտակակատար կը նշանակէ զՆուպար փաշան և Կերսէս ես. Վարժապետեան: Կուպար փաշա շատ գոհ չի մնար սոյն պարտականութիւնէն, որ բաւական գժուարին էր, որովհետեւ զօյքերն զիրք և նմանօրինակ բաներ էին առաւելապէս: Պէտք էր զբամ ընել զայնս և տպա տալ շահեցնելու մինչեւ որ վարժարան մը պահպանուելու չափ դրամագլուխ կազմուէր: Կերսէս եպիսկոպոս Վարժապետեան որ ազգային գործով մը Եպիսկոպոս գայած էր, այս առթիւ կը տեսակցի Կուպար փաշայի հետ: Փաշան յետ երկար խորհրդածութեան իւր մտերիմ բարեկամի

Պ. Ֆունդի խորհրդով ի յիշատակ իւր սպանեալ եղբայր
Առաքէլի 30,000 ռուբլի ևս կը բարդէ Շահնազարեանի
դրամաղլիսի վրայ և անմիջապէս կը բանայ Նուպար—Շահ-
նազարեան հոչակաւոր գպրոցը: Բայ աստի 7,000 ռուբլի
կը նուիրէ շնչքին համար և 14,000 ֆրանքով ևս կը գնէ
ֆիզիքայի գործիքներ: Եյնուհետեւ ի Փարիզ պ. Ֆունդին
խորհրդու կը հարցնէ թէ զով արժան է Խնամակալութեան
անդամ ընտրել և նորա մատնացոյց ըրած անձանց կը յանձնէ
ուսումնարանի իշխանութիւնն: Ենք պ. Ֆունդ տակաւին ի
Փարիզ կը գտնուուէր, փաշա խնդրածէր որ ինք ստանձնէ Խնա-
մակալութիւնն, ուստի, Պոլիս վերտպանալուն, կրկին նա-
մակաւ միենցն իննիրն կը յարուցանէ և պ. Ֆունդ կընդու-
նի այս անգամ: Վեց տարի շարունակ կը վարէ վարժարանի
Խնամակալութեան Կունապետի պաշտօնը ջերմագին հոդ
տաներով անոր բարդաւաճման: Ըստ վկայութեան նոյն իսկ
կայսերական լիսէի ուսուցաց, որ կը դասախոսէին անդ ևս,
Նուպար-Շահնազարեան վարժարանն այդ միջոցին կ. Պոլ-
սոյ բարձրագոյն գպրոցն էր և բարձր՝ նոյն իսկ լիսէին: Պ.
Ֆունդ լրկ իբր Կունապետ չէր, հապա նաև Ճշմարիտ
պաշտօպան և հովանաւորող դրամական ամեն, ճգնաժամերուն
փրկածէ վարժարանն նեղութիւններէ և, այս եղանակաւ մեծ
և փոքր քանակութեամբ, դրամական զոհողութիւններ մա-
տուցածէ: Վեց տարիէ վերջ, պարտաւորեալ լինելով Խւրոպա
մեկնել կը հրաժարի: Տասնեակ տարիներ անցել են անկից ի
վեր և տակաւին թէ ժողովրդի և թէ ժամանակակից աշակերտ-
ներու սրտին մէջ շատ թարմ և շատ կենդանի է մասշել պ.
Ա. Ֆունդի կատարած երախտագիտութիւններն, զոր վեր-
ջերս բուռն և սրտաշարժ կերպիւ յերեան հանեցին նոքա
Աղնուափայլ Կապետի ողբացեալ ամինոջ մահուան առթիւ:

Օրէնքն ըստ կարելոյն ոչնչացածէ երբեմն պ. Ֆունդի
բարեգործութեանց հանդէպ, ումէ համակրեալ ժողովուրին յազ-
գային պաշտօն կը կոչէր զնա: Միաձայն քուէով Ռէցիւք-
տէրէի*) թաղական խորհրդոյ ատենապետ կ'ընարուի և չորս

*) Վեցոյիւքտէրէն կ. Պոլսոյ գեղեցկագոյն արուարձանն է Առ-
փորի մէջ, և գեսապաններու, և մեծահարուստ եւրոպացի և հայ դա-

տարի կը պաշառնավարէ, այսուհետեւ միշտ կընտրուէր բայց ինք հրաժարական կուտար: Այժմ ևս հակառակ իւր կամաց, անցեալ տարի ժողովուրդն, իւր սէրն ուշաբդանքը արտայայտելու զգացմամբ, վելստին ատենապետ ընարեց: Իւր այս պաշոնավարութեան միջոցին ևս, աւելորդէ ըսել թէ, չէ խնայած դրամական ուեէ աջակցութիւն տեղւոյն ազգային գործոց մէջ:

Ասպետն Ֆունդ, որ ամենայնիւ փափաքող եղածէ մեր ազգային բարեկեցութեան, կ'ուզէր նաև որ իւր աղնուասիրա լծակիցն ևս միւնցն զգացումն ունենայ արդեամբ: Պ. Ֆունդ կ'արծածէ անոր սրտին մէջ այն անկեղծ և սուրբ զգացումն զոր մանկութենէ ի վեր արդէն կը կրէր ինք: Այս պարագայից մէջ ահա Աղնուափայլ Տիկին Նեկտար ջերմ պաշտպան կը հանդիսանայ Հայաստանի իգական սեռի գաստիարակութեան գործին: Երկար տարիներ կը վարէ Ազգանուէր Հայուհեաց ընկերութեան Ատենապետի պաշտօնն և զանազան զոհողութեամբ կը ջանայ բարւոքել և ընդարձակել կանանց կրթութիւնն Հայաստանի և Կիլիկիոյ մէջ, ուր սցդ ընկերութիւնը կը յաջողի բանալ 7—8 վարժարաններ: Ահա այսպէս ինք մի կողմէ և իւր արժանայիշատակ ամուսինն միւս կողմանէ ըստ կարողութեան և բուռն հաւաքով կ'աշխատէին Հայաստանի երկսեռ ժողովրդի գաստիարակութեան գործին, և սյս տարուան փետրուարին երբ վախճանեցաւ սցդ առաքինազարդ տիկինն և մարմինն Փարիզէն ի Պոլիս փոխադրեցաւ, վշտագիր ամուսնոյն հետ միասին նորա մահն ողբացին Պոլսոյ բոլոր հայ ժողովուրդն և նամանաւանդ Հայաստանի հայուհեաց, և հողեհանդիսա կատարուեցաւ Կիլիկիոյ և բուռն Հայաստանի մէջ: Այն կէտի վրայ գժուար է այլ ևս ծանրանալ և արդէն պարագաները բացորոշապէս կը հաստատէն Ողբացեալ Տիկնոջ արդիւնալից գործունէութիւնը: Այս տարաբաղդ մահուան առթիւ Պոլսոյ և գաւառացի հայ ժողովուրդն իրականապէս ցոյց տուաւ իւր զիտակցական խորին երախտագիտութիւնն և անկեղծ համակրութիւնն առ Ասպետն Ֆունդ, յուղարկաւորութիւնն ազգային սուզի կեր-

սակարդի ամարանոցն է, շատ մը հայ ընտանիք հաստատուն բնակութիւն ունին այստեղ:

պարանք առած էր և հազարաւոր հայեր և օտարազգիք ու աւտորիական գեսպանը կը հետևէին պսակազարդ զագաղին, որոյ համար վշտակիր ամեւսինն փառաւոր դամբարան մը կը կառուցանէ Պերայի հայոց գերեզմանատան մէջ:

Վերջին թուլքօռուս պատերազմէն յետոյ, Տեղականի գետանախորհրդի պահուն ևս ոչ նուազ կարեոր դործեր կատարած է:

Վաեմափայլ Ասպետի այս ընդհանուր գործունէութեան ձակատը կը բարձրանայ Ֆունդեան Հիմնարկութիւնն—Foundation Chevalier Czunt—որոյ բացատրութեան համարքանի մը տողեր միայն նուիրեցինք ի վերև։ Ասպետն Ֆունդ, համամտութեամբ իւր Տիկնոջ, կատարած է իւր անուն կրող սոյն Հիմնարկութիւն, որոյ նպատակն է հայազգի չքառոր—ուշիմ պատանիներ և երիտասարդներ զրկել Խւրոպիոյ համալսարաններն և բարձրագոյն վարժարաններն մէկ մէկ մասնազիտութիւն ուսումնելու, ինչպէս է օրինակ Աստուածաբանութիւն, մանկավարժութիւն, երկրագործութիւն իւր զանազան ճիւղերով բժշկութիւն, փաստաբանութիւն, գեղարվուեաս, ճարտարապետութիւն ևայլն, և այս իրենց յօժարութեան և միանգամայն, ժամանակի պահանջներու համեմատ։ Ֆունդեան ուսումնողները, տարեկան 2,000 ֆրանք ընդունելով, մինչև հինգ տարի պիտի խնամուին Հիմնազրի թողած զրամազլիսի շահով պայմանաւ որ արժանավայել կերպիւ յառաջ երթան իրենց ընտրած մասնազիտութեան մէջ, ապա թէ ոչ պիտի զրկուին և նոյա տեղ նորեր ընտրուին։ Ուսումնաւարաններու փոխարէն նոր երիտասարդներ պիտի նշանակուին և այսպէս, պարբերաբ պիտի շարունակուի անսահման ժամանակաւ։ Կանզիտաներու ընտրութիւնը պիտի կատարէ պատրիարքարանը հրապարակոյին մըցմամբ։ Ֆունդեան սաներու մին Աւստրիոյ և մին Հունգարիոյ հպատակներէն պիտի առնուի, հետզհետէ, ուայմանաւ որ լինին Հայ եկեղեցւոյ անդամն հայախօս և տեղեակ ազգային պատմութեան. և այս երկու սաներու ընտրութիւնը պիտի կատարէ Պոլսոյ Աւստրօմանաւական հիւպատոսարանը։ Խոկ մնացեալ սաներու ընտրութիւնը պիտի լինի Թուլքիոյ, Ուուսիոյ, Պարսկաստանի, Հնդկաստանի և այլ կողմերու հայոց մէջն։

Յունդեան Հիմնարկութեան նիւթական մատակարութիւնը կը պատկանի աւստրօ-մաճառկառավարութեան, մի շարք պայմաններով որ նշանակուած են Հիմնարկութիւնն վաւերացնող և նուիրագործող կանոնագրի մէջ: Ազնուափայլ Ասպետը լինելով աւստրօ-մաճառական հաղատակ, իւր ծրագրած հաստատութիւն վաւերացուցուած է Եւստրիոյ և Հունդարիոյ կառավարութեանց կողմէ: Յունդեան Հիմնարկութեան վաւերացումը Վիեննայի և Փեշտայի կրթական նախարարութեանց կողմէ առանձին առանձին կատարուելէ յետոյ, այն վաւերացեալ Վանոնագրէ Հինդ օրինակ պիտի պատրաստուի և մէկ մէկ օրինակ պիտի դանուի Եւստրիոյ կրթական և կրօնական նախարարութեան, Հունդարիոյ կրթական և կրօնական նախարարութեան, Ա. Պոլսոյ աւստրօ-մաճառ հիւպատոսարանի և Պոլսոյ հայոց պատրիարքարանի մօտ, և Հինդերորդ օրինակն ևս Հիմնարկի կամ նորա նշանակելիք լիազօր ինամակալի մօտ:

Եւստրիական օրէնքով, Հիմնարկութիւն մը, իրուե բարոյական անձնաւորութիւն, օրինական գոյութիւն ունինալու համար պէտք է որ իրեն յատկացեալ դրամագլուխն ունինայ ուսաի իւր Հիմնարկութեան օրինական գոյութիւն և անդառնալի հանգամանք տալու համար Ասպետն Յունդ 60,000 ֆրանք յանձնած է այժմէն, յայտարարելով թէ իւր կտակաւ ևս իւր հարստութեան մեծագոյն մասն սոյն Հիմնարկութեան կը թողու: Յունդեան Հաստատութեան դրամագլուխը պիտի շահագործուի Եւստրիոյ առաջնակարդ բանքայի մը մէջ կամ Եւստրիոյ պետական արժեքեթուղթերով: Խւ սաներու ընտրութիւնն ալ պիտի սկսի կատարուել Հիմնարկի մահուանէն վերջ: Սա իւր կտակաւ կ'անուանէ, առաջին լիազօր ինամական, որ Հիմնարկութեան նիւթական մատակարարութիւնն պիտի ունինայ իւր ձեռքին, աւստրօ-մաճառ հիւպատասարանին ամեն տարի հաշիւ ներկայացնելու պարտաւորութեամբ: Կուաջի խնամակալին մահէն յետոյ, յաջորդները պիտի ընտրուին նոյն հիւպատասարանի կողմանէ և պատուաւոր գիրք վայելող վաստահելի անձնաւորութեանց մէջէն: Խնամակալութեան ծախքն ալ դրամագլխի հասոյթով պիտի հոգացուի: Կմանապէս սաներու թիւր համեմատական պիտի լինի դրամագլխի

Հասոյթին. և եթէ ո և է պատճառաւ տարի մը յաւելեալ զրամ մնայ հասոյթէն, այդ աւելցուածն պէտք է բարդուի մնայ զրամագիսի վրայ:

Հիմնագիրն ո և է պայման կամ պարտաւորութիւն չե գներ իւր սաների վրայ, սակայն յօյս կը յայտնէ թէ անստարակցս պիտի աշխատեն ազգին օգտակար անդամներ լինել իրենց ստացած հմտութիւններէն բաժին պիտի հանեն իրենց համարիւն հասարակութեան, և օրինակելի վարքով ու բարքով և հանրօգուտ ծառայութեամբ պատիւ պիտի բերեն իրենց «Հօր» յիշատակին, որովհետեւ Եղնուափայլ Եսպեսն, զաւակ չունենալով իւր սպագայ սաներն կը նկատէ իբր իւր իսկ զաւանիեն. նոյտ բարեկեցութեան համար խորհածէ արդէն երկար տարիներ. այնուհետեւ նոյնպէս իրեն կէտ նպատակին ըրածէ նոյտ բարեկեցութիւնը:

Յունդեան սանունք, անշուշտ զնսհատելով իրենց վեհողի բարերարին սոււած անկախութիւնն, բռնազրօսիկ օրէնքներէն շատ բարձր և նուիրական համարելու պարտաւոր են նորա սուրբ փափաքն և եւրոպական համալսարաններէն պարբերաբար վերագաւնալով դէպի հայ ժողովրդեան գիրկը, իրենց բարերարի օրինակին համեմատ, պէտք է որ ազգին օգտակար լինելու ջերմ բազանք մ'ունենան:

Ողբացեալ Տիկին Յունդ ևս իւր, մօտերս բացուած, կտակաւ կը յայտնէ թէ երկար ժամանակէ ի վեր կը խորհէր Յունդեան Հիմնարկութեան վրայ, և թէ իւր անձնական հարստութեան և թէ իւր ամուսնոյն հարստութեան մեծադյոյն մասը կը թողու այդ Հիմնարկութեան, եթէ իւր ամուսնէն յետոյ վախճանելու լինի, և սա միակ պայմանաւ որ ընտրելի սաներէն մին իւր սեռէն լինի. այսինքն Յունդեան Հիմնարկութիւնն ունենայ և հայ ուսանողուցի մը, որ եւրոպայի համալսարանաց մէջ հետեւելով ո և է մասնազիտութեան, օգտաւէտ գտանայ հայ իգական սեռի յառաջիմութեան գործին:

Շատ և շատ ընդարձակ տեղ կրնայ զբաւել եթէ շարունակենք մի առ մի թուել և այն ամեն ծառայութիւններ, զոր Եսպեսն Յունդ մատուցած է ուսման, եւսմանդեամբ զործակցելով անոր: Երժանաւորապէս կատարած է իւր ազգի և իւր կառավարութեան միւս պաշտօններն կամ լաւ ևս է ըսել

արդարացուցած է նոյտ վատահութիւնն այս մասին. որով և պատուած է ընդհանուրէն: Այս է պատճառն անտարակոյս, որ անուանուած է անդամ, խնամնակար, պատուակալ նախազահ, պաշտպան կամ մեկենաս տասն և հինգէ աւելի մարդասիրական և արուեստագիտական ընկերութեանց և գրական տկադէմիաներու, միանդամայն, պատուելով ի նոցանի; վիսյականներով (գիբլոմ) և ուկի մեղայներով:

Սապետն Թռւնդ սկիզբէն ի վեր բարձր գիրք մոռնի Պոլսոյ աւստրիական գաղթականութեան մէջ, առաջ անոր պատուիրակութեան ներկայացուցիչն էր և հիմա՝ վեր նախադահն և ի Փարիզ աւստրիական գեսպանի միջոցաւ ներկայացած է Նապոլէոն կայսեր իր՝ աւստրիական կայսրութեան պատուականացյն անհամաներէ մէն: Եւր յարատե ուղեղերութեանց ժամանակ, օտարազգի երեւլի անձնաւորութեանց մօտ միշտ առիթներ փնտուած է հայ ազգի վրայ խօսակցութիւն բանալ և ծանօթութիւններ տալ: Եւելորդ է ըսել ուրեմն՝ թէ Թռւնդ և իւր հանգուցեալ Տիկին նաև Պոլսոյ հայ գաղթականութեան փայլուն ներկայացուցիչն էին Թռուրբիոյ մայրաքաղաքի գեսպանական և միւս բարձր գասի շրջաններու մէջ: Սապետն Թռւնդ 17 տարիէ հետէ կը վարէ գտատառի պաշտօն Միջազգային Գատարանի մէջ պաշտպան լինելով ծշմարտութեան և աւստրիացւոց շահերուն: Երենց հաստատումէն ի վեր անդամ է նմանապէս Սուետարական Անեկին և պատուիրակ փաթանթի Տրոց վարչութեան:

Փրանսուա Ժողէֆ կայսրն, գնահատելով սր. Թռւնդի արժանաւորութիւնները, երեք անդամ առանձինն հրովարտակներով յայտարած է նմա իւր կայսերական բարձր գոհունակութիւնը այնուհետեւ իւր ուղեղերութեան պահուն յԵրեւլս, պատուած է զնա նախ իւր Փրանսուա Ժողէֆի և ապա Երկաթէ Թաղի շքանշաններովն: 1875 ին նորին վեհափառութիւնը մասնաւոր հրովարտակաւ կը շնորհէ նմա ժոռանդական աղնուականութիւն Կայսերութեան Սապետի տիազոսով: Այն մագաղաթեայ ուկետառ հրովարտակն որ կը կրէ կայսերական մեծագոյն կնիքն և կայսեր ու նախարարապետ Թաաաֆէ կոմսի ինքնազիր ստորագրութիւնները, ունի լատինական հետեւեալ նշանաբանը. «Misericordia et veritas te non deserant—Ողոքն-նի-» և

հաւաքորդ է ուն մի պահանջացին»—պ. Ֆռունդի գործունելութեան համապատասխանող իսկական նշանաբանն մը արտարեւ: Կայսերական այցն հրովարտակն ըստ օրինի կը պարունակէ նաև պ. Ֆռունդին յատկացուած ազնուականութեան զինանշանն, որ կը պատկերէ, մէջտեղն՝ Անի քաղաքի կաթողիկէն, վերը—աջ կողմի վրայ՝ Ռուբինեանց թագաւորութեան Առիւծը սուր ի ձեռքն, և ձախ կողմի վրայ՝ Բաղրատունեաց Նրծիւը: Օյնանշանի երանգը կը ներկայէ հայկական կարմիր-կապոյտ պաշտօնական գյոնելը, և Ֆռունդ Ասպետին այս զինանշանի նկարագիրը մանրամասնաբար արձանադրուած է կայսերական հրովարտակի մէջ: Եյս ամենէն զատ ի պատիւ իւր բարի գործոց պ. Ֆռունդ ստացած է նմանապէս Վէճիղիեր և այլ պանազան տէրութեանց շքանշաններ:

Եհա մարդ, որ թէւ ի բնէ պարկեշտ և անփառասէր, սակայն իւր խոհեմութեամբն ու կորովամտութեամբ և իւր մեծամեծ ծառայութիւններով յաջողած է արժանապատիւ ու արդիւնաւէտ գեր կատարել մեր ժամանակակից կեանքի մէջ: Եւ լոկ Ֆռունդեան Հիմնադրութեամբ՝ այս ազնուաբարոյ Ասպետը արժանի է մեր ժողովրդային անսահման շնորհակալութեան: Անտարակուսելի է թէ ապագայ հայ սերունդը յաւիսեան պիտի օրհնէ նորա յիշատակը. մեր արդի սերունդն ևս նուրական պարտաւորութիւն համարելու է իրեն երկար կեանք մազթել այդ կրթասէր մեծ բարերարին, որպէսզի իւր բարի ձեռնարկովն կենդանի օրինակ հանդիսանայ մեր հարուստ անձնաւորութեանց:

Վերջացնելով մեր յօդուածը, աւելորդ չենք համարում մի երկողեւ-յիշել որ բարերարական այլ և այլ առիմեներով եւրոպական բազմաթիւ թերթեր ժամանակ առ ժամանակ հրատարակած ունին պ. Ֆռունդի պատկերազարդ և առանց պատկերի կենսագրութիւններն, որոնց մէջ մեծամեծ զրուատիքներով յիշատակուած է պ. Աստուածատուր Ֆռունդի բարի անունը: Եյսպէս օրինակ Վիհնայի Oesterreichisch-Ungarische, Volks-Presse, Levantino, Finanz Blatt, Annunziatore, և այլն և այլն:

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅՐ

ԴԻՌԻԱԴ ՄԷ ԹԱՏՐՈՒԱԿԱՆ ԿԵԱՆՔԵ

Ա.

Պէտք էր ապրիլ և ապրելու համար պէտք էր աշխատիլ:
Բայց ի՞նչ ընել: Տասն և ութ տարեկան էր հիմա Երեզնազ
սորված էր շատ մը բաներ, կամ թէ, շատ մը բաներու սկրզ-
բունքներ. այլ առ ի՞նչ օգուտ այդ ամենը. ձեռքն արուեստ
մը չուներ. ոչ կար զիտէր, ոչ ձեւ: Վարժուհի կրնար ըլլալ—
հայերէնը բաւական լաւ էր—ուրիշ ոչինչ: Վարժուհի. այդ
մտածութիւնն իսկ սոսկում կ'աղջէր:

Չանձրոյթ ու չքաւորութիւն կը սաստկացնէին իր մտա-
տանջութիւնը: Հայրը մեռած էր վեց տարի առաջ, ուրիշ
ժառանձրութիւն չժողովք բայց միայն պղտիկ տուն մը ի Բերա,
որուն մէջ կը բնակէին Երեզնազն ու մայրը:

Հօրը մահէն ի վեր մայրն էր աշխատած ու զաւակը պտ-
հած մէծցուցած. այլ մայրն ոյժը կը կորսցնէր, օրէցօր կը
տկարանար. օր մը գէշ էր, օր մը աղէկ:

Հարկ էր աշխատիլ. բանի մը կը մտածէր Երեզնազ, բայց
առանց համարձակիլու այդ գաղափարին փարիլ: Մաքովը կը
գեղերէր այդ գաղափարի շուրջը, ինչպէս կենդանի մը հրա-
պուրիչ թակարդին բոլորակը: Օր մը այդ գաղափարին կը
մտածէր, մի քանի օր կը մոռնար զայն. յետոյ աւելի յանդ-
գնաբար կը վերադառնար անոր:

Վերջապէս ինքն իրեն ըսաւ, — ինչու չէ: Պիտի ճարէր
ապրուստը, թերեւս կ'ապահովէր ապագան: Բերայի ժխորին
մէջ այնքան նշմարելի էր ինք որքան գաւաթ մը ջուրի մէջ
մին հոն վիտացող որդերէն: Ո՞վ պիտի տեսնէր ղենքը. զով
պիտի սիրէր. որո՞ւ հետ պիտի ամուսնանար:

Եւ արդեօք, առանց զիտակյութեան, մէ՞ր հպատակէր ներքին կոչումի մը մղումին:

Բ.

Դերասանուհի ծնած էր Արեգնազ, այդ էր իր կոչումը, զերասանուհի ըլլալ Վարժապետի մը թոռն էր. Հօրն հայրը ժամանակին համբաւաւոր տիրացուներէն մին եղած էր: Մեծ մայրը—մօր կողմէ—օժտուած է եղեր քաջ խօսելու, լաւ պատմելու ընդունակութեամբ: Թարեւ առհաւութեան ժառանգական օրէնքի ծնունդ մըն էր Արեգնազ:

Փոքրիկ, հազիւ ութը տասը տարեկան եղած առեն, հայրը մի քանի անգամ տարած էր զնա թատրոն: Լուսաբորբոք որահը, պճնազարդեալ բեմն ու փալվիլուն զգեստները թողած էին անոր մանկական մոքի վրայ խոր տպաւորութիւն: Անծցած էր այդ տպաւորութեան ներքեւ:

Թատրոն տեսնելէն յետոյ միշա կը ժողվէր իր հասակակիցները, մանչ ու աղջեկ և անոնց հետ կը խաղար Աւանքո օյնէ: Անկողնի սաւան մը վարագօրի տեղ կը ծառայէր իրենց. եթէ սեղանի գանակները ձեռք ձգելու բաղդը չունենային կը գոհանային փայտի կտրներ գործածելով սուրի տեղ: Արեգնազ կը հրամացէր, Արեգնազ կը տնօրինէր ամէն ինչ:

Այժմ խելահաս աղջեկ գերասանուհի ըլլալ կը զար:

Գ.

Աշնան վերջերը, կիրակի օր մը իրիկուան գէմ Արեգնազ զրացի կնոջ մը հետ գնաց Օրթաղեղ, ուր գերասանական խումբը կուտար իր ներկայացումները, «Վարեսէր ընկերութեան» ժատրոնին մէջ:

Տնօրէն էֆէնտին աֆ-ֆէն էր. Արեգնազն անոր մօս առաջնորդեցին: Առանց երկար պարբերութիւններու աղջեկը յայտնեց իր այցելութեան շարժառիթը. կը փափագէր մտնել գերասանական խումբին մէջ:

«Նորեկ էր, արուեստին անվարժ այդ գերասանուհի—ընտրելին, զայդ զգաց տնօրէնը, բայց զգաց նաև թէ այդ խոշոր, կապոյտ աչքերը, այդ նուրբ իրանը, երկայն մազելին ու քաղ-

յրահնչակ ձայնը կրնային ժողովրդին առելի ազդեցիկ ըլւալ քան թռոմած թառմած գերասանուհիներու—«վարժ փորձառութիւնը»:

Ու յիտոյ, ամէն գերասանուհի պէտք է վերջապէս սկրզ բնաւորութիւն մը ընէ, և ապա վարժ ու փորձառու ըլլայ. երկինքէն գերասանուհի չինար:

Առանց դժուարութեան, բայց և միանգամայն առանց պայմանի, տնօրէնը Վրեզնազն ընդունեց իր խումբին մէջ: Ի՞նչ պայման կրնար գնել այդ խեղճ տնօրէնը որ մեծ դժուարութիւն կը կրէր լիցնելու համար, շաբաթն երկու անգամ, իր երեսուն երկու օթեակներու մէկ քառորդը:

Պ.

Երդ ձմեռը Վահան դեռ թատրոն չէր գնացած. Գամէ- լիաղանդ առաջին առաջին անգամ ներկայացուցած գիշերնին թարգմանիչը զնա հրաւիրեց իր օթեակիր:

Կատարած առաջան ու օթեակները զրիմէ գատարկ էին, ցուրտ էր. հովը կը փշէր փայտէ շէնքին ամէն ծակոտիքներէն, այլ Վահան զզջաց հոն երթալուն: Վրեզնազն ձայնը, մեզմ ու մելամաղձիկ, թրթուացուց իր սիրտը. գեռատի գերասանուհին կը կատարէր Մարկրիթ Կօթիէի գերը:

Երբ վերջացաւ ներկայացումը թարգմանիչն ու Վահան ուրիշ մի քանի բարեկամներու հետ ան-թէն ելան:

Դերասան ու գերասանուհի իրենց զգեստները շուտ մը փոխելով հոն հաւաքուեցան, առանց լուացուելու. անհնարին էր քիչ մը տաք ջուր գտնել:

— Երբ այսպէս կը ներկայացնէք, բնական է, որ թատրոնը թափուր մնայ, ըստ Գամէլիաղանդի թարգմանիչը, նեղացած արտօվ: Խաղը ճշակտոր ըրիք. ամէնուդ ալ ձայնը մարած է, կարծես թէ կոկորդնիդ ըրցած ըլլայ:

— Երաւունք ունիք, ըստ խմբապետ-տնօրէնը բարկութեան շեշտով, կոկորդնիս արդարիւ ըրցած է: Եֆէնտի, էֆէնտի, շաբաթ մըն է պատառ մը տաք կերակուր բերաննիս չէ մոտած, սուլուծն համը ի՞նչ է մոոցած ենք. շաբաթ մըն է միայն պահիր հացով կ'ապրինք:

Խոր լոռութիւն ախրեց:
Վահան հեռացաւ. գնայ տրապիզին առջև, թէյ ապսպ-
րեց:

Սմէնքն ալ իրենց դաւաթներն արդէն առած էին երբ ներս
մտաւ Երեգնաղը որ, հոդ չէր թէ պաղ ըլտար ջուրը, լա-
լուացուելէ, մաքրուելէ յետոյ կուգար իր ընկելներուն քովի:
Վահան տեղէն ցատկեց և իր գաւաթը, որուն գեռ չէր գպած,
հրամցուց Երեգնապին. շնորհալի ժպիտով գերասանուհին զայն
ընդունեց:

Տնօրէն-խմբապետի վշտալիր յայտարարութիւնը յուզած
էր հոն գտնուող այցելուներու սիրաը, սկսան խորհիլ թէ ինչ
կլնային ընել գերասանական խումբը փոքր ինչ քաջալերելու
համար. այս նպատակին հասնելու միակ միջոց մը կար. Մաս-
նախումբ մը կազմել և անոր աջակցութեամբ թարսնը լեց-
նել, մուտքի կրկին զիներով, ի նպաստ գերասաններու արս-
ուելիք ներկայացումի մը զիշերը:

Գամելչաղաբէի թարգմանիչն ու միւս բարեկամները խնդ-
րեցին Վահանէն որ, իբր ամենէն յարմար երիտասարդը, ձեռ-
նարկէ այս Մասնախումբը կազմելու:

Առանց դժուարութեան Վահան ընդունեց իրեն եղած
առաջարկը:

Ե.

Վոսփորի եւրոպական ափին վրայ, Օրթագեղի զառի վե-
րի մը կատարը, զետեղուածէ ընդարձակ տուն մը որ կը կո-
չուի «Աերաքին առւնը»: Փայտաշէն, խարխուլ հնկէկ այդ
բնակարանը իր բաժինն ունի հայ թատրոնի պատմութեան
մէջ: Եյն թուականին ուր պատահեցաւ գէպքը զոր կը պատ-
մէնք, այդ տան մէջ ապաստանած էին, վարանդի և թշուառ,
այն գերասաններն ու գերասանուհիներն որոց համբաւն ի
Պոլիս տարածուած՝ յետոյ այնքան մեծ հոչակ գտաւ մինչւ
ի Կովկաս:

Մի քանի տարի առաջ Օրթագեղ Պոլսի հայոց մտաւոր
շարժումի կելլունն եղած էր: Հոն իր բնակութիւնը հաստատած
էր Յակոբ Պէյ Պալեան, արքունի երիտասարդ ձարտարա-
պեալ: Մեծ տաղանդով, աղնուական ոգիով օժտուած այդ

երիտասարդը իր շուրջը բոլորած էր բանաստեղծն ու պատկերահանը, պատմաբանն ու լեզուագէտը, երաժիշտն ու դիւսանը: Ահանք կը շնչէր, ոգի կուտար զրականութեան ու արուեստին: Նմէն ուրեք, ոսկի կը հոսկցնէր:

Պալեան կառուցած էր Օրթագեղի փոքրիկ թատրոնը, ոսկետուփիկ շինք մը, զոր նուրիբած էր «Բարեսէր ընկերութեան», կազմուած նոյն գեղի մը, երիտասարդներէ: Վյդ թատրոնի մէջ փայլած էին, կեանքի պիտօքքներու բոլորովին անհոգ շնորհիւ Պալեանի, գերասաններ ու դերասանուհիներ, թարգմանիչներ ու հեղինակներ:

Հիմա Պալեան մեռած էր. մահն ու գժբաղգութիւնները անցած էին Օրթագեղի վրայէն. «Բարեսէր ընկերութեան» հիմնադիլներն ու վարիչները ցիրուցան էին: Վյլ գերասաննական խումբին համար այդ օրերու յիշատակը տակաւին հրապուրիչ հմայք ունէր. նա չէր կարող բաժնուի Օրթագեղէն, մինչև որ կատարեալ անօթութիւնը զինքն անահի չվանէր:

Վյժմ Անդրագի այդ տան մէջ ոչ գորդ մը կար, ոչ փախթ մը. մի քանի կոտրատած աթոռներ կը կազմէին տան բոլոր կահ կարասին: Եւրաքանչիւրին անկողինը կը ծառայէր իրեն իբր թիկնաթոռ կամ իբր աէտիք:

Խարխուլ տունը հիւսիսի հովերուն դիմագրելու անկարող էր, վառարաններու անհրաժեշտ հարկ կար, այլ սակայն վառարան չկար. ճանկալ մը միայն:

Դերասանները կարգաւ կը տնտեսէին խումբին պէտքերը: Նմէն օր մին իրենցմէ կ'իջնէր զիւղին շուկան, կը դնէր քիչ մը ածուխ զոր կը դնէր փոքրիկ թաշկինակին մէջ ու կը բերէր տուն: Վյդ ածուխ պիտի բաւեր մինչև միւս օր:

Նոյն օրուան անտեսը կը հոգար նաև խումբին նոյն օրուան պաշարը: Վատ բան չէր այդ պաշար. երկու երեք հաց, քիչ մը պանիր, երբեմն ալ-եթէ առատ հասցիթ եղած էր—ձիթապուղ կամ նահին հէլքս:

Վյլ ամէնքն ալ զուարթ էին. կը խօսէին կը խնդային, կ'երգէին, կը սիրէին: Երենց վիճակը մինչև խոկ նախանձելի կը համարուէր երբ իրիկունները խաղալով, խնդալով, թեւ ի թեւ, ձիւնին վրայ ցատկուելով թատրոն կ'երթային կուգային:

Ենհոգ էին: Ենհոգութիւնը երջանկութեան մասն է:

զ.

Երկուքին ալ սրտերը ծարաւուտ էին սիրոյ. երկուքն ալ զերար սիրեցին: Սրտի տրոփումօվ ամէն իրիկուն Երեգնաղ կ'սպասէր Վահանին: Ամէն զիշեր ընթրիքէ վերջ Վահան կ'երթար Սեղբարի տունը:

Վահան Ետևնագովիր էր Յանձնախմբին որ գերասաններու ի նպաստ ներկայացումը պիտի տար. իր այս պաշտօն կ'արդարացնէր յաճախակի այցելութիւնները դերասաններու բնակարանը:

Երկուքն ալ զերար սիրելու կոչում ունէին: Երեգնաղի նրբենի հասակը, փափուկ մարմինը ստեղծուած էր հրապուրելու. համար Վահանի ջլապինդ կազմուածքը: Ենմեղունակ ժպիտ մը կը թռչուէր գեռատի աղջկան դէմքին վրայ: Ենոր խոշոր սեւ աչքերու մէջ նկարուած էր բնածին մելամաղծութիւն: Արյուղուէր Վահան ի տես այդ դէմքի որ կը համապատասխանէր մտատիպարին զոր երևակայցած էր միշտ:

Բանաստեղծի սիրտ կը կրէր Վահան: Բնութեան խորհրդաւոր տեսարան մը սարսուռ կ'ազդէր նմա. տիսրանուագ մեղեղի մը կը յուղէր ու կը տառապեցնէր իր հոգին:

Աիրակի օր մը Վահան իրիգնաղեմին զնաց դերասաններու մօտ: Ենոնցմէ շատերը հոն չէին: Երեգնաղ ու Վահան առանձինն մնացին:

Զմրան պազ օրերէն մինէր. չոր ու առողջաւէտ ցուրտը մարմնի կենդանութիւն կը շնչէր ու արիւնը կը մարակէր:

Կանդնած պատուհանին հանդէպ Վահան ու Երեգնաղ յուղեալ կը դիտէին Եսիական Վոսփորի մթնշաղ տեսարանը:

Վահան իր ձեռքերուն մէջ առաւ Երեգնաղի մատները. խոնարհեցուց շրթունքներն ու տաք համբոյրով պադաւ այդ բարակ մատները:

Մեղկութեամբ՝ ես քաշուել փորձեց Երեգնաղ. Վահան զրկեց անոր զլուխը. կոթնցուց զայն իր կուրծքին վրայ: Եմբողջ մարմնը զրկին մէջ առաւ. պագաւ Երեգնաղի ձակատն ու երեսներն, և շրթունքներն հանդչեցուց անոր շրթունքներուն վրայ:

Ոաքի ձայն մը լսուեցաւ. դերասանները կը վերադառնային.
իրաւմն, բաժնուեցան:

Արակը երկուքին մարմիններու մէջ էր: Արեգնազի համար
մարմնական առաջին հաճոյքն էր: Արտօտազին մնաց այդ
հաճոյքին:

Ե.

Ներկայացումը, ինչպէս սովորութիւն է ըսել, «կատարեալ
յաջողութեամբ պսակուեցաւ»: Օթեակներու և գետնայարկի
գինները կրկնապատիկ դրուած էին, դերասաններու ձեռքը քիչ
թէ շատ գումար մը անցաւ:

Յանձնախմբին կողմէ հաշիւները կարգադրուելէ յետոյ
Արեգնազ Ռերա գնաց, մօրը քիչ մը ստակ տալու: Մի քանի
օր չերեցաւ: Վահան անհամբեր էր և անհանգիստ: Դրիիուն
մը ելաւ Ռերա, դաւաւ Արեգնազի տունը. աղջեկը դուրս չէր
ելած. մօրը հետ նստած էին: Ուրախութեամբ զերար տեսան.
Ժամ մը միասին անցուցին:

— Կերեի թէ բան մը ունիս, հարցուց Վահան:

— Իան մը չունիմ, ըստ Արեգնազ: Գիտես, աչքերս կը
ցաւէին մի քանի օրէ ի վեր. արդին վարժած չէի ասանկ կա-
զով մինչև լոյս արթուն կենալու: Դեղեր կ'ընեմ կոր, շուտ
կ'անցնի:

— Անդամ մը Աճեմեանին ցոյց տուր:

— Զէ, բան մը չէ. գնձիկներ են. շուտ կ'անցնին: Քանի
մը օրէն կուզամ: Եւ դուն ալ մի՛ նեղուիր մինչև հոս գալու:

Է.

Վահանի այցելութիւնէն երեք չորս օր վերջ իրիկուն մը,
ընթրիքի միջոցին, հայրը ըստաւ.

— Գիտե՞ս, ի՞նչ պատահեր է ան խեղճ աղջկան.

— Ո՞ր աղջկան.

— Սա նոր դերասանուհի մը որ եկաւ. Արեգնազ չէր
անունը.

— Ի՞նչ պատահեր է որ, հարցուց Վահան, սրտադողը
ծածկելով.

— Եքերը շատ գեշ են եղեր.

— Ի՞նչու. ի՞նչ եղեր է որ.

— Զիյամն. աս իրիկուն շոգենաւին մեջ կը խօսէին: Եւ
քերուն քով կոծիծներ գուրս տուեր են եղեր, կնիկ մը ըսեր
է որ ըսըսպահենու (եղեծ) քսէ. ուրիշները փորձած աղէկ-
ցածն եղեր. խեղճն ալ ըսածին պէս ըրեր է, աչքերը բոլո-
րովին աւրուեր են:

Մեղանէն ելլելով Վահան կառք մը նստաւ և գնաց Երեղ-
նազի տունիք:

Պ.

Մեռելի տուն էր Երեղնազի բնակարանը. մայրն ու աղ-
քական կին մը կը զանուէին հոն. անձրկած էին: Երեղնազի
սիրտը թունդ ելաւ երբ լսեց Վահանի ձայնը: Գորովանքով
կարենցութեամբ Վահան բռնեց Երեղնազի ձեռքերը ու հարց
ու փորձեր ըրաւ: Դժբաղութիւնը ստոյդ էր. երկու օր է
ալ Երեղնազ չէր տեսներ:

Վահան խոստացաւ առաւօտուն կանուխ Տոկթօր ԵՃե-
մեանը խրկիլ: Խնքն ալ պիտի դար իրիկունը, ամէն ինչ կար-
գագրելու:

— Ե՞ս, էֆէնտի, Աստուած մէկ օրդ հաղար ընէ. Աս-
տուած քեզ մօրկանդ պախշամիշ ընէ. զերն Աստուած վարը
դուն. կ'ըսեր լալով Երեղնազի մայրը:

Վահան մեկնեցաւ կէս զիշերին. յաջորդ առաւօտ կանուխ
Պոլիս իջաւ. գտաւ Պոլսի առաջին ականաբոյժը, Տոկ. ԵՃե-
մեանը, եւ խրկից Երեղնազին:

Երեկոյին Վահան տեսաւ բժիշկը. պատասխանը յուսա-
հատական էր: Դեւասանուհին ունէր աչքի կեղծ մաշկ. հիւան-
գութիւն մը որ Պոլսի մեջ հաղուագէպ է. փրկութիւնը անհ-
նարին: Եղեծը զոր քսած էին ունեցած էր իր գեշ ազգեցու-
թիւնը, բայց մինչեւ ասաիձան մը:

Վահանի խնդրանքով յաջորդ օրը բժիշկն իր հետ տարաւ
խորհրդակցութեան համար ուրիշ երկու բժիշկ ես: Անոնք
ալ իրեն համակարծիք գտնուեցան. փրկութիւն չկար:

Ժ

Տան բարեկամն էր Վահան, շաբաթը մի քանի անգամ Երեզնազի կը հանդիպէր, անոք, անօգնական մայրն ու աղջիկը չունէին ուրիշ նեցուկ, ապաւէն: Ամենօրեայ այդ այցելութիւններու մէջ չկար ո և է անպատեհութիւն, բամբաստնքի օթևան չեն Բերայի այն թաղերն ուր ։ այ, Յոյն, Եւրոպացի խառնամառն զրակից են իրարու, անծանօթ իրարու. ու ոչ ապաքէն չարագոյն լեզուն ալ ահուգողով կը կարկի կոյրին ի տես:

Գարնան առջի օրերը, կիրակի մը, պայծառ արել Պոլսի վրայ կը սփոք իր հեշտաբոյր տաքութիւնն ու զուարթ լցոր, Երեզնազ նստած բաց պատուհանին առջև կ'զգար թէ օրն էր հրաշագեղ: Թակթեւ հով մը կը փչէր գարնանային յորձանքներով, ու կը բերէր մինչև Բերայի կորսուած այդ թաղը, ծլարձակ ծառերու բուրումը, կեանքի շունչը որով խմորուած էր բնութիւնը բովանդակ: Երեզնազ կը շնչէր քաղցրաբօյր օդն ու տրոփուն սրառով կ'սպասէր Վահանի:

Աէս օրէն ետքը եկաւ Վահան, երկու սիրահարները նըստան պատուհանին առջև, ծունդ ծունդի, ձեռք ձեռքի:

- Օզը կարծեմ շատ աղուոր է. այնպէս չէ Վահան:
- Ենապէս է. կառքով պտոյտ մը ընենք մինչև Շիշլ:
- Կարելի՞ է:

— Կ'նշու կարելի ըըլլայ, քանի՛ շաբաթներ են որ բանտարկուած կը մնաս. և կատարելապէս առողջանալու համար դուցէ դեռ մի քանի շաբաթներու ալ պէտք ունենաս: Միթէ այսպէս փակուած պիտի մնաս. ընդհանուր առողջութեանդ կը վնասէ: Երթամ կառք մը առապրեմ:

Եւ առանց պատասխանին սպասելու գնաց գոց կառք մը բերաւ, ու քիչ վերջ, իրարու քով նստած կ'երթային Շիշլի ճամբէն:

Ճամբան կը տարածուէր անծայրածիր, գալարաւէտ գաշտելու, կանաչազարդ մարգագետններու մէջ տեղէ: Հողէն կելլէր, կը բղիւէր շունչ մը խնկահոտ, իւղաթուրմ որ արիւնի մէջ կը գնէր բնութեան վերածնունդի կեանքը, ու կը պարարէր մարմինը անպատում հրճուանքով:

Եւ հիմա, իրիկուան մօտ, կը փչէր հիւսխակը, շատ մեղ-

միկ. աղ փայփայանք մըն էր, նման համբոյրի մը զոր մայրը կը դնէ քնացող մանուկին ճակտին վրայ:

Այսը կ'ողողէր ամէն կողմէ արձակ ու անարդել, կենդանութիւն սփռելով ամէն ուրեմք:

Աղ հրճուէր Արեգնաս.

— Ե՞ս, ի՞նչ անուշէ, ի՞նչ անուշէ, կը կրկնէր տխուր ձայնով. եւ ոռւնդները կը սարսուային անդադար, անձկակարօտ ծծելով հեշտութիւնը որ կեանքը կը նորողէ:

Աառքը կը մօտենար Շիշլի. թրամուէյի կայարանին երկու կողմը, բարձրաւանդակներու վրայ հաստատուած բայցօթեայ սրճարանները ամբողջովին լցուած էին այլաղան ու այլատարր բաղմութեամբ: Ամէն ուրեմք կենդանութիւն կար: Արևնթաց թրամուէ յները օձապտոյտ ճանապարհներէ կուզային կ'երթային. +ո-չէներն ու լանդօները իրենց ազմուկովը կը լցնէին Շիշլի: Մխորը կը բարձրանար այդ ամբոխէ. զուարթ ձայներու, շոնդալից խօսակցութիւններու խառնուրդ, թրամուէյի շեփորներու գոչիւն, Խալացի երդիչներու նուազածութիւն: Ու ամէն ուրեմք կանաչ ու սպիտակ արդուզարդել, ծաղկալց գլխարկներ, բնութեան փթթինաղարդութեան խառնուած:

Եւ Արեգնասը կը լսէր այդ ձայները, ու կ'երեւակայէր տեսարաններն որք այնքան խնդութիւն, այնքան հրճուանք կ'աղդէին իրեն ուրիշ գարուններ: Տիրագին ըստ:

— Բազմութեան մէջ չնստինք, Վահան, առանձին տեղ չկայ:

— ԶԵ, հոս սրճարաններու մէջ գժուարէ մինակ տեղ մը գտնել. ես զիտեմ երթալիք տեղերնիս:

Եւ թեւն առնելով Արեգնասը Վահան յամբընթաց ուղղեց քայլերը զէպի զուկցերական լալէ մը որ կը բարձրանար անդին, ճամբէն հեռու, ծառախօս պարտեզի մը մէջկորսուած:

Օքոսավայր մըն էր այդ լալէն ուր կերթան անոնք որք հեռուէն կուզեն լսել աղմուկը, հեռուէն տեսնել բաղմութիւնը և ծառերու ու ծաղկըներու բյորովը տուանձնութեան մէջ հրճուիլ: Հոն Վահան իրեն համար բանալ տուաւ պարտեզին վրայ մասնաւոր սենեակ մը զոր ծառերը կը պաշարէին: Երկու աթոռ ու փոքրիկ սեղան մը կը բաւէր իրենց. նստան

Երեգնազի հետ դէմ առ դէմ, եւ երկու գաւաթ գարեջուր
քերել տուին:

Նզեւանքի մը ծառը կը բարձրանար մինչև պատուհանը
և իր ողկոյզներու զրգոխ անուշահոտութեամբը կը լեցնէր
սենեակն համայն: Երեգնազ զլուխը պատուհանէն դուրս ծուց,
և մանկական ուրախութեամբ որ իր գէմքին կուտար անհետացած պայծառութիւն մը, սկսաւ դոչել.

— Վահան, շատ կը սիրեմ այս ծաղիները, փրցուր, ինծի տուր:

Վահան գաւաղանին ծայրով իրեն քաշեց ծաղկելից ոստերն և մէկ քանի ողկոյզներ փրցնելով տուաւ Երեգնազի:
Հոսուտաց, համբուրեց զայնս Երեգնազ:

— Ուրիշչէկայ, ուրիշչէկայ, կ'ըսէր:

Եւ Վահան աւարի տուաւ իր ձեռքին տակ եկած բոլոր
ծաղիները: Յիշ քիչ Երեգնազի գողը լեցուեցաւ ծաղիներով: Օսաղիները սիւուեցան սեղանին, աթուներուն գետնին վրայ, եւ Երեգնազ իր սպիտակ ձեռքերուն մէջ կ'առներ ողկոյզներն ու երեսն ամբողջ կը թաղէր անոնց մէջ, չկշատնալով երբեք այդ զզլիխ անուշութիւնէ: Եյդ բուրուժն ուրախութեան տարիներու յիշատակները կ'արթնցնէր սրտին մէջ:

Վահան կը կնել տուաւ գարեջուրի բաժակներն, և սկսան խօսակցիլ: Երեգնազ մելամազնու շեշտով, աւանց սակայն դասնութեան խօսեցաւ իր վիճակին վրայ.

— Եթէ գու ալ չգանուէիր, ես ի՞նչ պիտի ընէի Վահան:

Ու մեղմիկ կը սղմէր երիտասարդին ձեռքը, այդ սեղմումի մէջ դնելով իր սիրոյ բոլոր ջերմութիւնը: Վահան փալաքշտկան խօսքերով կը փոխէր խօսակցութեան նիւթը:

Իրիգնապահի զով հովն սկսած կը թեթև թեթև փչել. Վահան ծածկեց Երեգնազը իր ձերմակ շալովը, ձեռքերը կը դողդպային զնա ծածկած բոպէին:

Բազմութիւնը կամաց կամաց կը մեկնէր Շեշլէն. Ժխորը կը նուաղէր, գարնայնի իրիկուան բարակ մշտւշը կը տարածուէր. վերջալոյսը կը մօտենար տակաւ, և հեռու, Ոսկեղջեւրի վրայ երկինքը կը ներկուէր հրավառ դոյներով: Վահան զգածեալ էր. չէր ուղեր մեկնիլ հոնիէ:

— Արակուրնիս հոս ուտենք, Երեգնազ, ըստւ յանկարծ
երխասարդբ:

— Եհ, չե՛, ըստւ Երեգնազ, մայրս կ'ապասէ անհանգիստ
կ'ըլլայ:

— Ի՞նչու անհանգիստ պիտի ըլլայ. քանի որ գիտէ թէ
ինձի հետ ևս: Տէ՛ մ'ըսկր, Երեգնազ:

Երեգնազ պատասխան շուռաւ այլ, երխասարդը գիւրաւ
գուշակեց անոր դէմքէն թէ շատ ծանր պիտի ըլլար անոր
այնշափ շուտ բաժնուիլ այդ սիրական վայրէն:

Վահան անմիջապէս կանչեց սպասաւորը և քանի մը
տեսակ կերակուր ու գինի ապապրեց:

Երբ կէս գիշերէն երկու ժամ առաջ Վահան ու Երեգ-
նազ մեխնեցան Շիշլեէն, այս անգամ բայց կառքով, երկուքին
ալ այտերը կարմրած էին: Երտասովոր ողեսրութիւն մը կը
լեցնէր իրենց սիրար, եւ սակայն երկուքն ալ բառ մը չգտան
իրարու ըսելու համար: Երեգնազ, եղբեանքի ծաղեկներու
փունջ մը ձեռքը, կորսուած էր խոր մտածումներու մէջ:
Վահան, աշուշները կիսախուփ, խորսուզուած էր հեշտ
թմրութեան մէջ, զոր տւելի կը սաստկացնէր Երեգնազի մարմ-
նին ջերմութիւնը:

Երբ տուն հասան, Վահան իր վրայ առաւ յանցանքին
բոլոր պատասխանատուութիւնը, ու Երեգնազը տարաւ իր
սենեակը: Եղջկան մայրը կանուխ պառկելու սովորութիւն
ունէր, և միշտ վստահաբար թող կուտար որ երկու երխա-
սարդները միայնակ մնան:

— Օ՞ֆ, օ՞ֆ, գինին շատ փախաւ, գլուխս կը գտանայ
կոր, ըստւ Երեգնազ, աս գիշեր կանուխ պիտի պառկիմ: ինձի
անկողնիս քով տար և դիշեր բարի ըսէ: Կա օրուան պէս զքօս-
նած չունէի շատոնցէ ի վեր. որչափ չնորհակալ եմ քեզի
Վահան:

— Բաւծս բան մը չէ, Երեգնազ ըստւ Վահան, եւ
կը յրին ձեռքէն բոնելով յուշեկ քովի սենեակը տարաւ:

Ենկողինը հոն ձգուած էր, գետնի վրայ. ստւանը կը պար-
զէր իր ձիւնական ձերմակութիւնը. զերմակը մէկ քով ծալ-
լուած էր:

— Ենորհակալեմ. ալ պէտք չունիմ քեզի. ինքն իրենս
կընամ ընել վարժուած եմ, ըստ Երեգնազ. գիշեր բարի:

— Տէ, այսչափ կանուխ մեխնիլ չեմ ուզեր: Եւ քեզի
բան մը զրուցեմ. այս գիշեր խենդ փափառ մը ունիմ:

— Ի՞նչ փափառ:

— Ես հանոււցնեմ քեզ. ինքնիրենդ չպիտի կընաս հա-
նուիլ. գլուխդ կը դառնայ:

— Խենդ ես, Վահան, տատնի բան կ'ըլլայ:

Եւ երիտասարդը, առանց պատասխան տալու, մօտեցած
էր մանկամարդ աղջկան, և ձեռքովն անոր մէջքէն գրկած,
միւսովը կը քակէր Երեգնազի պատին կոճակները, հակառակ
անոր տկար դիմագրութեանը: Յետոյ արագ արագ, տենդու
ձեռուներով վերէն վար քակեց դիմէ. կուրծքն յայնժամ ե-
րեցաւ իր վարդերանդ սպիտակութեամբը, մինչ երկու բոլո-
րակ ծիծերը գուրս կը ցայտէին առոյդ ու խրոխտ: Վահան
շլացում մը ունեցաւ. արիւնը գլուխը ցատկեց, ու համբոյր-
ներով փակելով Երեգնազի բողոքող շբթները, ձեռքովը մարեց
մոմբ:.....

ԺԱ.

«Դարեսէր ընկերութեան» թատրոնի գերասաններն ու դե-
րասաննուշիները թէպէտե հեռացած էին Օրթագեղէ այլ ի-
րենց յարաբերութիւնները կը շարունակէին օրթագեղիներու
հետ, այն տեղ ստէպ այցելութեան դալով իրենց բարեկամ-
ներու. Երեգնազի յղե ըլլալուն լուրը անոնք տարածեցին
Օրթագեղը աշնան սկիզբները: Գանուեցան ազնուասիրտ բա-
րեկամներ ու բարեկամնւշիներ որդք այդ «ցաւալի լուրը»—
ինչպէս կ'ըսէին—հազրորդեցին Վահանի հօրն ու մօրը:

Լուրը կը տալրածուէր. Վահան կոտրած էր, տխուր. իր
ու հօրը միջեւ այդ լուրի մասին խօսակցութիւն մը անխու-
սափելի էր: Դիշեր մը ճաշէն վերջ երբ հայր ու որդի մինակ
էին, հայրը սրտին բոլոր դառնութիւնը յայտնեց:

— Հիմա ի՞նչ պիտի ընես, պէտք է դարման մը գտնել:

— Եյո, ես ալ դարմանել կուզեմ, ըստ Վահան, եւ
միակ դարմանը ամուսնութիւնն է:

— Ամուսնանա՞լ Սրեգնազի հետ. Խելքի՞դ եկար: — Ի՞նչ կը հասկնաս ուրեմն դարման ըսելով. — Աղջկանն ու զաւկին ապրուստը ապահովցնել: Վահան քմծիծաղ մը ունեցաւ, և յայտաբարեց թէ ուրիշ դարման չեր գիտեր ինք բայց եթէ ամուսնութիւն: Հայրը զապեց բարկութիւնը, և սկսաւ խօսիլ կամաց կամաց, ողոք ձայնով: “Նկարագրեց այն տիսուր ապագան որ կ'սպառնար իրեն եթէ ամուսնանար կոյրին հետ: Պարտաւոր պիտի ըլլար կաթնառու պահել, աղախին ոլահել խոհարար ունենալ. իր տասն ոսկի ամսականովն ի՞նչպէս պիտի հոգար բոլոր այդ ծախքերը. մանաւանոդ որ կոյր կին մը անկարող ըլլարով հսկել տանը վրայ ալ Աստուած գիտէ թէ ի՞նչ ծախքեր կ'ըլլան: Փայլուն ապագայի յօյս չկար, ամսականը թերեւս աւելնար փոքը ինչ, աւելի ոչինչ: Ի՞նչ պիտի ընէր:

Եւ այդ տիրերանդ նկարագրին կցեց իրենց վշտահար վիճակի նկարագրութիւնը: Մեռած էին իրենց բոլոր զաւակները. իրենց միսիթարանքը, իրենց միակ յօյսն ու ծերութեան, ապաւենն իրենց մեկ հատիկ զաւակն էր, իրենց Վահանը, ի՞նչ պիտի ընսէին եթէ նա ալ բաժնուէր իրենցմէ: Խեղճ մայրը կինամբ դիմանալ այդ ցաւին:

Ու Վահանի հայրը, աչքերը լեցուած, բաժնուեցաւ գաւկէն: Հօրը խօսքերը խորին ապաւորութիւն ըրին Վահանի վրայ: Իր սիրան ալ ելաւ. ըմբռնեց թէ Սրեգնազի հետ ամուսնանալով վերջնական կերպով գժբաղդ կ'ընէր իր խեղճ հայրն ու մայրը:

Վապագայի նկարագիրն ալ սարսափեց զինքը: Հայրն իբաւ ւունք ունէր, ի՞նչպէս պիտի ապրէին. իր վիճակն անտանելի պիտի գտանար:

Սրեգնազի ու զաւկին ապագան ապահովելը լաւագոյն միջոցն համարեց այս գժուարութիւններէն փրկուելու համար: Խորհեցաւ թէ արդարենք չէ պատճառն որ Սրեգնազ կուրացաւ. ինչ որ ալ ըլլար, այդ գժբաղդութիւնը պիտի պատահէր անոր. ի՞նչ պիտի ընէր այդ աղջեկը եթէ ինք չելլէր անոր գէմը: Սրեգնազ պէտք էր գոհ ըլլար որ զաւակ մը պիտի ունենայ. չնորհիւ այդ զաւկին իր ապագան, մօրն ապագան ալ ապահովուած է. գեռ ի՞նչ կուզէ:

Եյս մտածութիւններն սփոփեցին զինքը. կտրծեց թէ ծանր բեռ մը սրտին վրայէն մէկդի նետուեցաւ:

ԺԲ.

Յունուարի առաջին օրերն Երեգնաղ մանչ զաւակ մը ունեցաւ:

Օաւեկին ծնունդը մէծ ցնցում պատճառեց Վահանի սիրտը յուզուեցաւ. վարանումը դարձեալ պաշարեց զինքը:

Ել հիմա ամէն օր առտու իրիկուն կ'երթար Երեգնաղին. չը կարող բաժնուիլ զաւկէն: Ծնդեցան իր բոլոր որոշումները: Սարսափով կը մտածէր թէ ի՞նչ պիտի ըլլար այդ զաւեկին ապագան:

Իր ամբողջ կեանքի մէջ չէն պիտի ծանչցուէր նա: Վահան պիտի մլրտէր զնա իբր Տէրունի, այսինքն «եկեղեցւոյ զաւարի»: Մանուկ՝ պիտի կանչէին զնա Երեգնաղի բէնը. չափահաս պատանի՝ պիտի կոչուէր Վահանի բէնը:

Ի՞նչ համարում պիտի ունենար այդ զաւակն իր հօրը վրայ որ կըր աղջիկ մը լկած, մայր ըրած ու լքած էր:

Մայրն ալ դժբաղդ պիտի ընէր, զաւակն ալ դժբաղդ: Եւ միթէ ճիւաղ մը չէր ինք: Սարսափեցաւ այդ մտածութիւններէն. չէ, կամ պէտք էր անձնասպան ըլլալ կամ պէտք էր ամուսնանալ Երեգնաղի հետ:

Կնձնասպանն ըլլալ բայց զաւակը:

Վերջնական որոշումը տուաւ. զայն հաղորդեց կարճառօտ կերպով հօրը: Կնչոր ալ ըլլար, պարտաւոր էր ամուսնանալ Երեգնաղի հետ:

Հայրը զայրոյթով ուրիշ բան չկրցաւ ըսել բայց եթէ վանտել զաւակը տունէն:

— Դու կ'աւրանաս մէծցած, հասած զաւակդ, ըսաւ Վահան հօրը, բայց իս չեմ կրնար ուրանալ իմ երկու շաբաթուան զաւակս:

Առաջ Սարգսին Վահան ու Երեգնաղ ամուսնացան:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

I.

ՆՈՐԻ ԱԼԲՈՄՈՒՄ

Նորիկ նսյումեմ չքնաղ պատկերիդ,
Որպէս սիրովըդ կախարգուած սոլսակ.
Նայումեմ պայծառ, սիրուն աշերիդ
Եւ հոգիս կարծես զգումէ նոր կեանք:

* * *

Կարծես քո զգուող քաղցր հայեացքում
Ժապառումէ ինձ մի նոր սիրոյ գարուն.
Եւ հէդ, ցրտացած իմ մաշուած կրծքում
Օգում եմ նորից սիրոյ ջերմութիւն:

* * *

Կարծես իմ առջեւ տեսնումեմ բացուած
Մի նոր երջանիկ ծաղկալից աշխարհ,
Ուր քո վառ սիրով ճակատըս պսակուած՝
Ապրում շնչում եմ միայն քեզ համար...

* * *

Օ՛, օրհնեալ լինի այն քաղցրիկ րոպէն
Երբ քեզ առաջին պատմեցի իմ սէր.
Եւ վարդ-շրթունքիցդ սիրոյս փոխարէն
Ես մի ջերմ համբոյր ստացայ նուեր...

5 Յուլիսի 1889 թ.

Պերլովկա ամառանոց



II.

ՄԱԻՐԱՑԻԱՆ

Գիտե՞ս թէ արդեօք, նւմ գուռն ես եկել,
Տառապեալ եղքայր, գու լի յոյսերով
Ում սիրտն ես ուզում զթութեամբ լցնել
Շարժելքո անվելջ դառըն վշտերով.
Երքայավայել այդ մեծ, փառաշուք,
Բազում յարկերով ճոխ պալատներում,
Ուր աչքըդ յառած թափում ես արցունք.
Եւ խեղգուած ձայնով չոր հաց աղերսում—
Գիտե՞ս թէ արդեօք, անհոգ, անտրտում,
Սնձանօթ թշուառ, սև աղքատութեան,
Ո՞վ է այնտեղ միշտ երգում ու խնդում
Սնձանառուր եղած կեանքի փափկութեան.
Ո՞ւմ կեանքն է այնտեղ ցկրեկ ու գիշեր
Եռում, աղմկում մոլի կրքերով.
Ո՞վ է անինայ մաշում իւր օրեր
Հեշտասէր կեանքի ղեխութիւններով:—

Փարթամ մեծացած գուող իշխանի
Վապարանքն է դա, խղճուկ մուլացկան,
Որի ճոխ տեպով խաբուած, երեխ,
Եկել ես և գու, շատերի նման,
Քաղցած ու ծարաւ, ցնցուիներում,
Դառն արտասուքով կեանքըդ ողբալու
Եւ փարթամասէր իշխանի սրտում
Ֆերմ կարեկցութեան մի կայծ վառելու.
Բայց, աւաղ... զնուր են, զուր այդ արցունքներ...
Կյլտեղ չես գոնիլ մվիթար վշտիդ.
Սնղգայ սրտից յուսուլ գութ ու սէր
Գէպի աղքատը—ցնորք է անմիտ...
Եւ միթէ տխուր փորձերը կեանքի
Քեզ չեն համողել ով խղճուկ, թշուառ,
Որ լացն ու վիշտը ցաւագար սրտի
Օաղը ու ծիծաղ են մեծատան համար...
—

III.

ՄԱՏԱՂ ԵՐԻՒԶ

(Խառնաս Առուրից)

Դէպի կռուի աշեղ դաշտն է նա սլանում սիրտ առած,
 Մատաղ հոգոյ, ծաղիկ կեանքի խանդն ու սէրը մոռացած.
 Նա թոշում է մի ձեռքումը փայլուն սուրը հայրական,
 Միւս ձեռքում՝ իւր տաւիղը—միակ աղբիւր խնդութեան:

* * *

«Օ՛, ոգեշունչ վառ տաղերի դու իմ անզին հայրենիք,
 «Դմ պապերի նուիրական դու օթեան գեղեցիկ.
 «Աշա քեղ եմ բերում նուեր, ով տառապեալ խեղճ աշխարհ,
 «Եւ իմ կեանքը, և՛ իմ սուրը, և՛ տաւիղը սակելար»:

* * *

Մատաղ երգին ընկաւ աշեղ պատերազմի փոթորկում,
 Սակայն ծաղիկ հոգին տալով՝ մահուան վերջին տագնապում
 Նա շողշողուն իւր սուսերը զոռ ալիքները նետեց,
 Եւ քաղցրաձայն տաւղի քնքոյշ նուրբ լարերը կարատեց:

* * *

«Օ՛, դուք լարեր, որքան հզօր, որքան վսեմ համարձակ
 «Նշում էիք դուք երգիս հետ հայրենիքում սէր ու կեանք,
 «Բայց ի՞նչպէս դուք այժմ այնտեղ ազատ հնչէք, խեղճ լարեր,
 «Ուր տառապեալ սարկի ձեռքին խուլ հնչում են շղթաներ...»:

Եղ. Օպապո-ըեւան.


16 Փետրուարի 1890 թ.

Մոսկուս



ԿԵՐԱՆՔԻ

Հրձուանքը ունայն անցաւոր կեանքի
 Զէ մխիթարում իմ տրտում հոգիս,
 Եւ ոչ ցնծութիւնն անմիտ ցնողքի
 Բերում սփոփանք խորտակուած սրտիս:
 Ի՞նչ է մեր կեանքը—վազանցիկ երազ
 Անցնող բովերով վշտի դառնութեան.
 Եւ մի խաղալիկ դարձած հանապազ
 Վշտի կատակին սին վայելքութեան:
 Եւ ի՞նչ են երգեր, պարեր, խնջոյքներ. —
 Լոկ բոպէական ոգեւորութիւն.
 Աանցնի ժամանակ, և նորից հոգսեր
 Գլուխդ կթափեն վիշտ ու նեղութիւն...
 Եւ ինչու համար անդուլ աշխատանք,
 Բողոք հոգեկան դառն բոպէներ—
 Առօւել մարդկանց հետ, պահպանել մի կեանք—
 Անվերջ գոյութեան այս պատիր պատկեր...
 Բայց ի՞նչ է կեանքն—կոռուի ասպարէզ—
 Գործել խղճի դէմ, և վիշտ անքանակ.
 «Եթէ լուրջ կերպով չորս կողմդ նայես,
 Նա է մի անմիտ և դատարկ կատակ» *)
 Աանցնեն տարիքգ. բայց երկու մնայուն
 Պատկեր կյիշես մինչև գերեզման—
 Մէկն է անհոգ ոսկի մանկութիւն,
 Միւսը տանջանք, կոյւ գոյութեան...
 . Յանձնենք Մայքուանց:



ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

Beiträge zur etymologischen Erläuterung der armenischen Sprache
von Dr Sophus Bugge, Professor an der norwegischen Universität.
Christiania, 1889, 8°. S. 8—51.

Դոկտոր Սոփուս Բուգդէ, ուսուցչապետ Նորվեգիան համալսարանի, վերոյիշեալ զբքյիկում, որը նորա երախսայրիքն է հայ լեզուի ուսումնասիրութեան մէջ, յառաջ է բերում աւելի քան 114 հայկական բառերի ստուգաբանական մեխութիւններ, համեմատելով Գլխաւորակն եւրոպական լեզուների հետ:

Բուգդէ իր երկասիրութիւնը նուիրած է արևելագէտների համաժողովին, որը կայացաւ Վրիստինիա քաղաքում 1889 թ.

Այս զբքյիկի վերջում (էջ 49-51) զետեղուած է բացատրուած կամ համեմատուած բառերի մի յուցյակ հետեւեալ լեզուներից. հայերէն, սանսկրիտերէն, իրաներէն (տասը բառ, որոնցից եօթը վեր է առած Աւեստայից, մէկը նոր պարսկերէնից և երկուսն էլ օսերէնից) ալբաներէն, յոյներէն (վաթսուն վեց բառ), լատիներէն, կելտերէն, գերմաներէն, բալտերէն (հին պրուսերէն, լիտաւերէն ևն) և սլաւոներէն:

Այս բառերի ստուգաբանութիւնները ընդհանրապէս ձիշտ չեն մշակուած, ուստի և ուշադիր ընթերցողին նոքա միանգամայն չեն համոզեցնում այն աստիճան, որ նորա մէջ կառկածանիքներ չ'ծագէին. այլ ընդհակառակը դոկտոր Բուգդէի բացատրութիւնները մեծամասնութեամբ միայն կարելի են և նոքա ձիշտն ասած կաղմում են ստուգաբանական էնթագրուն-նենեցն մի հաւաքածոյ, որոնց հետ յաջող գէպքում, այն էլ զգուշութեամբ, միայն ներելի է համաձայնել բայց յաճախ միանգամայն անկարելի է գառնում ի միջի այլոց այն պատճառով, որ զանազան լեզուներից վեր առած բառերի համեմատութեան մէջ ուսուցչապետը բնաւ ուշադիրութիւն չէ գարձնում այն բանի վերայ, թէ օրինակ համեմատելի հայերէն

բառը արգե՞օք հին և բուն հայկական բառ է, թէ նոր և յարտագուսա ներմուծած: Ամեն մի լեզուագէտ կանխապէս պէտք է քնննէ այս կողմից իր ամեն մի հետազօտելի բառը, եթէ միայն նա ուղում է ծանրակշխո լինի և սխալմունքներից զերծ: Վեր առնենք օրինակի համար մի երկու երեք հայերէն բառեր:

ա. ֆննէ, նոյնը և վրացական ֆնննէն, վերջին դարիների բառ է, որը մօտ կապ ունի հայկական հին մատենագրութեան մէջ գործածուած այնդ և չի՞շ բառերի հետ (վրացերէնն չի՞շէ և չի՞շէ): Ենթագէտար գործ ունենալով աւելի հին և ժամանակի ընթացքում ոչ մաշեալ ձևերի հետ պարտաւոր է մերժել ֆննէ կամ այնդ և յօյներէն ունութեան ունարօն բառերի մէջ համայնշութիւնը, որ ուղում է ապացուցել ուսուցչապես Ծուգդէ (եր. 33 և 75): Մեր կարծիքով այնդ բառը սեմական բառ է, սակայն հնումը ներմուծած հայերէն և վրացերէն լեզուների մէջ. նա հրէական և ասորերէն չիշ բառն է: Այս բառի արաբական արմատը՝ բախսա, միջի արմատական տառի^{*)} տեղ ունի ալիփ, որին և համապատսխանում է հնումը ներմուծած հայկական, այնդ բառի կոկորդական հնչեն չն.

բ. Ալափ, վրացերէն ալափէ, նոր բառ է, որ ըստ երևոյթին ոչ այլ ինչ է, եթէ ոչ պարսկերէնում և տաճկերէնում գործածուած արաբերէն ալափ բառը, միայն այն զանազանութեամբ, որ արաբերէն և պարսկերէն նա նշանակում է պատերազմի ժամանակ զինուորների և մանաւանդ ձիերի համար ուտեսատի պաշար: Բայց որովհետեւ պաշար ձեռք բերելու համար զինուորները սովորաբար երկրի բնակիչներին զրկում և կողոպատում էին, հայերը և վրացիները սկսեցին այս բառը իրօք առաջ մնալով գործածել ուստի ալափ պալ և ալափէլ հայերէն նշանակում է պարզապէս կողոպրել որպէս և վրացերէն ալափունք: յամենայն դէպս յօյներէն նախօրս ոչ մի կերպով չէ կարող հայկական ալափը լինել որպէս ճգնում է ապացուցել Ծուգդէ (եր. 21):

գ. Տալինա (եր. 33) բառի սեմական ծագութիւն^{**} աներկրպայելի

^{*)} Ամեն սեմական բառ բաղկանում է երեք արմատական տառից:

^{**)} Հայկական լեզուի մէջ հնումը սեմականտ արր (élément) բաւականին ներմուծութիւն է գտած. այս երևոյթի պատճառը բարդէ և լեզուագէտների կողմից մասնաւոր ուշադրութեան և հետազօտութեան արժանի: Այստեղ նշանակում ենք պատահաբար միայն եկու-

է. այս բառը ասորերէն հնչվում է նոյնպէս բալենա, որտեղից և ներմուծուել է հայերէնի մէջ Աստուածաշունչի թարգմանութեամբ. նա գործ է ածուած Մարկոս աւետարանիչի 12. 41 զլիում բալենա կուտի նախագասութեան մէջ, որտեղ նա պահպանուած է առանց փոփոխութեան և յօներէն և ուսերէն և այլն:

Այս աշխատասիրութեան մի այլ թշյլ կողմն էլ նա է, որ աշխատասիրողը հնչիւնների օրէնքները վճռուած է համարում, երբ նա գտնում է մի երկու երեք նմանօրինակ երեցիներ. մինչդեռ եթէ նորա եղբակացութիւնը իսկ օրէնք լինէր և ոչ երեակայութեան կամ պատահական նմանութիւնների արգասիք, օրինակների պակասութիւն ամենեին չէր լինի: Մինչեւ անգամ այն փոքրաթիւ օրինակները, որ առաջ է բերում պր. Ռուգդէ, մեղ բնաւ հաւատ չեն ներշնչում և բացարվում են կամայակաբար. զօր. նա մերժում է վարու բառի համացեղութիւնը հնդկաեւրոպական ցիր (զիրի) բառի հետ, որպէս հնչիւնների օրէնքին հակառակ համեմատութիւն և առաջարկում է մի զարմանալի ստուգաբանութիւն, որ մեր կարծիքով հակառակ է հնչիւնների և հայկական շեշտի^{*}) օրէնքներին. իսկապէս նա ուզում է ապացուցաներ, որ վարու բառը ծագում է նախալեզուական հչետօ-ից: Կարելի է մի մեծ յօդուած գրել բացատրելու համար, թէ ինչո՞ւ զր. Ռուգդէի առաջարկեալ բառը նպատակայարմար չէ, որպէս վարու բառի նախասկիզբ, բայց մենք աւելորդ ենք համարում ամեն մի հերքողական ապացոյցի զիմել քանի որ մեր ձեռքում գտնվում է մէկ ուրիշ աւելի հիմնաւոր ստուգաբանական բացատրութիւն. բայց նախ պէտք է իմանալ որ հին հայերէնի-այսպէս ասած հայերէնի նախալեզուի մէջ, բառերը շեշտուած էին երկրորդ վանկի վերայ վերջեց հաշուելով. այսպէս մենք այս հանգամանքին ենք պարտական, որ հայերէն բառերի ոչ շեշտուած վերջին վանկերը ընկած

երեք բառերի սեմական ծագումն, որոնք շատ սովորական են հայերէն մատենագրութեան և խօսակցութեան մէջ. տղայ ասորերէն տլէ, տերեւ, ասոր, տորիո, շաւիղ, ասոր, շաւիլ, ցից, ասոր, ցեցո, ևն:

*) Մինչեւ այսօր արժանի ուշագրութիւն չէր գարձրած հայերէն բառերի շեշտի վերայ Հայկական շեշտիօրէնքը գտնելով, մենք իմացանք մի շար փոփոխութիւններ, որոնք, ինչպէս երեւում է, բաժանեցին հայերէն լեզուն համացեղ հնդկաեւրոպական լեզուներից:

և բոլորովին անհետայցած են, իսկ յետոյ միայն երբ հայկական լեզուն կորցրեց իւր ձեւրի ամբողջութիւնը, նոյն դասական հին մատենագրութիւնից սկսեալ մինչև այսօր հայկական բառերը շեշտուած են վերջին վանկերի վերայ. երկրորդ, դիտելու է որ երկու կամ աւելի վանկ ունեցող գոյական և ածական անունները ուղղականում սովորաբար կորցնում եին իրենց սեպհական վերջին, այսինքն անշեշտ ձայնաւորները, որովհետեւ ուղղական հոլվի վերջաւորութիւնը այլ ևս չէր պարունակում իւր մէջ ձայնաւոր տարր (élément), բայց սեռականում, որի վերջաւորութիւնը ձայնաւոր էր, (յա կամ իյա) վերականգնում էր իւրաքանչիւր անունի ձեր ամբողջապէս, անուան վերջին վանկը երկրորդ վանկ դառնալով, այսինքն շեշտուած.

Եյսպէս վետեն բառի նախիին չկրծատեալ և ամբողջ ձեր պէտք է որոնիլ նորա սեռականում, որ է վերջն, իսկ վերջն բոլորովին *) համապատասխանում է զենդական ցairi (ժայռ—վարժ) բառին, ըստ որում զենդական է հնչիւնը հայերէնում վեր գարձած տեսնելը անօրինակ չէ, զենդական ցuseհը հայերէն գարձել է վեր ։ այերէնում մենք ունինք ևս այս բառը (բայրի) սկզբնական կոկորդի ձայնի հետ առանց փոփոխութեան. խօսքս չեր և գերջն բառերի մասին է, որոնք վեառն արմատական նշանակութիւնից բնական փոխաբանութեամբ գարձած են առհասարակ բարձրութիւն նկարագրող բառեր. նրանց համացեղ են վեր և վերջն. այսպէս բալոր այս բառերը վարժ-վերջն, գեր-գերջն մէկ բառից են ծագում ու բնաւ ոչ մի կապ չունին ուսուցչապես Ըուգգէի կէտօ-ի հետ: Ախալ է նոյնպէս ուսուցչապետին կարծիքը (եր. 41—42), իբր թէ երկու բառին մէջ, առաջին վանկը Եր, Երեւ բառի նմանութեամբ է կրցեալ և թէ Երկու բառի հին ձեւը ակա է. նա չզիտէ որ երեք բառի իսկական ձեւը Երբեւ է և այս Երբեւ և Երկու բառերի մէջ առաջին վանկի (Եր) ը հնչիւնը իրանական լեզուի հնչիւնների, և և մէկայի անուն ներկայացուցիչն է **), իսկ Ե հնչիւնը աւելա-

*) Ն կամ կ հնչիւները կցվում են հայերէնում միայն այն բառերին, որոնք վերջանում են ձայնաւորով:

**) Յառաջ ենք բերում այս հնչիւնական օրէնքի մի քանի օրինակները, որ վերին աստիճան մի կարևոր օրէնք է հայկական բա-

յրածէ, բատ որում տոհասարակ հայկական բառերը թով չեն սկսում Աի այլ օրինակ. որովայն բառը պ. Բուգդէ ուզումէ (եր. 26) նմանեցնել Աւետարյի ցարաբառի հետ, որը հընչիւնների և շեշտի օրէնքների շնորհիւ հայերէն կարող էր գառնալ գելս կամ ծելս և երբէք որովայն, վեր առնենք մէկ ուրիշ զմենդական բառ սրտհարե. զենդական և հաւասար է հայերէն հին և այս օրէնքի շնորհիւ բոլորովին համապատասխանումէ մեր որովայն բառին, որը խկապէս պէտք է արտասանուեր-որոհվայն, սակայն մենք շեղվում ենք մեր նպատակից և սկսում ենք սեպհական ստուգաբանութիւնների գուռքանալ մոռանալով որ մեր ակնարկած հնչիւնների և շեշտի օրէնքները գեռ լցու չեն տեսած խրեանց ամբողջութեամբ հարկաւոր բացատրութիւններով և ապացոյցներով:

Աերջապէս մաղթելով ապագայում գր. Բուգդէին յաջողակ հետազոտութիւններ անելու և աւելի գիտական ձեւեր գտնելու, առ այժմ միայն կասենք, որ ցիրուցան, թէև բազմաթիւ բառերի մեկնութիւններ ներկայացնելու մէջ, ինչպէս անումէ ուսուցչապետը, նա միակը և առաջինն չէ որ այսպէս վերաբերվում, թէպէտ և հետաքրքրական է. բայց նա չէ էլ կարող նպաստել հայերէն լեզուի զիտնականապէս ուսումնակրութեան, երբ այս բազմաթիւ մեկնութիւնները այնպէս խումբ խումբ չեն բաժանուած, որ իւրաքանչիւր խումբը, և ոչ երկու երեք նմուշները, կապուած լինին միմեանց հետ հնչիւնների մէկ ընդհանուր օրէնքով:

Երբ այսպիսի ձիշտ օրէնքներ բազմանան, այն ժամանակ անշուշտ կկազմուի մի ներդաշնակութիւն, որով և կարող կլինենք առանձին օրէնքները պարզել, նրանց ներդաշնակութեան սկզբունքը որոշել բայց սորա համար կարեսը է ամենից առաջ հնչիւնների ձիշտ օրէնքը հետազուտել, որոնց բացակայութիւնով գլխաւորապէս բացատրվումէ հայերէն լեզուի ուսումնասիրութեան դանդաղ յառաջադիմութիւնը:

“Ասու-Ձն.

ուարանի և քերականութեան շատ մութը կէտերը պարզելու համար. Հին պարսկերէն, apadāna-ապարանք, qēnq hadhōzāta-հարազատ, daēna-o-րէնք, dī-k-ryā-իլ, diçə-առփւծ, thwishi-երկիւղ, madhaka-մարախ, ևն:

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ

Հայկական Պատմութիւն. աշխարհաբար թարգմանեց և լուսաբանեց Խորէն Ռ. Ա. Ստեփանէ: Ա. Պետերբուրգ, Սկզբուոգվի տպարան, 1889, 16^o. Առաջարան էջ Ճմբ, էջ 351.
Ռամնօթութիւն և Յաւելուած. էջ 328:

Ենցեալ տարուայ վերջերում լցոս տեսաւ Ա. Պետերբուրգում Մովսէս Խորէնացու Հայոց Պատմութեան աշխարհաբար թարգմանութիւնը ։ Խորէն Ստեփանէի աշխատասիրութեամբ: Մեր պարբերական թերթերը քչից-շատից գրեցին այդ աշխատութեան մասին ընդհանրապէս կէս-գոհունակ տրամադրութեամբ. բայց նորսն մանրամասն քննադրատութեան ենթարկող չեղաւ տակաւին. մինչդեռ այդ գործը արժանի է մեր ուշադրութեան և մանրամասն ուսումնասիրութեան:

Ռամնը է առաջ գնում մեր գասական հեղինակների աշխարհաբար թարգմանութիւնը: Մինչդեռ այդ գրուածների բնագիրներից շատերը 5—6 անգամ և աւելի տպադրուած են զանազան կետրոններում և քանիցս թարգմանուած եւրոպական լեզուներով, հաղեւ մի-երկուսը ունինք աշխարհաբարի վերածած: Քանան տարի առաջ լցոս տեսան Ղազար Փարավեցութառութը և Եղիշէի Պատմութիւնը, մէկը՝ Մ. Նալբանդեանցի և միւրը Մ. Սիմօնեանցի աշխատութեամբ. և միայն այս օրերս՝ Խորէնացու Պատմութիւնը: Ահա և բոլոր աշխարհաբար թարգմանութիւնները մեր հարուստ հին գրականութենից:

Սակայն այս անփութութիւնը գէպի մեր հին գրականութիւնը դժուար չէ մեկնել:— Ծատ չէ անցել այն օրից, երբ որ մեր գրագէտներից շատերը հերքում էին այդ գրականութիւնը՝ իբրև մեռած և անպէտ լեզու և իբրև անցած-զնացած զըսցներ՝ օտար մեր ներկայ կեանքին ու զարգացմանը,
(Արաբու).

ուստի ուսումնասիրութեան համար նաև աւելորդ։ Այս մի բնական հակազդեցութիւն (ցեակցիա) էր գրաբարչեանների դէմ որոնք իրենց յափշտակութեամբ դէպի հին լեզուի անհամեմատ առաւելութիւնները ծայրայեղութեան հասնելով, ոչ միայն հերքում էին աշխարհիկ լեզուն և նորաբողբոջ գրականութիւնը, այլ և երազում էին վերականգնել մի օր գրաբարը։ Աշխարհաբարձրանները գուցէ այնքան հեռու չերթային իրենց բացասութիւններով հին գրականութեան և մանաւանդ լեզուի մասին։ բայց քանի որ նոցա համար կենսական ինդիրը նոր լեզուի դյուութեան իրաւունքները հնի գերիշխանութեան դէմ պաշտպանեն էր, դորա համար նոքա ևս իրենց հակառակորդների նման չափազանցութեան համնելով՝ կարծես, պատրաստ էին զոհել ամեն ինչ որ հին լեզուով էր, հին լեզուի հետ անտես առնել նաև նորա գրականութիւնը։ Այս բնական երեսոյթ է։

Բայց անցան տարիները, բորբոքուած կրքերը խաղաղացան, փոխազարձ յարձակումները գաղարեցան, նոր լեզուն՝ բուռն կոռուց յետոյ, հաստատեց իւր իրաւունքները, ամուլ բոներով այն տեղը, որ վայել էր իրեն։ Նախին ծայրայեղութիւնները սկսան փոքր առ փոքր տեղի տալ իրերի սովորական ընթացքին։ Ըջօրէն խորհելով՝ տեսանք, որ հնի ու նորը իրենց որոշ սոհմաններն ունին, իրենց դյուութեան իրաւունքները ուստի մեր մէջ հաստատուում է թէ՛ մէկի և թէ՛ միւսի կարեորութիւնը որպէս և նոցա փոխադարձ և անհրաժեշտ ձեռնութեանութիւնը։ — Այդ ժամանակ գրաբարն ևս իւր գրականութեամբ սկսաւ բոնել այն տեղը, որ վայել է իրեն։ Նեռն է կողմից նա եղաւ այն սուստ աղբիւրը, որից աշխարհաբարը ժողովրդական բարբառներից զատ, հանում էր և շարունակում է հանել իւր շնուրածի համար բազմաթիւ ընտիր բառեր և գեղեցիկ գարձուածներ՝ ստէպ նորա ոգուն համեմատ մշակելով նաև իւր քերականական ձևերը։ Գրականութեան կողմից նա այն մեծագին գանձարանն է, որոյ մէջ պահուած ենք տեսնում մեր նախնական կետնքի հրաշալի նկարագիրները, մեր հինաւուրց քաղաքակրթութեան և ննքնուրոյնութեան թանկագին յիշտատակները..., որոնք հիմք կամ զոնէ մեծ նպաստ պէտք է լինին մեր ներկայ զարգացմանը և առանց դոցա դժուար

Է երեւակայել մեր վերածնութիւնը։ Աւստի հին դրականութիւնը՝ հայ մտքի ու հանձարի այդ գեղեցիկ արդիւնքը, բացի դպրոցական առարկայ լինելուց, որ անհրաժեշտ է, պէտք է որ չպահուի ծածուկ, ջթազգուի մեծամասնութենից դժուար-ըմբոնելի հին լեզուի քօղի տակ, այլ թարգմանուի դիւրա-տար, հասկանալի ոճով և տարածուի ժողովրդի մէջ։—Եր-դարե, որչափ ախորժելի և միենոյն ժամանակ հրահանգիչ ու խրատական կ'լինի ընթերցող դասին՝ աջող ու դիւրիմաց կեր-պով փոխադրուած, օրինակ՝ Վրիստոնէութեան առաջին դարը Հայաստանում այն է՝ Գրիդոր 1-ուսաւորչի և Տրգաստ թա-դաւորի հրաշալի պատմութիւնը (Եդանանձեղը) կամ “Ներ-սէսի, Երշակ Նրկրորդի և հայ նախարարների ձիշտ և մանրա-մասն նկարագիրները և նոցա փոխադարձ յարաբերութիւն-ները (Փառապու Բոռ-պանդ), կամ Վարդանանց և Վահանանց սրբազն պատերազմները՝ իրենց հետաքրքիր հանգամանքնե-րով (Եղիշէ, Փարախչէ), կամ թէ հայ նախարարների մեծամեծ քաջազործութիւնները Պարսից և Յունաց պատերազմնե-րում՝ արձակ վէպի ձևով պատմած (Ալբեռո, Յովհ. Մաք-կանէսա) և կամ թէ Բագրատունի, Երծրունի և Ոռուբինեան իշխանների հերոսական ջանքերը նոր պետութիւններ հաս-տատելու՝ հանդերձ աջող և ձախող պարագաներով (Յովհաննէս Կանոնիկոս, Խճռունի, Մաքրէսո Ուհայեցի...) և այլն և այլն—Ժամանակ է վերջապէս լուրջ կերպով հոգ տանել մեր գասական մատենագիրներից գոնէ ընտիրները քաղուա-ծօրէն կամ փոխադրութեամբ աշխարհաբար թարգմանելու, որ ընթելցանութեան զրաւիչ և օգտաւէտ նիւթ կ'մատակա-րարէ ժողովրդի մեծամասնութեանը։

Խորենացին թէ իբրև մատենագիր և թէ իբրև պատմիչ առաջնակարդ տեղ է բունում մեր գրականութեան մէջ։ “Խորա վսեմ ոճը և հարուստ լեզուն՝ դիտնական հակիրճ սեղմու-թեան հետ միասին, նորա կիրթ ճաշակը, նորա գրական հմտու-թիւնը և վերջապէս ողորկ ու գրաւիչ շարադրութիւնը,—այս բոլորը Խորենացու անհերքելի ճարթեանձրական արժանաւորու-թիւններն են։ Իբրև պատմիչ նա ալորէն նորանով է անհամե-մատ, որ առաջինը յղացաւ Հայոց Պատմութիւն գրելու գա-

զափարը՝ նախնական ժամանակներից սկսած, ուստի և գերազանց կարող է համարուել բոլոր մեր պատմագիրներից: Եւ անշուշտ այս մաքով է, որ հայ պատմագրութեան հայր ենք անուանում նորան: Խսկ նորա պատմական հմտութիւնը և նուրբ գեղարուեստական ճաշակը մանաւանդ փայլում են այնտեղ ուր նա ազգային կենաքի խորին հնութեան մէջ թափանցելով՝ վերաստեղծել է ձգտում անցած-գնացած ժամանակները ազգային հրաշակերտ վէպերի և հնախօս աւանդութիւնների բեկորներով—մի յատկութիւն, որ՝ ինչպէս իրաւացի նկատել է Մ. Գարագաշեանը, մեր պատմագիրներից և ոչ մէկի, իսկ օտարներից՝ սակաւների մօտ է պատահում:

Սակայն այս բոլոր արժանաւորութիւններով հանգերձ Խորենացին՝ իրեւ պատմագիր, զերծ չէ և խոշոր թերութիւններից. օրինակ՝ նա ծածկում է իւր իսկական աղբիւրները՝ (մանաւանդ Մար-Երաս Աստինային) անգոհացուցիչ անգամ և անհաւատալի մեկնութիւններ տալով նոցա մասին. Հայկազունեաց պատմութեան մեծագյն մասը անունների չոր ու ցամաք ցանկեր են ներկայացնում և այն՝ արուեստապէս յարմարցրած Վասորեստանի թագաւորների թուրին ու յաջորդութեանը՝ համաձայն Կտէսիասի.—նորա մէջ բերած Պարթևաց թագաւորների անունները՝ առհասարակ Պարթևների մասին մի շարք հետաքրքրական տեղեկութիւններով հանգերձ, բոլորովին տարբեր են զբամների վերայ հիմնուած ստոյգ պատմութենից.—Հայ Նրշակունեաց պատմութիւնն ևս շատ տեղ հակառակ է ենում օտար պատմիչների աւելի արժանահաւատ աւանդութեանը. նորա ժամանակագրութիւնն ևս անգոհացուցիչ է, ուստի և երբեմն շփոթութիւն է ծագում պատմական անձների և անցքերի մէջ և այլն և այլն:

Ըրդեօք այս և սոցա նման այլ թերութիւնները առաջացել են մեր պատմագրահօր անգիտութենից, իւր աղբիւրներին չափազանց հաւատ ընծայելուց, թէ այլ պատճառներից,— այս գէպքում մեզ համար միւնցին է: Խորենացու Պատմութիւնը ունի բազմաթիւ անգոհացուցիչ կետեր. պատմական կրիտիկան գարձրել է իւր լուրջ ուշադրութիւնը դոցա վերայ, և այժմ ամբողջ զբականութիւն ունինք Խորենացու մասին, որ տարեյտարի աւելանում է և գեռ կաւելանայ, —մի քննա-

գատութիւն, որ սոհել խիստ է և անողոք, թէե ոչ անարդար:—Խորենացու Պատմութիւնը պատկանում է պատմական կրիտիկային:

Եյս ընդհանուր տեսութենից՝ անցնինք այժմ ։ Ատե-
փանէի թաղպմանութեանը:

Інорбеннаагін` իրեւ արեւելեան պատմազիր, որ իւր հայրե-
նիքի նկարագրութեան հետ միասին յաճախ շատ կարեռ տեղե-
կութիւններ է հաղորդում նորա սահմանակից աղքերի մասին,
վաղուց գրաւել է իւր վերայ ուսումնական աշխարհի ուշա-
գրութիւնը: Նորա առաջին քաղուածօրէն փոխադրութիւնը լս-
տվն լիզուովլոյս տեսաւ 1733 թ. և երկո տարուց յետոյ—Պ իս-
տոնիան եղայլների լիակատար լադին թարգմանութիւնը: Եյ-
նուշետեւ մէկը միւսի հետքից երեան են գալիս՝ առաջին սուս-
չէն (1809), առաջին ֆրանւէրէն (1836), առաջին իրաւէրէն (1841),
երկրորդ ֆրանւէրէն (1842), երկրորդ իրաւէրէն (1849—50) եր-
կրորդ սուսւէրէն (1858), երբորդ ֆրանւէրէն *) ևս և գերմանւէրէն
(միանուագ՝ 1869) թարգմանութիւնները՝ իւրաքանչիւրը տար-
բեր աջողութեամբ: Այցա վերայ աւելցնելու է երկու աշխար-
հաբար թարգմանութիւն ևս, որ ։ Ատեփանէն բնաւ չէ
յիշում: և թէսկէտ դրքա լիակատար չեն, բայց այնուամենայ-
նիւ Խորենացու Պատմութեան բնագրի մէտարդիչ սուսւէրէն
են ամփոփում և որ կարեորն է, դրքա էին և աշխարհաբար
թարգմանութեան առաջին դրբերը: Խօսք Մ. Գարագաշեանի
«Քննական Պատմութիւն Հայոց» (Պօլիս, 1880) աշխատու-
թեան և Մ. Էմինի Մոiseй Խօրենսկій և древній эпосъ армянскій
հետազօտութեան Պ. Խ. ի հայերէն թարգմանութեան **)
մասին է, որոնցից առաջնում բազմաթիւ գրւիսներ են մէջ
բերած Խորենացու բնագրից՝ զուգընթաց արևմտէան աշխար-
հաբար Ըստգանու-Շետամբ, իսկ երկրորդում նոյն Խորենացու
պատմութենից թարգմանուած են մեր՝ արևելքան աշխարհա-
բարով աղդային վէպեր պարունակող բոլոր գրւիսները: Եյս

^{*)} Ալավար 1857-ին է նշանակած փոխ. 1869 թ. (Տե՛ս
Վահագունիք):

**) Լոյս է տեսել Թիֆլիզ և ոչ Վոսկուա, ինչպէս սխալը մամբ նշանակել է ։ Ատեփանէն:

պիսի մի երևոյթ չէր կարող զանց առնել ։ Ատեփանէն, որ՝ ի դէպ թէ անդէպ, ակնարկումէ Խւրոպական լեզուներով գրուած այս կամ այն հետազօտութեան կամ յօդուածի վերայ, բայց մոռանումէ իւր աչքի առաջ եղածները, մոռանումէ ազգային գրականութիւնը Խւ այս անհոգութիւն համարեցէք, թէ մոռացումն, անշուշտ իրեն՝ ։ Ատեփանէին է վեասել եթէ նա նեղութիւն քաշէր օգտուել Ա. Գարագաշեանի աշխատութենից, շատ անհարթ և անյաջող կետեր իւր թարգմանութեան մէջ, որ այժմ աչք են ծակում, գուցէ այլ կերպարանքով ներկայանային մեզ:

Ի՞ոլոր յիշեալ թարգմանութիւններից՝ թէ՛ ճշտութեամբ և թէ մանաւանդ գասական մատենագրի գեղարուեստորէն վերաստեղծելով՝ իբրև նորա Ճիշտ կաղապարը, մեր կարծիքով Ա. Էմինինն է, որ թէկ ։ Ատեփանէն խոյս է տալիս խոստովանելու, բայց անտարակոյս իւր թարգմանութեան գլխաւոր՝ եթէ չասենք Թակ հիմն է եղած, գլխաւոր աղքիւրն ու օժանդակը Խորենացու բնագիրը ստոյգ ըմբռնելու. մի օժանդակ, որ երբեմն նաև ի չարն է գործ գրած, զգալի կերպով ենթարկելով ։ Ատեփանէի թարգմանութեան լեզուն ուսւելէնի ազդեցութեան:

Բնական էր ուրեմն սպասել որ վերջին (աշխարհաբար) թարգմանութիւնը՝ օգտուելով բոլոր նախընթացներից և նոցառութիւյայտնած քննադատական հետազօտութիւններից, ամենից աջողագոյնը՝ կ'լինի կամ դոնէ շատերից աւելի աջող: Յաւակցաբար այս տրամաբանական ենթարրութիւնը չէ արդարանում իրօք: Կնքը ։ Ատեփանէն այսպէս է որոշում իւր աշխատութիւնը, որ հարկ ենք համարում ամբողջապէս առաջքերել:

«Մի ծառայական (սորկական՝ է կամենում ասել) և անկանոն թարգմանութիւն անել դժուար գործ չէ: Առվելէս Խորենացու Պատմութեան այնպիսի մի Եաղջանունին պատրաստելու համար, որ ունենար իւր նշանակութիւնն, և կաշեու ժանենին ններակ հարստացնելու համար հարկաւոր էր մ.ծ աշխատութիւն և երկարատես ուսումնասիրութիւն: Առվելէսի Պատմութեան թարգմանութեան բնագրի զօրութիւնն ու վսեմութիւնը տալն ի հարկէ դժուար կ'լինի միշտ: Անք աշ-

խատեցինք, որ Ասրդմանունեան լըզուն, որչափ կարելի էր մօտ լինէր բնագրին և միենոյն ժամանակ հեշտ հասկանալի լինէր»: (Էջ Զ. Առաջարան): Եւ դարձեալ «Մենք շատ աշխատեցինք, որքան հնարաւոր էր, պահպանել մեր պատմահօր գեղեցիկ, ազգու, պարզ և համառօտախօս աճը և նորա հրաշաւկերտած բարդ բառերը մինչև իսկ, որտեղ կարելի է եղել զեղջել ենք բայերը, բնագրի համաձայն. իսկ տեղ տեղ աւելացրել ենք մեղանից բայեր, երբ իմաստը կարօղ էր անհասկանալի մնալ: Այսպէս աշխատելով պահպանել Առվակսի Ճըռ-նեան աճին մեր թարգմանութեան մէջ, սորա հետ մենք աշխատել ենք, որ մեր լեզուն մնար միշտ աշխարհաբար, ժողովրդական, և չկորցնէր իւր կենգանութիւնը» (Էջ ԶԵ. Անդ.):

Այս հատուածում, ինչպէս տեսնումէ ընթերցողը, շեշտուած են աշխարհաբար Ասրդմանունեան որպիսութիւնը, կաշեոր ծանօթունեաները որպէս և գրութեան լըզուն ու աճը որ գործ է ածել թարգմանիչը: Խոյն իսկ կարգով կ'քննէնք և մենք ։ Ստեփանէի աշխատութիւնը՝ Երեւ գլխաւոր բաժնի վերածելով մեր քննադատական նկատողութիւնները:

I.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ Բ:

Վենէրեւ սխալնէր կամ բնագրի չհասկացած տեղեր՝ յայտնի բան է, սակաւ են ։ Ստեփանէի թարգմանութեան մէջ, ինչու որ նա օգտուել է տասնեակ թարգմանութիւններով, և զարմանալի կ'լինէր, եթէ այդպիսի սխալնէր շատ լինէին: Թէպէտ թարգմանիչը քանիցս շեշտումէ պարծանկով, թէ Խորինացու բնագրի «գժուարիմաստ» շատ հատուածները ճիշտ և գիւղմբոնելի թարգմանելու համար նա ո՞րքան ժամեր է չարչարվել» (Էջ ԶԵ. Առաջ.): Բայց ի՞նչ հարկ ժամեր չարչարուելու, քանի որ այդ «գժուարիմաստ հատուածները» արդին թարգմանուած էին տասն անդամ ուրիշներից ու պարզուած: Ուրեմն ։ Ստեփանէին մնում էր միայն նոցա թարգմանութենից օգտուելով՝ փոխադրել բնագրի աշխարհաբարի:— Այս բաժնում մեր ուշագրութիւնը պէտք է դարձնենք զիշտառապէս ։ Ստեփանէի անյանը թարգմանած հատուածների վե-

րայ, որոց թիւ ու համար չ'կայ: Անշուշտ դժուար չէ նախընթաց թարգմանիչների միջնորդութեամբ հասկանալ Խորենացու արդարիւ սահեպ խթթիւը բաւական չէ նցյալիս պատմահօր բառերն ու աները ստրկօրէն աշխարհիկ լեզուի քերականական ձևերին դարձնել՝ շատ անգամ պահպանիլով թարգմանական ունին, և ոչ սակաւ՝ բնագրի մի բառը 4—5 բառով թարգմանելով, որով տգեղաբար սփռուում ու ճապաղուումէ ։ Ստեփանէի աշխարհաբարը՝ ընդհանրապէս զուրկ գեղարուեստական ողորկութենից: Նշխարհաբարի թարգմանիչը՝ առանց զգալապէս շեղուելու բնագրից, պէտք է հետեւէր մանաւանդ նոր լեզուի օրէնքներին և մեր ժամանակի մտածելու եղանակին. պէտք է իմանար նա՝ թէ բնագրի որ խօսքը կամ դարձուածը պահպանելու է և որը փոխելու նոր լեզուին. պէտք է յարմարցնէր հինը նորին, աւելի սիրուն, քան թէ բառին միտ դնէր, որպէս և բնաւ անփոյթ չ'առնէր գրականական և գեղարուեստական պահանջները:

Ենաջող թարգմանութեան անթիւ օրինակներից առաջ բերենք միւերկու տասնեւակ:

3 էջ. — Աստուածային շնորհի ու վերա անսպառ աղբեցունիւնը և քո հրեւերի վերա Ա. Հոգու շարժումը իմացայ այս ու գեղեցիկ խնդրի միջոցով: — «Ախ» ու վերա՝ հայցականներից յետոյ գնելու է, երկրորդ՝ լաւագոյն էր աղբունի ասել, փոխ. ազգեցութեան, երրորդ՝ խորհուրդների, փոխ. մտքերիդ և վերջապէս՝ ու այս գ. խնդրի, փոխ. այս քո գ. խնդրի: — Ուստի լաւագոյն էր ասել. Աստուածային շնորհի անսպառ աղբումը քո վերայ և Ա. Հոգու շարժումը քո խորհուրդներիդ վերայ իմացայ այս գեղեցիկ խընդրիդ միջոցով:

» » — ոչ թէ միայն պէտք էր քեզ գովել, այլ և աղօթել քո վերա...: Ուեւ բնագիրն ունի՝ «աղօթել ի վերայ քո», բայց նոր լեզուում (որպէս և բարբառներում) այդ ոճը այլ իմաստ ունի. աղօթել մի բանի վերայ կ'նշանակէ մի բանով հմայել, կախարդել: — Ասելու էր. աղօթել քեզ համար:

31 էջ. — Իսկ Բէլը իւր յանդուգն և անձունի զօրքով զարիւայր վառը ջետ նման շտապումէ...: — Բոլորովին կորչումէ բնագրի աղդու ոճը և գեղեցիկ համեմատութիւնը. «որպէս յորին

ինչ սաստիկ ընդ զառիվայր հեղեալ»: — Ա աւագոյն էր ասել. Ի՞էլը լեռնից վայր թափուող հեղեղի նման շտապում էր...:

32—33 էջ. — «Պապէբազզ», հայր և ծախառ բառերի նրբութիւնը ամենեին չէ զանազանուում. ստէալ մէկը միւսի տեղէ գործածուած:

34 էջ. — Ի՞էլի գիակը հրամայումէ (Հայկ) թաղել բարձր տեղում, որ տեսնեն նոր (?) կանայքն և որդիներն: — Որի՞ կանայքը՝ Ի՞էլի՞ արդեօք, թէ Հայկի: Հասկանալի է, որ Ի՞էլինը չէր կարող լինել: իսկ եթէ Հայկի՝ այն ժամանակ ասելու էր. Ե՞ր կանայքն...:

35 էջ. — աղբիւրների ականք մօտ: Աղբիւրների մասին ով սկիզբ կ'ասէ. ակն կամ ակունք գնելու էր: Ուրեմն՝ աղբիւրների ական մօտ:

39 էջ. — Արամը... հաւաքումէ ընտանի քաջ աղեղնաւոր մարդիկների բազմութիւն, հզօր նիզակաւորներին, երիտասարդներին, ազնիւներին, յաջողակ ձեռք և կտրիճ դէմք ունեցողներին, սրտով միշտ պատրաստներին, թուով մօտ յիսուն հազար: — Իացի հոլովների անհանոն գործածութենից՝ խառն և ծախառ է թարգմանութիւնը:

47 էջ. — Իարեգնաց գետերի հոսելու յայնը (?): Ինագիրն ունի ջրի ձայնին յատուկ «կարկաչասահութիւն» գեղեցիկ բառը, որից գոնէ կարկաչահոսութիւնն փոխադրելու էր կամ անփոփոխ թողնելու:

58 էջ. — (Ա արբակէս)... կենցաղավարութեան մէջ շատ խորամանկ և պատերազմում երեսով (?) մարդ: — Անհասկանալի է վերջին դարձուածը: Ինագրի «երեսաւոր» բառը քաջ, անվախն է նշանակում: իսկ թարգմանչի երեսովը աւելի անելի (անամօթ) բառի հակառակը կարող էր լինել որ այստեղ բնաւ իմաստ չ'ունի:

66 էջ. — Երբ երկար նայումէի սարի վերա ինձ երկեցաւ մի կիս բարձր առջի ծայրի վերա նստած, ծիրանի հագած և երկնագոյն քողով, գեղեցիկ առէւշով բարձրահասակ, կարմիր այտերով և բռնված էր երկունքի ցաւով: — «Ա, ախ! ի՞նչ հարկ հայոց վասն բառը միշտ պարսկական առջով թարգմանել, երկրորդ՝ լաւագոյն էր ասել՝ նայումէի դեպէ լեռառ կամ լեռնիվեր. երրորդ՝ անորոշ բարձր առջ գործածութիւնը տեղիք է տալիս կարծելու, թէ այս մի նոր, երկրորդ՝ բարձր սար էր՝ տարբեր առաջնից. չորրորդ՝ էր

էական բայը աւելորդ է այստեղ և վերջապէս՝ Երիտանէի փոխարէն աւելի հասկանալի կ'լինէր ծննդական ասել: — Այս հատուածը մնք այսպէս կ'թարգմանենք. Ո՞նչըեռ ես երկար նայում էի լեռնիվեր, մի կին ծիրանազգեստ, երկնագոյն քօղով երեցաւ այն բարձր լեռան գագաթին՝ աշըլ բարձրահասակ, կարմրայտ և ծննդական ցաւով բռնուած: — Դիտելու է, որ աշըլ ոչ միայն գեղեցիկ ապէց ունեցող նշանակում, այլ միևնոյն ժամանակ և մժ, խոլը աչքեր:

69 էջ. — ... աւելի հասպապոն և խոր հասպափէլ այն սերը, որ կայ մեր մէջ: — Առանց միևնոյն բառը կրկնելու և նաև հաղասութիւնը երկարացնելու՝ ասելու էր. աւելի ամուր և խոր հաստատել մեր մէջ եղած սէրը:

70 էջ. — Ո-ղարիստածը գալիս է. փոխ. գեսպանը ասելու:

72 էջ. — Այնուհետև Վժդահակը վրանդիլում. որովհետև նապէտք է պատերազմէր Հայկազնի հետ, և այն ոչ փոքր զօրքով: — Ա երջին դարձուածը պարզ չէ. Խորենացին ասումէ այն ժամանակ վտանգ էր սպառնում Վժդահակին՝ պատահել Հայկազնին պատերազմով, թէև սակաւ չէր իւր զօրքերի թիւը:

85 էջ. — Վժժմ գրումը քեզ ինչ որ մեր աշխարհի առանձին գործեր կան, Երկրորդ գիրքը սկսելով: ... Ատորագիծ բառերը հազիւ թէ հասկանալի լինին ընթերցողին. Նախադասութեան իմաստը այն է, թէ այս՝ Երկրորդ Գրքից սկսած այլ ևս մէջ բերելու չեմ զուգընթացաբար ուրիշ ազգերի պատմութիւնը, ինչպէս այդ արի նախընթաց գրքում, այլ առանձինակետ մեր ազգինը միայն: Ուստի յիշեալ հատուածը լաւագոյն էր թարգմանել. Վժժմ՝ այս Երկրորդ Գրքում գրում եմ քեզ՝ առանձնապէս մեր աշխարհի անցքերը, սկսելով Վզէքսանդրի թագաւորութենից....:

91 էջ. — ... զգուշանումեմ այն սիրելի մարդին համար յայտնի և մանրամասնաբար գրել որովհետև միայն տեղերը նշանակելով անցայ, ապո-դո-նի-նը (sic!) և կարգը բաց թողնելով: — Աւրեմն խորենացին դիտմամբ զանց է առնում իւր պատմած անցքերի արո-դո-նի-նը: Ո՞իթէ կարելի՞ բան է: ։ Ատեփանէն, որ իւր աշխատութեան ընթացքում բազմիցս օգտուում է Խորենացու Պատմութեան Լամբրոնեան կոչուած օրինակով, չէ կարողացել պարզել այս աղաւաղած հատուածը յիշեալ գրչագրի միջոցով: Ո՞ինչ գեռ այդ օրինակը իւր աղթանակապատճ ընթերցուածով բոլորովին այլ

կերպարանք է տալիս իննգրին՝ յայտնի բան է ազատելով Խորենացու սպոնդակիրունինը անհիմն կասկածներից: — Ա ենետկի տպագրութիւնը, որից թարգմանել է ։ Ստեփանէն, ունի այստեղ: — «այլ խորեմ աստ վասն սիրելի առնն յայտնի գրել զամենայն և մանրապատռմ: զի անցի միայն զտեղիսն նշանակելով, զհաւաստին և զո՞ն ի բաց թողեալ»: Իսկ Լամբր. օրինակը ունի. «այլ խորեմ..... զի անցից նշանակելով միայն զտեղիսն հաւաստի (sic!) և զո՞ն ի բաց թողեալ»: Ուրեմն թարգմանելու է.... որովհետեւ կանցնիմ՝ միայն հաւաստի տեղերը նշանակելով և կարգը բաց թողնելով: — Խորենացին կամի ասել թէ՝ այն հրաշալի մարդու մասին գրելիս, ես միայն հաւաստի տեղերը կնշանակեմ, ընդհանուր, յայտնի կէտերը կ' չօշափեմ, իսկ անցքերի մէկը միւսի հետքից յաջորդաբար դասաւորութիւնը, կարծը բաց կ' թողնեմ:

98 էջ. — (Տորքի անհաւատալի ուժի մասին պատմած զրոյցի առթիւ) Ո՞՛չ, ստորին մէծ առասպեկտ է...: Բնագիրն ունի. Ո՞՛չ, կարի է առասպեկտ»: — Արդեօք կար նշանակում է ստորին մէծ. և ապա՝ ի՞նչ ասել է՝ մէծ առասպեկտ: Լաւագոյն էր ասել. Ո՞՛չ չափազանց է այս առասպեկտ:

120 էջ. — (Վրտաւազդ) արդարև վորի ծառայ և ստրուկ լինելով, նա աղիքներն էր մեծացնում: — Ա երջին խօսքերը թարգմանութիւն է բնագրի՝ «աղբիւս մեծացուցանէր», այսինքն՝ իւր աղիքն էր շատացնում, մի ասացուած, որով սուր և կծու յանդիմանութիւն է անում պատմահայրը ծոյլ և որկրամոլ թագաւորին: Ուստի աղիքներն մասին խօսք չէ կարող լինել այսաեղ: Իսկ եթէ ։ Ստեփանէն անպատճառ ուզումէր խոյս տալ այդ՝ իւր կարծիքով, անպատշաճ ասացուածից, գոնէ ասէր ժողովրդական ոճով: — Եստիանը հասպացնել որ գործ է ածուում այժմ նոյն իմաստով, ինչպէս հընոււմը «աղբիւս մեծացուցանել»:

146 էջ. — Երուանդը մտածելով թէ ի՞նչպիսի լարն է մեծանում Մարերի մէջ նորս թագաւորութեան համար, վոխ. Երուանդը մտածելով՝ թէ իւր թագաւորութեան համար որպիսի չարիք և մնանում Մարաց մէջ:

149 էջ. — ...ներսում արգելումէ արտադ լայրէ (?) այծեամներ: — Կախ՝ այծեամները միշտ լայրէ են լինում և ապա՝ վոխ, արտադ ասելու, լաւագոյն էր արագընթաց, արագոտն կամ մի այլ այսպիսի բարդ ածական գնել:

160 էջ.—Ե՛կ համաձայնի՞ր այդ պատճենին տալու ինձ, որ
Ալանների աղջիկն եմ գեղեցիկ ալեքրավում...—Ընթերցողը սպասում է
իմանալ՝ ինչո՞վ էր այլ ևս օժտուած Ալանաց աղջեկը բացի գե-
ղեցիկ աշքերից. իսկ յարաբերական (որ...) նախադասութիւնը ի զուր
երկարացնում է Խորենացու ամփոփ և ազգու ոճը, որ լաւագոյն
էր թարգմանել այսպէս.—Ե՛կ, լսի՞ր ինձ՝ Ալանաց աշագեղ աղջ-
կանս, և արձակի՞ր պատանուն (և ոչ թէ՝ պատանին):

161 էջ.—... Ալանների այս գաղ կոյս օրիորդի համար:—
Ինագրի «քաջազգի» կամ պէտք էր պահպանել և կամ՝ քաջա-
տոհմիկ թարգմանել, որ աղնուատոհմէ նշանակում և ոչ՝ գաղ:

» — Հեծաւ քաջ թագաւոր Արտաշէս սէտա գեղեցիկ յիտոն
վլրա:—«Լախ» յէ հեծնելեն ասում և ոչ՝ յիտոն վլրա հեծնել.
յետոյ՝ ինչո՞ւ սէտա և ոչ թէ սև, և վերջապէս՝ գեղեցիկ սև յէ
և ոչ թէ՝ սև գեղեցիկ յէ: Աւրեմն ասելու էր. հեծաւ քաջ թա-
գաւորն Արտաշէս իւր գեղեցիկ սև ձին:

163 էջ.—Աիրելի էր ինձ ասել քաջ Ամբատի համար ևս.
որովհետո արդարեւ տռասպելլը շատ հեռու չէ Ճշմարտութենից.
որովհետո նա ուներ անդամների մշտո-նիւն քաջութեան համեմատ
և առաքինութեամբ ոգնելերին գրաւումէր:—«Լախ» լաւագոյն էր—
սաւը մէկի հասնի և ոչ թէ՝ մէկի համար. երկրորդ՝ որովհետո շաղ-
կապի կրկնելուն ամենեին հարկ չ'կար. երրորդ՝ առաւապել խօսքը
լաւ կ'լիներ աւելի ճիշտ բացատրել իբրև աղդային վլր, որ և
անշուշտ զօրութեամբ է իմացուում այստեղ (հմմտ. նաև սոյն
գրքի՝ ԾՈՒՅ գլուխը). չորրորդ՝ բնագրի «Հասակ անդամոց» խօս-
քերը անդամների մշտո-նիւն թարգմանելլը տգեղ է. վերջապէս
ինչո՞ւ որոշակի՝ ոգնելերին է գնում, փոխանակ անորոշ ասելու:—
Այս հատուածը մենք այսպէս կ'թարգմանենք. Աիրելի էր ինձ
պատմել և Ամբատի մասին. որովհետև ազգային վէպը արդարեւ
ամենեին հեռու չէ Ճշմարտութենից, ինչու որ իւր քաջութեան
համեմատ ուներ նա և զուգապատշաճ անդամներ և իւր առաքի-
նութեամբ գրաւող էր սրտերի (կամ՝ գրաւում էր շատերի սիրտը):

203 էջ.—Աքանչելի հայրը ինչար զարմանալի որդիներ ու-
նէր:—Ինագիրն ունի. «Հօր սքանչելլոյ որդիք զարմանալիք»,
ուստի երեսում է, որ ինչար լառը բոլորովին աւելորդ է, իսկ խօս-
քերի դասաւորութիւնը անկանոն. Ասելու էր. Աքանչելի հայրը
ուներ և զարմանալի որդիք:

207 էջ.—‘Աամիանգամ քան հին Եղիանանը ասելի ապեց (?):—
Կոսէ ասելու էր. նա միանգամ աւելի քաջութիւն ցոյց տուեց
քան հնումը Եղիանանը:

225 էջ.—Վրիգոր սիրեց անապատները և ի-ը մէջ ապշելը (?)
մտքի հանդարտութեամբ:—Ինագրի բառացի թարգմանութիւնն է,
բայց ի՞նչ օգուտ, քանի որ խորթ են մեզ այդ դարձուածները և
ո՞չ վայելուչ:—Աարելի էր ասել. Վրիգոր սիրեց անապատները և
իւր մէջ ամփոփուած, խաղաղ մտքով ապրելը:

232 էջ.—Վոցա շատախօսութիւնն հոսումէ առատ ինչո՞ւ
աղբիւրից, ինչո՞ւ ասաց հներից մէկը և գագացնո-մէ փողոցի բո-
լոր արբեցողներին:—Ճարկ չ'կար կրկնելու՝ ինչո՞ւ նախադրու-
թիւնը. բայցի դորանից՝ բնագրի «գկծեցուցանել» բայը անցածող
է թարգմանած: Ո՞եր կարծիքով լաւ կ'լինէր ասել այսպէս:—
Վոցա շատախօսութեան հոսանքը բղիսում է՝ ինչպէս աղբիւրից, որ-
պէս ասաց հներից մէկը, և գրգում (բորբոքումէ) փողոցի ամեն
արբեցողներին:—Վաստեղ մենք դիտմամբ պահպանեցինք բնագրի
«հոսանք» և «բղիսել» (Լամբր.Օր.) բառերը:

236 էջ.—Վախարաբութիւնները մին միւսի վերա ելան (?):...:
Ճ. Ստեփանէն ստրկօրէն թարգմանելով բնագրի «յարեան ազգ-
յազդի վերայ նախարաբութիւնք», չէ մտածել, որ այժմեան լեռ-
զուում այդ դարձուածը այնպէս չէ հասկացուում, ինչպէս հնումը:
Վայժմ մենք ասում ենք. մին միւսի դեմք ելնել:

257 էջ.—Ո՞եճն Վերսէսը, որդին Վթանագինէսի, ո՞վ Յու-
սիկի, ո՞վ Արթանէսի, ո՞վ Ա. Վրիգորի որդին էր:—Վայ ոչը
միանգամայն անսովոր է աշխարհաբար լեզուին, նաև տգեղ: Եթէ
թարգմանիչը անպատճառ կամէր բնագրին շատ մօտ լինել՝ գոնէ
փոխելու էր յարաբերական գերանունը ցուցականի և ասելու էր.
Ո՞եճն Վերսէսը՝ որդի Վթանագինէսի, իսկ սա՝ Յուսիկի, սա՝
Արթանէսի և սա՝ Ա. Վրիգորի:

264 էջ.—Ո՞ի... սուտանուն քահանայի ձեռով կեանքի իւ-
րակի (?) մէջ մահացնող գեղ խառնելով, տուեց Ողոմպիադային:...:—
Ինագրին ունի. «ի կենաց գեղն զմահացուն (այսինքն՝ գեղն)
խառնեալ», ուր գեղեցիկ կերպով հակասդրուած են միմեանց կեանքէ
և մահուան գեղը (որ է՝ ս. հաղորդութիւնը և թոյնը): Ճ. Ստե-
փանէն՝ չըմբռնելով այդ նրբութիւնը, առաջինը վերակրութէ թարգ-
մանում և երկրորդը՝ դեղն լոկ թոյն բառի նշանակութեամբ: Ո՞եր

կարծիքով՝ աւելի վայելուց կ'լինէր ասել. — ... կենսատու դեղի մէջ մահաբեր գեղը խառնելով:

276 էջ. — 1. Ա. գլուի առաջին մասը ։ Ատեփանէի թարգմանութեամբ միանդամայն խառնէ և անհասկանալի. նա չէ կարողացել որոշել բնագրի «Խոր» («Հոր» ևս) և «Փոս» բառերը, որոնցից առաջինը արուեստապէս շինած՝ այժմ ևս սովորական, հորն է, ուր ցորեն և այլ արմտիք են պահում գիւղերում. իսկ միւսը՝ ուղղակի ֆոս, գետնի բնական պատառուած է նշանակում կամ խորիորատ: Այդ երկու նշանակութիւնը շփոթելով և երկուսն ևս միայն իսպ հասկանալով, ։ Ատեփանէն աղաւաղել է քնագրի իմաստը: «Իս ասում է. — (Արշակ հրամայում է սպանուած կամսարականների համբարները բերել հաւաքել Արմաւիր. ուստի) «նոքա կոչելով երկու շատ խոր և սաստիկ լայն կոռեց Կախճաւան գիւղում, բոլորը բերին նոցա աւանի սայլերով»: — Պէտք էր ասել ոչ թէ փողեցին փոսեց, այլ՝ ճանցին (կամսարականների) հորեցը որ Կախճաւան գիւղումն էին և նոյն աւանի սայլերով (հորերում պահուած կամսարականների) մթերքը Արմաւիր կրեցին: — Որպէս և փոքր ինչ ստորեւ. — «Արշակ... հրամայում է սայլորդիններին նոյն փոսի վերա փայտից կախել»: — Ասելու էր. Արշակ հրամայում է փայտից կախել սայլորդիններին նոյն հորեցի վերայ: — Ծառեւ Ա ենետկ. տպ. «ի վերայ խորոյն» ունի, բայց Ա ամբը. Օր. — «ի վերայ խորոցն», որից և պէտք է օգտուէր ։ Ատեփանէն:

317 էջ. — Խոսրով Կարգմանացի գինով սաստիկ արշելով. Ետեն էր ընկնում ձարտար ջնար նոււագող մի կնոջ: — Բնագրի «ի գինոջ զեղիսեալ» այստեղ չէ նշանակում սաստիկ արշել այլ՝ գինու չափը միայն անցընել: Նետագայ տողերից ևս երկումէ, որ Խոսրով սաստիկ հարբած չէր կարող լինել:

343 էջ. — Որովհետեւ նա (Անեսրոպ) հրեշտակի տեսք ունէր, մտքով — արեղծօղ, խօսերով — պայծառ, գործերով — համբերօղ (?), մարմնով — լար կայլը (?), յւերով — անպատճելի, խորհրդակցութեամբ — մեծ, հաւատով — ուղիղ, յոյսով — համբերօղ (կրկին), սէրով — անկեղծ, ուսուցանելում — չ'ձանձրացող: — Այս գեղեցիկ հատուածը, որով Խորենացին այնպէս գեղարուեստորէն՝ կտրուկ և ազդուխոսքերով իւր մեծ վարդապետի նկարագիրն է տալիս մեղ, թոյլ է, անգոյն և ոչ միշտ ստոյդ ։ Ատեփանէի թարգմանութեամբ: Աշեմատութեան համար առաջ բերենք բնագիրը. — «Ա ասն զի (Անես-

րոպ) գոյր տեսլեամբ հրեշտականնան, մտօք ծննդական, բանիւք պայծառ, գործովք ժուժկալ, մարմնով արտափայլեալ, սարասիւք անձառ, խորհրդակցութեամբ մեծ, հաւատով ուղիղ, յուսով համբերող, սիրով անկեղծաւոր, ուսուցանելով անձանձրոյթ»: — Ահա և մեր թարգմանութիւնը. — Որովհետե. Վեսրոպ տեսքով հրեշտականնան էր, մտքով՝ բեղմնաւոր, խօսքով՝ պերճ, գործքով՝ տոկուն, մարմնով՝ պայծառ, բարբով՝ զարմանալի, խորհրդակցութեամբ՝ մեծ, հաւատով՝ ուղիղ, յուսով՝ համբերող, սիրով՝ անկեղծ, ուսուցանելովը՝ անձանձիր:

Վաշ թարգմանչի կարեռագօյն արժանաւորութիւններից մէկն ևս այն է, որ նա իւր թարգմանութեան մէջ կարողանայ արտափայլել տալ ցոլացնել բնազրի սին, բնորոշ ոճը, հեղինակին սեպհական՝ միտք արտայայտելու ձևն ու եղանակը, նորա ներքին ու արտաքին՝ մտքի ու լեզուի յատկանիշները, — ի՞նչ լեզրով և թարգմանելիս լինէր: Այս տեսակետից միայն կարող էր արդարանալ հայ ընթերցողի առաջ ականաւոր ֆրանսիացու հանձարեղ խօսքը — «le style — c'est l'homme» վերաբերութեամբ Խորենացուն, եթէ աշխարհաբարի թարգմանիչը լրջօրէն ըմբռնէր իւր նպատակը և կատարէր իւր գործը այնպէս, ինչպէս հարկն է: Վինչդեռ ։ Ստեփանէի թարգմանութեան մէջ Խորենացին բնաւ չէ երեսում մեզ իւր տիրական յատկանիշներով որպան որ սա սեղմէ ու հակիրճ, այնքան ինքը ճապաղէ, ողքան սա համառօտախօս է ու ազգու, այնքան ինքը երկարաբան է ու գանդաղ ողքան սա հարուստ է ոճերով ու բառերով, որպէս և աղատ ու զիւրաթեք համաձայնութեան կողմից, այնքան պակասաւոր է ինքը, այնքան սահմանափակ ու տաղտուկ նոյն մասերում ողքան սա ողորկ է ու վայելու և գեղարուեստական ամբողջութիւն է ներկայացնում լեզուի ու շարագրութեան կողմից, այնքան ինքը անմշակ է և անձաշակ, այնքան հեռու գեղարուեստական կատարելութենից: Եւ սորա պատճառը ոչ «աշխարհաբարի ճապաղութիւնն է» և ոչ այն՝ թէ նա «չափազանց աղքատ է բառերով» (ՉՊ. Առաջ), որպէս արդարանալ է ուղում ։ Ստեփանէն: Ոչ ճելո մասեր ենթայ: Պէտք է միայն քաջ տեղեակ լինել և հմտութեամբ իշխել այն լեզուին, որով թարգմանում ինք աշահ յաջողութեան բոլոր գաղտնիքը, որ անցայտ է մնացել ։ Ստեփանէին:

II.

ԱՌԵՋԵԲՆԵՐ ԵՒ ԾՄՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Յոյց տալով թէ ո՞չսափ անցածողէ Խորենացու ընագրի աշխարհաբար թարգմանութիւնը թէ՛ ճշութեան և թէ՛ պականական պահանջների կողմից, — անցնինք այժմ ։ Ստեփանէի աշխատութեան այն մասին, ուր նա իբր ինքնուրոյն հետազոտող ու լուսաբանող է ներկայանում ընթերցողին իւր Առաջաբանի և Օանօթութիւնների մէջ և տեսնե՞նք, ո՞չսափ գոհացուցիչ է նա և այս բաժիններում:

Ակսենք Առաջաբանից: — Եթէ չհաշուենք 11 եվես տպագրական սխալներն ու ուղղագրութիւնները (որ այսուամենայնիւ չեն սպառում զրկի անթիւ վրիպակները) *), 82 երես կ'մնայ նուիրած բուն Առաջաբանին, ուր ։ Ստեփանէն՝ առաջքերելով մի ընդհանուր տեսութիւն հայոց թագաւորութեան և նախարարական կազմակերպութեան մասին, անցնումէ այնուհետեւ Խորենացու կենսագրութեանը և ապա բաւական ընդարձակ խօսումէ նորա մատենագրութեան և մասնաւորապէս Հայոց Պատմութեան աղբիւրների որպէս և նոյն գործի հրատարակութիւնների ու թարգմանութիւնների վերայ:

Ընթերցողի աչքը շանումէ գիտելով հայ և օտար լեզուով այն բազմաթիւ գիտական ակնարկութիւնները և վկայութիւնները, որ ։ Ստեփանէն մէջ է բերումիւր Առաջաբանում: Եւ արդարեւ. թէպէտ ոչ այն ամեն գրուածները,

*) Ախալներից կարեորէ յիշել. — Առաջաբանում՝ էջերը հայերէն թուագրելիս, ։ Ստեփանէն Ճ՛մ. (109) էջից յետոյ անմիջապէս գնումէ Մ (200), Մ՛ (201), Մ՛ (202), փոխ. Ճ՛մ. Ճ՛մ. Ճ՛մ. Ճ՛մ. Քրելու: — 495-որդ ծանօթ. մէջ Յովհան Մանդակնի է գրած, փոխ. Յ. Պամիկոննեան ասելու: — 229-որդ ծանօթ. մէջ Դիլընէն Էtudes sur les chants-historiques et les traditions populaires de l'ancienne Arménie d'après une Dissertation de M. Emin, (Journ. Asiat. 1852). ։ Ստեփանէն Ա. Լամբլուսային է վերագրում սխալմամբ: — Օանօթութիւնների մէջ պատահած յունացէն մի քանի բառերը մանաւանդ աչքի են զարկում իրենց տգէտ ուղղագրութեամբ. (տես ծան. 347, 433...): — 180-որդ ծան. մէջ Փաւստոս Բուղանդի Ա ենետ. տպագրութիւնը 1862 է նշանակած, փոխ. 1832 թ.:

որ նու յիշում է, հակառիք աչքից է անցրել բայց և այնպէս բաւական տեղեկութիւն ունի հաւաքած, ընդհանրապէս ծանօթ է Խորենացու մասին լոյս տեսած գրութիւններին և քննական յօդուածներին։ Սակայն այսու հանդերձ նկատելի է և այն, որ այս բոլորը մնացել է նորա համար իբրև հումնին. նա բնաւ չէ մշտկել այդ նիւթերը իւր համար, չէ տուել նոցակենականի կապերով մի ամբողջութիւն. այլ զանազան աղբիւրներից քաղուած տեղեկութիւնները մնացել են նորա աշխատութեան մեջ հատ հատ, բաժան բաժան և արուեստապէս միայն կապուած։ Ուստի շատ գիւրին է քայլ առ քայլ հետեւ նորան և մի առ մի նշանակել՝ թէ որ հատուածը որ աղբիւրից է հանուած, թէև ըստ սովորութեան՝ ։ Ստեփանէն առանձին մեծ հաճութիւն չէ շոյց տալիս իւր աղբիւրները որոշակի յիշելու նաև այնակը ուր նա ամբողջ երեսներ ոչ թէ քաղուածօրէն է փոխազրում, այլ բառացի Ասրբնանոտ։— Եյտէ՛ Ըստաջարանի սկզբից մինչև ԻԲ. երեսը ողբանն թալդմանուած է հանդուցեալ Վ. Պատկանէանի Բιбліограф. ուշերք արմանական պատմուածից, երես 4—10, կրկնելով հանդերձ յարգելի գիտնականի՝ ըստ իս, սխալ կարծիքը, — մի տեսակ աղջային թերութիւն կամ արատ համարել հայերի համար նոցա՝ աշխահակալական ձգուամներից զուրկ լինելը, որ իբր թէ արգելք եղաւ նոցա մի հզօր պետութիւն ստեղծելու. թէև նոյն այդ աշխարհակալական ձգուամներն էին, որ տապալեցին և խապատ անհետ արին Խորենատանցոց, Մարաց, Կարթաղինացոց և այլ շատ զօրեղ աղջերի պետութիւնները, իսկ հայերը՝ թերեւս չնորհիւ այդ աղջային Աւրո-Աւան, պահպանեցին իրենց գոյութիւնը։ Դնչ և իցէ՛—Վ. Պատկանէանի յիշեալ գրուածը գեռ 1880 թ. լցու տեսաւ «Փորձի» առաջին համարում՝ բաւական ընտիր թարգմանութեամբ։ Օարմանալի է, որ եւ բոստական լեզուներով ամեն մանր ու խոշոր զրքեր ու յօդուածներ մանրամասնօրէն նշանակող ։ Ստեփանէն ոչինչ չէ յիշում «Փորձի» մասին։ Բայց արմէր համեմատել այս երկու թարգմանութիւնները—

Եյտուհեակ Վ. Լյնի Ըստաջարանից ուղղակի հանել է ։ Ստեփանէն Խորենացու կենսագրութեան և նորա Պատմութեան աղբիւրներին վերաբերեալ մասերը (Համեմատէ՛ Պредисловіе և

Ист. М. Хоренского стр. 2—5, 6—16. և Հ. Ստեփանէի Սոռ-
ջաբանի էջ Եր—1, օվե—կՊ և այլն):

‘Նոյն աղքիւրների որպէս և Պատմութեան այլ և այլ
հրատարակութիւնների և թարգմաննութիւնների մասին եղած
տեղեկութիւնները համարեա բոլորը առնուած են Լանդլուցից
(Sels Collection des Histor. Arméniens. T. II. p. 47—52), ուր և իւր
անհոգութեան պատճառով ։ Ստեփանէն ֆրանսիացի թարգ-
մանչի մի թերութեան վերայ միւսն ևս ինքնէ աւելացնում
զանց առնելով նորա նշանակած Խորենացու Պատմութեան
1752 թ. Վենետիկի տպագրութիւնը և բնաւ չ'յիշելով նորա
հետ միասին Պօլսի նոյնանուագ հրատարակութիւնը, ինչպէս
արդէն նկատել էր «Երաքս» 1889 թ. Բ. գրքում ‘Կամ-
մատենախօսը’:

Անտես արած գլուածներից յիշելու է ‘Խորայր Տիւզան-
գացու 1887 թ. հրատարակած Քաննասիրի» Բ. տետրը, որ ամ-
բողջապէս նուիլուած է Խորենացու անձնն և նորա Պատմու-
թեանը: Եյս աշխատութեան մէջ մանաւանդ արժանի են ու-
շալիքութեան՝ նորա վերջը տեղաւորուած (և տակաւին ան-
կատար) Խորենացու լիզուի ու ոճերի բաղմաթիւ նմանու-
թիւնները և օաար մատենագիրների հայ թարգմաննութիւն-
ների հետ (Սուտ-Կալլսաթէնէս, Փիլոն Եբրայեցի, Գրիգոր
‘Նազիանզացի և Գրիգոր ‘Նիւսացի): Եյս նմանութիւնները
կարող էին շատ նպաստել ։ Ստեփանէին մանաւանդ այն-
տեղ, ուր նա առաջ է բերում Լամբրոնացու Օրինակ կոչուած՝
Խորենացու Պատմութեան յայսնի գրչագրի տարբեր ընթեր-
ցուածները որոնցից շատերը միանգամայն ստուգուում և
հաստատուում են յիշեալ չորս թարգմաննութիւնների համեմա-
տութիւններով: Եհա գեղեցիկ գեպք Լամբրոնեան Օրինակի
գերազանցութիւնը արդեւամբ ապացուցանելու: Եւ սակայն
աշխարհաբար թարգմանչին անծանօթ է մնայել պ. ‘Խորայրի
հետաքրքրական գրուածը:— Եյսու ամենայնիւ այդ ընտիր
գրչագրի ընթերցուածով օգտուելը մի արժանաւորութիւն է
։ Ստեփանէի աշխատութեան մէջ որ չենք կարող ուրա-
նար բաւական թուով շփոթ կամ եղծուած կեաեր պարզուած
են գորա օգնութեամբ. թէպէտ նաև վերը բերուած օրինակ-
ներից կարելի էր գիտել թէ այդ փոխառութիւնը կարելօյն

շափ ընդարձակ և լիամասն չէ եղած: Խոկ ինչ վերաբերումէ
։ Ստեփանէի այն խօսքերին, թէ Աամբոնեան Օրինակից
ոչ մի թարգմանիչը չէ օգտուել, այս ճիշտ չէ: Յայտնի բան
է Վ. Եմինը չէր կարող օգտուել այդ օրինակից, որովհետեւ
նորա թարգմանութիւնը լոյս տեսաւ Կարինեանցի հրատա-
րակութեան հետ միանուադ, այն է 1858 թ: Եյնուշեան
երկու թարգմանութիւնն է արած Խորենացու Պատմութեան՝
գերմաներէն և ֆրանսերէն, երկումն ևս նոյնանուադ—1869 թ:
Դեկմանացի թարգմանիչը արդարեւ չէ յիշում Լամբրոնեան
Օրինակի մասին, որովհետեւ իւր թարգմանութեանը նա բնաւ-
ծանօթութիւններ չէ կցել: Խոկ ֆրանսիացի թարգմանիչը
Լանդլուան՝ բացի նորմնից որ առաջաբանում (էջ 51) շատ
կարեւոր (fort importantes) է համարում Լ. Օրինակի մի քանի
տարբեր ընթերցուածները, գեռ թարգմանութեան մէջ ևս՝
ստորև, անինարկութիւնն է անում նոյսա վերայ տեղ-տեղ:

։ Ստեփանէն հարկ չէ համարել յիշել նաև Խորենացու
Պատմութեան աշխարհաբար թարգմանութեան (թէ ևոչ լիա-
մասն) առաջին փորձերի մասին, ինչպէս վերը տեսանք (էջ 117):

Փոքրիշատէ ինքնուրոյն հետազօտութիւն, որ պատա-
հում ենք Եռաջաբանի մէջ, այդ՝ Խորենացուն վերաբերեալ
Դ. գրքի մասին է (տե՛ս էջ 1. Բ.—ԽԳ), ուր բաւական հա-
մոզեցուցիչ փաստերով հերքուումէ նորա գոյութիւնը: Նոյն
հետաքրքրական խնդրի ամբողջութեան համար լաւ կ'լիներ
աչքի առաջ ունենալ նաև ։ Դ. Եղիշանի յօդուածը («Բազ-
մավէպ», 1851), որ անյայտ է մնացել ։ Ստեփանէին:

Ենցնինք այժմ՝ Պահոթութիւններին:

։ Ստեփանէի թարգմանութեանը կցած է 820'ի չափ
՝ Պահոթութիւն: Եթէ դոցանից հանենք մօտ 150'ը, որ
Լամբրոնեան օրինակի տարբեր ընթերցուածներն են, կմնայ
670 բուն ծանօթութիւն, որից մօտ 75'ը Լանդլուայից է առ-
նուած, 3—5 Վ. Պատմանէանից, 5—10 Փ. Եւէնից և ուրիշ-
ներից. 20'ի չափ ևս թարգմանչի սեպհական մանր, աննշան
լուսաբանութիւններն են, որոց թուում և մի երկար բանաս-
տեղծութիւն, մնացեալ մօտ 550'ը ոչ միայն քաղուածօրէն են
առնուած, այլ ուղղակի թարգմանուած են Վ. Եմինի ծանօ-
թութիւններից ծայրէնիծայր և բար-առ-բար:—Եյս այսպէս

*

լինելով՝ զարմանալի է, որ ։ Ստեփանէն ասումէ, թէ՝ «Ազգ
ծանօթութիւնների համար մենք օգտուել ենք զիսաւորապէս
Լանդշտայն» (sic!) և Եմինի թարգմանութիւնների ծանօթու-
թիւններից» (Վուջ. էջ 29): Մ. Եմինի խիստ, նաև Ճնշող
աղբեցութիւնը նկատուում է առհասարակ ։ Ստեփանէնի
աշխատութեան ընդհանուր կերպարանքի վերայ թէ թարգ-
մանութեան, թէ Վուջաբանի, թէ Օանօթութիւնների և թէ
Յաւելուածների մէջ: «Խոյն խակ աշխարհաբար թարգմանե-
լու գաղափարը անշուշտ յղացել է նա անմիջապէս Մ. Եմինի
ոռուսերէն թարգմանութեան լոյս տեսնելուց յետոյ, այն է՝
1858 թ., ինչպէս երեսում է իւր միամիտ խոստովանանքից
(Վուջ. ՀԹ): Բայց այսու ամենայնիւ ։ Ստեփանէն միշտ
խոյս է առջիս ուղղակի խոստովանելու մեր պատկառելի հայ-
կաբանի ահապին և անոպայման աղղեցութիւնը՝ աւելի ախոր-
ժանօք յիշելով Լանդլուայի և ուրիշների անունները:—Մեզ
այնպէս է թուում, որ միանդամայն իրաւացի լինելու և ոռ-
չիշի սեղմականութիւնը է-թացնելու որ և է պեղիւ վարաց համար՝
պէտք էր վարուել այնպէս, ինչպէս սովորաբար անում են ա-
մեն մի հաստատոյ աշխատութեան մէջ, այսինքն՝ համառօտ
յիշել թէ որ աղքիւրից է քաղուած այս կամ այն տեղեկու-
թիւնը: Վյուգիս արած է օրինակ, 1888 թ. Պետերովուրդ
հրատարակուած Պետոնդ պատմագրի Բ. տպագրութեան մէջ՝
Ք. Պատկանականից և Կարպակետ Վ. Շահնազարեանից քաղած
ծանօթութիւնները նոցա սկզբնատառերով նշանակելով փա-
կադի մէջ: Վյուտեղ ևս պէտք էր իրաքանչիւր ծանօթու-
թեան վերջը համառօտ նշանակել Ե (Եմին) և Լ (Լանդ-
լուա) սկզբնատառերով:—Բայց է-թ աղբէ-թիւնը նախցնելու և կողմ-
նակի կերպով ուրիշ գիւտը կամ յայտնած միտքը իրեն սեպհա-
կաննելու մի ընդհանուր երեցը է ։ Ստեփանէնի աշխատութեան
մէջ, որոյ մասին արժէ մի քանի օրինակներ առաջ բերել:
«Օանօթութիւն 4. — ։ Ստեփանէն աւաշարկում է ուղղել խո-
րենացու բնագրի մէջ (Ա. 1) «օրինակօղներից մուծված կետադրու-
թեան մի սխալ», ասելով, «պէտք է ուղղել այսպէս», առանց սա-
կայն յիշելու՝ թէ իւր խակ ուղղածի նման վաղուց ըմբունել ու թարգ-
մանել է Մ. Եմին, որ և անշուշտ տեղիք է տուել աշխարհաբար
թարգմանչի այս ուղղագրութեանը:

՞Օ. 244. — Ն. Ատեփանէն առանց ո՛ր և է ապացուցի օխալէ համարում՝ բոլոր թարգմանիչներից ընդունուած յոջ բառի ընթերցուածը, յատուկ անուն (Չոր) կարգալով նորան։ (Ժերթելով՝ գտանք, որ նա առել է այս՝ Խորենացու Պատմութեան առաջին ոռուսերէն թարգմանութենից (1809թ.), էջ 153, ըստ սովորութեան՝ թագցնելով իւր աղբեկը։

ՉՊ. էջ. Առաջաբ. — «Ա. Յապէս և զինի այլովք զինուք ժամնուականաւում»։ (Խոր. Ա. 26)։ — Ա. Յա Հատուածը թարգմանուած է։ «այսպէս յետոյ ևս շարունակում էրկար ժամանակ ուրիշ զինքերով»։ — Ն. Ատեփանէն՝ Խոսելով իւր Առաջաբանում (ՉՊ) այն աշխատութիւնների մասին, որ նա գործ է դրել Խորենացու բնագրի համառօտարանութենը հասկանալի կերպով աշխարհաբարի փոխելու, պարծանօք ակնարկում է և յիշեալ նախագասութեան վերայ, ուր նորա ասելով, «բայ ենք աւելացրել մեղանից (sic!)», որպէս զի իմաստը անհամարական չ'մայ։ Իսկ այդ իրանից աւելցրած բայը (շարունակում էրկանաւում) ուղղակի առած է Ա. Ղմինի թարգմանութենից (продолжали биться...), դարձեալ առանց յիշելու այդ աղբիւրը։

՞Օ. 135. — «Բամբիռն» բառի առթիւ թարգմանիչը առանց այլ և այլի կրկնումն է Ա. Ղմինի 32 տարի առաջ ասած Խոսքերը (իհարկէ առանց նորա անունը յիշելու), իբրև մի տեսակ յանդիմանութիւն, թէ «հայ ուսումնականները ճշտութեամբ չեն հասկանում այս նուագարանը...»։ — Ինչ որ կարելի էր ասել 30 տարի առաջ և այն՝ այնպիսի գիտականախն, որ արդարեւ առաջինը բացատրեց մեզ այդ նուագարանի ինչ լինելը, բոլորովին անհիմն ու անտեղի է նոյնը կրկնել այժմ ։ Ատեփանէին *):

՞Օ. 187. — Պարսից Արտաշէս թագաւորի առթիւ։ — Բ. Պատկանեան իւր Մաтеріалы для арм. словаря, II գրքոյի վերջը ունի զետեղած մի հետաքրքրական քննութիւն Օ Хронологія Мойсея Хоренского, ուր նա երկար հետազօտութենից յետոյ՝ աջող կերպով ուղղագրում

*.) Ա. Ղմինից թարգմանած ՞Օանօթութիւնների մէջ ։ Ատեփանէն՝ չյիշելով հանդերձ իւր աղբիւրը, այնուամենայնիւ այնպիսի լեզուով է խօսում, որ միայն ինքնուրոյն հեղինակին է վայել և ոչ թէ թարգմանչին։ (Օր. Խն թւումէ, թէ... (ում). — ակամայ մեր միտքն է գալիս... (ում) և այլն. մինչդեռ այդ մեր ...ին ասողը իսկապէս Ա. Ղմինն է և ոչ թէ ։ Ատեփանէն, ինչպէս սխալուելով անշուշտ պիտի կարծէ բարեմիտ ընթերցողը։

է Խորենացու ժամանակագրութեան վերաբերեալ մի սխալը: Համեմատեած իւր 187 ծանօթութեան բովանդակութիւնը քաղումէ ուղղակի յիշեալ յօդուածից՝ ծածկելով իւր ազբիւրը, որով հանգուցեալ գիտնականի նոր և լուրջ քննադատութեան արդիւնքը իրեն է վերագրում: Պառնէ այսպէս կ'ըմբռնէ ընթերցողը:

՞Օ՞. 393^ա.— Այստեղ առանց քննութեան և ապացուցի նաև առանց յիշելու՝ թէ որտեղից է առնուած, համարձակ կերպով մերժուումէ Եմինի, Լանգլուայի և Լառէրի թարգմանած մի նաև խաղասութիւնը («այլոց ազգաց վարելով») իւրեւ ախալ և առաջարշ կուումէ նորան մի նոր՝ ընթերցողի կարծիքով ։ Ստեփանէին պատկանեալ, իմաստ: Ծարթելով Խոր, Պատմ. առաջին ոռւսերէն թարգմանութիւնը ոչ նոր է և ոչ ինքնուրոյն:— Տեսնե՛նք սակայն, թէ որբան հիմնաւոր է ։ Ստեփանէի առաջարկած նոր իմաստը: Արժէ փոքր ինչ կանգ առնել այս խնդրի վերայ: Խորենացին՝ պատմելով Երկրորդ Արտաշէսի ձեռքով առաջին անգամ այյաստան մուծուած արուեստների մասին (Բ. 59), ասումէ՝ թէ մինչև այս թագաւորը այյերը «ի մեծամեծ արուեստից և ի գիտութեանց ունայնացեալք էին (զուրկ էին), որպէս հինից և ասպատակաց պարապեալք և այսպիսի գիտութեանց կամ անփոյն արարեալ և կամ ո՛չ հասեալ (sic!). զշաբաթուց ասեմ և ղամսոց և զտարեաց բոլորմանց: Վրանդի ոչ այսպիսի ինչ ճանաչիւր առ նոսա, այլոց աղբետց վարչովն:— Ա երջին տողերը ։ Ստեփանէն թարգմանումէ. «... խօսքս շաբաթների, ամիսների և տարիների շրջանների մասին է, որոնք (որ՝ կամի ասել) նոքա չէին ճանաչում, այլ գործածումէին (գործ էին ածում՝ կամի ասել) ուշից աղբերինը (sic!):— Այլ խնդրի է, թէ որբան արժանահաւատ է Խորենացու այս աննպաստ նկարագիրը այյեց բարեկրի մասին Վրիստոսից մօտ մի գար յետոյ: Իայց պատմագիրը կամենում է ասել՝ թէ մեր նախնիքը այդ միջոցին վայրենի լինելով, հիւսիսական ազգերի պէս հում միս ու արիւն ուտելով և պարապելով ասպատակով ու աւաղակութեամբ, ոչ գաղափար ունէին և ոչ կարիք առաջասարակ ժամանակին բայժանահնեցը որոշելու և գործածելու: Այս այսպէս լինելով՝ ի՞նչպէս ուրեմն նոքա ուշից աղբերինը, այսինքն՝ ուրիշ ազգերից փոխ առած՝ ժամանակի բաժանումները պէտք է գործածէին (որպէս ։ Ստեփանէն է թարգմանել՝ գայթակղուելով առաջին ոռւսերէն թարգմանչից), քանի որ այդպիսի գործածութիւնը

ըստ Խորենացու, արդէն քաղաքակրթութեան նշան էր, միւնոյն է՝ ազգային էին ժամանակի այդ բաժանումները, թէ օտար: Եւ արդէօք ազգային համարուածները (ամիսները մանաւանդ) միթէ նրանական ծագումն չ'ունի՞ն՝ Ապղեզանց կրօնի ազգեցութեալիք տարածուելով ոչ միայն հին Հայաստան, այլ և առ հասարակ Առաջակողաման և Փոքր Ասիա:

Ըրդարև իւր ՞Օանօթութիւնների մէջ ։ Ստեփանէն տեղաւորել է բազմաթիւ հետաքրքրական և ստէպ կարեոր տեղեկութիւններ Խորենացու Պատամութեան՝ բացատրութեան կարօտ այլ և այլ կետերը լուսաբանելու: Բայց ասել՝ թէ դոցա ժողովելու համար «մեծ աշխատութիւն» էր հարկաւոր, ինչպէս նկատում է աշխարհաբարի թարգմանիչը (Էջ Զ. Առաջ.), առնուադը անբարեխսղութիւն է: Մէնք արդէն տեսանք, որ Շուշը այդ ծանօթունիները պատրաստ առնուած էն ու ընկները և նայդնանուած միայն: Բայց պատրաստ աղբիւրներից թարգմաննեն ևս գեռ բաւական չէ: պէտք էր իմանալ բազմաթիւ հարցապիտական նիւթերից հմտութեամբ ընտրել կարեռագոյնները, խոյս տալ աւելորդաբանութիւնից և մանաւանդ օգտագործարքաւագայում միայն ընկները և միշտ ի նկատի ունենալ այն հասարակութիւնը, այն ընթերցողներին, որոց համար լցոս է տեսնում զրուածը: Այն ամեն լուսաբանութիւնները, որ առաջարկում են Մ. Էմին և Լամպուան իրենց ընթերցողներին՝ ստէպ նաև ընդարձակ վկայութիւններ մէջ բերելով այլ և այլ հին ու նոր հեղինակներից, միանգամայն պատշաճաւոր են և անհրաժեշտ: Նոցա աշխատութիւնը զիտնական կարեսութիւն ունի և մասնագէտների համար է նշանակուած: Բայց ։ Ստեփանէինը: Բայց ի այսպիսի երկարաբան և երբեմն նաև աւելորդ ծանօթութիւններից, ինչպէս օրինակ՝ Տաճար (Ճ. 94), Աղպատ (Ճ. 68), Մշակ (Ճ. 75) և այլ շատ բառերի առթիւ, յաճախ աճքող երեսներ է լցուամ նաև ոչ միայն ժողովրդին, այլ և ընթերցող դասի աշտպին մեծամասնութեանը միանգամայն անհասկանալի ֆրանսերն, գեղմաներն որպէս և երբեմն լադներն և յանարդն վկայութիւններով և այն՝ առանց նայդնանութեան: Կանչ խորհուրդ ունի այս և ի՞նչ հարի: Այն ևս մի թեթև ծառայութիւն կ'լինէր, եթէ այդ օտարաբարբառ հաստուածները ։ Ստեփանէն բարեհամեր աշխարհապարի

վերածել. բայց նո՞ւ ինչպէս երեսում է, իւր դիւրութեան համար է, որ անթարգման է թողել նոցա: Եւ այսու հանդերձ որպիսի՛ միամտութիւն. բնաւ չ'թարգմանելով օտարաբարբառ. վկայութիւնները, միևնոյն ժամանակ նա առանձին խնամքով աշխարհաբարի է վերածում մեր Փաւատոս Բուզանդի դիւրիմաց, աշխարհաբարախառն հատուածները....

Դիտելու է և՝ այն երեսոյթը, որ՝ մինչդեռ և. Ստեփանէն լոկ թարգմանիչ է հանդիսանում ուրիշների ծանօթութիւններին՝ ստէպ երկարախօս և աւելորդաբան լինելով հանդերձ, նա այնուամենայնիւ զուգընթաց է դիտնական պահանջներին (թէպէտ պատահում է նաև, որ նորան անծանօթ են մնացել զիտութեան նորագոյն արդիւնքները). բայց երբ փորձ է փորձում (բարեբաղգաբար ոչ շատ յաճախ) նիդու-րոյն լինել առաջ գալ իւր սեպհական հետազոտութիւններով նա թոյլ է և անպատրաստ, նա չէ զիմանում քննադատութեան:

Չուզելով կանդ առնել ևաբ+ (Ճան. 52), Արամանէնայ աս (էջ 57), Աւրու-քնա (Ճան. 336), Օգոն (Ճան. 562 և 526) և այլ մի քանի բառերի առթիւ յայտնած նորագոյն քննադատութեան լուսաբանութիւնների վերայ, որոց՝ ինչպէս երեսում է, բնաւ անտեղեակի է և. Ստեփանէն *), — անցնինք առաջիկայ օրինակներին՝ աշխարհաբարի թարգմանչ նիդու-րոյն հետազոտութեան աստիճանը որոշելու համար:

Ծանօթ. 74.—«Պատուանունների» մասին (էջ 48—49):— Այստեղ խառն ու շփոթ մէջ է բերել և. Ստեփանէն այլ և այլ պաշտօններ, տիտղոսներ և կոչումներ՝ ընդհանուր առմամիւ «պատուանուններ» կոչելով նոցա: Առաջ մեկնուած է՝ «բոլոր ձիաւոր զօրքի հրամանատար»: Հապա Արքաբայլով ինչ էր: Ի՞նչ տարբերութիւն կայ «զօրավար կամ զօրապետ, սպարապետ, հրամանատար» պատուանունների մէջ, — և. Ստեփանէն զլամնումէ մեկնել: «Տէր, նոյն և Եշխան, Աեպուհ, Ազատ» — սոքա ամենը նախարարութեան զանազան կոչումներն են, որ հարկաւոր էր որոշել և բացատրել: Յիշուած են՝ կուսակալ, կողմնակալ և սահմանակալ անորոշ պաշտօնները և բոլորովին մոռացուած է այնպիսի կարեորը՝ ինչպէս հապալապետն է:

*.) Տե՛ս Քննկ. Պատմ. Ա. Գարագաշ. էջ 149, 182. — «Հանդէս Վանօրեայ», 1889, համ. 3, 4. և վերջին՝ 1890, համ. 5:

Խակ ճարդարիք մասին, որ դարձեալ նշանաւոր գերէր խաղում հին հայոց կեանքում, խոստացած է ուրիշ անդամ խօսելու, թէ և չէ յայտ՝ երբ և հրտեղ: — Առհասարակ այստեղ աչքի է զարկում ։ Ստեփանէ գլխովին անգէտ և անտեղեակ լինելը այաստանի քաղաքական կազմակերպութեանը, որի մասին լաւ կ'լինէր, որ նա բնաւ չ'խօսէր:

Օանօթ. 226. — Ծովելիների առթիւ: ։ Ստեփանէն իբր թէ հերքելով Ա. Կմինի յիշած ճաշխ Աթերօս—Վայ բգեշխի գյուռ թիւնը, բացատրումէ թէ «այաստանում չկար իլլրներ անունով (վերք) նահանգ, ուստի նորա կառավարիչն ևս չէր կարող բերել կոչվել»: — Ինչպէս յայտնի է Պատմութենից՝ այաստանում պատմելու կար. գոցանից մէկը՝ հիւսիսայինը — Գուհարաց բերելին էր, որ նոյնպէս Վայ բերելին էր կոչուում: Փարպեցին միայն այս վերջն կոչմամբ է յիշում նորան քանից («բգեշխն Արաց Աշուշայյ»): Այս կրկնակի կոչման պատճառն այն է, որ Արաց երկրին սահմանակից մեր Գուհարաց աշխարհում կային այս բգեշխի իշխանութեան ներքոյ շատ վրացիք, ուստի Գուհարաց բգեշխը կոչուում էր և Վայ բգեշխ: — Տե՛ս այս մասին ։ Ստեփանէն յիշած S. Martin, Hist. du Bas Empire, Lebeau, T. VI, էջ 278, որպիսի վկայութիւնը անշուշտ ուղղակի Ա. Կմինիցն է նա առել՝ առանց Փրանսիական բնադիրը անձամբ տեսած լինելու: Զակառակ դէպքումնա պնդելու չէր, թէ իլլրների բգեշխ չէր կարող լինել:

Օանօթ. 216. — Արաց ԱԵՒԺՈՒՂ բառի մասին: ։ Խորէն Ստեփանէն սիալ համարելով Ա ենետկի տպագրութեան, որպէս և Ա. Կմինի թարգմանութեան ընթերցուածը՝ համաձայն Ա անդադայի և Կորայր Բիւզանդացու ուղղագրութեանը, ԱԵՒԺՈՒՂ է սրբագրում յիշեալ բառը, որ՝ նորա ասելով, «կազմված է մէջէ-թագաւոր և ծոռլիզարմ բառերից»: Ամենեկին զարմանալի չէ, որ Ա անդադայի կամ Կորայր Բիւզանդացին չեն կարողացել մեկնել ԱԵՒԺՈՒՂ ընթերցուածը: բայց ինչպէս ։ Ստեփանէն, որ բուն թիվի լիսցի է՝ ուրեմն և ոչ անտեղեակ Արաց լեզուին, թոյլէ տուել այսպիսի մի զանցառութիւն: Արաց լեզուում՝ բացի մէջէ բառից, կայ և նոյնանիշ աւելի, որ գուցէ աւելի հին է և գործ է ածուում՝ օրինակ, այսպիսի մի ասացուածում: Աւելիս իս-էրի, որ նշխարք է նշանակում (բառացի՝ արքայի նկանակ): Վարժմիս Հայովրէբա—Արաց Պատմութեան մէջ ևս պատահումէ աւելի՝ արքայի կամ արքայորդու նշանակութեամբ:

Վերջապէս Յա-ԵՍ-ածների բաժնում դիտելու է ժամա-

Նակադրական ցուցակի մէջ (էջ 304—311) զետեղած Հայաստանի մի քանի կառավարիչների անունները, որոնք չեն յիշուում Խորենացու գլուխում.—Երաթոյ, Արիոբարզան, Վանօնէս, Ուագամիստ, Բարթամազիրիս (փոխ. Պարթամասիրիս) և այլն,—ուստի և կարող են միայն շփոթել ընթերցողին: Կամ պէտք էր դոցա մի առ մի բացատրել և կամ բնաւ չ'տեղաւորել, մանաւանդ որ շատ խնդիրներ (աւելի ժամանակագրական) վիճելի են, տակաւին չ'սատւզուած, նաև սխալ: Բացի սորանից՝ ի՞նչպէս հասկանայ ընթերցողը Տրդաս Բ. կամ Տիգրան Զ., երբ որ Խորենացին միայն նի Տրդաս է յիշում և եցեւ Տիգրան:—Իսկ նոյն Յաւելուածի եկեղեցական ժողովների բաժնում խոշոր սխաններ են սպրդուել: Մինչև 491 թ. Վաղարշապատում հինգ ժողով է կայացել (ըստ Չամչեանի). և Ստեփանէն վեց է դնում, և նշանակելով Ա. Ե. և Զ. ժողովները, մոռանում է Բ. և Գ.՝ բայց^{*}):

III.

Լ Ե Զ Ո Ւ Ն.

Ենցնինք այժմ և. Ստեփանէի լեզուին ու զրութեան ոմին և բազմաթիւ օրինակների վերայ քննելով նորա թէ՛ սպոտաբանութիւնը և թէ՛ համայանութիւնը, տեսնինք որ աստիճանն կանոնադր են դոքա և վայելուչ:

Եյս բաժնին մենք առանձին կարեսրութիւն ենք տալիս և նորա վերայ հրաւիրում ընթերցողի լսուջ ուշագրութիւնը:—Թա՛կ ինքնուրոյն և թէ՛ թարգմանական զրուածում՝ որքան և սա զրաւիչ և վսեմ բովանդակութիւն ունենար, ամենից առաջ լեզուն է, որ աչքի է զարկում: գարձեալ նոյն լեզուն է, որ նաև նշին ու գարգարկ նկարագիրը հետաքրլութեամբ կարգալ է տալիս մեզ: Եյսպիսի մի խառն և անցո-

*) 12որդ ծանօթ. մէջ (որ բառացի թարգմանութիւն է Ա. Ե. Բնի Պարտ ծան.) և. Ստեփանէն Ա. Եմինի խօսքերով խոստանում է «լիակատար տեղեկութիւն տալ այլուրենի մասին պատմութեան վերջը առանձին յառելուածում»: Իայց նորա աշխատութեան մէջ՝ Յաւելուածների շարքում չենք գտնում այսպիսի մի յօդուած: Խոստումը՝ թերես մոռացմամբ, անկատար է մնացել:

զական ժամանակի, ինչպէս մեր զրականութեան մէջն է այժմ՝ ամեն մի բանիմաց, կիրթ ճաշակով հեղինակ պարտականութիւն պէտք է համարէ իրեն ուշի ուշով միա գնել լեզուի օրէնքներին՝ աչքի առաջ ունենալով միշտ նաև նորա կենդանի աղբիւրը՝ ժողովրդական բարբառը, և ամենից աւելի զգուշանալով ինքնակամ, կամամուածական ձգտութներից, որոնք երբէք օգուտ չեն կարող բերել մի լեզուի մշակման գործին։ Հին Ճշմարտութիւնն է, որ երբէք աւելորդ չէ կրկնել. լեզուն չէ ստեղծուում այս կամ այն անձի ինքնակամութեամբ կամ քմահաճոյքով լեզու չէ կարելի կազմել արուեստապէս՝ Թօքինակութիւնը ամենեին ներդաշնակութիւն չէ, այլ ընդհակառակներին իսկ լեզուն միշտ ներդաշնակութիւնն է ներկայացնուում իւր բազմագունակ ձևերում և մասերում. միօրինակութիւնը արհեստի է յատկանում, որ անշունչ առարկային ի՞նչ ձև ուղինայ կարող է տալ և նա այնպէս կմնայ անփոփոխ։ Մինչդեռ լեզուն՝ գործարանական մարմինների նման, միշտ կենդանի է, միշտ յեղյեղուկ, և անշուշտ այդ փոփոխութիւնները կատարուում են ընդհանուր օրէնքի հիմնմբ և երբէք կախումն չունին մէկ անձի քմահաճութենից։ Ատելիանէն՝ Թօքինակութափառակով յափշտակուած և՝ ըստ երևութիւն, այդ միայն ճանաչելով լեզուի կանոնադրութեան հիմքը, կարծես, Վոլարք—Կօլառի-է ուզում շնել մեր աշխարհիկ լեզուն։

Ա. Ստուգաբանութիւն։

1) Մէ առնի բառերի բարօրինակ հոլոված։ Տէր բառի սեռ հոլ առնի է գործածում ։ Ատելիանէն, յոդ ուղղ առերեր։ Գրականական լեզուում առնի ձևը բոլորովին անսովոր է, գաւառական բարբառներն եւ փոխանակ գորան՝ այլով ձևն ունին։ Տէր բառի հոլովմանը հետեւելով ուրեմն և պատկանի պէտք է լինէր. մինչդեռ ։ Ատելիանէն արինաց և կանաց է ասում (փոխ. իւր կանոնի համաձայն՝ տիկինի և կիների ասելու)։ Օք բառի սեռ օքէ է կազմում որ դարձեալ անսովոր է, թէպէս մի ուրիշ տեղ մէկ օքնան է ասում։

2) Առյունան և ինդինան կանոն։ Կյու կանոնը ։ Ատե-

փանէն առհասարակ շատ չէ յարգում և առաւել լաւ է համարում հոլովելիս՝ անփոխի թողնել բառի արմատական ձայնաւորը. թէև պատահում էնք և անհետեռողութեան: Օր մի կողմից՝ բիբ, բչբի, բամբիո, բամբիոի, գեղեցիկ, գեղեցիկի և այլն և միւս՝ միտք, մոքի, աղօնձ, պղնձով, աղջիկ, աղջիկներից և այլն, այսինքն՝ մի տեղ ձայնաւորը պահպանում է և միւս՝ բաց է թողնում: ‘Խոյնպէս և առաջիկայ օրինակներում:’ Աստուծու, շամփորումէ, քարմելը, և դարձեալ՝ Խոսրովիդիտի, թղթի, գասրներին (?), գնդով խորհրդի, փոխ իւր ընդունած կանոնի համաձայն՝ թուղթի, գունդով... և այլն: Իսկ Աստուծու ձեւը միանգամայն անկանոն է. եթէ պահում էք արմատական ո-, պէտք է ասէք դրաբարի նման՝ Աստուծոյ և կամ ո- բաց թողնելով՝ Աստուծու ասէք, ինչպէս, ժողովուրդը:—Պէտք է զիտել ընդհանրապէս, որ սխալ է ։ Ատեփանէի կարծիքը՝ միշտ անփոփոխ թողնել բառը հոլովելիս (կամ խոնարհելիս). մենք չենք ասում այժի, սէրով մէջով շամփորում է, ինչպէս նա է գործածում, այլ փոփոխման և կորուսման կանոնի համաձայն՝ ուժի, սիրով շամփորում է (համեմատէ՝ սուր, սրել, տիսուր, տիսրել կերակուր, կերակրել կերակրում է և ոչ թէ կերակրում է): Այս մանաւանդ նկատելի կ'լինի, երբ որևէ վերադիր (suffix) աւելցնենք յիշեալ բառերին. այժ, բայց ո-ժեզ ո-ժով (մարդ և ոչ ժով մարդ), սէր, բայց սիրուն, սիրով մէջ բայց մջին և այլն: Այստեղ ևս մօջենակութեան գաղափարին զոհ են բերուած լիզուի կննական պահանջները:

3) ԱԵՐԱԿԱՆ հոլով:—ա) Անուական հոլով՝ թէ՛ իբրև յապիսցոյնեւ և թէ՛ նախադրս-նեան հետ, ։ Ստեփանէի զրչեակ միշտ ն յօդն է առնում վերջը, մի տարօրինակ նորաձեռնիւն, որ բոլորովին հակառակ է մեր գրականական լիզուի ոգուն: Օրինակ՝ նա գործ է ածում միշտ. փրկանքին փողը, լիզուին նշանագիրները, Յազկերտ թազաւորին գուռը, հետազոտողին միտքը, ուրացօղներին ձեռով, մաշին ժամանակ և այլն. փոխ. ասեիրու. փրկանքի փողը, թագաւորի գուռը...—և կամ նախադրութեան հետ միսսին. բառին տեղը բառին փոխանակ, չարչարելուն փոխարէն, Վլաններին հետ, ափին մօտ, փորին համար, խօսքերին մէջ, արշաւելուն մասին, հնե-

ըլին դէմ, սէրին պատճառով մէջքին վերա ևայլն։ Ի՞նչ հարկ այդ ն յօդը աւելցնելու, քանի որ առանց գորան ևս մէնք պարզ և հասկանալի ասում ենք. բառի փոխանակի, Նլանների հետ, փորի համար, խօսքերի մէջ ևայլն ևայլն։ Խթէ պատահի այսպիսի ասացուածներում որոշել յօդ գնել՝ նորան գնում ենք նախարարնեան և ոչ թէ սեռականի վերջը. օր. (նորա) խօսքերի մէջը նորա դէմը (խօսել), (այս) բառի տեղը—Որ քան որ մէնք յիշում ենք, և. Ստեփանէն իւր նախկին յօդուածներում այսպիսի յեւք բնաւ գործ չը ածում։ Զ'ինի՞ թէ օհէոդոսիա ապրելով՝ Պօլսի գրացութիւնն է աղդել նորա լեզուի վերայ։

բ) — Գրաբառէ յագնամին սերական հոյովը յատուկ անունների մէջ մէնք գործ ենք ածում այժմ բացառապէս իբրև ածական. Հայոց, Պարթևաց, Յունաց (աշխարհ, Թագաւոր), Սիւնեաց, Կորդուաց (իշխան), — որ նոյն է ասել՝ հայ կամ հայական, յօյն կամ յունական (աշխարհ, Թագաւոր): և. Ստեփանէն՝ երեխ, միօրինակութեան գաղափարով տոգորուած, դարձեալ մի անձնունի նորաձեռութիւնն է ուղում մուծանել մեր լեզուի մէջ՝ թարգմանելով նաև այդ աժականները աշխարհաբարի սեռականով։ Նա ասում է. Հայեւք տիկիննը, Իւլիուսիները ապզը, Ալանները աղջիկը, Հայեւքին (փոխ. Հայերիաց) զիւղը, Կորտունին (փոխ. Կորդուաց) իշխաննը. թէև Մակաց և Շոփաց ձեւերը՝ յայտնի չէ թէ ինչո՞ւ, պահպանուած են։ — Խնդիրը այս է. արգեօք զբարարի սեռականնավերջ աժականը (Հայոց) մեր այժմեան լեզուում միւնիյն նշանակութիւնը ունի, ինչ որ աշխարհաբառէ սեռականը (Հայերի): Այստեղ յարմար չէ երկար կանգ առնել այս խնդրի վերայ, որ կարող էր հեռու առնել մեզ։ Ուրիշ անդամի թողնելով սորա մանրամասնութիւնները՝ այսքան միայն կասենք այժմ, որ այդ երկու ձեւերի մէջ նկատելի տարբերութիւն կայ։ Այդ նրբութիւնը շշափելի կերպով որոշելու համար օրինակ առնենք այսպիսի մի ասացուած։ Ծինորդաց դպրոց, որ գործածական է մեր մէջ և հասկացուում է նոյն իմաստով, որպէս և Ծինորդական դպրոց, այսինքն՝ օրինրպների կրթութեան համար սահմանուած դպրոց։ Բայց ի՞նչ կ'լինի, եթէ Ծինորդաց բառը Ծինորդների թարգմանենք. օրինորդների դպրոց կարող է նշանակել օրինորդներին սեղհական, օրինորդների ձեռքով կառա-

վարուող դպրոց, բոլորովին հակառակ օքտոբերաց դպրոց ասացուածի իմաստին: Դոցանից մէկը (օրիորդաց) աժական է և միւսը՝ (օրիորդների) գյական, որ հարկաւոր է խստիւ որոշել: Նոյնը զիտելու է և յատուկ անունների մասին, օր Աշանց աղջիկ կ'նշանակէ ալանական ազդից՝ ալան աղջիկ, մինչդեռ Աշանցի աղջիկ՝ կարծես, բոլոր Ելաններին պատկանեալ աղջիկն է նշանակում: Համեմատէ նոյնպէս. Հայոց (կամ հայ) աղդ, Հայոց (կամ հայ) աղջիկ և—Հայեցի աղդ, Հայեցի աղջիկ:

4) Աժական անոնները:—Խորենացու սեղմի ամփոփ և գեղեցիկ կազմած բարդ ածականները, որոնք քիչ խօսքով շատ իմաստ են արտայացտում և այնքան ազդուութիւն և վայելցութիւն են տալիս լեզուին, և. Ստեփանէն թարգմանումէ կամ աւելի ուղիղ ասելով, բայցատրումէ մի քանի բառով՝ ճապաղ ու տաղտուկ, չհասկանալով որ դորանով յանցանք է գործում լեզուի օրէնքների դէմ: Նրկար դարերով լեզուի մէջ մշակուած բարդ բառերը և մանաւանդ ածականները, որոնք ճաշակի հետ միասին՝ մի աղդի մատենապահական դարգացման աստիճանն ևս ցոյց են տաղիս և որոնցից շատերը անշուշտ աղդային վլագերից են առնուած,—չէ կարելի թարգմանել, չէ կարելի բառացի նկարազրութեամբ պարզ նեան վերածել ինչպէս սցդ անումէ և. Ստեփանէն՝ մի կատարելագործուած լեզուի պերճ ձեւերը ստորացնելով մինչև անկիրթ աղդերի թոթովախօս, աղքատիկ բարբառը: Գուցէ նա երկիւղ էր կրում, որ այդպիսի բառերը անհասկանալի կմնան, եթէ չ'բացատրուին: Նախ այդ երկիւղը հաղեւ թէ հիմնաւոր է. և ապա՝ շատ դիւրին կերպով կարելի էր դորա առաջը առնել՝ թարգմանութեան վերջը, ծանօթութիւնների բաժնում, մի քանի տասնեակ դժուարիմաց ածականների ցանկը տեղաւորելով՝ հանդերձ բառացի և մանրամասն մեկնութեամբ:

Եռաջ բերենք մի քանի օրինակներ:

28 Էջ.—Բնագրի «Խայտակն» (Հայկ)՝ զուարդն առէքով է թարգմանուած. կարելի էր ասել նաև՝ քաղցր աչքերով և այլ շատ այսպիսի բացատրութիւններ գնել. բայց այս բոլորը խայտակն բառի նրբութիւնը չ'ունի:

— «Հաստաղեղն» (Հայկ) թարգմանուած է՝ հասար աղէղ բանօդ, որպէս և «աղեղնաւոր» (առէղն բանեցնող) (էջ 159):

— «Բաջագանդուր» գեղեցիկ խօսքը թարգմանուած է լիտուանի ժամանակակից ճապէրական լիտուանուածութեան չ'պահպանել այդ վիպական բառը:

46 էջ.—(Վատուածք) «Հեշտացուցիչք և կամակատարք» թարգմանուած է. Եղանակ արքային ապահովութեան և ապահովութեան համար որպէս և համեստար սովորական ածականներ են, որ այժմ ևս տալիս է ժողովուրդը Տիրամօրը: Ինչո՞ւ պէտք էր ուրեմն պարզ և հասկանալի ածականները մի քանի բառով բացատրել:

63 էջ.—«Լծագիր և հարկապահանջ» թարգմանուած է. լոծագիր և հարկապահանջը: Ի՞նչ հարկ այսպէս անդամահատ անելու ընտիր բառերը:

64 էջ.—«Գարկնաւէտ» թարգմանուած է՝ լիտուանի հասարակութեան լիտուանի կամ բարձր: Ունի առաջնական նշանակում ոչ միայն լայն ու բարձր, այլ միեւնոյն ժամանակ և վայելչակազմ թիկունք ունեցող:—Այս մի հատիկ բառը հայոց լեզուին յատուկ՝ զարմանալի ճկունութեամբ մի շարք նրբութիւններ է ներկայացնում, որ անկարելի է թարգմանել:

— «Գեղեցկոտն»—թարգմանուած է՝ որները գեղեցիկ: Եթէ ամեն մի պարզ խօսք այսպէս թարգմանուի, այն ժամանակ մենք երբէք բարդ բառ չենք ունենալ: (Օրինակ՝ փոխ գեղեցկաշէն ասելու՝ և Ստեփանէն կ'թարգմանէր. գեղեցիկ շինուած, փոխ գեղեցկատես՝ գեղեցիկ տեսքով, և կամ փոխ բարձրահասակ՝ հասակը բարձր, քայլամոլոր—քայլերը մոլորած, մշտագալար—որ միշտ դալար է, հիւրընկալ—որ հիւր է ընդունում և այլն և այլն: Այս ոչ թէ լարդանունին է, այլ բառերի մեկնութիւն՝ բառացնակ:

66 էջ.—«Լէեղ» ոչ միայն գեղեցիկ (ինչպէս և Ստեփանէն է թարգմանել), այլ և խոշոր աչքեր ունեցող է նշանակում: (Վրասփ նրբութիւն այդ ամփոփ բառի մէջ:

144 էջ.—«Խոշորագեղ» թարգմանուած է՝ խոլը դէմուլ, որ ճիշտ չէ:

160 էջ.—«Լէագեղ» և Ստեփանէն նոյնանիշ է կարծում «աչեղ» բառին և թարգմանում է նոյնպէս գեղեցիկ ալեղութ:

176 էջ.—(Ձե) «ոչ երկրակոխ, այլ օդագնաց» թարգմանուած է. ու նէ երիքի վրայով տալութեան, այլ օդի մէջ գնացողներ. բնագրի երկու ընտիր ածականը վեց բառով է թարգմանուած և որքան տգեղ:

և Ստեփանէի այսպիսի մերաբերումը դեպի մեր լեզուի

Հրաշակերտ ածականները ակամայ յիշեցնում է մեզ միամիտ մանկան, որ խոշոր, մեծապին առնչ գահեկանի արժեքը չ'հասկանալով՝ ուրախութեամբ փոխում մանրում է նորան բաղմաթիւ մանրիկ պղնձեայ փարաների:

5) Յարսէրական դերանոնն ևս (որ) տարօրինակ գործածութիւն ունի ։ Ստեփանէի քերականութեան մէջ: Յագնալի հայականը նա գործ է ածում որոնտ. օր. մի քանի մանրամասնութիւններ, որոնտ նա քաղելէ, —աղջկներից, որոնտ բնակեցրելէր, —գործերով, որոնտ մենք կյիշտակենք, —կեանքն ու թագաւորութիւնը, որոնտ նա կորցրել է: Մինչդեռ թէ վայելուչ և թէ գործածական լոկ եղակի որ դնել և կամ զոնէ սեռական հոլով չնշաւոր առարկաների համար: — Նոյնպէս անյաջող ու անսովոր նորաձեռութիւն է արացական դերանուան մէջեց ձեւը, փոխ. միշտ գործածական և գտւառական բարբառներին ևս ընտել՝ մէրնոնտ, ձեզնոն:

6) Բայց մէջ ևս ։ Ստեփանէն ուղղագրութեան մի նորաձեռութիւն է մուծանում, որ ոչ միայն անհիմն է, այլ և բոլորովին սխալ: — Յայտնի է, որ ներկան և անցեալ անկատարը մենք խոնարհում ենք՝ անջատելով բայական արմատը էական բայից, որ մնում է միշտ բաժան և առանձին՝ միենոյն է՝ գրուում է նա վերջը, թէ սկիզբը. օր. բերում է, տանումէն՝ շեշտը ընկնում է բայարմատի վերայ, իսկ էական բայը մնում է անշեշտ: — Ես Եմ բերում, նոքան էն տանում շեշտը ընկնում է դերանուան վերայ, էական բայը դարձեալ մնում է անշեշտ: Առաջին դէպքում էական բայը դրում է ։ Ստեփանէն միշտ էն և անդաժան բայարմատից, այսինքն. բերում է, պանում՝ ու պապատապումնոնտ, զարմանումնոն, որով ուրեմն շեշտը ընկնելով վերջին վանկի վերայ, անստվոր և միանգամյն սխալ երեսյթ է առաջացնում առհասարակ մէր աշխարհիկ լեզուի համար, եթէ մենք ձիշտ հնչենք վերջին վանկը, և պէտք է հնչենք: Միթէ կարելի՞ է ասել իմանումնու, սովորումէի՞ն (կարգավոր վերջին վանկը շեշտելով): — Արգարե գրաբարում բայարմատը և էական բայը միասին են զրուում ժողովեմ, շրջէի՛ր, բայց և ձշտութեամբ հնչուում է շեշտը վերջին վանկի վերայ, ինչպէս որ հարին է. որովհետեւ այդ՝ երկու տարրից միաւորիալ մէ բառ է: — Միևնոյն ժամանակ ։

Ստեփանէն գործ է ածում բերել էն, կանգնած էն և այլ այսպիսի ձևեր. ինչու ուրեմն այստեղ բաժան և վերը՝ միասին է զբումնա էական բայրը: «Թարձեալ երբ հարկ է լինում էական բայր սկիզբը զնել նա անջատում է իւր կազմած ամբողջ բառը և բաժան է զբում (գու ևս իմանում, նոքա էն սովորում):—Յիշեալ նորաձեռութիւնը ։ Ստեփանէի քերականութեան այլանդակ երեսյթներից մէկն է, որից մանաւանդ զգուշանալու է: Ո՞վ դիտէ, այժմ ամեն մի նորութիւն հետեռողներ է գոտնում մեր գրագէտների մէջ....:

Բ. Համաձայնութիւն:

Հատ հեռու կ'ամանէր մեղ, եթէ ուղենայինք աւելի մանրամասն քննութեան ևնթարկել ։ Ստեփանէի քերականական ձևերը. յուսանք, որ յիշածն ևս բաւական ճաշակ կ'ասց ընթերցողին:—Ստուգաբանութիւնից անցնինք մի քանի համաձայնական նկատողութիւնների:

1) Բայց ի ժամանակների անհետողութիւնը բաւական ստէպ աչքի է զարկում ։ Ստեփանէի զբութեան մէջ: Համաձայնութեան կանոններին համեմատ՝ երկու կամ աւելի նախադասութիւն տրամաբանական կազ ունենալով իրարու հետ ժամանակի վերաբերմամբ, ունին և հետեռողութիւն կամ որոշ կախումն իրարուց: Ուստի այդպիսի նախադասութիւնների մէջ կարելի չէ անխռից գործ ածել այս կամ այն ժամանակը՝ ըստ հաճոյից: Բայց ։ Ստեփանէն ասում է,

196 էջ.—Փիրմելիանոս եպիսկոպոսը զարմանալի էր ուսումնասիրութեամբ և իւր տղայութեան ժամանակ ժնայել ։ Արոգինէսի մօտ սովորելու:—Փոխ. նա (կամ որ և) իւր տղայութեան ժամանակ գնացել էր... և կամ՝ գնացած է եղել:

257 էջ.—Արշակ նամակին պատասխան ևս չէ տալիս, այլ անարդելով ապհանացնեց Շոռմայեցիներին:—Փոխ. արհամարհում է:

273 էջ.—Ա աղէս ոչ թուղթը կարդաց և ոչ Աբծն Կերսէսին տեսաւ, այլ հրամայութէ աքսորելու:—Փոխ. հրամայեց:

314 էջ.—Յաղկերտ կատարումէ ինդիրը և տէրութիւնը տալով կոսորովին, արյակնեց:—Փոխ. արձակում է: (Տե՛ս նաև էջ. 198, 252, 266 ևայլն.)

2) «Նախադասութիւնն անելիք անկանոն դաստիարակութիւն: «Նախադասութեան մասերը անկանոն կերպով յետ ու առաջ են «Երաքս».

զրուած, որ առաջացելէ մասամբ ռուսաց լեզուի ազգեցութենից և գլխաւորապէս աշխարհաբարի ոգուն անտեղեակլինելուց: Անհամար օրինակներից յիշենք մի քանիսը:

33 էջ.—Որ միւս անգամ սկսէր կախուած: — Փոխ. կռիւ սկսէր:

50 էջ.—Շատ տեղեր սահմաններ հասպապութչուն: — Փոխ. սահմաններ էր հաստատում:

64 էջ.—Հները, որոնք բամբիոնի վերա Երդութիւն, ասումէին: — Փոխ. և որ բամբուան վերայ Երդութիւն, ասումէին:

62 էջ.—ցոյց տալով յետոյ մեր թագաւորներին իրանց գործերի մէջ հրեցնուին: — Փոխ. մտերմութիւն ցոյց տալով...:

72 էջ.—Հայերի թագաւորը ժողովում պարունակում պարունակում: — Փոխ. պարունակում:

146 էջ.—և պատասխան լսումէ. — Փոխ. և պատասխան է լսում:

160 էջ.—և յայտնումէ իւր կամքը առնել օրիորդին իրան պան. — Փոխ. օրիորդին կին առնել:

265 էջ.—պարզեց... որ նա հարի պարի էր: — Փոխ. հարկ էր տալիս:

3) Ն. Ստեփանէի թիւր և սխալ գաղափարը աշխարհաբարի համաձայնութեան մասին նկատելի կերպով երեան է գոյլիս որոշ ուղղականի ու հայցականի *): և մանաւանդ բացայացով ու բացայացեալի գործածութեան մէջ: — Ի ացայացտիչը սովորաբար բացայացտեալի ածականը կարող է համարուել ուստի և բացայատեալից առաջ է դրուում: Հոլովելու ժամանակ ինքը անփոխիս է մնում և որոշն յօդ ևս չէ առնում իւր վերայ **): Պատճառն այն է, որ՝ եթէ նա հոլովուի բացայացտեալի հետ, շատ անդամ իմաստի շինուն: Կառաջ կ'առաջանայ, մասնաւանդ երբ որ բացայացտեալը մի քանի բառից է կազմուած:

*) Չուզելով ձանձրացնել օրինակներով՝ առաջարկում ենք որոշ Աւղղ. և Հայց. մասին տեսնել էջ 8, 20, 27, 189, 206, 224, 279 ևայլ:

**) Եւ կամ ընդհակառակն. բացայացտեալը բացայացտչի ածականն է, ուստի և սորանից առաջ է դրուում: օր. մեր Արշակ թագաւորից և մեր թագաւոր Արշակն, — երկու ձեն ևս գործածական է արևելեան երականական լեզուում: թէև առաջինը գերադասելու է:

Այլպիսի շփոթութեան առաջը կարելի է առնել նաև ո՞յ յա-
րաբերականով: (Տես նոյնպէս Քննկ. Քեր. Եյտընեանի): —

Հ. Ստեփանէն այսպիսի կանոններ բնաւ չէ ճանապահմ
և ուղղակի նոցա հակառակն է վարուում: Նա երկուսն ես՝
բայց այստին ու բայց այստեալը, հոլովումէ և դորանից այն
շփոթութիւններն ու այլանդակ ձեւերն են առաջ գալիս, որոց
միայն մի քանիսը՝ իբրև օրինակ, ահաւասիկ մէջ կ'թերենք:

40 էջ.—«գերի բոնելով ‘Ահեքարին, Մադէս կոչվածին»:
Փոխանակ ասելու. Մադէս կոչուած ‘Ահեքարին»:

110 էջ.—«իւր քրոջ ամուսին Վիհրդատին»: — Փոխ. իւր
քրոջ Վիհրդատ ամուսնուն (և կամ՝ իւր քր. ամուսին Վիհրդատին):

116 էջ.—«Երբ Հիւրկանոսը, Հրէաների քահանայապետն
ու թագաւորը և Երովդէսի եղբայր Փասայէլը տեսան»...: —
(Նմերցողը գուցէ լը անձն ենթագրէ այստեղ. 1) Հիւրկանոսը,
2) Հրէաների քահանայապետը, 3) Հր. թագաւորը և 4) Երբ.
եղբայր Փասայէլը. մինչդեռ խօսքը միայն Երկուունի մասին է: Ուստի
ասելու էր. Երբ Հրէաների Հիւրկանոսը քահանայապետն ու թա-
գաւորը և Երբ. եղբ. Փասայէլը տեսան... (և կամ՝ Հր. քա-
հանայապետ ու թագաւոր Հիւրկանոսը և Երբ. եղբ. Փասայէլը):

121 էջ.—«Թագաւորեցը իրանց վերա Արշամին, Արտա-
շէսի որդուն, Տիգրանի եղբօրը, Արգարի հօրը»: — Ուրեմն լը
անձն թագաւորեցը ին, ինչպէս լնմերցողը պիտի հասկանայ. մինչ-
դեռ խօսքը միայն մէջի մասին է. թագաւորեցը միայն Արշամն էր:

122 էջ.—«Արշամ բարկացած էր Ենանոսի, իւր ասպետի և
թակադրի վերա»: — Լարելի էր Երեւան անձն ենթագրել, թէև խօսքը
մէջի մասին է. ուստի ասելու էր. Արշամ բարկացած էր իւր Ենա-
նոս ասպետի ու թակադրի վերայ (և կամ՝ ... իւր ասպետ ու
թակադրի Ենանոսի վերայ):

145 էջ.—«Լուր տալով նորա դայեակին Ամբատին, Դիւ-
րատ Շագրատունու որդուն»: — Դարձեալ Երկու անձն կարելի է
ենթագրել. ասելու էր. — Լուր տալով նորա դայեակ Ամբատին
(կամ՝ Ամբատ դայեակին), որ Շ. Շագրատունու որդին էր:

158 էջ.—«Այս պատմումէ Ուղիւալը Հանիի քուրմը մեհեան-
ների պատմութիւնների գրողը»: — փոխ. մեհեանական պատմութիւն-
ների գրող Հանիի Ուղիւալ քուրմը (կամ՝ ... Հանիի քուրմ
Ուղիւալը):

204 էջ. — «Արտաշերը Սասանի որդին մեռնելով»: — Փոխ.
Սասանի Արտաշեր որդին (կամ՝ Սասանի որդին Արտաշերը):

209 էջ. — «Բայց յետոյ իւր կնոջից Մաքսիմինայից, Դիոկ-
ղիտիանոսի աղջկանից գրգռված»: — Կարծես՝ Երկու հոգուց էր գըր-
գռուած (գրգռուած՝ կամ ասել ։ Ստեփանէն) — Մաքսիմինայից
և Դիոկղիտիանոսի աղջկանից: Ուստի ասելու էր. իւր Մաքսի-
մինա կնոջից, որ Դիօկ աղջիկն էր:

283 էջ. — «առաջնորդութեամբ իրանց Ապարապետի, Ամբատ
Ասպետի, Բագարատի որդու. — դարձեալ Երեւան անձն կարելի է
Ենթագրել: Բայց Խօսքը միայն Աչի մասին է:

Բացի այս և սոցանման բազմաթիւ այլանդակ ձեւրից՝ միան-
գամայն սովորական են ։ Ստեփանէի համար և այսպիսիները.
Տիրանին մեր գործակալին. — մեր եղբօր Տիրանին, և այոց թա-
գաւորին. — ։ այոց թագաւորին Արշակին. — իւր հօրեղբօրից
Ներսէսից. — իւր հայրը Արշակը. — Խաղաղասէր կայսեր իմ
տէրին Օգոստոս Թէոդոսին և այլն. փոխանակ կանոնաւոր
ասելու. մեր գործակալ Տիրանին (կամ՝ մեր Տիրան գործա-
կալին), մեր եղբայր ։ այոց Տիրան թագաւորին (կամ՝ ։
թագաւոր Տիրանին), իւր Ներսէս հօրեղբօրից (կամ՝ իւր
հօրեղբայր Ներսէսից), իւր Արշակ հայրը (կամ՝ իւր հայր
Արշակը) և այլն.

4) Բայց այսուհետեւ ինչ ։ Ստեփանէն բայերի
խնդրաւութիւնների մէջ ևս խոշոր սխալներ է անում՝ գուցե
երբեմն սորկաբար հետեւելով զրաբարին, որ այսպիսի գէպ-
քերում անհիմն է, և մէծաւ մասամբ անծանօթ լինելով աշ-
խարհաբարի ոգուն: Աջամ մի քանի օրինակ:

31 էջ. — Հասնել այնպէղին, ուր...: Հասնել առհճանելքին (էջ
152), Հասնել դաստիակէղբան (155): Փոխ. Հասնել այնտեղ, ուր...
Հասնել սահմանները, գաստակէրտը: Համեմատէ՛. տուն Հասաւ,
քաղաք Հասաւ, աշխարհ Հասաւ և այլն:

154 էջ. — Աւանդին չ'ինայել: — Ուեւ գրոց լեզուում՝ խնայել
ի կեանս, բայց աշխարհաբառում՝ կեանք չ'ինայել:

155 էջ. — Ա աղբով զարկեց Երուանդի Գլուխը (ինչի՞ն զար-
կից՝ պատի՞ն արդեօք): Փոխ. Երուանդի Գլուխին:

160 էջ. — Արտաշէս յանձն չառաւ պատրանին տալու. — Փոխ.
պատանուն տալու:

167 էջ.—զօրենին առաջ ձգած քշումէ. — փոխ. զօրքը առաջ ձգած՝ քշումէ:

188 էջ.—մեղ մի' մեղագրեր (ասում է Խորենացին Աահակ Շագրատունուն) իբրև աւելորդ բան անող ո՞վ (?): — Անալ Խնդրառութեան պատճառով՝ առելորդ բան անողը, կարծես, Աահակ Շագրատունին էր. մինչդեռ Խորենացին իւր մասին է ասում:

270 էջ.—Կրակ տուին դրանեցն. — փոխ. կրակ տուին դռները: Ասում են՝ տունը կրակ տալ, այսինքն՝ վառել և ոչ թէ՝ դանը կրակ տալ, որ բոլորովին այլ իմաստ ունի:

272 էջ.—աղաչանքներ էին մատուցանում ‘Կերսէսին, որ անհոգ չ'լինի իւր վիճակի կորուստի մէջ: Հասկանալի՞ է արդեօք. Խորենացին ասում է՝ թէ աղաչում էին ‘Կերսէսին, որ նա անփոյթ չ'մնայ՝ տեսնելով իւր վիճակի (ժողովրդի) կորուստը:

295 էջ.—Խոսրով շատ ուրախացաւ Աահակ ասպետի գույն. — փոխ. Աահակ ասպետի գալուն:

326 էջ.—շատերին ուղիղ ճանապարհն է բերում: — փոխ. շատերին ուղիղ ճանապարհն է բերում: Համեմատէ. Խօսքի բերել, հաւատի բերել և այլ այսպիսի ոճերը:

Ուղաժը-Ռեան կողմից ևս չէ կարելի անուշադիր թողնել. Ստեփանէի լեզուն: ‘Նախ՝ ներկայ գերբայ ուղ վերջաւորութիւնը նա ողէ գրում միշտ. Յետոյ՝ Հ. Ստեփանէն առհասարակ առանձին համակրութիւն ունի դէպի օ տառը. օտար յատուկ անունները մեծաւ մասսմբ օ ովէ նա փոխազրում, թէե օ ով ևս բաւական յաճախ են: Դ'կարողացանք հասկանալ օ ՚ի առաւելութիւնը ևս և՝ թէ ինչո՞ւ միակերպութիւն չէ պահպանում նա իւր զրութեան մէջ: Երկուսից մէկը կամ օ և կամ ա ապա թէ ոչ միշտ երկու տեսակ ուղղագրութիւն է ծագում, որ շատ անյարմար է: Այսպէս՝ անխափի դործ են ածուած. Կիկղոսլ և Պօղիկեմ, Կարբուզն և Գութք, Արիոբարզան և Խւարօսի, Երաթոյ և Աղօզիոս, Նեպազոմոս, և Պօղիմոն, Մարտիրապօլիս և Աօջենէ և այլն:

Կերջապէս մի քանի խօսք ևս Աէպադը-Ռեան մասին: Ով որ փոքրիշատէ ծանօթէ արևելեան և արեմտեան լեզուների կետագրութեանը, անշուշտ նկատել է նա Հայոց լեզուի անհամեմատ յարմարութիւնը նոյն խնդրում: Մեր լեզուի կետագրութիւնը խիստ աղամաբանական է և այդ է նորա

առաւելութիւնը միւսների վերայ: Օրինակ՝ մեր վեջակետը, որ ցոյց է տալիս մի նախագասութեան կամ պարբերութեան վերջանալը, նշանակուում է ամենից տւելի նկարելք ու աչքի զարկող Երկու նշանակուցով: Եյնաեղ, ուր միւնոյն պարբերութեան մէջ երկու նախագասութիւն պէտք է զատել իրարուց և կամ որ և է նախագասութեան բացատրող մի իմաստ է հետեւում մենք նշանակում ենք միջակետով որ ասել է թէ միջն կետ է պակաս նկատելի, քան վերջակեալ: Ադորակետի դորձածութիւնը համարեա միւնոյն է բոլոր եւրոպական լեզուներում:—Մեր հարցական և բացադառնական նշաներն ես յայնին իրենց յարմարութեամբ և տրամադրանական հիմամբ, այսինքն՝ ոչ թէ անորոշաբար զբուելով նախագասութեան վերջը, ինչպէս այդ եւրոպական լեզուներումն է, այլ այն բառի վերայ, որ հարցական կամ բայցագանչական իմաստ ունի: Ի՞այց սոցանից զատ մի նշանախեց ևս ունինք, որ սեպհական է միայն մեր լեզուին և որպէս նրբութիւնը չկայ միւս լեզուներում: Այդ՝ բայց է: «Ա գործ է ածուում որ և է բառի վերջը՝ միւնոյն նախագասութեան մէջ յաջորդ բառին՝ չ'վերաբերուելը ցոյց տալու համար, նոյնպէս այն գէպքում ուր ստորակեալ անկարմար է, և երբեմն նաև իբրև զեղչման և բացատրութեան նշան»: Օր, ո՞ւ Թիֆլիս ուղարկածդ նամակին ես պատասխանեցի: այն է քո նամակին... և ոչ թէ՝ քո Թիֆլիս...: (Տե՛ս նոյնպէս Քննկ, Քեր, Եյտընեանի):—Եյս վերջին նշանախեցի՝ բայց կարեւութիւնը բոլորսվին՝ չհասկանալով, ։ Ատեփանեն օտարուախ նորաձեւութեամբ մերժում է նորան՝ նորա տեղը ոչ մի կետ չգնելով որով իւր լեզուն՝ առանց այն ևս ճապաղ ու խառն, սիռուում է անկարգ՝ նախագասութեան այլ և այլ մասերը առանց պատշաճօրէն զատուել կարենալու իրարուց, ուստի առաջանում է նաև իմաստի շփոթութիւն: —Օրինակներ բոլորովին աւելրդէ առաջ բերել քանի որ ամեն մի երեսում մի քանիսը կարելի է գտնել առանց դժուարութեան:

Մենք վերջացրինք մեր նկատողութիւնները:

Երբեք եղանակացունիւն բոլոր մեր ասածների՝ ահա՛ թէ ինչ կերպարանքով է ներկայանում մեղ ։ Ատեփանեի աշխատու-

Թիմբը: Մի կողմից պատմական և այլ տեղեկութիւններով առատ և օտարաբարբառ վկայութիւններով համեմած Առաջնանն ու Շահնշահ-Ռի-նները որոնք՝ իրեւ գիտնական (և երբեմն նաև մասնագիտական) հետազոտութիւններ անշուշտ սակաւ մատչելի կ'լինին ընթերցողների մեծամասնութեանը.—և միւս կողմից՝ տարօրինակ կերպով պարզութեան վերածած չափազանց նախնական, անմշակ, նաև անկանոն լըպութիւնութեանը ուրեմնացու Պատմութեան աշխարհաբար նարդմանու-Ռի-նը ուր ոտի տակ են տուած տարրական գրականական պահանջները:

Առաջինը, այն է Առաջարանն ու Շահնօթութիւնները, ովքն ննիութիւնները ու նիւթիւնները չունի. նա ուղղակի առնուած է Մ. Եմինից և ուրիշներից:

Երկրորդը՝ թարգմանութիւնը, և. Ստեփանէի անկապրելի աշխահանու-Ռի-նն է, նորա գիտութեան և պատրաստութեան ասախճանի արգասիքը:

Ետա ափսոսում ենք, որ Շ. Վարդապետի «երկար տարիների մոտատանջ հոգսերի և ջանքերի արդիւնքը, մանաւանդ աշխարհաբար լեզուի ոճերի կողմից» (Առաջ. ՁԵ)՝ այսպէս ապարդիւն է եղել: Ինչո՞ւ որովհետեւ նա ձեռք է զարկել այնպիսի մի գործի, որի համար ոչ կարենը գիտութիւն ունի և ոչ պատշաճաւոր պատրաստութիւն «մանաւանդ աշխարհաբար լեզուի ոճերի կողմից».

Իսպահանց Պատրաստութեան աշխարհաբար նարդմանու-Ռի-նը անցողը և անդուհացուցիչ պէտք է նորից նարդմանել նորան:

Գր. Խալսութան:

19 Վայիսի, 1890 թ.

Առողջուած:



ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Ո՞եր հանդիսի սուզ էջերը այս առաջին անգամը չէ, որ արգելք են լինում յաձախ ընդարձակ գրութիւններ տպագրելու: Հայ կաթողիկ հասարակութեան պատմութիւնը իրեն յարակից հետաքրքրական երեսյթներով մենք մտադիր էինք տպելու «Նրաքսում» անցեալ տարուայ առաջին զբքում: Սակայն մինչև այսօր մեզ չաջողուելու պատճառաւ, այլ ևս չենք ուզում դեմք յետաձել գեռ ևս ոչ մի տեղ չտպադրուած հասունեան և Հակահասունեան հայ կաթողիկ հասարակութիւնների մէջ երկու տարի առաջ միանալու նշանաւոր պայմանագիրը, որը վաւերացրած է երկու կողմի պաշտօնական անձանց կողմից: Այս պայմանագրի մէջ ուշադրութեան արժանի կարեւոր կետեր կան, որոնց մասին կիսունքը ընդարձակ դրութեան մէջ միջոցներս ներածին արէս, սակայն այժմ նկատելու է որ այս պայմանագրով որի չնորհիւ հակահասունեանները համաձայնուեցան միանալու հասունեանների հետ, ակնյայտնի է Ա. Պապի անմասնակցութիւնը հայ կաթողիկների պատրիարքական ընտրութեան մէջ: Ահա այդ պայմանագիրը:

Պատրիարքական վարչութեան նպատակն է կաթողիկէ Հայ հասարակութեան հոգեւոր և աշխարհային ներքին պիտոյքն հոգաւ, Կայսերական Տէրութեան իրաւանց և ի Բ. Պանէ ի հուց չնորհեալ արտօնութեանց սահմանին մէջ, և ըստ գաւանութեան և վաղեմի աւանդութեանց և սովորութեանց կաթողիկէ հայ եկեղեցւոյ: Ուստի Կոստանդնուպօլսոյ Պատրիարք և Կիլիկիոյ կաթողիկոսը՝ որ կաթողիկեայ հայ ժողովրդեան արքունի հրովարտակաւ կարգուած գլուխն է, կընտրուի ի Ախւնչողոսէ, առանց ո՛ւէ Ֆիզանդունէան յարդարագուասու, Օսմանեան Տէրութեան հպատակ և պատրիարքական Աթոռոյն պատկանեալ հինգ եպիսկոպոսաց մէջէն որոնց անունները պիտի ներկայացնէ իրեն աշխարհականաց (Ֆիզանդունէան) և եկեղեցականաց համագումար ժողովը: Ընտրեալն կը ներկայացուի առ Բ. Պատռան աղերսագրով մը՝ յորում կը խնդրուի պատրիարքական հրովարտակը (պէրաթ): Զը կրնար պատրիարք

ընտրուել եկեղեցական մը որ տէրութեան օրինաց և եկեղեցական կանոնաց դէմ յանցանաց պատճառաւ, դատապարտութիւն կրած է, կամ դատաստանի տակ կը գտնուի:

Պատրիարքին ընտրութիւնը Ա. Պապին ևս ծանուցանելով, իւրեն հոգեուրական հաստատութիւնը և բարիանի պատիւ կը խընդուի:

Ա. Երոյիշեալ եղանակաւ ընտրեալ պատրիարքը անմիջապէս կը բազմի իր Աթոռը և ձեռնադրութիւնը կատարուելով, տէր կը լայս այն ամենայն իրաւանց և արտօնութեանց որ ի վաղուց չետէ կը վերաբերին Աթոռոյն, իբր Արեւելեան պատրիարքական Աթոռոյ, և զանոնք լիով գործածելու իրաւունքը կը ստանայ, միայն չը կրնար իբր ազգապետ պաշտօնական գործոց պարապել, Տ. Դրան հրամանագիրը ընդունած:

Պալով գաւառական Առաջնորդաց (ԹԵՐԻԱԿԱ), առաջնորդ մաշած տեղւոյն աշխարհականք և եկեղեցականք, երեք եկեղեցականներ կը ներկայացուի առ Տ. Դրուն. Պատրիարքն զնա իւր առանձին իշխանութեամբ կը ձեռնադրէ, Աիւնչոգոսին չետ միատեղ, եթէ առաջնորդ կարգուելու եկեղեցական մը որ չէ հպատակ (Օմաննեան Տէրութեան, կամ պատրիարքի նկատմամբ վերը նշանակուած միւս պայմանները չը լրացնէր: Եթէ գաւառական առաջնորդի մը տէրութեան օրինաց դէմ ծանր յանցանք և կամ պաշտօնին դադարումը հարկադրող ուրիշ ընթացքը պատահէ, պատրիարքը պէտք եղածը կը տնօրինէ, ինդիրը քննուելէ յետոյ հոգեոր կամ վարչական ժողովոյն մէջ:

Ազգային ստացուածք և կալուածք կը տնօրինուին ըստ (Օսմանեան օրինաց և ըստ հնաւանդ սովորութեանց: Ամեն տեսակ կալուածք և ստացուածք որ ընդհանուր ժողովրդեան հանգանակութեամբ գոյացած են, կամ անհատից կողմանէ ժողովրդեան, կամ պատրիարքութեան շնորհուած են, հասարակութեան ստացուածքն են, թէ և անոնց տնօրինութիւնը առանձին անձի մը յանձնուած ըլլայ, բարերարաց դիման և նպատակին հակառակ չը գործուելը ապահովութեան և հսկողութեան տակ պիտի առնուի: Ա. Երոյապէս, եթէ վերջիշեալ սկզբանց կանոնաց եղծումը պատճառ ընթացք պատահելու ըլլայ, նախ պատրիարքին կը դիմուի, և եթէ ինդիրն այս միջոցաւ չը կարենայ լուծուել, Աիւնչոգոսը պատրիարքի ձեռքով գումարուելով, իսկ վճիռն կուտայ գործոյն էութեան և հանգամանաց վրայ, յետ որպէս վարչութեան ժողովը՝ մի հարկին, նոյն սկզբանց և կանոնաց պահպանման համար պէտք եղած տնօրինութիւններն ի գործ կը դնէ:

1889թ. մարտէ մինչև 1890 փետր. կրթական նախարարութիւնը 941 գրեանց և տետրակներու տպագրութիւնն արտօնած է. Թուրքերէն, ֆրանսերէն, անգլիերէն, սպանիօլերէն, պուլկարերէն, արաբերէն և իտալերէն լեզուներով: Ասոնց մէջ թուրքերէն հրատարակութիւնք մեծագոյն թիւը կը կազմեն, ի բաց առեալ կրօնական գրքերը որոց մէջ առաջին տեղը կը գրաւեն հայերէն հրատարակութիւնք, ինչպէս նաև թատերական գործեր՝ յորս իտալերէն և յունարէնը բազմաթիւ են: Ուրիշ կարգի գրուածոց մէջ, թուրքերէնէն անմիշապէս յետոյ առաջին կարգը կը բռնեն հայերէն՝ բանասարչութական հրատարակութեանց նաևն. յունարէնը՝ վեպերու, մաթէմաթիքի, ուղեորութեան, պատմութեան, աշխարհագրութեան և բնական գիտութեանց վերաբերեալ հրատարակութեանց մէջ. ֆրանսերէնը՝ բժշկական հրատարակութեանց մէջ:

«Արաքսի» անցեալ տարուայ առաջին գրքում յիշած էինք, որ Պետերբուրգի համալսարանի համեմատական լեզուագիտութեան մագիստրոս Վ. Ռ. Քասանդր Տոմսոն, որ 1887 թ. տպագրել էր «Лингвистическая Издательстванія» վերնագրով Ախալցխայի բարբառի մասին լեզուաբանական մի հետազոտութիւն, ձեռնարկելէ և մի նոր լեզուաբանական հետազոտութեան հայերէն մի ուրիշ բարբառի մասին: Վ. Յ. օրերս արգէն լոյս տեսաւ մամուլի տակից այս նոր աշխատութիւնն, որի վերնագիրն է «Историческая Грамматика современного армянского языка города Тифлиса». Պատառապէս 311 երեսից բաղկացած մեծ ուշագրութեան արժանի այս հրատարակութեան մասին անշուշտ կ'իսունք «Արաքսի» յաջորդ գրքում: «Կարգի գինն է 2 ռ. 50 կ.

Ըստով տեղւոյս մամուլի տակից լոյս կտեսնի մաքուր տպագրութեամբ Պ. Լեռենցի ճանաստեղծութիւնները:

«Արաքսի» երկրորդ գրքում կ'գնենք ի միջի այլոց Լեռմօնտովի «Մեր ժամանակի հերոսի» մէջ իշխանդատեր Մերի պատկերը:

**1889 ԱՐԱՔՍԻ» անցեալ տարուայ երկու
գրքերը բովանդակում են.**

Հասարակական խնդիրներ.

Գաղթականութեան մասին Ա. Գուլսմբեանց, Միացեալ Շն-
կերութեանց մասին, Կովկասեան արդիւնահանդէս. Ե-

Տեղագրական.

Եւղոկիա. Ուսումնառեց, Հայնէշ, Շ'իպին, Վրահ, Քիֆարան. Երմէն, Յաւերակունս Հառմլայ. Գոստակ, Մարաշ
Ալլինէցի, Հաճընոյ լեզուն. Օր. Հայկանուշ Պոյանձեան, Մյնթապի
Հայոց Հին սովորութիւններ. Պերճ Մահմէտան, Կիլիկիոյ ժողովր-
դական աղօթքներ. Յ. Չ. և Պերճ, Տեղագրութիւն Եղեսիոյ.
Եր. Հովհաններ Մարաշու բառբառին. Ալլինէցի:

Անսատգրական.

Կարապետ վարդապետ Շահնազարեանց. Ա. Գուլսմբեանց,
Խելօք Կարապետ և նորա «բանք» Յ. Չ. Կիողոս եպիսկոպոս.
Ալլինէցան, Քերովլիկ Պատկանեան. Ար. Ա. Գաբրիէլ աւագ-
քահանայ Պատկանեան. Խնմանէնասիրունին, Գամբանական Գաբր-
իէլ քահանայի վերայ. Թա. Օստացեան, Կասր-Լյոդին Շահ
Պարսից. Լ. Ա:

Բանասիրական.

Մի կտոր իմ թատրոնական յիշողութիւններից. Գ. Զմէտան,
Հայոց մեծ գաղթականութիւնը Ժմի գարում և նորա վիճակը
Եւհաստանում. Լ. Մազյըբեանց, Խմյիշողութիւններից. Ե. Իշ-
խան Մովսէս Երդութեան-Երկայնաբաղուկ. Գ. Վ. Կիլիպունէան,
Խմյթատրոնական յիշողութիւններից. Գ. Զմէտան: Կովումէ լըս-
վելու համար. Միկայէլ Կառլոսինդէանց:

Բանաստեղծութիւններ

Երգ, Պատկեր, Սոխակին, Մայիսի մէկը, Օսաղիկ. Եղ. Օստ-
ափունչան, Ես սիրում եմ, Մենաստան, Ես կը ցանկայի, Կապ-
դաս, Ժառչուիկներ. Ար. Ա. * * Յով. Մակարանէանց, Երազ
Երմօնտով. Թարգ. Ա. Ա. Պարտինէան:

Հայկական հաստատութիւններ.

Գյալֆայեան աղջկանց որբանոց. Արքունիկ Գունչայէան:

Մատենագրական.

Կաշան, Գարշէն. Թարգ. Եղ. Օստափունչան:

Մատենախօսական.

Առուսայ բառարան. Ա. Յովհաննիսեանի. Ար. Մալքա-
սեանց, «Արարատեան լեռներում»: «Քրիստոնեայ Հայաստան և
իւր գրականութիւնը»: Տեղայք, Առվակս Խորենացու Հայկական
պատմութիւն. Կոմէն, Ignazio Guidi. La cronica siriaca di Michele I
(Note Miscelanee, Roma): Փաւստոս Բուզանդ. Ե. Ա. Ա. Խենա:
Le Mal d'Orient, Paris. Հեղ. Քեսնի-Բէյի Ա. Եր.

Աղջին յիշատակարան.

Կամակներ Այնայէն Կալենդեանցի, Գշ. Ավելապատանցի և
Գ. +. Արձ.

Այլ այլք.

Լուրեր.

Պատկերներ առիթով.

Վայտարարութիւններ.

Վաւելուած.

Վաեա. Կորավէպ Տուրգենեվի. Թարգմ. Եղ. Օռապո-ըեան,
Բէլա, Լերմօնտօվ. Թարգ. Յովհաննէս Առվակսանչանց:
Կկարեներ և Պատկերներ.

1. Առւրբ Լշմիածին: 2. Միացեալ Ընկերութեանց դպրոցի
ստորին գասատան աշակերտուհիները: 3. Եւգոկիոյ տեսարան: 4.
Միացեալ Ընկերութեանց դպրոցի աշակերտները: 5. Կարապետ
վարդապետ Շահնազարեանց. 6. Խելօք Կարապետ: 7. Ամեկողոս
եպիսկոպոս. Գոնուզի վանահայր: 8. Քերովքէ Պատկանեան:
9. Գաբրիէլ աւագ քահանայ Պատկանեան: 10. Հայոց առաջին
եկեղեցին Լեհաստանում: 11. Ապեմի Հայկական պատկեր Ա.
Կոտուածածին (Պուկաս աւետարանչին վերագրուած): 12. Միա-
ցեալ Ընկերութեանց դպրոցի բարձր. դաս. աշակերտուհիները:
13. Նասր-Լշտին Շահ Պարսից: 14. Խաչատուր Կոմովեանցի
տունը: 15. Արբուչի Գալֆայեան: 16. Խևան Առվակս Սոզու-
թեան-Երկայնաբազուկ: 17. Դարբալեան կիրճ, նկար Այլապալանին:
18. Ջիխիս-Զիրի. Արտախովանին: 19. Ոչխարները փոթորիկից ծովն
են թափիվում. Այլապալանին: 20. Քամին սաստկանում է. Անգլիանի:
21. Փոթորիկ Աղովեան ծովում. Այլապալանին: 22. Խամում. Լա-
քոքին: 23, 24, 25 և 26. Անասարեանի պահարանի նկարը:

Երկու զբքի զիննէ ճանապարհածախով հանդերձ 3 ռուբ-
լի կանիսիկ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒԹԻՒՆ

S. S. ՆԵՐՍԻՍԻ Ս. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՊԱՏՐԻԱՐքի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ

ՏԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐ ՀԱՅՈՑ, Ի 21 ՅՈՒՆԻՒ, 1878.

Տեարք Եղբայրանք,

Ամիս մ'առաջ սոյն այս պատահառելի ժողովին մէջ պատասխանելով հարցման մը, զոր ազդասէր ոմանք Երեսփոխանք կ'ուղղէին ինձ Վզգային Խնդրոյն նկատմամբ, Եւրոպական Տէրութեանց քով մեր ըրած ջանքերը և գտած համակարական ընդունելութիւնը զկնի յառաջ բերելու, կըսէի ձեղի. «Ես չեմ միայն աշխատող, այլ ի մէ բոլոր պատասխանատուութիւն»:

Դեռ ժամը չը հնչեց՝ ամբողջ այս պատասխանատուութեան, զի կրկին է նա. մին այսօր չայց այս մեծ ժողովին առջե, և միւսը ազգին առջե, յանցեալն, ի ներկային և յապագայն, և պատմութեան առջե:

Այս, ես այս պատասխանատուութիւնը շատ աւելի ծանր զգացի քան զոր կրնաք Երեակայել, և չը զգացի զայն՝ միայն ձեր առջե՝ որ այսօրուան ազդը կը ներկայացնէք, այլ և զգացի զայն՝ մեր նախնեաց հոգիներուն ու յիշատակին առջե՝ որ կանդնեցին և որ պահեցին զայ ազգն ու զայաստան, և զգացի զայն այն անհամար չայ սերունդներուն առջե՝ որք պիտի յաջորդեն մեր սերունդին: Եթէ երկրորդն այս պատասխանատուութեանց շատ աւելի ծանր է ու աչեղ քան զառաջինը, ներեցէ՛ք ըսել հիմակուց, ես այդ պատասխանատուութենէն բնաւ չեմ վախնար, զի ամբողջապէ՛ս ունիմ պատասխանել, և Խղճմտանքս անդորր է և զուարթ: Իսկ աւելի փափուկ է առաջին պատասխանատուութիւնս, այն որ կոչեալ եմ այսօր կատարել ձեր առջե, և եթէ իմ բացատրութիւններս գոհ չ'ընեն զձեզ, ուրիշ բան չը մնար ինձ ընել այլ պատմութեան դատաստանին ապաւինիլ որուն ենթարկեալ ենք ամենքս ալ: և ես և գուք, և որք այս շրջապատէս գուրս կը խօսին և կը գրեն:

Եւ զայս ըսելով ոչ թէ բնաւ նուազ կուղեմ զգալ ձեր դատելու իրաւունքն ու իշխանութիւնը, այլ զի յանուն ազգային

պատկառելի շահուց, պէտք է նախամեծար համարիմ կրել դատապարտութիւն անիրաւ՝ նաև ազգիս կողմէն, քան թէ հրապարակել զամենայն: Եշ եթէ ամեն տեսակ հալածանք, դատապարտութիւն, պատիժ և փորձութիւն յանձս չէի առած առաջին օրէն, զգուշացուցանելով զայլս այն ամենէն և զիս միայն կէտ նպատակի ընծայելով, եթէ յանձս չէի առած զոհուիլ, ինչո՞ւ ուրեմն ձեռնարկեցի յայս գործ:

Տեարք Երեսփոխանք.

Հայկական ինդիրը, իր արդի ձերին մէջ իրմէ չ'ծնաւ, այլ ընդհանուր Արեւելեան ինդիրէն ծագեցաւ: Ահաւասիկ ինչչէս. Հայոց ինդիր մը կար տասն և աւելի տարիներէ ի վեր, մինչդեռ ոչ Հէրսէք—Պօսնայի ինդիր կար, ոչ Պուլկարաց ինդիր քաղաքական ձեռվ: Հայաստանի հայոց կրած հարստահարութեան ինդիրն էր այն՝ Ազգին ու Տէրութեան մէջ մնացած էր. և ազգը անընդհատ տասը տարի, իր Յանձնաժողովներովը, իր Քաղաքական ժողովներովը, իր Երեսփոխանական ժողովներովը, իր Պատրիարքներովը, այս հարստահարութեանց բարձումը կը հայցէր Բարձրագոյն Դիրնէն: Ահա այս էր միայն Հայոց ինդիրը: Եկաւ Հէրսէք—Պօսնայի ինդիրը՝ և ապա Պուլկարիոյ ինդիրը:

Այս երկու ինդիրներուն մէջ իսաւոնուած էր հարստահարութեան ինդրոյն հետ ազգային ինքնօրինութեան ինդիրն ալ: Այս գաւառները ապստամբութեան դրօշը պարզեցին իրենց օրինաւոր Տէրովը դէմ: Արիւնահեղութիւնը Եւրոպայի միջամտութիւնը հրաւիրեց, և այս մեծ կայսրութեան դրացի ուրիշ մեծ կայսրութիւն մը յանուն Վրիստոնէութեան ամենէն աւելի ձայն բարձրացուց: Տէրութիւնք ի ժողով գումարեցան ի Պօլիս: Ի՞նչ ըրաւ Հայոց ազգը, օրինաւորութենէն դուրս չելաւ. Հայերը գոհ էին որ (Օսմանեան Տէրութեան ներքեւ էին, այլ իրենց վիճակէն գառնապէս գժգոհ էին, և որովհետև ընդհանուր քրիստոնէից վիճակը բարւոքելու խօսքեր կ'ըլլային, Հայերն ալ ընդհանուր բարեկարգութենէն սպասեցին իրենց վիճակին բարւոքումը:

Չեր Պատրիարքը, դիմէք արդէն, Տեարք Երեսփոխանք, պարապ չ'կեցաւ. աշխատեցաւ Ի՞ Պրան քով, աշխատեցաւ գեսպանաց քով: Այլ Պեսպանաժողովը փոխանակ ընդհանուր վիճակին բարւոքումը նկատողութեան առնելու, նկատողութեան առաւ միայն Հէրսէք—Պօսնայի և Պուլկարաց ինդիրները: Ասի

անիրաւութիւն մըն էր մնացեալ քրիստոնեայ ժողովրդոց, և ներեցէք ըսել, թերեւս իմ սահմանէս քիչ մը դուրս ելնելով, (Օսմաննեան կայսրութեան ալ քայլայումը կը պատրաստէր՝ ապստամբութիւնը քայլալերելով:

(Օսմաննեան կայսրութիւնը Պատանաժողովին այս որոշումը չընդունեց, և մեք հայքս պատճառ չ'ունէինք որ գժգոհի էին, տեսնելով ին. Պատուը, որ կը մերժէր բացառիկ ու մասնաւոր շնորհումներ ու բարեկարգութիւնք, որոց արդիւնքը պիտի ըլլար մանաւանդ աւելի դառնացում վիճակին, զի տուրերքն՝ որոնցմով կը բաղկանայ յոռին այս երկրին կառավարութեան մէջ: Այլ մեծագոյն չարիք մ'ու աղէտք փրթաւ ընդհանուր երկրին վրայ. պատերազմը: (Օսմաննեան կայսրութիւնը այս մեծ պատերազմէն առաջ իր զօրութիւնը գործածած էր Հէրսէք-Պօսնայի և Պուլկարիոյ ապստամբութեանց դէմ և կանոնաւոր պատերազմ մղելով երկու իշխանութեան կը սահնար ինչ որ պաշտօնական կերպարանք չունենալով էր, ի լրութիւն դատապարտած էր անոնց զէնքերը: Հուսկ ապա Պուլկարիոյ արդաւանդ դաշտերը, և աւաղ, մեր այնքան ազգայնոց արևամբն որ քրտինքով ողողեալ մեր Հայաստանի օրհնեալ դաշտերը, անիծակուռ արհեստին քանդմանցն ու արհաւերաց տեսարան եղան: (Օսմաննեան ազգը իր ցեղին յատուկ բնազդումն ոգեսորած՝ պահ մը ետ մղեց ահազին թշնամին և յապուշ կրթեց զաշխարհ իր արիական գիմադրութեամբ ու վերջապէս տեղի տուաւ աւելի մեծ զօրութեան առջե, և Պատուիոյ յաղթական բանակները մէկ կողմէն մինչև Հայաստանի մայրաքաղաքն եկան, և միւս կողմէն մինչեւ բոլոր Ծառքիոյ մայրաքաղաքն ի Պօլիս: Ճամը հնչեց Խաղաղութեան: Երկու տէրութեանց բանակցութիւնն սկսաւ. Քըզանլըքի մէջ և ընդհանուր պայմաններն կրեցան յԱդրիանուպօլիս: Անմիջապէս պիտի սկսէր Պաշնադրութեան բանակցութիւնը:

Ոչ ոք կարող է բուռն զօրութեան դէմ, մանաւանդ երբ բարոյական զօրութիւն միայն ունի. և ով ալ ըլլայ չ'կրնար փոխել եղելութեանց ընթացքը: Վեծ խելք և մեծ հեռատեսութիւն պէտք չէր տեսնելու համար թէ երկրին վիճակը կը փոխուէր բոլորովին, և անոր հետնա՞ւ անձիւր քրիստոնեայ ժողովուրդի գոյութեան պայմաններն ալ կը փոխուէր: Վէկ խօսքով վտանգն ակներէ էր ինձի համար և ամենուն համար, որ Հայոց ազգը պիտի *

կրնար անհետանալ իբր ինքնուրոյն ժողովուրդ, և եթէ իր գոյութիւնը չ'ամրապնդէր, սիխտի ոչնչանար: — Հարստահարութեան ինդրոյն կաւելնար մեծ քան զայն խնդիր, ազգին գոյութեան ու չ'գոյութեան խնդիրը:

Այլ ընդհանուր պայմանաց մէջ Հայոց ազգին անուն անգամ չը կար և Դաշնադրութեան վիճաբանութիւնը այն պայմանաց սահմանին մէջ միայն կրնար ըլլալ: Վրեթէ յուսահատելը էր. և ես չ'գիտեմ թէ ինչպէս չ'յուսահատեցանք: Անկարելի է նկարագրել ազգին մորմոքը զոր թողէք ըսեմ, զգացի ահեղն այն պատասխանատուութիւն որ այն հանդիսաւոր ժամուն կը ծանրանար իմ վրա. զի ազգն իր Երեսփոխանական ժողովովը Ազգին խնդիրն ինձի էր յանձնած մասնաւորապէս: Յաջողիլ անկարելի էր սովորական միջոցներով, ոչ ալ սպասելը ներելի էր: Կրնայի ի ժողով կոչել զձեզ, և այն ատեն բան մը ընելով ալ՝ ձեր առջե պաստիսանատութենէ ազատիլ. կրնայի գոնէ Քաղաքական ժողովով գործել: Պէտք էր որ այնպիսի պարագայի մէջ նայէի միայն անձնական պատասխանատութեանս ու ձե՛ր առջե անպարտ ել նելով խղճիս առջե պարտաւո՞ր մնայի:

Տեարք Երեսփոխանք, անշուշտ անհետացած չէ ձեր յիշողութենէն այն օրերուն յիշատակը: Օսմանեան ազգը որ առատապէս հեղած էր իր արիւնն ի դաշտ պատերազմաց այնքան զոհողութիւններէ ետքը իր պարտութիւնը տեսնելով, և այսքան չարեաց սկզբնապատճառ Քրիստոնէութեան անունը միշտ հնչելով իր ականջին, բնական էր որ արտաքոյ կարգի գրգռութիւն մը զգար: Աւելի քան երբէք պէտք էր խոհեմութեամբ ու շրջահայեցութեամբ գործել. այլ նաև ուժով և ազդու կերպով գործել: Ձեր Պատրիարքը մտածեց, խորհրդակցեցաւ: Իր շուրջն ունէր բոլոր եպիսկոպոսական դասը պատրաստ գործելու իրեն հետ յանուն ազգին զոհուելու եթէ պէտք ըլլար: Միացաւ իր սրբազն եղբարց հետ և որոնք արդէն իրենց կոչման օրն առաջի Աստուծոյ երգուեալ էին, նորէն երգուան նուիրել զանձինս ազգին:

Օսմանեան լիազօր դեսպանք դեռ չէին ուղեւորած յ'Արքիանուպօլիս, ես ու իմ սրբազն եղբայրակիցներս գործել սկսանք: Ազգին յայտնի էր այն ատեն ինչ որ ուղեցինք, այն է Հայոց յիշատակութիւնը Դաշնադրութեան մէջ. և յայտնի է այսօր թէ այս յիշատակութիւնն եղաւ մասնաւոր յօդուածով մը: Արդեօք ձե՛ր շդ

մեր ուղածին պէս եղաւ յիշատակութիւնը. Ո՞չ այլ քաղաքականութեան մէջ «Եշրբ չես կրնար ընել ինչ որ կուզես, պէտք է ընես ինչ որ կրնաս»:

Աւասիկ Վ.յ. Ատեփանոսի Գաշնադրութեան 16-րդ յօդուածը.

«Յօդ. 16. Նիստելով որ Ուստահան զօրաց Նայտագուանի մէջ ժրաւած բայց Թարգրութիւն վերաբանութիւնից առելով մէնիւր իրանական իշխանութեան և Երիւանի բարեկամական յարաբերութիւններուն մասս բերող ինձիւնելու ժամանութ առաջ Դաստիարակութիւն մէջ արելուան այսպոյից պահանջած բարգրութեան ու բարեկամութութեան առաջ այլ յաղագութը գործադրութ և Քիշրութիւն ու Չերքեզիւն դէմ անոնց ապահովութիւնն երաշխատութելու»:

Վ.յ. յօդուածին ուժովը քիւրտերուն ու չէրքեզներուն հարստահարութեանց գէմա ապահովեալ էին հայք. իրենց տասը տարիէ ի վեր արձակած աղաղակը վերջապէս արձագանդ կը գտնէր ու մեր յանուն ազգին ներկայացուցած խնդրոյն մէկ մասը կը լուծուէր ըստ սկզբան՝ ևս համազգային իրաւանց կարգին մէջ կը մտնէր: Վ.յ. մեր Վզգային ինդիրը Վրեւելեան ընդհանուր ինդրոյն հետնոր կերպարանք ու նշանակութիւն առած էր:

Վ.յ. երկիրը մինչեւ այսօր կառավարուեցաւ տաճիկ պաշտօնատարաց ձեռքով. և այսօր հասարակ եղած Ճշմարտութիւն մընէ պաշտօնատարաց յոռութիւնը. այնպէս զի նոյն իսկ Շ. Պուռը և երկրին Վեհապետը քանիցս հռչակեցին զայն: Վ.յ. Ճշմարիտ չէ ըսել մասնաւորապէս Նայտատանի համար թէ չայ ժողովրդեան պատուհասը քիւրտերն են միայն ու չէրքեզները, այլ պատուհաս մըն ալ անարժան պաշտօնատարներն են: Վ.յ. պաշտօնատարաց մէջ, Նայտատանի մէկ ծայրէն միւս ծայրը, գրեթէ և ոչ մէկ հայ պաշտօնատար մը կայ:

Պատերազմէն առաջ մեր Վեհափառ Խնքնակալը, այս մեծատարած կայսրութեան միահեծան Տէր, սահմանադրութեամբ և հաւասարութեան սկզբունքով փորձեց լուծել Վրեւելեան ինդիրը, կրօնքի խտրութիւնը վերցունելով քաղաքական ու վարչական ինդիրներու մէջ, ու Տէրութեան պաշտօնները հաւասարապէս բաշխելով իր ամեն կարգի հպատակաց, և անոնց մէջ մէկ հատիկ խտրութիւն մը ընդունելով այն որ իւրաքանչիւրին կարողութեանէն ու անձնական արժանիքէն կը ծագի:

Հայոց ազգը ո՞չ գժկամակ, ո՞չ ըմբոստ գտնուեցաւ այս հայրենասիրական վերջին ջանից. նա մանաւանդ քանի՛ քանի իր զաւակունքը ինք զենքնին նուրիբեցին գործին յաջողութեանը. ինչու. վասն զի տեսան որ փառաւոր գեր մը պահուած էր հայուն՝ խնդրոյն այդ եղանակ լուծմանը մէջ. վասն զի հայն իր ինքնուրոյն առաքելական եկեղեցիովն ու ինքնուրոյն ազգութեամբը, որ չէ խառնուած ո՞չ օտար եկեղեցւոյ մը հետ և ո՞չ օտար ազգի մը հետ, ամենէն աւելի կրնար անխառն եռանդով աշխատիլ երկրին վերածնութեանը համար, և անոր՝ չեմ ըսեր գլխաւոր գործաւորներէն մէկն ըլլալ այլ կը համարձակիմ ըսել՝ գլխաւոր գործաւորն ըլլալ, համակերպելով նաև՝ Աստուծմէ իրեն մենաշնորհեալ բնական տուրքովը պարագայից բերմանցն ու այլ և այլ ազգաց այլ և այլ բնաւորութեանցն ու բարյից:

Գեղեցի՛կ էր այն գործը յոր ձեռնարկեց իր գահակալութեան օրէն մեր այժմու Անհամառ Խնքնակալը, և ո՞չ ոք կրնայ մեղադրել զայյու՝ որ յուսացին: Այլ փորձն ի գերեւ ելաւ. և պատերազմն ու թշնամոյն յաղթութիւնը եկաւ նոր ուղղութիւն մը տալ Արևելեան ինդրոյն և նոր եղանակ մը ներկայացունել լուծման:

Արևելեան խնդիրն այլ ևս ուրիշ կերպով չէր կրնար լուծնուիլ, այլ կամ, Աստուած մի՛ արասցէ, բաժանմամբ, կամ զանազան կարգի ժողովրդոց համար յատուկ ու մասնաւոր գրութեամբ վարչութեան. և այս ըսել է՝ «Որոշել այն գաւառները ուրոնք մէյմէկ ազգային յիշատակաց կեդրոններ են, և որք ի հնումն ազգի մը հայրենիքը կազմելով՝ գեռ այսօր բնակութեան տեղի են մնացած նոյն ազգին անհատներուն գո՞նէ մեծ մասին, ու վերջապէս բազմութեամբ են քրիստոնեայք և անոնց վարչութիւնը յանձնել այն ազգէն Քրիստոնեայ պաշտօնատարաց՝ անվտոփոխ և անվթար պահելով Անհ. կայսեր վեհապետական իշխանութիւնը. այսպէս՝ Պուլկարիա, այսպէս Յունական գաւառք, այսպէս՝ Հայաստան. և մնացեալ բոլոր գաւառաց մէջ անթերի պահել Տաճիկ պաշտօնատարներով վարչութիւնը, թէ և գտնուին հոն քրիստոնեայք, բայց ուր չեն այն քրիստոնէից ազգութեան օրանք, և ուր սակաւաթիւք են սոքա»: Պաւառաց այս կերպ որոշումը՝ ըստ մեղ բնաւ քաղաքական կերպարանք կամ հետեւանք պիտի չունենար:

Անը Ազգային խնդրոյն այն մասն է ահա՛ որ չէր լուծուած Այ-Ատէֆանօսի Դաշնադրութեան 16-րդ յօդուածին մէջ, այլ և

ոչ բոլորովին բարձի թողի են եղած. զի ինչ որ ընդհանուր կերպով վարչական բարւոքում տրամադրած էր յօդուածն այն, հոն պիտի երթար յանգեր վերջապէս, զի հոն էր բարւոք վարչութեան խնդրոյն միակ կարելի լուծումը, և այլ ամենայն լուծում անհաստատ ու անիրաւ պիտի ըլլար: Եւ մենք ազգովին պարուաւոր ենք այն պետական աւագ անձանց, որ Պաշնադրութեան այդ յօդուածը ստորագրեցին. և հոս բարեպատեհ ասիթ կը գտնեմ այդ երախտագիտութիւնը յանուն ազգին յայտնելու իրենց. և որոց մին այսօր՝ իր շրջանայեաց, խոչեմ ու ամոքիչ հանձարովը կը վարէ գժուար ու փափուկ պարագային մէջ այս երկրին ներքին ու արտաքին քաղաքականութիւնը:

Այս Ատէֆանոսի Պաշնադրութեան 16-րդ յօդուածը երբ ձեռք անցուցինք, նոր ոգի առինք և աւելի եռանդեամբ սկսանք աշխատիլ: Այս գործը չէր լըմնցած, այլ սկսած էր: Յայտնի էր որ Այս Ատէֆանոսի Պաշնադրութիւնը ինչպէս որ էր՝ այնպէս պիտի չ'մար. իր զանազան տրամադրութիւնքը Եւրոպական բովէն անցնելով փոփոխութիւններ պիտի կրէին: Ամսնաւորապէս 16-րդ յօդուածն ալ անպատճու փոփոխութեան ենթակայ պիտի ըլլար: Ինչ որ Եւրոպական քաղաքականութեան շահուց հետ սերտ առընչութիւն ունէր Պանուրի հովտին ապագայ քաղաքական վիճակը, նոյն կերպով և թերեւս աւելի շօշափելի կերպով Եփրատայ հովտին ապագայ քաղաքական վիճակը առընչութիւն ունէր Անգղիան շահուց հետ.

Արչափ ալ անշահասէ՛ր ըլլար և հայասէ՛ր միայն՝ այն զգացումը որ 16-րդ յօդուածին խմբագրութեանն առաջնորդած էր, Անգղիան պիտի տեսնէր այդ յօդուածը Եփրատայ հովտին մէջ նոր քաղաքական վիճակ մը կը պատրաստէ՝ որ կրնայ մասնաւոր կերպով զայն ստորագրող տէրութեանց միոյն քաղաքական շահուց տեսակէտին պատասխանել: Անգղիա պիտի ընդունէր զայս: Կամ յօդուածը Քըցնաւէլու պիտի աշխատէր, կամ փոխելու: Պիտմամբ կ'արտասանեմ վերցունել բառը, զի եղան քաղաքագիտաց շրթունք որ հոնեցին այս բառը, այլ անկարելի էր վերցունել. զի անմարդասիրութիւնն ու իժդժութիւնը անկարելի է Անգղիայ ազատամիտ ազգին համար: Աը մնար միայն բարեփոխել յօդուածը այն կերպով՝ որ յօդուածը մնայ իրեւ Հայոց համար խմբագրեալ յօդուած. Հայաստանը բարեկարդի Հայաստանի համար, և Հայկա-

կան Խնդիրը չեզոքանայ, այսինքն՝ լոկ Հայաստանի Խնդիր ըլլայ:

Ի՞այց մենք ալ մեր կողմէն պէտք էր որ աշխատէինք, պէտք էր մեր մոռցուած անունը յիշեցնէինք՝ երթեմն մեղի հետ ապրող և այսօր կորսուած հին ու փառաւոր ազգերուն թոռանցը Եւրոպայի մէջ, պէտք էր գիտնար Եւրոպա որ հայ ազգը կըզգայ ինքզինքը և գիտէ իր իրաւունքը պաշտպանել: Խորէն սրբազն ուղերեցտւ ի Տէթէրսպուրկ, և Խորիմեան սրբազն յլումեմուտս Եւրոպիոյ՝ իրեն թարգման ունենալով ազգային երիտասարդութեան փայլերէն մին՝ որ իր նորահաս ու միանդամայն հասուն հանձարովը մեր հայոցս ապագայ գեղեցիկ յօյսերը պատկերացուց Եւրոպիոյ առջև, ինչպէս Խորիմեան սրբազն ալ Հայաստանի փառաց սուգը որ դժբաղդութեան մէջ համբերատար ազնուութիւնը կը ներկայացնէր իր գէմքին վրայ, ինչպէս Խորէն սրբազն ալ հին յիշատակներով թրթուուն և նոր յօյսերով բաբախուն սիրտը ազգին: Ասոնք պատգամաւորք էին պաշտօնապէս ազգին կողմէն. իսկ ամեն հայու պարտքն էր գործակցիլ իրենց, և իմ իրաւունքս էր այսպիսի պարագայի մէջ Հայութեան բոլոր զաւակացը գիմել, քանի՛ և ուր որ պէտք ըլլար: Որո՛ւն սիրտը հայու անունով կը թրթուար և որ կարող կը զգար զինքը օգտակար ըլլալու ազգին, գործակցեցաւ հոս ինձի և հոն ազգային պատգամաւորաց: Եւ զի ջանքն ընդհանուր եղաւ, ընդհանուր եղաւ նաև համակրութիւնը որ ամեն կողմէն սկսաւ ծնիլ ու բազմանալ մեր ազգին համար: Օրագիրք թարգման եղան այս համակրական զգացմանց, պաշտպան կացին մեր դատին գրեթէ առանց բացառութեան ամենուրեք, ժողովրդական ակումբներ կազմեցան և քաղաքական բեմերն իսկ որոտացին մեր Վզգային Խնդրոյն վիճարանութեամբ: Արնայինք ըսել թէ Եւրոպիոյ զգացումն ի մեր կողմն էր, զգացում, աւաղ, առաջուց գիտէի թէ այս դարուս մէջ շահ միայն կը խօսի և մանաւանդ շահը միայն պիտի խօսի այն ծերացեալ ու գործոց մէջ կածրացեալ քաղաքագիտաց ակումբին մէջոր պիտի գումարէր ի Պէրլին: Այլ մենք շահն ալ ի մեր կողմ ձգած էինք: Կը իչ մ'առաջ ըսի արդէն թէ ինչպէս:

Տէրութեանց Վագախողովը գումարուած և արդէն մէկ քանի նիստ ըրած էր ի Պէրլին. ամեն կողմէ ամեն տէրութենէ յուսադրութիւնք ու պաշտօնական խոստումներ ընդունած էի. յայտարա-

թութիւններ թէ ի՞նչ որ միւս քրիստոնեայ ժողովրդոց պիտի տրուի, պիտի տրուի նաև հայոց. ճայն չունէին հայերը և չէին կրնար ունենալ Աւագածողովին մէջ, այլ—մինչեւ այս աստիճան էին մեզի տրուած յօյսերը—մեծ և աղնուախոհ ազգի մը, Գաղղիոյ արտաքին գործոց պաշտօնեայն և առաջին լիազօր գեսպանը յանձն առած էր որ ի՞նքն ներկայացուցիչ ու փաստաբան կանգնի մեր դատին Աւագածողովին մէջ, նա որ և կատարեալ հաւանութեամբ ընդունած էր մեր խնդրոյն ձեւը, հոգին և գործնական եղանակը, ինչպէս որ առաջարկած էինք մեր պաշտօնական գրութիւններով:

Ա երջապէս աւագագոյնն այն աւագաց և ճարտարագոյնն ի քաղաքագիտաց Կախագահն իսկ աւագագողովին, որ և մասնաւոր ուշագրութեամբ քննած էր մեր խնդիրն ու մեր գրերն ամենայն՝ և մասնաւոր հոգատարութիւն յայտնած առաջին մեր դատին համար, պաշտօնական կերպով ներկայացուց և օրակարգն անցուց մեծ ժողովին Ա. Պօլսոյ Հայոց Պատրիարքին նամակը առնոյն ինքն Կախագահն. Հայ պատրիարքութրաց ինդրագիտելը, Հայաստանի վարչութեան համար ծրագրելու հանունագիրը և Հայաստանի ՀՀ Հայաստանի գրեատական գույքը մը:

Այսպէս աշա՞ ներելի էր մեր յուսալ թէ խնդիրն ի հիմանց պիտի քննուել որ հիմնական պիտի ընդունէր լուծում: Ա. Ա. Ճիշտ այս միջոցին երևան ելաւ գաղտնի դաշնագրութիւնը ընդ մէջ թառութիոյ և Ա. Ա. Սիսոյ Նկատմամբ:

Տեարք Երեսփոխանք. ինձի չ'պատկանիր քաղաքական տեսառութեանց մէջ մտնելով ըսել թէ որչափ յանցաւոր կրնան ըլլալ հայերը որ չ'ախատեսեցին զայդ նոր քաղաքականութիւնը՝ զոր և ոչ մէկ տէրութիւն Եւրոպայի մէջ նախատեսած էր, և որուն մէջ յայտնի չէ՝ տակաւին երևակայութիւնը արդեօք կամ թէ հեռասես քաղաքագիտութիւնը աւելի՝ մեծ գեր խաղացած է: Ա. Ա. այդ դաշնագրութիւնը՝ որ եթէ գործադրուի՝ անուրանալի բարիք մըն է թառութիոյ համար և Հայոց համար ալ, արգելք չեղաւ որ աւագագողով զբաղի Ա. Ա. Ստէֆանոսի Գաղնագրութեան 16-րդ յօդուածովը, բարեփոխէ զայն, չեղոքացնէ ու մէկ տէրութեան երաշխաւորութեան ու հսկողութեանը փոխանակ բոլոր մեծ տէրութեանց երաշխաւորութիւնն ու հսկողութիւնը գնէ, մինչդեռ միւս կողմէն ալ Յառը—Ա. Ա. Գիտական դաշնագրութեամբ՝ Ա. Ա. Գիտ մասնաւոր պաշտպանութիւնն ապահովեալ էր Հայոց համար, այլ

արգելք եղաւ որ Հայ ազգին ինդիրն ամբողջապէս նկատողութեան առնուի:

Արդարե անկողմնակալ մտածութեան համար ակներե է որ Եթէ Օտուրք—Խնդղիական դաշնադրութիւնը Ասից քրիստոնեայ ժողովրդոց համար բարեկարգութեան ծրագիրը Խնդղից Օտուրքից կառավարութեանց համաձայնութեամբ որոշուիլ տրամադրած չըլլար, Տէրութիւնք իրենք զայդ ծրագիրը պիտի որոշէին:

Աւասիկ Պէրլինի Դաշնադրութեան 61-րդ յօդուածը.

«Բարձրագոյն Դուռը իւ ետապանայ, աւանց այլ ե-ա յապառը— Գործադրել այն բարբուռն-հերն ու բարենորդուռն-հերը, զրա աւելական պէտքերը իւ պահանջն Հայոց բնակած գուառներուն և մշտ և անոնց ապահովութեան երաշխառութել Ջերէնուց և Քրիստութեան: Եւյս նպաստական յերած աւանձ Թջոցները պարբերաբար պիտի ծառնոցանէ Տէրութիւնաց, որ անոնց Գործադրութեանը պիտի հակնէ:

Տեարք Երեսփոխանք, Եթէ այս յօդուածը ցաւալի բան մ'ունի, այն է որ մեր խնդրոյն լուծումը ըստ մասին կը յետաձգէ. չ'կործանէր ազգին յօյսերը, այլ և չ'պսակէր նոյն հետայն: Եւ ո՞ր ազգ կրցած է յանկարծակի կերպով իր բարձանաց ի կատար հասնիլ, գժբաղդութիւնն է միայն և մահ, որ յանկարծակի կրնան դալ անձի մը և ազգի մը վրայ. կեանքն ու բարեկեցութիւնը յամր կը ձեւանան: Եշ ասոր համար է որ կանկիրաւեն անքնք որ կը-սեն թէ «Խնչո՞ւ սկսանք, Եթէ պիտի չ'յաջողէինք, և թէ՝ յայտնի՛ էր որ պիտի չ'յաջողէինք». զի օր մը յաջողելու համար՝ այս օրէն սկսելու էր. և զի Եթէ ապահով կերպով գիտնայի ալ առաջուց թէ պիտի չ'յաջողիմ բնաւ, դարձեալ պիտի սկսէի. և այն թող գրէր ինձի ազգս ի դատապարտութիւն:

Բայց ոչ ինքնին ձեռնարկեցի ես յայս գործ, այլ յառաջ քան զիս և բուռ քան զիմս էր ազգին ընդհանուր փափագը, և ես պատգամ միայն ընդունած էի զայն փափագն յառաջ վարելու: Արդ՝ երկու կարգ առարկութիւնք կան որոց ազգած ցաւը կաւելնայ յիս իմ ցաւերուս վրայ. այս առարկութեանց մին է այն՝ թէ վասն զի քիչ խնդրեցինք, քիչ ընդունեցանք, թէ անկատար կերպով թարգման կացինք ազգին իղձերուն և թէ նոյն իսկ այն կերպով վարուեցանք դիտմամբ և խորհրդով՝ որ անկատար կերպով պատկուին այդ իղձեր: Եւյս առարկութիւնը ազգայնոց ոմանց կողմէն է, և նոր ապացոյց մը կը հանդիսանայ այն

չարեաց՝ որ ազգին գերութեան վիճակը գործած, յամառ անվստահութիւնը բնական յատկութիւն մը ընելով ազգայնոց։ Ա՛հ, եթէ այդ խիզախ վճիռն արձակողը գիտնար թէ անոնք որ աշխատեցան վեց ամիսներէ ի վեր, աշխատեցան այնպէս՝ որպէս ոչ երբէք աշխատած էին իրենց կեանքին մէջ ընծայելով ազգին համար զամենայն որ ունէին, որն իր հարստութիւն, որն իր տաղանդ, որն իր ազգեցութիւն. և ամենքն իրենց աշխատութիւն. եթէ դիտնար թէ ի՞նչպէս արհամարհեցին դժուարութիւնք ու վտանգ, եթէ գիտնար թէ լաւ ևս համարեցան զոհել իրենց շահն ու անձը, քան թէ ի՞նչ սուրբ հայրենասիրութեամբ վառուած էին առանց որ և է փառքի կամ համբաւոյ ակնկալութեան ոչ այժմ առ յապագայն, եթէ գիտնար ինչ որ ես գիտեմ, խղճմտանքին մէջ պիտի գողար այդ գատապարտութիւնն արտասանելով։

Ո՞իւս առարկութիւնը օտարէ՛ն կուգայ մանաւանդ, զի՞ չ'կայ հայ մը՝ որ զայդ առարկութիւնը կարենայ ընել այնէ թէ ինչ որ ձեր Պատրիարքը ազգին խնդիրը կոչեց, այն իր հնարած խընդիրն էր, և ազգը չունէր մասնակցութիւն։ Այդ օտարը չէ լսած հայոց ազգին անվերջանալի աղաղակը այնքան տարիներէ ի վեր. և չէ լսած այն այս Երեսիոնանական ժողովին յանուն Ազգին ինձի յանձնած պաշտօնը՝ զոր և կրկնեց ասկէ քիչ ժամանակ առաջ։

Եւ արդ՝ ահա յայտնեցի ձեզի թէ ի՞նչ ձեռվ և ի՞նչ բառերով ներկայացուցի Հայոց խնդիրն Եւրոպայի, և զոր կ'ամփոփեմ հոս սապէս. Հայոց Հայոց-Ենէն Հայաստանի մէջ առանց քաղաքական փառասիրութեան զոր երբէք չենք ունեցած և չենք կը նար ունենալ, մեր Ա Եհափառ Առւլթանին հովանաւորութեանը և վեհապետական իշխանութեանը ներքեւ։ Դո՞ւք, ազգային Երեսիոնաներ, լսէք, դուք որ բոլոր ազգին քուէովն ընտրուած՝ կը զգաք ի ձեր սիրտ բաբախել սիրտն ազգին, լսէք, ազգին իւընդիրը չէ՞ այն որ ներկայացուցի։

Ըսէք, պիտի ներէիք ինձ որ լուռ մնայի, լսէք, պիտի ներէիք որ այնպիսի պարագայի մէջ ուր թուրքիոյ Վրիստոնեայ ժողովրդոց բազդը պիտի վճռուեր, ձեր Պատրիարքը անհոգ կենար, լսէք, պիտի ներէիք եթէ նոյն խոկ անցոյս և անապաւէն չ'դիմի ազգաց ժողովին՝ գէթ անոր համար որ Եւրոպա գիտնայ թէ Հայոց ազգ մըն ալ կայ Արևելքի մէջ. Ըսէք, պիտի ներէիք դուք և պիտի ներէին ինձ մեր Կախնեաց հոգիք, Հայկէն

մինչեւ զերջինն մեր լուսն, լուսաւորիչեն մինչեւ ի Աերջինն
‘Աերսէս’ ի շարս մեր ազգաշէն և ազգասէր կաթողիկոսաց, ըսէք,
պիտի ներէին և պիտի ներէիք եթէ խոչ և խուլթ առ ոտն հար-
կանելով մինչեւ Եւրոպա չ'հասցունէի ազգին աղաղակը. Ըսէք,
ըսէք ձեր հանդիսաւոր քուէովը, ըսէք ձեր միաձայն քուէովը,
զի միաձայն միայն կրնայ ըլլալ քուէն այս պարագայիս մէջ. Ը-
սէք, և ձեր քուէն թող պատասխանէ այդ անհեթեթ և աղ-
գուրաց առարկութեան*):

Եւ սակայն ուր է կորուստը, ուր է այնքան աշխատութեանց
և ջանից ապարդիւն մնալը, ուր է անյաջողութիւնը, ուր է դժբաղ-
դութիւնը, ուր յուսահատութիւն: Ա ասնզի՝ առաջին անդամ
Հայոց ազգին անունն անցաւ հանդիսաւոր գաշնադրութեանց մէջ՝
այդ է կորուստը. վասն զի՝ այդ գաշնադրութեամբք հարստահա-
րութեանէ ազատեցան հայերը, այդ է դժբաղդութիւնը. վասնզի՝
հայոց ապարային սերմունքը. գրուեցան, այդ է մեր ջանից ապար-
դիւն ելնելը. և վասն զի՝ Եւրոպայի ժողովուրդներն ու տէրու-
թիւնները ճանչցան ու սիրեցին հայ աղքը, այդ է անյաջողու-
թիւնը. և վասն զի՝ այս վայրկենիս որ կը խօսիմ ձեզի այս աղ-
գային բեմին վրայէն, թերեւ մե՛ծ ևս բեմերու վրայէն հարցում-
ներ կ'ուղղին Եւրոպայի կառավարութեանց՝ Հայոց նկատմամբ,
այս է մեր լքումն ու յուսահատութիւն:

Տեարք Երեսփոխանք. ըսի արդէն թէ մեր խնդիրն անմիջա-
պէս և կատարելապէս չէ՝ իրականացած, և ասոր համար պարտք
համարեցայ բողոքել հոս տէրութեանց դեսպանաց քով, և ի Պէր-
լին լիազօրաց քով: Ժողոքը տկարին իրաւունքն է, և շատ ան-
գամ յումպէտս կը գործածուի նա. այլ ո՛չ այս պարագային մէջ,
զի արդիւնքն իսկ տեսնուեցաւ վերջին վայրկենին, յօդուածին
խմբագրութեանը մէջ: Այս, մեր խնդիրն ամբողջապէս չէ կա-
տարուած. այլ մե՛ծ է արդէն ի՞նչ որ ստացանք Կաշնադրութեան
այն յօդուածով. և մե՛ծ է՝ ո՛չ ոք կրնայ ուրանալ զայս և ես քան
զայլ ոք աւելի նուազ՝ Ենդիդոյ մասնաւոր պաշտպանութիւնը:

Ո՞ենք չենք յուսացած մեր զօրութեանը վրայ այդ պաշտպա-
նութեան տալու համար այն ուղղութիւնը՝ զոր կրնանք փափա-
քիլ մեր ազգային խնդրոյն կատարմանը նկատմամբ. այլ իրողու-

*) Ազգային ժողովն յետ ատենաբանութեան միաձայնութեամբ մերժեց սոյն օ-
տարօտի առարկութիւնը:

թիւնք զօրաւորագոյն են քան զամենայն՝ և վճռաբար կը հրամայեն
նոքա տէրութեանց քաղաքականութեան:

Ենդղից մեծ ազգին քաղաքականութիւնը՝ որուն յայտնի են շար-
հերը, նպատակն ու համակրութիւն, կրնայ ի սկզբան այնպիսի
ձեւ ու ոգի մը զգենութ՝ որ իր յաւիտենական կղզին մշտնջենա-
ւորապէս պատող ովկիանոսին պէս ինքն իրեն գէմ մարտնչելով
թէ և չյօդնի, չ'պարտասի, այլ՝ զի պէտք է յաջողի, հարկ պիտի
զգայ վերջապէս նոր ոգի ու նոր ձեւ առնուլ:

Խակ մենք, Տեարք Երեսփիսանք, մէնի յարագելեն+ մէր ոկտաժ-
քողժին մէջ: Այսպիսի գործեր ոչ մէկ օրուան մէջ, ոչ մէկ մար-
դու ձեռքով կրնան կատարուիլ: Պատրաստուինք մեր ապագային:
“Սախ՝ զիշնան+ հոս, Հայաստան Երենան+ Հայաստան զիշնան+ ինչ-
որ սոնին+ ապէջին մէջ բանիշուն, պաղանդառուոր, աղջուակը, ուսում-
նասէր եկեղեցականներ. Հայաստան Երենան մէր Շաստիարակիներ ու ու-
սուցիներ, մէր այնուան վասդըստն Երիքաստարդներ. Հայաստան եր-
թան այնքան գժբաղդ պանդուխտներ. ոչ ևս պիտի ըլլայ հոն
սով, սրածութիւն, ոչ ևս հարստահարութիւն, ոչ ևս կենաց և
ընչից և պատույ առեանգութիւն, ոչ ևս աշխատութեան խա-
փանում: Ուղիներ պիտի բացուին, ջրանցքներ պիտի շինուին,
գործարաններ պիտի կառուցուին:

Ենդղից դրամատէրք հոն պիտի երթան իրենց դրամը գոր-
ծածելու. թող երթան մեր դրամատէրք ալ, ընկերութիւններ կաղ-
մեն այս օրուընէ. ընկերութիւններ՝ ամեն քաղաք և գիւղ գպրոց-
ներ հաստատելու համար. ընկերութիւններ՝ առեւտրական յարա-
բերութիւններ հաստատելու համար. ընկերութիւններ՝ գործա-
րաններ հաստատելու. Հնդկաստանէն, Ենդղիայէն, Ուուրքիայէն,
Ուուսիայէն, Աւստրիայէն ու մինչև Պարսկաստանէն միանան ձեռք
ձեռքի տան բոլոր Հայերը, և այն ատեն՝ թերես ես ալ ցաւա-
գար ու անբուժելի հիւանդութեամբ վարակեալ, ի գերեզման
իջած ըլլամ արդէն, այլ տեսնելով այսքան աղդային միասիրտ,
միահոգի աշխատութեան գեղեցիկ արդիւնքները, տեսնելով պաշ-
կուած մեր այսօրուան բոլոր յօյսերը, հոգիս պիտի խայտայ գե-
րեզմանիս մէջէն և պիտի ընդգրկէ մեր սիրելի Կաթնեաց հո-
գիները...:



ՎԵՐՉԻՆ ԴԵՊՁԵՐԻ ՄԱՍԻՆ

Տեսուր պատկեր է ներկայացնում այսօր Տաճկահայաստանը. Հայ մարդի, հայ կնօջ ու հայ երեխու անմեղ արեան կաթիլին են, որ սղողում են Տաճկահայաստանի հայաշատ կենտրոնների միջավայրերը: Շարունակ հարստահարութիւն, բռնաբարութիւն, լնչից ու ստացուածոց անապահովութիւն, սպանութիւն-ահա անպաշտապան հայ երկրագործի թշուառ գրութիւնը, որ երկար դարերէ ի վեր մի հանգիստ շընչ չէ կարողանում քաշելիր հայրենիքում: Ա երջին ժամանակներս տաճկահայ գիւղացին այլ ևս անկարող լինելով տանել այն նորանոր յանդունգն բռնաբարութիւնները, որոնք տեղում էին և տեղում են նորա գլխին թէ բարբարոս ցեղերի և թէ թուրք պաշտօնեանների կողմից, համբերութիւնը հատած, զէնքը ձեռն առաւ գէթ իր արեան գնովը պաշտպանել իր աղդակիցների սուրբ իրաւունքները: Այժմ հայ գիւղացու այդ ինքնապաշտպանութեան գաղափարը կարծես տարածուել է Տաճկահայերի ամեն շրջանների մէջ, որը ներկայ պայմաններում միակ և եթ միջոցն է ներկայանում միանգամայն ընդ միշտ վերջ տալու աւազակիցարոյ ցեղերի լրբութիւններին: Անտարակոյս իւրաքանչիւր հայ լսած է վերջներս տեղի ունեցած դէպքերի մասին, որոնք, համարձակ կարելի է ասել, ոչ միայն հայոց, այլ և եւրոպական ժողովրդների համար օրուան խնդիր են դարձած: Այնք ցաւում ենք, որ «Արաքսի» այս գրքում, որը առանց այն էլլընդարձակուեցաւ և մի երկու ամսով ուշ է լոյս տեսնում, կարող չենք արձանագրել այն բոլոր յուղումների նկարագրութիւնները, որոնք տեղի ունեցան Ա ան, Խոնուս, Խարբերդ, Խըզնկա, Խըզերում, Այուշ և այլ տեղեր, այլ այստեղ մէջ կ'բերենք միայն Կարնոյ և Պոլսոյ յուղումների նկարագրութիւնը:

Յունիսի սկզբներում Կարնոյ քաղաքապահ զօրաց հրամանաւտար Արահմի փաշան անստորագիր մի նամակ է ստանում, որի մէջ հաղորդուած է լինում իրը թէ Հայոց եկեղեցումը և Անաստրեան վարժարանում հայերը մթերած են մի քանի հաղար հրացան և մեծ թուով պատերազմական զանազան մթերքները: Կարնոյ կուսակալ Աամիհ փաշան մինչդեռ այս մասին ոստիկանութեան միշոցաւ կամենում է մինտու նամակի հեղինակին, զօրաբանակի հրամանաւտար Օէքի փաշան հեռագրում է Պոլիս:

Յունիսի 6-ին Ռ. Պարնից ստացած հրամանի վերայ՝ փաշան տեղւոյն իշխանութեանց հետ միասին զինուորներով և ոստիկաններով գնում է Աանասարեան վարժարանը խուզարկելու, ուր մինչեւ անդամ տախտակամածները քանդելով բան չեն գտնում։ Այստեղից բոլոր իշխանութիւնք բացի կուսակալից և Աամիչ փաշայից, գնում են առաջնորդարան և խուզարկութիւններ անում ճիշտ այն միջոցին, երբ եկեղեցում ժամերգութիւն է լինում։ Եւ կեղեցին գտնուող ժողովուրդը լսելով կառավարութեան այս խուզարկութեան մասին, զայրացած դուրս է գալիս եկեղեցուց և դիմում առաջնորդարան։ մի հայ զպուելով այս անիրաւութիւնից, բէվոլվերի գնդակի հարուածով տեղնուտեղը սպանում է մի թուրք հարիւրապետի նոյն վարկեանում, երբ նա խուզարկութեան հրամաններ էր տալիս իր ստորագրեալներին, սորա վերայ զինուորները կրակ են բացում հայերի վերայ, որոնք բիրերով ու իրենց ձեռք անցած զէնքերով պաշտանուելու նպատակով յարցակումներ են անում թուրք զօրաց վերայ։ Այստեղ 5 հայ է սպանվում և 8 հոգի էլ թուրք զինուորներ։ Այնուհետև մեծ անկարգութեամբ խուզարկվում է եկեղեցին, ուր դարձեալ ոչինչ չգտնելով, թուրքերը ամօթով յետ են դիմում։ Ճետեեալ օրը հայերը երկիւրից փակ թողնելով խանութները և վարժարանները խումբ առաջնորդարան են գնում իրենց վիշտը ազգային իշխանութեան միջոցաւ Աուլմանին ներկայացնելու։ Վիենայն ժամանակ ժողովուրդը սաստիկ գոգոսուած լինելով այս անտեղի կառածանքների և մանաւանդ հայոց սրբավայրի լրբօրէն խուզարկելուն համար երկու օր շարունակում է գործադուլն և բազմութիւնը որտեղ որ մի հայի խանութ է բաց տեսնում իսկոյն ստիպում է փակել։ Այս երկու օրը՝ յունիսի 6 և 7-ին, իշխանութիւնը քաղաքականութեամբ չէր գիմագրում հայոց շարժումներին, այլ մի քանի հազար զօրք քաղաքը բերելով, պահպանողական գիրք է բռնում։ անտարակոյս միենայն ժամանակ հետևում է այս յուղմունքների շարժման գլխաւորներին։ Աւրբաթ օրը, ամսի 8-ին, ժողովուրդը հաւաքուել էր եկեղեցու բակը և առաջնորդարանը և երբ իր պատգամաւորներն էր ընտրում որ երթային Աուլմանին ուղղելիք հեռագիրն կարդային՝ մի քանի հազար զենեալ զինուոր որպէս թէ խաղաղութիւն պահպանելու այդտեղ գիմում են իրենց հրամանատարի առաջնորդութեամբ հայոց եկեղեցու

շուրջը յարձակողական դիրք բռնելով: «Աշան գրուելուն պէս զիւնուորները հրացանները արձակումեն հայերի վերայ և մի երկու հայ սպանում և մի քանի հոդի էլ վիրաւորում: Այդ միջոցն շուկայի կողմից տեղւոյն թուրք ամբոխն ևսյանուն կրօնի զինուած բիրերով, թրերով, խանչալով, դանակով յարցակումէ անում հայերի վերայ. այդ ժամանակը կատարեալ պատերազմի ասպարէզ է դառնում հայ եկեղեցու գաւիթը, նորան կից փողոցները և շուկան. թէ ինչ աղմկալից ու սոսկալի տեսարան էր ներկայացնում այդ ժամանակ այս կոտորածը, գտուարէ նկարագրել:

Թուրք ամբոխի գալով, առաջնորդարանի դրան առաջ գտնուող հայերը հեռացան և յուսահատութեան մատնուած սկսեցին փախչել զանազան կողմեր, սակայն եկեղեցու բակում գտնուող հայերը տեղներիցը չշարժեցան: Այս հրամանատարի կատաղութիւնը շարժեց, որի կարգադրութեամբ մի մեծ խումբ զինուորների մտաւ եկեղեցու բակը, որպէս զի նոցա այնտեղից հեռացնեն, սակայն հայերը կամենալով պաշտպանուել, մի քանի գնդակներ արձակեցին բէվոլվերից, որով մի զինուոր սպանեցին ու երկուուր վերաւորեցին, այն ինչ թուրք զինուորները հրացանի կոթերովը լուսուներովը սարսափելի հարուածներ էին տեղացնում աջ և ձախ: Օհնուորների բազմութիւնի, որը փողոցումն էր գեռ, երբ լսեցին բեվոլվերի գնդակների ձայնը ու իրարանցումը, մեծ գոռում գոչիւնով, որպէս վայրի գաղաններ, ներս խուժեցան բացականչելով իրենց ընկերակիցներին՝ «Խիեք ու ծակեք»: Իւլովերի ձայնին վերայ ներս խուժեց թուրք խուժանի մի մեծ կատաղի բազմութիւն, որը խառնուելով զինուորների հետ, կարողացաւ շատ հայերի սպանել և վիրաւորել, որոնք այս ու այն կողմն էին փախուստ տալիս. այս բոլոր ժամանակ խեղճ հայերի լաց ու կոծը, իսկ վայրի թուրք ամբոխի, լիրբ ու գաղանային ոգեստութիւնները օդն էին թնդեցնում: Այս անխիղճ կոտորածից յետոյ կատաղի ամբոխը սկսեց հայերի խանութները ու տները քանտել ու թալանել: Տադնապը տիրած էր բոլոր հայերի վերայ: Կատաղի թուրք ամբոխի մի մասը հալածում էր վախչող հայերին ձիւպատոսական փողոցը. բայց այստեղ թուրք ոստիկանաց պահակի մօտ, թէ ուսիկանները ամբոխի առաջն առան, սակայն նա իր բազմութեամբ կարողացաւ ձեղքել ճանապարհը և առաջ ընթառաւ, փողոցի վերայի գտնուող տների պատուհաններից քարեր

նետելով: Այսանաւորապէս վնասուեցաւ բողոքականաց ուսումնարանը: Այինդեմ ժամանակ փողոցի հակառակ կողմից մերձենում էր թուրքերի միւս կատաղի մասը, որը ինչով ասես զինուած էր. սորա առջև գնում էր մի մոլեռանդ թուրք սպիտակ ձիու վերայ նստած, թուրք ձեռքին և խրախուսում ու առաջնորդում էր ամբոխին յարձակումներ անել հայերի տների վերայ: Քարերի կոտեր էին որ ի միջի այլոց տեղում էր անդղիական հիւպատոսարանի լուսամտներից. շինութեան մօտ գտնուող թուրքերը հիւպատոսարանի լուսամտի երկաթները էին տեղից հանում և բոլորը քարուքանդ անում. բարեբաղդաբար այս ժամանակ վրայ հասաւ զօրքը և կարող եղաւ ցրուել ամբոխին: Հիւպատոսարանները պահպանելու համար մի մի խումբ զօրք էր ուղարկուած. սպանուածների թիւը 15-ի մօտ է, իսկ վիրաւորուածների թիւը անցնում է 200-ից:

Հայաստանի թշուառ կացութիւնը և մասնաւորապէս Երզրումի ու Վշոյ յուղիչ դէպքերը, անտարակոյս, կարող չէին առանց հետևանքի մնալ, ուստի և տեղի ունեցաւ Առւթանների մայրաքաղաքում, հայոց մայր եկեղեցում ի Գում-Գափու հայ ժողովրդի առաջին հոչակաւոր ցոյցը:

Յուլիսի 15-ին, կիւրակէ, Գում Գափուի մայր եկեղեցում սովորականից շատ բազմութիւն կար. դեռ նոր էր սկսել ժամերգութիւնը, ինչ մեծ բազմութեամբ գաւառացի հայեր խումը խումը զիմում էին եկեղեցին: Այդ օրը եկեղեցի յաճախողների մէջ սովորականից աւելի անծանօթ դէմքեր և հուժկու հայեր էին տեսնուում. սոքա եկեղեցին մշտական յաճախողների մի առանձին հետաքրքրութիւնն էին շարժում, թէև նոցա համազգեստներից գիւրաւ կարելի էր իմանալ, որ դոքա մեծ մասամբ՝ հայ բեռնակիրների, հրդաշէջների, ձկնավաճառների դասին կ'պատկանէին: Ով միանգամ եղած է Պօլիս և տեսած այս հայ գաւառացիները, նա անշուշտ, գիտէ, թէ այս պղնձաքոյն ու աւնական դէմքով, ջաղլից բազուկներով և պարթե հասակով օժտուած ընտիր հայերը ի՞նչ արհաւելք և սարսափ կարող են ազդել իրենց կատաղութեան ժամանակ ոչ միայն խաղաղ քաղաքացիներին, այլ նաև կանոնաւոր զօրաց:

Ինչպէս իւրաքանչիւր տօն օր, այդ օրը ևս Խորէն պատրիարքը եկեղեցումն էր. սովորական ժամերգութիւնից յետոյ, երբ դեռ նոր էր վերջացել «Փառք ի բարձունս», մի գեղեցկատեսիլ

և կորովի հայ երիտասարդ մօտենալով պատրիարքին գրապանից հանեց մի թուղթ և յայտնեց որ ուզում է կարդալ: «Պատրիարքի բացասական պատասխանի վերայ թէ՝ որդիս, դու անհնարին բան կպահանջես և խռովութեան պատճառ կդառնաս» ժողովրդի միջից բարձր ձայներ լսուեցան, թէ «թողէք կարդա»: Հակառակ պատրիարքի արգելքին, այդ երիտասարդը հազիւ սկսած էր յուղիչ խօսքերով նկարադրել գաւառացի հայերի դրութիւնը, պատրիարքի անհամապատասխան գործունէութիւնը, երբ այդ ևս մերժուեցաւ հոգևորական դասի կողմից, որը շրջապատած էր պատրիարքին: Այսպիսով երբ պատրիարքը կարուկ կերպով հրաժարեցաւ ժողովրդի գլուխ անցած բազմութեան հետ կայսերական պալատ գիմելու Ալութանին գանգատուելու հայերի դառը վեճակի մասին և տնօրինութիւն խնդրել: յանկարծ բէվոլվերի պայթուն լսուեցաւ եկեղեցու մէջ, որը և սաստիկ շփոթութիւն առաջ բերեց թէ եկեղեցականների և թէ ժողովրդի մէջ: «Պատրիարքը երկիւղից չկամենալով պյապիսի մի վտանգաւոր ժողովրդական ցոյցի մասնակցել, խառնակութիւնից օգտուելով գաղտագողի մի քանի եկեղեցականների հետ եկեղեցու պահարանների կողմից փախուռտ տուեց պատրիարքարան, որ Այր եկեղեցու հանդէպն է գտնվում: Ժողովուրդը ևս խառն ի խուռն գուրս խուժեց եկեղեցուց ցանկանալով պատրիարքի առաջն առնել, այն ինչ նա արդէն ապաստանած էր պատրիարքարանի սենեակներից միոյն մէջ:

Հաղարաւոր բազմութիւն եկեղեցու բակում ժողոված հնչեց նել էր տալիս եկեղեցու զանգակները, որոնց ձայնից մօտակայ թաղերից ուրիշ հաղարաւորն էլ ևս գիմեցին ու մտան եկեղեցին և իր առջեկի փողոցը: Բազմութեան մի մասը յարձակեցաւ պատրիարքարանի վերայ, խորտակեց ապակիները, երկաթէ զօրաւոր լծակների միջոցաւ կոտրեց դռները և վերջապէս հարիւրաւոր քաջարի բեռնակիրներ շրջապատեցին պատրիարքին և ուժով տարան փողոց ու գրին կառքի մէջ, ազդարարելով իրեն թէ պէտք է առաջնորդէ հայ պատուիրակութեան, որ որոշած է երթալ մինչև կայսերական գահին առաջ ներկայացնել հայ ազգի ցաւերը: Այս միջոցին պատրիարքարանի բակում կարգացուեց մի ատենաբանութիւն, որի մէջ ամենաճիշտ գոյներով ներկայացուած էր Հայաստանի արդի տագնապալից և աղէտալի վիճակը, կառավարութեան անասելի խստութիւնքը ու բռնութիւնքը և հայ ժողովրդի բարօ-

ըութեան պահանջը: Առտենաբանութիւնից յետոյ կատաղի բազւ մութեան մէջ դրգոիչ երգի մի քանի տողերը ևս երգուեցան: Եւ այսպէս մի քանի հաղար կորովի ժողովուրդ հետեւում էր պատրիարքին, ատրճանակները պայթում էին փողոցի մէջ և խառնէր խուռը բաղմութիւնը զարհուրելի կերպարանք էր կրում: Ոստի կանական և զինուորական իշխանութեանց լուր հասած էր արգէն և նոքա թաղային ոտտիկաններով և զինուորներով շտապելով եկան հասան ճանապարհի վերայ. բայց մի քանի րոպէ հաղիւ կարողացան դիմանալ. հայերը զինաթափ արեցին և մի կողմ մղելով շարունակեցին իրենց ճանապարհը: Փոքր ինչ յետոյ հայերի դէմ յանդիման երեաց զինուորների մի փոքրիկ խումբ, սոքա փամփուշտներ չունենալով սկսեցին սուբիներով յարձակուել հայերի վերայ. սակայն սոքա շրջապատելով կատաղի կերպով ծեծ տուին այս մի խումբ թուրք զինուորներին: Երկաթէ գաւազանով զինուած մի հայ անձամբ սպանեց զօրքերից միոյն, մի ուրիշ զինուոր էլ իրեն հալածող հայի ձեռքից ազատուելու համար փախաւ և ապաստանեց մի թուրքի խանութում, որը և իսկոյն փակեց խանութի դռները. սակայն հայերը խանութի ձողերը քանդեցին և քիչ էր մնում զինուորին տեղն ու տեղը սպանէին, երբ վրայ հասան երեք վաշտ կանոնաւոր զօրքեր, որոնք ուղարկուած էին Առութանի հրամանով սրարշաւ քայլով պատերազմական նախարարութիւնից քաղաքապահ զօրքերի հրամանասար Արիֆ և Տէրվիշ փաշաների առաջնորդութեամբ:

Ահա այստեղ տեղի ունեցաւ մի սոսկալի կոիւ գրգռուած հայերի և տէրութեան զօրքերի մէջ: Երկու կողմից էլ ամենակատաղի կերպով էին կովում: Հայերը զինուած էին դանակներով, մահակներով, շամփրաւոր դաւազաններով և երկաթէ ձողերով. քչերն միայն ունէին ըէվոլվէրներ. այն ինչ բլուրից սրարշաւ եկող զօրքերը հրացանները լցրած պատրաստած էին. Հրամանատարի օրինական ազդարարութիւնից յետոյ, երբ հայերը չը համաձայնեցին յետ կանգնել իրենց բռնած ընթացքից և ցրուել զօրքերը արձակեցին իրենց հրացաններից և առաջին անդամ սպանեցին չորս հոգի և վերաւորեցին 12 հոգի. մնացածները խառնի խուռն ցրուեցան: Ասում են, որ զօրքերից էլ 4 հոգի սպանուած և 20-ի չափ վերաւորուած կայ: Այս կոուին, հայերը առաջին անդամ կարմիր ազդային գրօշակ պարզեցին, որը ժողովուրդին բաւականին խրա-

իուսած է: Մի ժամի չափ տեղ այս կռիւը, որի տեսքը սոսկալի սպաւորութիւն էր թողնում մարդու վերայ: Պէտք էր տեսնել այդ խորիս ու խիզախ հայ ժողովը ինչն ուղիսի կատաղութեամբ յարձակում էր անում կանոնաւոր զօրաց վերայ: Առաջին իսկ վայրիկեանում պատրիարքին ազատելով թուրքերը ապաստանեցին նորան մի թուրքի տան, որտեղից էլ նա երեկոյեան մեկնեցաւ Մաքրի գիւղ: Աւելորդ է ասել, թէ հայերից շատերը ձերբակալուեցին:

Այս եղելութեան լուրը պալատ հասաւ ճիշդ այն միջոցին, երբ Գուրբան պայրամի հանդիսաւոր տօնի առիթով աջամբոյը արարողութիւնն էր կատարվում Դալմա Բախչէ ապարանքի սրահին մէջ: Անշուշտ, այսպիսի պարագայում մի այսպիսի լուրի համնելը մեծ յուղում առաջ բերած է: Հրաման հրամանի վերայ է ուղարկուած պատերազմական նախարարութեան պաշտօնատունը: Միևնոյն օր ոստիկանութեան նախարար Վհեամիլ պէլլ պաշտօնանկ եղաւ, որ տեղեկութիւն չէր ունեցած այս դէպքի մասին: Ապարապետի դուռը զինուորական ատեան կազմուեցաւ Խուփ միաշյի նախարահութեամբ ամբաստանուածները դատելու համար: Տեղական լրագիրներին արգելուած է այս մասին գրել:

Ծուլիսի 15-ից բազմաթիւ ձերբակալութիւններ եղան զանազան դասակարգերից, բայց գլխաւորապէս մշեցիներ, վանեցիներ, բաղէցցիներ և կարնեցիներ: Խուզարկութիւններ ամենուրեք, սակայն, և ոչ մի տեղ ոչինչ չեն գտած, բացի « Այսաստան » լրագրի մի քանի համարներից և յօդուածներից:

Այս գէպքից յետոյ Աշբեան Խորէն պատրիարքը Մաքրի գիւղումն է ապրում: Ա երջերս սուլթանի կողմից մի պալատական է գալիս և կամենումէ համոզել պատրիարքին, որ հետևեալ օրը կիւրակէ հանդիսաւոր կերպով յորդուներ կարդայ եկեղեցում և յիշեցնէ հայոց հաւատարմութեան և հնազանդութեան պարտաւորութիւնները դէպի Առութանը: Խորէն պատրիարքը պատասխանած է: « Ես այլ ևս իշխանութիւն չունիմ: որովհետեւ պատրիարքութիւնից հրաժարական տուած եմ: Իսայց եթէ պատրիարք էլ լենէի, ինչ ազգեցութիւն կարող են ունենալ իմ խօսքերս. ինչ որ կարողանամ կանեմ, բայց կարողացածս շատ քիչ բան է »:

Այստեղ առաջ ենք բերում թէ Ամեն. Խորէն պատրիարքի հրաժարագրի պատճէնը և թէ թրքական պաշտօնական յայտարարութիւնը հայ ամբաստանեալների մասին:

Տ. ԽՈՐԵԿՆ ՊԱՏՌԻԱՐՔԻ ՀՐԵԺԵՐԱԳԻՐԸ

Վ.մեն. Խորէն Պատրիարքը պալատից իրեն եկած հրամանին պատասխանած է հետևեալ հրաժարագրով որ Պայրամին երբորդ օրը, երեքշաբթի, ուղարկած է Մեծ Եպարքոսին:

Առ. «Լորին Ա սեմութիւն.

«Խորին Խայսերական Ա եհամառութեան հրամանը ընդունեցի, որ Պատրիարքարանի կիրակի աւուր պատահած դժբաղդ արկածին վրայ իւր ցաւն ու սրտմտութիւնը յայտնելով հրաման կընէր իւր ծառային՝ մեր հրամանին և վարչութեան ներքեւ եղած բոլոր եկեղեցական և աշխարհական գլխաւորներուն ազդուասկէս և փութապէս յանձնարարութիւն և խրատ տալ որ այսպիսի անտեղութիւններ մայրաքաղաքին և այլ քաղաքաց մեջ չպատահելուն ջանանք. որուն նմանը անգամ մ'ալ եթէ տեղի ունենայ, հետևանքը շատ ծանր պիտի ըլլայ *):

Կիրակի աւուր արկածէն ես ինքս անձնապէս շատ յուզեալ և առողջութիւնս իսկ խանգարուած ըլլալով, չը կրցի Պատրիարքարան դտնուիլ և իմ նախագահութեամբ գումարել հրամայուած ժողովը. սակայն իմ փոխանորդիս և ինձ օժանդակ վարչական ժողովոց հաղորդելով կայսերական հրամանն, խստիւ գործադրութիւնը պահանջեցի:

Ասկայն ցաւօք սրտի կը փութամ յայտնել որ ինձ անկարելի է այլ ևս պատրիարքական պաշտօնս շարունակել, վասն զի մէկ կողմանէ կը տեսնեմ ժողովրդեան յուզեալ վիճակը, որ պատճառած են վերջին ժամանակներս ընդհանուր կերպիւ ազգին վրայ տարածուած պետական անվտաշութեան և կասկածին յայտնի գործնականներն, որուն համեմատ եկեղեցիներ և գպրոցներ կը խուզարկուին առանց իմ գիտակցութեանս, եկեղեցական անքննելի և անխափաննելի գրեանք կը բռնուին և կայրուին անգամ, որով Երզգրումի մեջ անմեղ և անզէն ժողովրդեան գրգոռելուն համար զինու հարուածոց կենթարկուի և աստէն հաւանօրէն նոյն պատճառէ յուզեալ խել մը մարդիկ ծայրայեղութեան գիմելու աստիճան կը յանդգնին, ամեն նուիրականութիւն ոտնակոխ կըլլայ և կենացս իսկ վտանգ կըսպանան. միւս կողմանէ ալ կը տեսնեմ պատրիարքական շքոյն և ազդեցութեան հետզետէ նուազումը որուն ինչ պատճառէ յառաջ գալը նախորդ գրուածներովս ման-

*) Տաճկաց բերանը ընդհանուր կոտորածի խօսք մը կը պարբու:

ըամասնօրէն բացատրել եմ: Ճողովքեան վրայ վերոյիշեալ պատճառներով պատրիարքական ազգեցութեան հարկաւոր ոյժը իւր վերջին տկարութեան աստիճանին իջած ըլլալը ցաւօք սրտի տեսնելով և զգալով մէ անկարելի պիտի ըլլայ այլ ևս այսպիսի պաշտօն մըյառաջ տանելու, կաղաչեմ խոնարհաբար որ ինձ թոյլ տրուի քաշուիլ առանձնանալ և աղօթել:

ԳՈՒՄԳԻԸԲՈՒՏԻ ԴԵՊՔԸ

Ա. Պոլսի լրագրած մէջ հրատարակուած է հետեւեալ պաշտօնական յայտարարութիւնը.

Ապարագետի Դրան մէջ գումարեալ Օհնուորական Վատեանն արձակած է իւր վճիռն այն անձանց նկատմամբ, որք կիրակի, ի Դումդաբու և այսոց Պատրիարքարանին ու գէմը գտնուած եկեղեցւոյն մէջ հաւաքուելով հպատակութեան հանգամանաց հակառակող անպատեհ վարմանց մէշ գտնուիլ հտմարձակած էին:

Ասոնցմէ և այս գէպքի պարագլուխներէն Վրթին Շիհանելեան մահուան գատապարտուած է, որովհետև օսմանեան հպատակները օսմանեան կառավարութեան գէմ ապստամբեցուցած է և ձեռնարկած է օսմանեան երկիրներու մէկ մասը կառավարութեան իշխանութենէն հանելու:

Աեբաստացի Վրթին՝ Կաթորեան՝ գատապարտուած է տասն և հինգ տարուան բերդարգելութեան յԱքեա:

Աեբաստացի՝ Կաղաքիթ՝ նյոնպէս տասն և հինգ տարուան բերդարգելութեան ի Վիտիլլի:

Յոյն՝ Կիքոլա՝ տասն և հինգ տարուան բերդարգելութեան ի Աինոպ:

Վւետիս և Քէօթահեացի Պարոն՝ հինգ տարուան բերդարգելութեան ի Աինոպ:

Երզնկացի Կարապետ՝ հինգ տարուան բերդարգելութեան ի Քիոս:

Յոյն Եռովան՝ հինգ տարուան բերդարգելութեան ի Շայաս, և Խաչիկ հինգ տարուան բերդարգելութեան ի Լէմոս:

Օհնուորական Վատեան անպարտ արձակած է այս գէպքի արթիւ իբրև ամբաստանեալ Աստիկանութեան Դուռը զրկուած տասն և վեց անձեր:

Վայ վճիռ, որոշմամբ՝ Կախարարաց Խորհրդոց, Աւել:

թանին մատուցուած ըլլալով, “Եւ Ա եհափառութիւն բարեփու-
խած է Արթին Շ'իհանկիւլեանի համար որոշուած մահուան
պատիժը, հրամայելով որ ցկեանս շըզթայակապ աշխատութեան
դատապարտուի յԱքեա: Իսկ միւս անձանց համար ևս հրամայած
է գործադրել Օքնուորական Վաենին վճռը:

Այն անձինք, որք կառավարութեան մը հպատակն իւր գեր-
իշխան պետութեան գէմ կապստամբեցնեն և կամ կը ձերնարկեն
տէրութեան երկրին մէկ մասը կառավարութեան իշխանութենէն
հանել, մահուան կը դատապարտուին և ամեն երկրի մէջ բնակա-
նաբար այս պատիժ կը գործադրուի. և թէե այս անգամուան հա-
մար Արթին Շ'իհանկիւլեան բարձրագոյն ներման արժանացած է,
սակայն կայս. Խրատէ մը բացարձակապէս հրամայած է որ եթէ օս-
մանեան երկիրներու որ և է մասին մէջ անգամ մըն ալ այս տե-
սակ գէպք մը պատահի, չեղինակներն անմիջապէս ձերբակալուե-
լով Օքնուորական ատենի մը պիտի յաձձնուին և այս վերջնոյն
կողմէ ըստ օրինի վճռուած պատիժներն ամբողջովին պիտի գոր-
ծադրուին առանց ներուելու և մեղմուելու:

ԼՐԱԳՐԱՑ ՇՈՒՐՁԸ

Վերջերս հայկական յուզումները այն աստիճան կարեռո-
րութիւն ստացան լուսաւոր ազգերի մէջ, որ իւրաքանչիւր
ժողովրդի մամուլում շարունակ տպագրվում էն այդ շար-
ժումների առիթով անվերջ հեռագիրներ, թղթակցութիւններ,
առաջնորդողներ և զանազան գրուածներ հայի պատմական
անցեալի և ներկայ մասին:

Վենք ի հարկէ ամենայն ուրախութեամբ կարձանագրէինք
«Հրաքսում» գէթ զոցա բովանդակութիւնը կամ իմաստը և
լրագրների անունները ու թուահամարները, սակայն գա նախ
թէ մէծ ծաւալ կրոնէր մեր հանդիսում և թէ, որ զլաս-
ւորն է, մեր սուղ նիւթական կարողութիւնից վեր է միանգա-
մայն: Սակայն այս հարցով հետաքրքրուող ընթերցողը վեր-
ջին երկու ամսուայ որ պարբերական հրատարակութիւնն էլ
ձեռք չառնէ, անշուշտ, նա այնտեղ հետաքրքրական տեղեկու-

թիւնների մեծակաշար կ'գտնէ: Օրագիրների կարգում աւելի շատ և յաջախ զրվում է «Новое Время»ի մէջ: Այս անգամ այստեղ առաջ ենք բերում մի երկու խօսք միայն հետևեալ երկու պարբերական հրատարակութիւններից:


«Северный Вестник» գրականական և քաղաքական ռուս յայտնի ամսագրի օգոստոսի դրբում տաճկահյերի յուղութների մասին տպագրուած է մի զրութիւն քաղաքական բաժնի 142—145 երեսներում: Այս զրութիւնն այսպէս է վերջանում:

«Ի հարկէ նայաստանը, նոյն և լրիտը, ոչինչ սպասելու չեն եւրոպական միջամտութիւնից ինչ կերպով էլ որ չլինի. ուստի թերեւս իրաւ էր Պոլսի եւրոպական դեսպաններից մէկը, որը Պոլսի հայ ժողովրդական ցոյցից յետոյ, ասաց. Ճշխնը է զոր արեգը չէ նախուած. նա կարող է ձեւցնել հայիսկան ննդնալարունին»: Տայց բոլոր բանը նորանում է, թէ որքան արիւն պէտք է թափեն խաղաղ հայերը, որոնք այժմ առաջին անգամն է, որ ապաստամբում են հնգեղարեայ թուրքի լի դէմ և պատերազմասէր կրետացիք, որոնք շարունակ զէնքը ձեռքներին իրենց իրաւունքն են պահպանում, մինչքան ստանան անկախ ազատութիւն կամ գէթ ապահովուեալ ինքնավարութիւն»:

Հոչակաւոր մաճառ արևելագէտ Արմինիուս Վամբերին, որը յայտնի է ի միջ այլոց և իր թրքասիրութեամբ, մի նշանաւոր յօղուած է հրատարակել տաճկահյոց վերջին շարժումների առիթով Միւնխէնի յայտնի քաղաքական «Allgemeinen Zeitung» լրագրի 224 և 225 համարների յաւելուածում՝ «Այսոց ազգայնութեան զարթնումն» վերնագրի ներքոյ: Այս յօղուածը այնքան կարևոր և ընդհանուր կազ ունեցող հարցեր է զարթեցնում թէ ի նպաստ հայոց և թէ թուրքաց, որ մեզ անկարել է զառնում որ և է քաղուած անել իսկ ամբողջովին թարգմանել չենք կարող վերցիշեալ պատճառներով:

Հանդիսի վերջին թերթը տպագրուելու միջոցում, հետագիրը հաղորդում է, որ հայերը նիկոմիդիեյ մօտ, Բակ Զէջեկ գիւղում սպանել են 5 թուրք զինուոր. այս եղելութիւնը սարսափ է ազգել թուրքերի վերայ: Դիսառապէս այս գէպքին վերայ, Սուլթանը հրովարտակ է հրատարակել որի մէջ առուած է, թէ կազմուել է մի մասնաժողով հայկական գաւառների անդուհացուցիչ վիճակի պատճառները վերաստուգելու: և հայեկեղեցական առանձնաշնորհման խնդիրները կարգի բերելու: Մասնաժողովի անդամներն են. Ռիզա, Արթին, Սավակ փաշաները և բարիք ու Զիվէ բեյերը:





ՄԿՐՏԻՉ ՍԱՆԱՍԱՐԵԱՆ

Հրատ. «Արաք» Հանդիսի.

ՄԱՀԱՑՈՒՑԱԿ



ՄԿՐՏԻՉ ՍԱՆԱՍԱՐԵԱՆՑ

ԾԱՆԱԿ 1818 Թ. ԱՊՐԻԼ 10, † 1890 ՄԵՅԻՆ 19

Դեռ ևս մի տարի չէ անցել այն օրից, երբ «Երաքսը» ուրախութեամբ դրօշմում էր իւր էջերում այն հանդիսի նկարագրութիւնը, որով պատուում էր Պետերբուրգի հայ հասարակութիւնը իւր մեծանուն հայրենակցին։ Եւ ահա սյաօր նոյն «Երաքսի» էջերում տրտմութեամբ և սգով համակուած դալիս ենք գումարելու այդ նշանաւոր մարդու տարադէպ վախճանը։

Եյդ ցաւալի լուրը իսկապէս անսպասելի չէր այն անձանց համար, որոնք միջոց ունեին մօտիկ ծանօթանալըւ նորա առողջութեան վիճակի հետ։ Երբոր անցեալ տարուայ նոյեմբեր ամսին հիւանդ ծերունուն ուղարկում էին Նիցցա, այդ ժամանակ զեռ ևս նորա վիճակը այնքան ծանր էր, որ ամենքը մնաս բարեւ ասելուս զգում էին իրենց սրտի խորքում որ այդ հրաժեշտը վերջին հրաժեշտն է, որ այլ ևս նրանք չպիտի արժանանան իրենց պատկառելի բարեկամի կրկին տեսութեան։ Ի՞այց Նիցցայի սքանչելի կիմայի ազգեցութեան շնորհիւ մի քանի ամսուայ մէջ հիւանդի զրութիւնը սկսում է բարւոքուել և Ամնասուարեանը այնքան կազդուրուած է լինում, որ ցանկանում է կրկին վերադառնալ Պետերբուրգ և կարգի բերել իւր բարձիթողի արած գործերը։ Փարիզում նա կրկին հիւանդանում է և սյս անզամ ոչ մի իննամք և բժշկական հոգացողութիւն կարող չեն լինում ազատել հայերիս համար թանկագին կեանքը ծանր հիւանդութեան (воспаление почекъ, nephritis) ճանկերից։ Վայիսի 19-ին, շաբաթ օրը, երեկոյեան

ժամը 6-ին նա կնքում է իւր մահկանացուն Փրանսիայի մայրաքաղաքում՝ հեռու իւր սիրած հայրենիքից և բարեկամներից:

«Երաքսի» 1888 թուի Բ. գրքում՝ մենք արդէն տուել ենք մեր ընթերցովներին Անհասարեանի մանրամասն կենազգութիւնը հանդերձ նորա լրւսատիպ պատկերով։ Այժմ մնում է մեզ միայն մի քանի խօսքով կրկնել մեր տուած տեղեկութիւնները։ Մկրտիչ Անհասարեանը ծնուել է Թափլիկում 1818 թուին ապր. 10-ին։ Նորա հայրն էր վանեցի Արդիս Անհասարեանը, իսկ մայրը՝ նոյնպէս վանեցի Գէորգ աղա Երջրունու գուստարը։ Նա իւր սկզբնական կրթութիւնը ստացել է «Ներսիսեան գպրոցում, ուր ի միջե այլոց աշակերտել է Յարութիւն Վարդապետ Էլամդարեանին և իւր ժամանակնշանաւոր Սուպել Վարդապետ Երարատեանին։ Յաջողութեամբ աւարտելով «Ներսիսեան գպրոցի այն ժամանակուայ կարծ գասրնթացը և վերին աստիճանի ուսումնասէր դոլով նա մոտածում է, հակառակ իւր ծնողաց կամքին, վախչել Անեսիկ, ուր յառած էին ժամանակակից բոլոր ուսումնատենչ պատանիների ուշքը և միտքը։ Իւր ընկեր Առոստոմեանի հետ (որը յետոյ բժիշկ գարձաւ և յայանի է իբրև հիմնադիր Բագուի Մարդասիրական Ընկերութեան) մի քանի րուբլի զրպանում նոքա ճանապարհ են ընկնում գեղի հեռաւոր Խառլիա... բայց Թափլիկուց շատ չհեռացած երկու պատանիներին բռնում են և յերբերում ծնողների մօտ։ Անհասարեանի քեռին, յայտնի գեներալ Նրեմիտ Երջրունին, որը Անհասարեանի հօր մահուանից յետոյ խնամակալ էր նորա ընտանիքին, իբրև պատիժ այդ յանդուգին ձեռնարկութեան ուղարկում է նորան Մինդլեան եղերսկի զօրաբանակը հասարակ զենուորի պաշտօնով։ Այդ գեղիքը տեղի է ունենում 1835 թուին, երբ Անհասարեանը հաղիւ 17 տարեկան էր։ Օքնուորական ծառայութեան մէջ նա մնում է ամբողջ 10 տարի մինչեւ որ 1843-ին պատերազմի մէջ ստացած վելքերի պատճառով ստիպուած է լնում վերջնականապէս հրաժեշտ առաջ ասպարիզին։ Օքնուորական ծառայութեան մէջ ևս Անհասարեանը ցոյց է տալիս իւր ընդունակութիւնները և կարողանում է ոչ միայն հասարակ զինուորից բարձրանալ սպայի աստիճանի այլ և արժանանում է Ա. Գէորգի շքանշանին, որը ինչպէս յայտնի է արու-

ում է միմիայն նշանաւոր քաջութեան համար: Ի՞սցի սորանից նորան վճռում են տալ լիակատար թոշակ մինչև ցմահ: մի վարձատրութիւն՝ որը տրուում է միայն բացառիկ դէպքերում:

Եյդ դէպքից քիչ ժամանակ անցած Անասարեանը զալիս է Պետերբուրգ նպատակ ունենալով շարունակել մի ընտանիան դատ, որ Սանասարեանները սկսել էին իրենց քեռունքնիա Նրծունու դէմ: Եյդ դատը Պետերբուրգում ևս նորան չէ յաջողուում; բայց նորան յաջողուում է հիմք զնել իւր վաճառականական ընդարձակ գործունէութեան: Եւր եռանդու և Հեռատես բնաւորութեան, համեստ և սակաւապէտ կեանքի և բնական ընդունակութիւնների շնորհիւ համեմատաբար կարծ միջոցում կարողանուում է բաւական նշանաւոր գումար շահել և պատուաւոր դիրք բռնել վաճառականական շրջանում: Յիսնական թուականների սկզբում նա արդէն սկսում է աչքի ընկնել հայ հարուստների շարքում և հէնց այդ թուականից էլ սկսում է նորա ազգային—բարեգործական գործունէութիւնը, որը այնուշետե դառնում է նորա կեանքի նպատակ և խորհրդագ:

Մի առ մի թուել այստեղ Անասարեանի կատարած բոլոր բարի գործերը և ցոյց տալ այդ գործերի նշանակութիւնը և արդիւնքը—այդ շատ հեռու կտաներ մեղմ մանաւանդ որ ում յայտնի չէ թէ ինչքան բարերարութիւն և ծառայութիւն է արել նա մեր ազգին: Ի՞ստական է միայն ասել որ սկսած յիսնական թուականներից մինչև մեր օրերը չէ եղել ոչ մի ազգային գործ, որտեղ հարկաւոր լիներ բարերար ձեռքերի միջամտութիւնը և Անասարեանը զլացած լիներ իւր օժանդակութիւնը այդ գործին: Հաստատ կարելի է ասել որ չկայ մի ուսումնարան, մի վանք, ընկերութիւն և առհասարակ ոչ մի ազգային հիմնարկութիւն, թէ Ոռուսաստանում և թէ Տաճկաստանում, որը ձշմարիտ պէտք ունենալով դիմուծ լինի Անասարեանին և վայելած չլինի նորա բարերարութիւնը: Մենք չենք յիշում մասնաւոր հայ անհասների մասին, որոնք աշխարհի զանազան կողմերից անդադար դիմում էին նորան և որոնց նա օգնում էր թէ փողով, թէ խորհրդով և թէ պաշտպանութեամբ: Աւենենալով բազմաթիւ կազեր Պետերպաշտպանութեամբ:

բուրգի բարձր շրջանի և իշխանաւորների հետ, նա անդադար օգուտ էր քաղաքում այդ ծանօթներից իւր այս կամ այն հայրենակցին օգնելու համար: Հարիւլներով և հաղարներով կալելի է համարել այն անձանց թիւը, որոնք միմիայն շնորհիւ Սանասարեանի այսօրուայ օրս, ինչպէս ասում են, մի կտոր հացի տէր են գարձել: Խոկ ինչ որ վերաբերում է ուսանողական գասահարզին և մասնաւորապէս Պետերբուրգի հայուսանողներին, ամենքիս քաջ յայտնի է թէ ինչքան բարի և առատաձեռն է եղել նա միշտ զէպի աղքատ և կարօտեալ ուսանողները: Բացի սորբանից, ինչպէս յայտնի է, նա իւր հաշուով գաստիարակել և բարձր ուսում է առել մի ամբողջ խումբ երիտասարդների թէ Ուուսաստանում և թէ արտասահմանում, որոնց մեծ մասը այսօր գործում են աղգային տապարիզում: շատերը նոցանից արդէն բռնել են յայտնի դիրք այդ ասպարիզի վերայ:

Իսյց Սանասարեանի գլուխ գործոցը և նորա անունը իսկապէս անմահացնողը նորա հիմնած գպրոցներն են Տաճկահայաստանում: Այդ գպրոցներից մենք Վանայ Սանդխաւան օրիորդական գպրոցը հիմնած Խրիմեան Հայրիկի առաջնորդութեան օրով և նորա աջակցութեամբ, միւսը Խարակոնիս գիւղի Մարիամեան գպրոցը և վերջապէս Երզրումի Աանսաւրեան վարժարանը, որին հանգուցեալը նուիրել է ոչ միայն իւր բոլոր հոգսը և խնամասարութիւնը, այլ և իւր համարեա ամբողջ կալողութիւնը:

Մեր աղզի մէջ ներկայ գալուս սկզբից երեան են եկել բաւականաշափ աղգասէր անձնիք, որոնք չեն խնայել իրենց հարստութիւնը աղզի կրթական զործի համար: Իսյց Սանասարեանը տարբերուում է այդ բոլոր բարերարներից նորանով, որ նա չի բաւականացել միայն բարի ցանկութիւններով, այլ միշտ աշխատել է որ իւր բարերարութիւններից օգուտ քաղեն աղզի իսկական կարօտեալները: Նա աշխատել է վերահասու լինել աղզի ճշմարիտ պահանջներին և գիտակցարար բաւականութիւն տալ այդ կարիքներին: Այս է պատճառը որ մինչդեռ միւս բարերարները հիմնում էին գպրոցներ, մէկը Փարիզում, միւսը Վանեատիւմ, երրորդը Սուկուայում և վերջապէս ամենքը այնպիսի տեղերում որտեղ երկիւղ չկար

որ նոյսա գումարը կարողէ կորչել կամ նոցա ձևնարկութիւնը կարողէ գժուարութիւնների և խոչնդուների հանդիպել Ամսասարեանը ընդհակառակը իւր բարեզործութեան ասպարէզէ ընարել բուն հայրենիքը և բուն ժողովուրդը, որտեղ թէե գործը շատ աւելի գժուար և շատ աւելի խոչելից է, բայց հէնց այդ պատճառով էլ այդաեղ գործելը աւելի կարեղ և աւելի արդիւնաւոր է: Կյդ ցցց է տալիս Ամսասարեանի բարձր և գիտակցական ազգասիրութիւնը: Իբրև մարդ Ամսասարեանը բարեսիրու էր և արդարասէր, իբրև քրիստոնեայ-Ճշմարիա հաւատացող և անկեղծ եկեղեցասէր, իսկ իբրև հայ իւր ազգի ցաւերին ցաւակցող և գարմանող: Օտուր չը գեռ ևս 1859 թուականին Նալբանդեանը գովում նորա աղքասիրութիւնը և հիւսիսափայլի մէջ հրապարակապէս բացականչում «Պարծանք քեզ, Հայաստան, որ թէե փոքր, այնուամենայնիւ ունիս զաւակներ, որոնք իրենց ազգասիրութեամբը փառաւորում են քո մոռացված ու փշոտված անունը, որի յիշատակն անդամ ջնջուածէ քո շատ զաւակների սրաից»: Յանձին Ամսասարեանի հայ ազգը կորցնումէ իւր ամենաարդիւնաւոր զաւակներից և անկեղծ բարեկամներից մէկին: «Նորա մահը մի մեծ և ընդհանուր ազգային կորուստ է, որի ծանրութիւնը գեռ շատ տարիներ պէտք է զգալի լինի հայ ժողովրդի համար:

Խառնելով մեր ցաւակցութիւնը ամբողջ ազգի ցաւի հետ միախառնում ենք և մեր աղօթքը միլիօնաւոր ժողովրդի անկեղծ մաղթանքի հետ:

«Հանգիւստ ոսկորներիդ, ովք ազգի անկեղծ բարեկամ և թող յաւիտեանս յաւիտենից օրհնուած լինի քո բարի յիշատակդ»:



ԱՂԵՔՍԱՆԴՐ ՄԵԼԻՔ ՀԱՅԿԱԶԵԱՆՑ

Մայիսի 16-ին Փոթի քաղաքում կնքեց իր մահկանացուն գարձեալ մինն այն հայերից, որոնք իրենց օրինակելի կեանքով և հանրաշահ գործերով ժողովրդի բարձր ձգտումների և լաւ յատկանիշների զարգացմանն են նպաստում:

Եյսպիսի մի հանրաշահ մարդի կորուստը, որպիսին էր, իր բարերարութիւններով լաւ յայտնի, ոմբաձիդ զօրայ գընդապետ Եղեքսանդր Մելիք-Հայկազեանց, անշուշտ, պէտք է որ խիստ զգալի լինի հայ ժողովրդի, մանաւանդ այն շրջանի համար, որտեղ մասնաւորապէս գործում էր հանդ, մեկենասը: Թէ էլ գժուար էյիշել այն բոլոր բարեգործութիւնները, որոնք արել է հանգ, գնդապետը, սակայն մատնացյց անենք գոյանից մի քանիսը:

Եղեքսանդր Մելիք Հայկազեանի բարերարութիւնները սկսվում են յիսնական թուականների վերջեց. 1860 թուից նա շարունակ զրամական պատկառելի օժանդակութիւններ է արել Վութայիսի հայոց գպրոյներին. տասը տարի Չիսար զիւզի գպրոցին տարեկան 200 ռուբլի և զանազան պիտոյքներ էր տալիս. նորա հաշուով կրթութիւն էին առնում արտասահմանում մի քտնի հայ երիտասարդներ, որոնցից մինը այսօր Ուտմինից հպատակ հայերի մէջ է գործում, միւսը կարծեօք ուսուցիչ է Գէորգեան Ճեմարանում: Էն: Վերջին տասը տարիներում հանգ, զնդապետը կարողացածին չափ նպաստում էր և այս ու այն պարբերական հրատարակութիւններին, հայ զբագէտներին՝ նոցա հեղինակութիւններից տպագրելով: Վերջերս, նորակոչ զինուորականների համար իր ընարութեամբ և հաշուով հայերէն լեզուով տպաղրել էր տուել մի շար փոքրիկ գրքոյիներ:

Հանդիսա ոսկորներիդ, ով ճշմարիտ հայ, և օրհնեալ ու անմոռաց լինի բարի յիշատակդ քո սիրած ժողովրդի մէջ:





Сибирь и Китай. Четвертый том.

Лесной пейзаж в Сибири.

ՄԱԿՍԻՄ ՄԱԿՍԻՄԻՉ

(ՀԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ *).

Մակսիմ Մակսիմիչըց բաժնուելով ևս շրտով անցաց
Տերեկի և Դարեալի կիրճերը, նախաձաշեցի Ազգբէկի իջևա-
նում, Լարսում թէյ խմեցի, իսկ ընթրիքին ժամանեցի Վազի-
կաւկաս: Չեմ ուզում ձեղ ձանձրացնել լեռների նկարագրու-
թեամբ և բացազննչութիւններով, որոնք ոչինչ նշանակութիւն
չեն ունենայ, մասնաւանդ նոցա համար, որոնք չեն եղած այս
լեռներում, չեմ բերում և վիճակագրական դիտողութիւններ,
որոնք անշուշտ ոչ ոք պիտի չկարդայ:

Խս իջայ մի հիւրանոց, ուր իջևանուռեն բոլը անցորդ-ները, և ուր մէկը չկայ, որին մարդ պատուիրէր կամ մի փա-սեան խորովիլ կամ մի շնէ (ապուր) եփել որովհետև թէսէա հիւրանոցն յանձնուածէ երեք ասլիկար, պաշաօնաթող զինուո-րի, բայց նոքա այնքան յիմար են կամ այն աստիճան հար-բած, որ նոցա բան հասկացնել կամ բան իմանալ անկարելի է:

Խաճ յայտնեցին, որ Վաղիկաւկասում պէտք է գեռ երեք
օր էլ մասմ, որովհետև օկազիան Եկատերինովսովից գեռ
չէ եկել ուրեմն և չէ կարող յետ դառնալ: Այ քեզ սե բազդ ^{**}):...
Ժամանակս անցկացնելու համար միտքս դրի, որ դրի առնեմ
Մակսիմ Մակսիմիչի պատմութիւնը Ի-Էլյոյի մասին, ամենենու
չենթագրելով թէ սա գուռ պիտի բանար նորավեպների մի
երկար շալքի. տեսնում էք, ի՞նչպէս երբեմն մի անկարեռ

*) Այս վեպը «Արաքսի» անցեալ տարրուայ երկրորդ գլուխ հելլայի շարունակութիւնն է:

**) Բնագրում՝ «что за оказия!, при乎 հեղինակը բառախաղէ անում վերսիչեալ «օկազիա» բառին հետ։ Որովհետեւ այս բառախաղն անթարգմանելի էր, ուստի մենք դուրս թողինք և հետևեալ տողը «но дурной камамбурь не утешение для русского человека»—այսինքն՝ վաս բառախաղը փոր չի կշացնի։

գիպուած աշոելի հետեւանքներ է ունենում: Տայց դուք երեխ
չփառեք ի՞նչ բան է «օկազիան»—սա պահապան մի դունդէ,
կես վաշտ հետեակ զօրքից և մի թնդանօթից բաղկացած,
որ ուղեկցումէ Վաղիկաւկասի և Խկատերինողագի մէջ
Աբարդայով երթեւեկող կարաւանին:

Առաջին օրն ես շատ ախուր անցկացրի: Երկուրդ օրը,
առաւոտ կանուխ՝ մի սայլ մոտ մեր բակը... Ե՛, Մակսիմ
Մակսիմիչը... Մենք իրար զիմաւորեցինք իբրև վաղեմի բա-
րեկամներ: Ես առաջարկեցի նորան իջևանել իմ սենեակա.
Նա նազ չարաւ, մինչեւ իսկ բարեկամնաբար ուսիս զարկեց և
բերանը ծումնեց—իբր թէ ժատաց: Տարօրինակ մարդ...

Մակսիմ Մակսիմիչը խորին հմտութիւն ունէր խոհա-
րարական զիտութեան մէջ: Նա հրաշալի կերպով տապակեց
փասեանը և յաջողութեամբ վերան ածեց վարունդի թթուի
ջուրը. առանց նորան, ի՞նչ ծածկեմ՝ ակամայ պաս պիտի
պահէի: Մի շիշ Կախէթու գինին մեզ մոռացնել տուեց, որ
միայն մի տեսակ կերակուր ունէինք, որից յետոյ ծխամուրձ-
ներս վառեցինք ու նստանիք, ես՝ պատահանին մօտ, իսկ նա՝
վառած վառարանին մօտ, որովհետեւ խոնաւ ու յուրա օր
էր: Մենք լուռ էինք. և ի՞նչ բանի վերայ կարող էինք խօսել
նա ինձ արդէն սպատմել էր ինչ որ հետաքրքրական բան կար
իւր մասին. ես հօ պատմելիք ոչինչ չունէի: Պատուհանից
դուրս էի նայում ես: «Օառերի ետեկից նշմարվումէին բազ-
մաթիւ մանր ու յածլիկ տնակներ, յրիւ յանուած Տերեկի
տիին, որ քանի գնում աւելի լայնանումէ. իսկ աւելի հե-
ռուն երեսումէին կապտաւուն լեռները բուրգի պատի նմոն,
իսկ նոյա ետեկից յցուած էր Կազբէկ ձիւնէ վեղարը զիւին:
Մաքումն մնաք բարով էի ասում նոյա, ստրջանալով որ հե-
ռանում եմ նոյանից...

Երկար ժամանակ մենք նստած էինք այսպէս: Երեն ար-
դէն պահուել էր լեռների յուրա գաղաթների տակ, Ճերմակ
մասախուղը սկսել էր փառուիլ ձորերում երբ փողոցում ու-
ղեկառքի զանգակի ձայն և կառապանների աղաղակ լսուե-
ցաւ: Մի քանի սայլ, անմաքուր հայերի հետ, հիւրանոյի
բակը մոտ և նոյա ետեկից մի պարագ ուղեկառք. նորա
գնացքի թեթեսութիւնը, յարմարութիւնները և զարդարուն

տեսքը արտասահմանի շենքի կնիք էին կրում։ Ուղեկառքի ետևից գալիս էր մի մարդ երկար բեղերով, կարճ բաժկոնով (անգերկա), և իրեւ սպասաւոր՝ բաւական լաւ էր հազնուած։ Նորա սպասաւոր լինելուն չէր կարելի կասկածել երբ մարդ նկատէր նորա անզուսազ կոպիտ շարժուածքը, երբ ծխամոր-ձից թօթվում էր փոշին և գուում էր կաւապանին վերայ։ «Նա անշուշտ մի ծոյլ պարոնի երես առած սպասաւոր պիտի լինէր—մի տեսակ ֆիգարոյ ոռուսների մէջ։ Ասա, բարեկամ, ձայն տուի ես նորան պատուհանից, այս օկազիան եկաւ, ի՞նչ է։» Նա բաւական յանդութեամբ նայեց վերաս, վզնոցն ուղղեց և երեսը դարձեց ինձանից։ Նորա կողքից գնացող հայը ժապարվ պատուսխանեց նորա փոխանակ, թէ յիրաւի օկազիան եկաւ և վաղը առաւօտ յետ կդառնայ։ «Փառք Աստուծոյ», ասաց Մակսիմ Մակսիմիչը որ այս ժամանակ մօտեցել էր պատուհանին։ «Այ, հիմնալի կառք, աւելցրեց նա, անշուշտ մի պաշտօնեայ Թիֆլիս է գնում քննութիւն անելու։ Երեւի մեր այստեղի լեռներին ծանօթ չէ նա։ Հրամել ես, պարոն, մեր լեռները ասածներից չեն, ոչ թէ այդ, ապա անդիւական կառք էլ լինի՝ այնպէս ցնեն որ դու հաւանիս։— Բայց ովէ արդեօք այդ նորեկը, զնանք իմանանք»— այս խօսքերով մենք եւանք սրահը։ Սրահի ծայրում բացուածէր մի դուռ դէսպի կողմնական սենեակը, սպասաւորն և կառապանը ուղեսպարկներ էին կրում այդ սենեակը։

— Ասա, եղբայր, ո՞ւմնէ այդ հիմնալի կառքը, հարցրեց շտապս-կապիտանը։ Հրաշալի կառք է... Ապասաւորը առանց յետ դառնալով ինչ որ բան իրեն վնմթվնթաց, քանդելով պայուսակիր։ Մակսիմ Մակսիմիչը բարկացաւ, նա անկիրթի թեկից շարժեց և ասաց. քեզ հետ եմ բարեկամ։

— Ում կառքն է... իմ տիրոջ։

— Ովէ քո տէրով։

— Պեչորինը։

— Ի՞նչ ես ասում, Պեչորինը... Աշ, Տէր իմ... չլինի նա ծառայումէր Կողկասում... գոչեց Մակսիմիչը իմ թեկից ձգելով։ Նորա աչքերում փայլումէր ուրախութիւն։

— Կարծեմ ծառայումէր, վաղուց չէ, ինչ ես նորա մօտ եմ։

— Բայս... ուրեմն... Պրիդորիյ Ալեքսանդրովիչ... Այդպէս

*

չէ նորա ամունը: Մենք քո տիրոջ հետ բարեկամներ էինք,
աւելացրեց նա բարեկամաբար սպասաւորի թեին զարնելով,
այնպէս որ ստիպեց նորան տեղից շարժուիլ:

— Ներեցէք, պարոն, դուք ինձ խանգարումէք, ասաց
նո խոժոռ նայուածքով:

— Ե՛հ, եղբայր... զիտե՞ս, մենք քո տիրոջդ հետ մտե-
րիմ բարեկամներ էինք, ապրում էինք միտսին... բայց ուր մնաց
նոս:

«Օառան յայտնեց, որ Պեչորինը մնացել է ընթրելու և գի-
շերելու նու... զնդապետի տանը:

— Նա երեկոյեան այստեղ գալու չէ, ասաց Մակսիմ
Մակսիմիչը. կամ դու, բարեկամ, նորա մօտ որևէ գործով
զնալու չե՞ս... Եթէ կդնաս, ասա, որ Մակսիմ Մակսիմիչը
այստեղ է. հենց այսքանը ասա՞... մնացածը ինքը գիտէ... ես
քեզ ութսուն կոսէկ օդու փող կտամ».

Սպասաւորը արհամարական ձեւ ցցյ տուեց, լսելով այդ-
պիսի մի համեստ խոստումն, սակայն Մակսիմ Մակսիմիչին
հաւատացրեց, որ կկատարէ նորա յանձնարարութիւնը...

— Այ, այս բոպէիս կգայ... ասաց Մակսիմ Մակսիմիչը
հպարտ գէմքով. դուռը կենեմ նորան սպասելու... Ե՛հ, ափ-
սոս, որ նու...ի հետ ծանօթ չեմ».

Մակսիմ Մակսիմիչը գոների մօտ նստաւ նստարանի վե-
րայ, իսկ ես զնացի իմ սենեակս: Իրաւն ասած, ես էլ բաւա-
կանին հետաքրքրութեամբ սպասում էի Պեչորինի գալստեան.
թէ և շտաբս-կապիտանի ասելով ես նորա մասին լսւ գա-
զափար չկաղմեցի, սակայն նորա բնաւորութեան մի քանի
կողմերը ինձ նշանաւոր թուեցան: Մի ժամկց յետոյ պաշտօ-
նաթող զինուորը բերեց հեշտաեռը և թէյնոցը: «Մակսիմ
Մակսիմիչ թէյ չէք կամնում», բզաւեցի ես նորան լուսա-
մուտից:

— Ծնորհակալ եմ. շատ ախորժակ չունեմ:

— Ե՛հ, խմեցէք: «Նայեցէք, արդէն ուշէ, ցուրտ է:

— Ոչի՞նչ շնորհակալ եմ:

— Ե՛հ, ինչպէս ուղում էք: Աս սկսեցի մենակ թէյ խմել
մի տասը բոպէից յետոյ ներս մտաւ իմ ծերը:

— Դուք ուղիղ էիք ասում. ամենից լսւնէ թէյ խմել

և բոլոր ժամանակը սպասում էի: «Նորա ծառան արգեն վաղուց է, որ նորա մօտ գնաց. բայց երեխ որեւէ արգելք պատահեցաւ:

Նա շուտով դատարկեց բաժակը. երկորդից հրաժարուեց. նորից մի տեսակ անհանգստութեամբ գնաց զբան մօտ. յայտնի էր, որ Պեչորինի անտարբերութիւնը ծերին տիրեցնում էր. նա մանաւանդ, որ նա ինձ վաղուց չէր, որ խօսել էր իւր նորա հետ ունեցած բարեկամութեան մասին. և մի ժամ առաջ էլ համոզուած էր, որ նա իւր անունը լսելուն պէս կդայ:

Վրգեն մութն էր և ուշ ես նորից բացի լուսամուտը և սկսեցի կանչել Մակսիմ Մակսիմիչին, ասելով, որ քնելու ժամանակ է. նա ինչ որ բան պատաստ քթի տակ. ես երկորդ անգամ հրաւիրեցի—նա ոչինչ չպատասխանեց:

Նս վերաբուխ մէջ փաթաթուելով և մոմը վառարանի մերայ թողնելով, շուտով նիրշեցի, և դուցէ շուտով քնէի, եթէ Մակսիմ Մակսիմիչը արգեն ուշ սենեակը մանելով ինձ չարթնեցնէր: «Նա ձգեց ծխափայտը սեղանի վերայ, սկսեց մանդալ սենեակի մէջ խառնխառել վառարանը, վերջապէս պառկեց, բայց երկար հազում էր, թքում և կողքէ կողք դառնում:

— Ալինի՞ թէ մշակները ձեզ անհանգստացնում են, հարցրի ես:

— Այո, մշակները, պատասխանեց նա, ծանր հառաչելով:

Միւս օր առաւօտեան ես վաղ զարթեցայ. բայց Մակսիմ Մակսիմիչը ինձանից վաղ էր վերկացել: Նս նորան տեսայ զբան մօտ նստարանի վերայ նստած: «Նս պէտք է գնամ բերդապետի մօտ, ասաց նա, ինդրում եմ, եթէ Պեչորինը կդայ՝ իմ հուե մարդ ուղարկեցէք...» Նս խօստացայ: «Նա վաղ տուեց, կարծես նորա անդամները նորից ստացել էին երիտասարդական ոյժ և ձկունութիւն:

Պեղեցիկ և զով առաւօտ էր: Ոսկեգոյն ամազերը, ինչպէս օդային շղթաների շարք, կուտակուել էին լեռների վերայ: «Դռների առջև ձգվում էր մի ընդարձակ հրապարակ, նորա ետեռում շուկան եռում էր մարդկանցով, որովհետեւ կիւրակի էր. բոկոտն օս մանչերը, ուսերի վերայ գրած մեղրով մաղախները, իմ չորս բոլորս ման էին գալիս. ես նորանց անիծում

էի. ես նորանց հետ զքաղուելու գլուխ չունեի—բարի շտաբսկապիտանի անհանդասութիւնը իմ վերաս էլ փոխադրուեցաւ:

Տասը լուսէ չանցկացած երեեցաւ հրապարակի միւս ծայրում նա, որին մենք սպասում էինք: ‘Նա գալիս էր ’Ն... գնդապետի հետ, որը նորան մինչև հիւրանոցը ուղեկցելով մնաս բարեեց և վերադարձաւ ամիսցը: Ես խսդյն ծերունի զինուորին ուղարկեցի Մակսիմի Մակսիմիչ ետեից:

Պետրինի դիմաց գուշս եկաւ նորա սպասաւորը և յայտնեց, որ հիմա կիծեն, տուեց նորան մի արկղիկ սիրար, և մի քանի հրամաններ ստանալով՝ զնաց գործերը հոգալու: ‘Նորա տէրը սիրարը ծխելով մի երկու անդամ յօրանջեց, նստեց դրան միւս կողմը նստարանի վերայ: Այժմ ես պէտք է նկարագրեմ ձեզ նորա սպասիկելու:

‘Նա միջահասակ էր, նորա սէդ, ճառուկ հասակը և լայն թիկունքը ցցց էին տալիս մարմի ամուր կաղմուածքը, որը ընդունակ է տանել թափառական կեանքի բոլոր գժուարութիւնները, և կլեմայի փոփոխութիւնները որը չէ յաղթուել ոչ մայրաքաղաքի զեղսութեամբ, և ոչ հոգեկան տաղնապներով. նորա փոշու մախմուրեայ զգեստի տակից, որ կոճկուած էր միայն վարի երկու կոճակնելով երեւում էր նորա փայլուն ամենամաքուր շապիկը որ ցցց էր տալիս, թէ նա կարգին մարդ էր: ‘Նորա կեղտոտած ձեռնոցները կարծես զիտմամբ կարուած լինէին նորա փոքրիկ աղնուական ձեռների համար, և երբ նա հանեց մի ձեռնոցը՝ ես զարմացայ նորա դժոյն մատների նիշարութեան վերայ: ‘Նորա քալուածքը անփոյթ և զանդաղ էր. բայց ես նկատեցի, որ նա ձեռները չէր շարժում—անսախալ նշան ծածկամութեան: Բայց սորանք իմ սեփական նկատողութիւններս են, որ հիմնվում են իմ դիտողութիւններիս վերայ. և ես չեմ ուղում ձեղ ստիպել որ կուրօրէն հաւատաք նորանց: Երբ նա նստեցաւ նստարանի վերայ, նորա ուղեղ հասակը ձկուեց, կարծես թէ նորա մէջքում ոչ մի կտոր ուկոր չկար. նորա բոլոր մարմնի գրութիւնը ներկայացնում էր մի տեսակ ջղային թուլութիւն, նա նստած էր, ինչպէս Բալղակի երեսուն տարեկան մի կոտրտուող կին որ պարահանդէսից յողնելուց յետոյ նստում է իւր քմբլէ բազկաթուի վերայ: ‘Նորա երեսին նայելով առաջն

անդամից ես նորան քսան երկը տարուց աւել չէի տայ. թէ և յետոյ երեսուն տարեկան էլ կասէի. նրա ժպիտը մի քիչ նման էր մանկականի: “Նորա մորթը ունէր կնոջ մորթի քըն-քուշութիւն. շէկ մաղերը, որոնք բնականից գուուզ էին, այն-պէս զեղեցիկ կերպով շրջապատել էին նորա գժգոյն և զեղե-ցիկ ձակատը, որի վերայ միայն երկար զիտելուց յետոյ կա-րելի էր նկատել կնծիռների հետքեր, որոնք խառնվում էին մի-մեանց հետ, և որոնք աւելի պարզ երեսում էին բարկութեան, կամ հոգեկան անհանգստութեան միջոցին: Չնայելով նորա մաղերի փայլուն գոյնին, նորա բեխերը և յօնքերը սև էին, որը նշան է լաւ ցեղից ծագումի, ինչպէս սպիտակ ձիու սև բաշն ու սև պոչը: Որպէս զի վերջացնենք պատիերը ես կա-սիմ որ նա ունէր մի քիչ գուրս ցցուած քիթ, սասաիի ա-տամներ և թուխ բեխեր. աչքերի մասին ես մի քանի խօսք էլի պէտք է ասեմ:

“Նախ նորոնք չէին ծիծաղում, երբ նա ծիծաղում էր: Թարես նկատած լինէք այդ անսովոր յատկութիւնը մի քանի մարդկանց վերայ: Աս կամ չար բնաւորութեան, կամ մշատ-կան տիսրութեան նշան է: Կիսախուփ թերթելիների տակից նորանք փայլում էին, եթէ կարելի է այսպէս արասյայտել մի տեսակ լուսակրային (ֆոսֆորային) փայլով: Հողու ողեռու-թեան, կամ խաղուն երեսակայութեան անդրադարձութիւն չէր նա, այլ մի փայլ որը նման է ողորկած պողպատի փայ-լին, շայցուցիչ բայց սառն. նորա կարծատե հայեացքը սուր էր և ծանր. թողնում էր անախորժ տպաւորութեան մի անհա-մեստ հարցմունք անողի. և կարող էր յանդուզն թուել եթէ այնքան հանդարտ և անտարբեր չլինէր: Բոլոր այս նկատո-ղութիւնները ես անում եմ, գուցէ և միայն նորա համար, որ ես զիտի նորա կեանքի մանրամասնութիւնները խև ու-րիշ վերայ նորա տեսքը գուցէ բոլորովին ուրիշ տեսակ տպա-ւորութիւն թողնէր. բայց որովհետեւ գուցք նորա մասին ոչ ոքից լսելու չէք, բայցի ինձանից, ուրեմն ձարահատեալ պէտք է բաւականանանք այս նկարագրութեամբ: Խղբակացութեան համար կասեմ, որ նա ընդհանրապէս շատ գեղեցիկ էր. և ու-նէր այնպիսի մի եղական կազմուածք, որը ընդհանրապէս պէտք է գալիս կնիկ մարդկանց:

Չիերը արդէն լծուածէին. զանգակը երբեմն կամարի տակ
(դյա) զօղանջումէ, և սպասաւորը արդէն երկու անգամ ե-
կաւ Պեչօրինի մօտ և յայտնեց, որ ամեն ինչ պատրաստ է,
իսկ Մակսիմ Մակսիմիչը թերեւ չէր երեսում: Բարեբաղդա-
բար Պեչօրինը ընկած էր մոտածմունքի մէջ, նայելով Կողկասի
կապշյա գագաթներին, և կարծես ամենեին չէր շտապում
ճանապարհորդել: Ես մօտեցայ նորան: «Նթէ գուք շանկաք
մի քիչ ևս սպասել, ասացի ես, «այն ժամանակ բաւականու-
թիւն կունենանք տեսակցելու ձեր հին բարեկամին հետ:

— Ա-իս, ձի՛շտ, արագ պատասխանեց նա. ինձ երէկ ա-
սացին. ուրէ նա: Ես յետ դարձայ գէպի հրապարակը և
տեսայ Մակսիմ Մակսիմիչին, որ բոլոր ոյժով վազում էր...
Մի քանի բոպէից նա արդէն մեզ մօտ էր. նա հաղիւ շունչ
էր քաշում. քրախնքը ջրի պէս հոսում էր նորա երեսից. ա-
լոր մազերի թաց փունջերը գլխարկի տակից կախ ընկնե-
լով կպել էին նորա ճակատին. նորա ծնկնելը դողում էին...
նա ուղում էր Պեչօրինի վեզը վաթաթուել բայց նա բա-
ւական սառն, թէկ քաղաքավար ժայռով, նորան իւր ձեռը
մեկնեց: Ըտաբս-կապիտանը իսկոյն սառեցաւ, բայց յետոյ
ազահաբար խլեց նորա ձեռը երկու ձեռով. նա գեռ ևս չէր
կարողանում խօսել:

— Ինչպէս ես ուրախ եմ, անզին Մակսիմ Մակսիմիչ: Ե՛,
դուք ինչպէս էք, ասաց Պեչօրինը:

— Իսկ դո՞ւ... իսկ դո՞ւք... շնչաց ծերը արտասուելով. այս
քանի տարի եղաւ... ուր այդպէս...

— Գնում եմ Պարսկաստան—և աւելի հեռուն...

— Զինի՝ այժմ... Սպասեցէք սիրելիս, մի՞թէ հէնց հիմա
բաժանուելու ենք... ինչքան ժամանակէ չենք տեսնուել...

— Ոչ ժամանակ է, ես պէտք է գնամ; Մակսիմ Մակսի-
միչ եղաւ պատասխանը:

— Աստուածիմ, Աստուածիմ... ուր էք այդպէս շտապում:
ես ինչքան ցանկանում էի ձեզ ասելի հարցնելու է, ի՞նչպէս էք,
պաշտօնից հրաժարական էք տուելու ի՞նչ էք անում...

— Զանձրութեամբ էի անցնում ժամանակա, ասաց Պե-
չօրինը ժպտալով:

— Իսկ յիշում էք ձեր կեանքը, կենցաղավարութիւնը ամ-

ըոցում... Պատուական որսի տեղէր... Դուք այնպէս տարտածուէիք որսորդութեան... Խակ Ռէլան...

Պէջօրինը փոքր ինչ գունատուեցաւ և երեսը դարձրեց...

— Այս, յիշումեմ, ասաց նա, նոյն բոպէին գիտմամբ յօրանջելով.

Վակսիմ Վակսիմիչը սկսեց նորան խնդրել իրեն հետ մի երկու ժամ մնալ. Վենք մի փառաւոր ճաշ կանենք, ասաց նա. Ես երկու փասեան ունեմ, իսկ Կախիթու զինին այստեղ հիանալի է... ի հարկէ այն չէ, ինչ որ Արատանում սակայն լու տեսակից է... մենք կխօսենք... Դուք ինձ կպատմէք ձեր Պիտերբուրգի կեանքի մասին:

Համաձայն էք:

— Ճշմարիտ, ես ոչինչ չունեմ պատմելու, թանկագին Վակսիմ Վակսիմիչը... Սակայն մնաք բարով, ժամանակ է... ես շտապում եմ... Ծնորհակալ եմ, որ մոռացած չէք... աւելցրեց նա բռնելով նորա ձեռից...

«Օերը նոթերը կիտեց... նա ախուր էր և բարկացած, թէն աշխատում էր ցոյց չտալ: «Ոռուանալ, փնթվնթաց նա. «Ես ոչինչ մոռացած չեմ... Ե, Աստուած ձեղ հետ... Նո չէի կարծում, թէ մենք միմեանց այսպէս կպատահէինք...»

— Ինչե՞ր էք ասում, ասաց Պէջօրինը, նորան բարեկամաբար զրկելով. միթէ ես նոյն մարզը չեմ... Ի՞նչ արած... ամեն մարդու ճանապարհը նոյնը չէ. Աստուած զիտէ, թէ էլի կտեսնուենք... Այս ասելիս նա արդէն նստած էր կառքում և կառավարը սկսեց փոկերը կարգի գնել:

— Աեցիր, կեցիր, գուշեց յանկարծ Վակսիմ Վակսիմիչը, կառքի դռնակից բռնելով.—քիչ մնաց մոռանայի... Զեր թըդթերը իմ մօս են մնացել Գրիգորի Ալեկսանդրովիչ... ես նորանց ինձ հետ մտն եմ ածում... ես մտածում էի Արատանում ձեղ գտնել բայց այ, Աստուած որտեղ կամեցաւ... Այդ թղթերը ես ինչ անեմ...

— Ինչ կամենում էք, ասաց Պէջօրինը.—Մնաք բարով...

— Այդպէս, ուրեմն գուք Պարսկաստան էք գնում... ե՞րբ կվերադառնաք, նորա ետեից բղաւեց Վակսիմ Վակսիմիչը:

Կառքը արդէն հեռացել էր. բայց Պետրինը ձեռով նշան արեց, որը կարելի է բացատրել այսպէս. «գմուար թէ, և պէտք էլ չկայ:

Արդէն վաղթուց չեր լսվում գանդակի ձայնը և անիւների թխկթխկոցը խճուղու վերայ. իսկ խեղջ ծերը խոր մտածման մէջ դեռ ևս կանգնած էր նոյն տեղում: «Եյ», ասաց նա վերջապէս, աշխատելով ընդունել հանդարտ զրութիւն, թէ և արտասուբի կաթիները սրտի անձուկից երբեմն փայլումէին նորա աչքերում: «Ի հարկի, մենք բարեկամներ էինք—բայց ներկայ գարումն ինչ բարեկամութիւն... Ես ի՞նչ եմ նորա համար: Ոչ հարուստ եմ, ոչ աստիճանաւոր և ոչ էլ տարիքով ընկեր: Տեսար, նա ինչպէս պճնասէր է գարձել, նորից Պետերբուրգ գնալուց յետոյ... Ինչ գեղեցիկ կառք էր... Ինչքան բեռ... սպասաւորը այնպէս հպարտ... Եյս խօսքերը արտասանեց հեղնական ժաղիսով: Խսացէք, շարունակեց նա, գէպի ինձ գառնալով. դուք սորս մասին ինչ էք մտածում... Ի՞նչ դորձ ունի նա Պարսկաստանում... ծիծաղելի է, ես ու իմ Աստուածա, ծիծաղելու... Ես միշտ էլ գիտէի, որ նա մի թեթև մարդ է, որի վերայ յոյս դնել կարելի չէ... Եւ յիրաւի ափառս, որ նա վաստ կերպով կվերջացնէ... ասենք ուրիշ տեսակ էլ կարելի չէ... Ես միշտ ասում էի, թէ օգոստ ընտի այն մարդը, որ հին բարեկամներին մոռանում է... Եյս ժամանակ նա երեսը շուռտուեց, որպէս զի ծածկէ իւր յուզումը. և գնաց իջևանը իւր սայլի չորս կողմը պտտուելու, ցոյց տալով իբր թէ անիւներին է նայում, մինչդեռ նորա աչքերը ամեն ըուպէ արտասուբով էլ լցում էին:

— Մակսիմ Մակսիմիլյ, ասացի ես նորան մօտ գնալով, այդ ի՞նչ թղթերէ թողել ձեղ մօտ Պետրինը:

— Ո՛վ գիտէ. մի քանի թղթեր:

— Եյտ թղթերը դուք ի՞նչ պիտի անեք:

— Ի՞նչ Ես կհրամայեմ փամփուշտներ պատրաստել:

— Լաւն այն է տաք ինձ:

Նա զարմանքով նայեց իմ երեսիս, ինչ որ քթի տակ փնթնիթաց, և սկսեց պայուսակը խառնխառը ահա նա դուրս հանեց մի տետրակ և զզուանքով ձգեց գետին. յետոյ երկրորդը, երրորդը և տասներորդը ունեցան նոյն վիճակը. նորա բարկու-

թիւնը մի քիչ նման էր տղայի բարկութեան։ Իմ թէ ծիծաղս
էր դալիս և թէ ցաւում էի վերան։

— Եհա բոլորը, ասաց նա, շնորհաւորում եմ ձեր գիւտը։

— Ես ինչ ուզենամ կարող եմ անել։

— Թէկուզ լրագիրներում հրատարակեցէք. ինձ ի՞նչ...
Ես հօ նորա բարեկամը կամ ազգականը չեմ... Շշմարիս է,
մենք երկար ժամանակ ապրել ենք մի յարկի տակ, բայց շատ
էլ միասին բնակած լինիմ, սորանից ի՞նչ...

Ես խլեցի թղթերը և շատապով տարայ, վախենալով, որ
շատապ-կապիտանը կսաջանար իւր արածին։ Ծուտով եկան
մեզ յայանեցին, որ մի ժամկա յետոյ «օկազիան» կդնայ. ես
հրամայեցի լծել։ Ծատապ-կապիտանը սենեակը մոռաւ այն ժա-
մանակի, երբ ես արգեն զլատարկս էի դնում. նա ինչպէս երե-
ռում էր, չըր պատրաստվում դնալու. նա մի տեսակ սառն
անդնական տեսք ունէր։

— Իսկ դուք, Մակսիմ Մակսիմիչ մի՞թէ չեք դա-
լիս։

— Ո՞չ։

— Կոչու համար։

— Ես դեռ ևս բերգապետին չեմ տեսել. ես պէտք է մի
քանի ալքունական իրեր յանձնեմ։

— Զէ՞, որ դուք նորա մօտ դնացիք։

— Գնացի ի հարկի՛, ասաց նա կմկմալով բայց նա տանը
չէր... իսկ ես նորան չափանեցի...։

— Ես հասկացայ նորա միաքը. իսեղծ ծերը իւր կեան-
քում, գուցէ, առաջին անգամ ձգել էր ծառայութեան գոր-
ծերը իւր անձնական գործերի համար, ինչպէս ասում են գրա-
կան ոճով, և ի՞նչպէս վարձատրուեցաւ։

— Ծատ ցաւում եմ, ասացի ես նորան, շատ ցաւում եմ,
Մակսիմ Մակսիմիչ, որ մենք ժամանակից առաջ պէտք է
բաժանուենք։

— Մենք տղէտ ծերերս որտեղ կարող ենք ձեր դասը
դասուել... Դուք բարձր դասակարգի գոռող երիտասարդներ
էք. քանի որ դեռ չէրքէզների գնդակների գիմացէք լինում,
էլի մի կերպով վարդում էք, բայց յետոյ երբ պատահում էք՝
ամացում էք մինչեւ անդամ ձեռ տալ մեզ նմաններիս։

— Ըայց ինչու ի՞նձ էք ուղղում այդ յանդիմանութիւնը,
ևս նորանց տեղիք չտուի:

— Ե, զիտէք, ես խօսք բացուեցաւ ասում եմ բայց սա-
կայն ցանկանում եմ ձեզ յաջողութիւն և բարի ճանապարհ:

Մենք բաւական սառն կերպով բաժանուեցանք. բարի Մակ-
ախ Մակսիմիչը դարձաւ մի յամառ և զժոտասէր շատրւ-կա-
պիան: Խւ ինչու: Նորա համար, որ Պետրինը ուշքը վերան
չլինելուց, կամ մի ուրիշ պատճառով նորան մեկնեց իւր ձեռը,
երբ նա ուղում էր փաթաթուել նորա վեղը: Տիրալի բան է,
երբ երիտասարդը կորցնում է իւր գեղեցիկ յշյսերը և իղձերը,
երբ նորա աչքերի առջելից քաշվում է վարդադշն քօղը, որի
միջով առաջ տեսնում էր մարդկանց գործերը և զգացմունք-
ները, թէև կայ յոյս, որ նա հին մոլորութիւնները կփոխա-
րինէ նորերով, որոնք ոչ պակաս անցողական են, բայց և ոչ
պակաս ուրախ են... Ըայց Մակսիմ Մակսիմիչի հասակում
ինչով փոխարինել անցեալի յիշատակները: Ակամայ սիրո կքա-
րանայ և հոգիդ կթանայ...

Ես մէնակ գնացի:

ՊԵԶՈՐԻՆԻ ՕՐԱԳԻՐԸ.

Յառաջաբան.

Վաղուց չեմ, ինչ ես լսեցի, որ Պետրինը Պարսկաստանից
վերադառնալով մեռել է: Այդ լուրը ինձ շատ ուրախացրեց.
Նա ինձ իրաւունք տուեց այս թղթերը հրատարակելու, և ես
գէպքից օգուտ քաղեցի ուրիշ աշխատութիւնը իմ անունով
հրատարակել: Տայ Աստուած, որ ընթերցողները ինձ չպատ-
ժեն այսպիսի մի անմեղ կեղծիքի համար:

Այժմ ես պէտք է մասամբ յայտնեմ այն պատճառները,
որոնք զարթեցրին իմ մէջ միաք հասարակութեան առջեւ
հրատարակել մի մարդու սրտի գաղտնիքները, որին երբէք
ծանօթ չեմ եղել: Պոնէ, եթէ ես նորա բարեկամն եղած չլի-
նէի. իսկական բարեկամի նենդաւոր համեստութիւնը բոլորին
հասկանալի է. բայց ես իմ կեանքում մի անդամ տեսել եմ ճանա-

պարհին, Հետեւապէս, չեմ կարող վերաբերել նորան, այն անբացասրելի ատելութիւնը, որը վարագուրուելով բարեկամութեան դիմակի տակ՝ սպասում է սիրելի առարկայի մահուան կամ մի անցածողութեան, որ կարկտի նման նորա դլիսին թափէ Խորհուրդներ, ծաղրածութիւններ և ցաւակցութիւններ:

Եյս նամակները կարգալով՝ ես համոզուեցայ այն մարդու անկեղծութեան, որ այնքան անխնայաբար երեւան է Հանումիւր սեփական թշուառութիւնները և թերութիւնները: Մի մարդու հոգու պատմութիւնը, որչափ էլ աննշան լինի այդ հոգին հաւանօրէն աւելի հետաքրիքական և օգտակար է, քան մի ամբողջ ազգի պատմութիւնը, մանաւանդ, երբ այդ պատմութիւնը հետեւանք է հասուն խելքի իւր վերայ արածուառնասիրութեան, և երբ նա զրուած է առանց անափառ ցանկութեան՝ հասարակութեան ցանկութիւնը կամ զարմանքը դրաւելու: Ուուսօի Խոստովանութիւնը հինց այս թերութիւնը ունի, որ նա կարդում էր նորան միայն իւր բարեկամներին:

Եւ այսպէս, միայն օդուատ տալու ցանկութիւնը ստիպեց ինձ հրատարակել մի քանի հատուածներ այն օրագրից, որոնք պատահմամբ իմ ձեռա ընկան: Խէւ ես փոփոխել եմ բոլոր յատուկ անունները, բայց նորանք, որոնց մասին սորտ մէջ խօսվում է, իրենց կճանաչն և, գուցե, կգտնեն ջատագովութիւն այն գործերին, որոնց մէջ մինչ օրս մեղաղովում էր մի մարդ, որ արդէն աշխարհի հետ ոչ մի ընդհանուր կապ չունի. մենք զրեթէ միշտ ներում ենք այն, ինչ որ հասկանում ենք:

Ես այս զրքում զետեղեցի միայն այս, ինչ որ վերաբերում էր Պէջորինի Կովկասում եղած ժամանակին: Իմ մօտ նորից միաց մի հաստ տեսրակ, որտեղ նտ պատմում է իւր բոլոր կեանքը: Ելք ելցէ նա կյայտնուի աշխարհի դատասահնին. բայց այժմ ես չեմ կարող իմ վերայ առնել այդ ծանկ պատասխանառութիւնը բազմաթիւ յարդելի պատճառներով:

Գուցէ, ընթերցողներից մի քանիսը ցանկան իմանալ իմ կարծիքս Պէջորինի բնաւորութեան մասին: Իմ պատասխանը զրքիս յառաջաբանն է: «Ճայց այդ կծու հեղնութիւնն է», կասեն նորանք: — Չդիտեմ

Ա.

ՏԱՄԱՆԸ.

Տամանը Առուսաստանի ամենավատ ծովեղերեայ քաղաքն է: Ես այնաեղքիչ մաս սովոց մեռնէի, և բայի այս ինձ կամենում էին խեղտել: Ուշ գիշերով ես եկայ այստեղ սուրհանդակի սայլով: Սայլապանը յոգնած ձիերը կազնեցրեց միակ բարե տան մօտ, որը գտնվում էր ճանապարհի վերայ: «Պահապանը, որը սև ծովի մօտի կօգակներից էր, լսելով զանգակի ձայնը՝ քնաթաթախ վայրենաբար գոչեց: «Ովէ գալիս»: Տասնապետը և յիսնապետը (յրածնիկ) դուրս եկան: Ես նորանց յայտնեցի, որ ես սպայ եմ, զնում եմ գործող զօրքի մօտ արքունական գործով և սկսեցի պահանջել արքունական բնակարան: Տասնապետը մեզ ման ածեց քաղաքի միջով: Որ խրձիթին որ չենք մօտենում լսում ենք—բոնուածէ: Եղանակը յուրա էր. ես երեք գիշեր չեմ քնել և յոգնած էի. ես սկսեցի բարկանալ: Վի տե՛ղ տուր ինձ, տուազնկ, թէկուզ ստանի մօտ, միայն թէ տեղ լինի, գոռացի ես: «Դեռ ես մի բնակարան էլ կայ», ծոծրակը քորելով պատասխանեց տասնապետը, քայց ձեր մեծապատռութիւնը չե հաւանի. այնաեղ անմաքուր է: Վերջին խօսքի խական նշանակութիւնը չհասկանալով՝ ես նորան հրամայեցի առաջ գնալ, և ցեխտա փողոցներով երկար թափառելուց յետոյ, որտեղ երկու կողմից երեւում էին միայն հին ցանկապատեր, մենք մօտեցանք ծովի ափին փոքր խրձիթի:

Իոլորակ լուսինը լուսաւորում էր իմ նոր բնակարանի եղեղնեայ ծածքը և սպիտակ պատերը. խսկ բակում, որ պատած էր քարե պատով թէքուած ընկած էր մի հիւղ, որ առաջինից փոքր և հին էր: «Նորա պատի հինց մօտից զախվայրն իջնում էր գէպի ծովեղը վարը և անվերջ շշուկով ծփում էին մուգ-կապոյտ ալեքները: Լուսինը նայում էր հանդարտիկ նորա անհանդիսա, բայց իրեն հնապանդ տարրին. և ես նորա լյոսով կարողանում էի որոշել հեռուն երկու նառ, որոց սարգոսատի (սարգի սստայն) նման չուանները պատկերանում էին հորիզոնի գժգոյն գծագրութեան մէջ: «Կաւահանդստում նոռ կայ, մոտածեցի ես. Եղուց կուղերուեմ Դելենձիկ:

Նմ մօտ ծառայութեան պաշտօն վարում էր մի սահմանադլխի կօգակ: Ես նորան հրամայեցի դուրս հանել պայուսակս և արձակել սայլապանին, ես սկսեցի կանչել տանտիրոջ—լոռում են... այս ի՞նչ է: Ա երջապէս բակից դուրս սողաց մի տասն և չորս տարեկան մանչ:

«Ո՞րտեղ է տանտիրը»—Չկայ: «Ի՞նչ բոլորովի՞ն: Ռողորովի՞ն: «Իսկ տանտիկի՞նը»—Գնաց վերի թաղը: «Դուռը ովկ պիտի բանայ», ասացի ես դրանը ոտով ամուր զարնելով. դուռը ինքն իրեն բացուց: Խրձիթից խոնաւութեան հոռ գիտաւ երեսիս: Ես վառեցի ծծմբէ լուցկին և մօտեցրի մանչու քթին, որը լուսաւորեց նորա երկու ձերմակ աչքերը: «Կա կցը էր ի ծնէ, բոլորովին կցը: «Կա իմ առջեւ անշարժ կանգնած էր, ես սկսեցի պիտի նորա երեսի գծագրութիւնը:

Հշմարիտն ասեմ, ես խիստ նախապաշարմունք ունիմ դէպի բոլոր կոյրերը, շելերը խուլերը, համբերը, ոտներ և ձեռներ չունեցողները, սապատողները ևայլն: Ես նկատեցի, որ մի օտարօտի յարաբերութիւն կայ մարդու արտաքին տեսքի և հոգու մէջ. կարծես թէ մի անդամ կորցնելով հոգին կորցնումէ և մի որեւէ զգացմունք:

Եւ այսպէս, ես սկսեցի դիտել կցը դէմքը. բայց ի՞նչ կարող ես կարգալ մի երեսի վերայ, որ աչքերից զուրկ է: Եկամայ յանկութեամբ ես երկար նայում էի նորա վերայ, երբ յանկարծ մի հաղթւ նշմարելի ժպիտ խաղաց նորա շրթունքների վերայ, և չգիտեմ ինչո՞ւ, նա թողեց իմ վերայ ամենաանախորժ տպաւորութիւն: Նմ մէջ կասկած ծագեց, որ այս կոյրը այնպէս կոյր չէ, ինչպէս որ երեւում է, զուր աշխատում էի ես ինձ համարել որ աչքի փառը չէ կարելի կեղծել. և ի՞նչ նպատակով պիտի կեղծէր: Բայց ի՞նչ արած, ես յածախ նախապաշարմունքի ենթարկուող մարդ եմ:


«Դու տանտիրոջ որդի՞ն ես, վերջապէս նորան հարցըրի ես:—Ո՞չ: «Ապա ովկ ես դու:—Ենտէր, որք: «Իսկ տանտիկի՞նը ունի՞ որդի:—Ո՞չ մի աղջեկ ունէր, բայց նէ էլ մի թաթարի հետ ծովով փախաւ: Ձ՞նչ թաթարի հետ:—Ովկ իմանում մի խրիմյի թաթար, կիրճյի նաւավար:

Ես մտայ խրձիթը. երկու նստարանն, մի սեղան և վառարանի մօտ մի մէծ արկդ կազմում էին նորա բոլոր կարասին:

Պատերի վերայ չկար և ոչ մի սրբի պատկեր—վաստ նշան *): Կոտրուած ապակուց ներս էր վշում ծովային քամին: Ես պայուտակիցս հանեցի մեղրամոմի մի կտոր, և վառելով սկսեցի իրերս դասաւորել, թուրս և հրացանս տրի անկիւնը, ատղրանանակներս տրի սեղանի վերայ, տառատոկս փոեցի նստարանի վերայ, կօգակը իւրը փուեց միւսի վերայ, մի տասը րոսպէից յետոյ նա խոկաց, բայց իմ քունս չէր տանում: մժութեան մէջ աչքիս շարունակ երեւում էր սպիտակ աչքերով մանչը պատուելիս: Եյսպէս անցկացաւ մօտ մի ժամ: Լուսնի ճառագայթները ներս ընկնելով խազում էին խրձիթի հողէ յատակի վերայ: Յանկարծ յատակի վերայ ընկած ճառագայթների մէջ երեւաց մի ստուեր: Ես վեր կացայ և նայեցի լուսամողին: մէկը երկրորդ անդամ վազեց նորա մօտով և թաք կացաւ: Ես չէի կարող ենթագրել, որ այդ արարածը կարող էր փախչել ափի զատիվայրն ի վեր, սակայն նա ուրիշ կողմ չէր կարող փախչել: Ես վեր կացայ, բեշմետս վերաս ձգեցի, դաշոյնս կախեցի և կամնացուկ գուրս եկայ խրձիթից: իմ գիմաց ելաւ կոյր մանչը: Ես թաք կացայ ցանկի մօտ: իսկ նա հաստատ և զգոյշ քայլուածքով իմ մօտից անցկացաւ: Թեկի տակ նա տանում էր մի կապոյ, և դէպի նաւահանգիստար ծուռելով սկսեց նեղ և զատիվայր շատիզով կատնաց իջնել: «Են օրը համբերը կաղաղակեն, և կոյրերը կը լուսաւորուեն», մտածեցի ես, նորան այնպիսի հեռաւորութիւնից հետեւլով, որ նորան աչքից չկորցնեմ:

Մինչդեռ լուսինը սկսում էր մանել ամպերի ետեւը և մասուախուղը պատեց ծովը, նորա միջեց հազիւ երեւում էր մօտակայ նաւի զլիսին եղած լսպատերի լցար. ափի մօտ փայլում էր ալիքների փրփուրը, որոնք ամեն բոլէ սպասնում էին նորան ողողել: Ես դժուարութեամբ վար իջնելով անցայ զառուիվայրով և ահա աեսնում եմ կոյրը կանգնեց, յետոյ եղերքում ծուռեց դէպի աջ: ջրին այնքան մօտ էր քայլում, որ կարծում էիր, թէ հենց այն բոլէին ալիքը նորան կիսէ և կտանի: բայց երեւում էր, որ նա առաջին անդամ չէր զրօսնում այսպէս, — այնքան համարձակ էր նա ուսները փոխում

*.) Ծանօթ. Ռուսաց ամեն մի տան սովորութիւն է սենեակներում սրբոց պատկերներ կախել: Ծ. թ.






Փռիկ գրի և բէլ.

ԴԱՐՍԱՎԱՅՐ

Հրատ. ոլլուստու հանգիստ.

Ձան. պետ. Ծին. 6 աշուտ 1890 թ.

ՏՏ. ԶԱ. Գոյն, Խոմք, որ. № 53.



քարից քար, և խոյս տալիս փոսերից; Ա երջապէս նա կանգնեց, կարծես ինչ որ բանի ականջ դնելով նստեց գետնի վերայ և իւր մօտ դրեց կապողը: Ես ափի գուրս ցցուած ժայռի ետեր թաք կենալով հետեւումէի նորա շարժումներին. յետոյ հակառակ կողմից երեւաց մի սպիտակ կերպարանք, որ մօտեցաւ կոյրին, և նստեց նորա մօտ: Քամին ելքեմն ըերում էր ինձ նորանց խօսակցութիւնը: — Հը, կոյր, ասաց կանացի ձայնը. փոթորիկը սաստի՞կ է, այնպէս չէ. Եանկօն չի գայ: — Եանկօն փոթորիկց չէ վախենում, պատասխանեց նառ Մառախուղը թանձրանումէ, տիսուր արտայայտութեամբ նորից պատասխանեց կանացի ձայնը:

— Մառախուղի ժամանակ աւելի՛ լսւէ անցնել պահնորդ նաւերի մօտով, եղաւ պատասխանը: — Խակ եթէ խեզտուվի՞: Ե՛, ի՞նչ կիւրակի դու եկեղեցի կդնաս առանց նոր ժապաւէնի:

Տիրեց լուութիւն. սակայն ինձ զարմացնումէր մի բան. կոյրը ինձ հետ խօսումէր փոքր ոռուսիացու բարբառով, խակ հիմա խօսումէր մաքուր ոռուսերէն:

— Տեսնում ես, ուղեղ ասացի, ձեռները իրար զարնելով ասաց նորից կոյրը: — Եանկօն չէ վախենում ոչ ծովից, ոչ քամուց, ոչ մառախուղից, ոչ ափի պահնորդներից. ականջ դիր. գա ջուղը չէ որ ծփումէ. ինձ չես խաբի, գա նորա երկար թիերի ձայնն է:

Կինը վերկացաւ և սկսեց անհանդիսա կերպով հեռու նայել:

— Գու խելքիցդ դուրս ես խօսում, ասաց նէ, ես ոչինչ չեմ տեսնում:

Խօստովանվումէմ ինչքան որ ես աշխատեցայ հեռուում մակցիկ նման մի բան տեսնել անօգուտ անցաւ: Եյսպէս անցկացան մօտ տասն բոպէ. և ահա ալիքների մէջ երեւաց մի սեկտ. նա երբեմն մեծանումէր, երբեմն փոքրանում, յամը կերպով բարձրանալով ալիքների շղթաների վերայ և արագ իջնելով ափին մօտենումէր մի նաւակ: «Աներկիւղ լուղորդ է, որ այսպիսի գիշերը վճռել է քսան վերսա նեղուցով նաւարկել և կարեոր պատճառ պէտք է ատիպած լինի»: Եյսպէս մտածելով ես ակամայ սրտի բարբախումով նայումէի խեղձ մակցիին. բայց նա ինչպէս բար սուղվումէր ջրի տակ, և

յետոյ թիերի շարժումնվ, ինչպէս թևերով անդնդից դուրս
էր թռչում փրփրոտի շիթեր արձակելով չորս դին. և աշա,
մտածում կի ես, նա բոլոր ոյժով կզարնուի ափին և ջարդ
ու փշուր կլինի, բայց նա ճարպիկ կերպով ծռուեց և անվ-
նաս մտաւ փոքրիկ ծովածոյց: «Նորա միջից դուրս թռաւ
թաթարի մորթէ գտակով միջահասակ մի մարդ. նա ձեռը
շարժեց—և երեք հոգով սկսեցին ինչ որ բան դուրս քաշել
նաւակից. բեռը այնպէս մեծ էր, որ ես մինչև այսօր չեմ հաս-
կանում; թէ ի՞նչպէս մակոյկը չէր սուզուել: Յետոյ ամեն
մինը մի կապոց ուսն առնելով՝ եղերքով գնացին, և շուտով
աչքիցս աներեցիթ եղան: «Կոք էր տուն վերադառնալ. բայց
խոստովանվում եմ, որ բոլոր այս տարօրինակ բաները ինձ ան-
հանդսացնում են, և ես զուով սպասեցի մինչև առաւօտ:

Իմ կօգակս շատ զարմացաւ, երբ զարթնելով տեսաւ, որ
ես բոլորովին հագնուած էի. սակայն, ես նորան պատճառը
չսասացի: Մի քանի բոպէ զուարձութեամբ դիտելով լուսա-
մուաից կապոյտ երկինքը, որի վերայ ցրիւ—ցրիւ էին եղած
վարդագոյն ամպերը, և հեռուն Խրիմի ափերը, որոնք սկրս-
վում էին մանուշակագոյն շերտով, և վերջանում էին ժայ-
ռով, որի գագաթին սպիտակին էր տալս փարոսի աշտարակը՝
ես գնացի Փանագօրի ամրոցը, որ բեռդապահից իմանամ
իմ Գելենձիկ գալու ժամանակը:

Բայց աւաղ բերդապահը, ինձ վճռողական ոչինչ չասաց:
«Նաւերը, որոնք կարգնել էին նաւահանգստում, բոլորն էլ կամ
պահորդներինն էին, կամ վաճառականներինը, որոնք գեռ ևս
չին բեռնաւորուած: «Դուցէ մի երեք—չորս օրից յետոյ գայ
սուրհանդակի նաւեր, ասաց բերդապահը, և այն ժամանակ
մենք կանոնենք»: Ես վերադարձայ տուն գամտան և բարկացած:
«Դրանը ինձ պատահեց իմ կօգակս վախեցած դէմքով:

— Ի՞նը վաստէ, ձերդ մեծապատռութիւն, ասաց նա ինձ:
— Եյո՛, եղացը, Աստուած դիտէ, մենք այստեղից երբ
կդնանք:

Եյդ ժամանակ նա աւելի յուղուեց և դէպի ինձ թեքուե-
լով շշնջաց.՝ այստեղ մի բան կայ. այսօր պատահեցայ չերնօ-
մօրցի յիանապետին, նա ինձ ծանօթ է, հերու նա բանակումն
էր. հինգ որ ես նորան յայտնեցի, թէ որսոեղ ենք իջեանել

նա ինձ ասաց. այստեղ եղբայր լսու տեղ չէ. վատ մարդիկ են... Եւ իրաւ, այդ ինչ տեսակ կոյր է... մնակ ամեն տեղ գնումէ, թէ փողոցը, թէ հացի, թէ ջրի... երևումէ, որ այստեղ այսպէս բանի սովորած են...

— Ի՞նչ գոնէ երևանց տանտիկինը:

— Եյսօր, երբ այստեղ չենք, եկաւ պառաւը և նէրահետ մի աղջիկ:

— Ի՞նչ աղջիկ. նէ աղջիկ ըռնի:— Այս, Աստուած զիտէ, թէ ովէ նէ, եթէ աղջիկը չէ. այ, պառաւը նստածէ խրճիթում:

Խս մտայ խրճիթը: Պառարանը լսու վառուած էր. և այնակազ եփում էին խեղջերի համար բաւականին ճոխ կերակուրներ: Պառաւը իմ բոլոր հարցերիս պատասխանում էր, որ խուլէ, չէ լսում: Ի՞նչ անէի ես նէրահետ: Խս գարձայ դէպի կոյրը որը վառարանի առջև նստած ցախ էր ձգում կրտկի մէջ: Դէմ, կոյր սատանայ, նորա ականջեց բռնելով ասացի ես, ասա, զիշերը կապոցը ձեռիդ որտեղ էիր թափառում— Հը: Յանկարծ կոյրս լաց եղաւ, բղաւեց և հառաչեց— ես ուր էի գնում... ոչ միտեղ չեմ գնացելու... կապոցը ձեռին... ի՞նչ կապոց:— Պառաւը այս անգամ լսեց և սկսեց վնիթվիրնեմալ: «Տես, ինչ բաներ է հնալում, այն էլ այս խեղջի վերայ»: Ի՞նչ ես ուզում նորանից. նա քեզ ի՞նչ է արել Խս ձանձրացայ և գուլս եկայ հաստատ վճռելով որ այդ բանի դադունիքն խմանամ:

Խս փաթաթուեցայ տառատոկիս մէջ և ցանկի մօտ նստելով քարին նայում էին հեռուն. իմ առջև ձգուած էր զիշերուայ մրրկից ալեկոծուած ծովը, և քուն մանող քաղաքի շշուկի նման միատեսակ աղաղակը յիշեցրեց ինձ անցած տարիները և ինձ տարաւ դէպի հիւսիս, մեր ցուրտ մայրաքաղաքը: Յիշողութիւններիս անձնատուր եղած ինքս ինձ մոռացայ... Եյսպէս անցկացաւ մօտ մի ժամ, գուցէ և աւելի... Յանկարծ երդի նման մի բան դիսաւ ականջես: Եյդ երդի ձայն էր, և կնիկ մարդու քնքոյշ ձայն—բայց որ կողմից... Եկանջ եմ գնում. երգեցողութիւնը ներդաշնակ է, երբեմն ձգուող և տիսուր, երբեմն արագ և ուրախ: Չորս կողմն եմ նայում ոչ ոք չկայ. նորից եմ ականջ գնում՝ հնչեւնները կարծես *

երկնքից են դալիս: Ես վեր նայեցի—իմ խրձիթիս կտուրին
կանգնած էր զոլզոլ շորերով մի աղջկի, ծամերը արձակ, իս-
կական մի յաւերժահարման: Մրեկի ճառագայթներից պաշտ-
պանուելու համար ձեռները բռնած աչքերին անդադար
նայում էր հեռուն, երբեմն իրեն-իրեն դատողութիւններ էր
անում, երբեմն երդում էր իւր երդը:

Այդ երդը ես բառ առ բառ յիշում եմ:

«Խնչպէս ազատ և արձակ
Կանաչ ծովի վերայով
Բոլոր նաւերն են գնում
Շերմակ առագաստաւոր:
Այդ նաւակների մէջ
Իմ նաւակս է գտնվում,
Կաւակս լաւ է սարքուած,
Կողքին երկու թի ունի:
Ու է փոթորիկ բարձրանայ—
Հին նաւակները
Բարձրացնում են թեկիները
Շովի վերայ դէս ու դէն շպրում:
Լսկսեմ ծովին խոնարհուել
Ես խոնարհաբար,—
Չեռ մի տար գու, ով չար ծով
Իմ նաւակիս:
Իմ նաւակս տանում է
Օժանկագին իրեր,
Ո՛ութ գիշերով զեկալարում է
Կորան գլխից ձեռ վերցրածը»:

Սկամայ իմ միտքս ընկաւ, որ նոյն ձայնն էր, որ ես գիշերը
լսեցի. ես մի բուքէ միտք արի և երբ նորից կտուրը նայեցի
աղջիկը չկար: Յանկարծ նէ ինչ որ բան երգելով իմ մօտով
վաղեց և մասները չխկացնելով վաղեց պառաւի մօտ, և
այստեղ նէրանց մէջ սկսուեց վէճ: Պառաւը բարկանում էր
և նէ բարձր ծիծաղում էր: Մէկ էլ տեսնեմ գեղեցիուհին նո-
րից վաղում է ոստոստալով. երբ ինձ հետ հաւասարուեցաւ
կանգ առաւ, և կարծէս իմ ներկայութեան վերայ զարմանա-
լով սկսեց յառած նայել երկասի, յետոյ անշողութեամբ յետ
զարձաւ և հանգարտ գնաց դէսպի նաւահանգիստը: Սորանով

քանը չվերջացաւ. ամբողջ օրը նէ իմ տան չորս կողմը պատվում էր. երգը և ոստիւնը մի րոպէ գաղաք չէին առնում: Տարօրինակ արարած էր: “Նէրա երեսին անխելքութեան ոչ մի նշան չկար. ընդհակառակը, նէրա աչքերը աշխոյժ թափանցկութեամբ նայում էին իմ երեսիս, և այդ աչքերը կարծես թէ մակնիսական զօրութիւն ունէին, և ամեն անգամ կարծես նորանք սպասում էին մի հարցմունքի: Ի՞այց հենց որ ևս սկսում էի խօսել, նէ փախչում էր ինձանից և խորամանկութեամբ ժպտում:

Ոչ մի տեղ ևս այդպէս կնոջ պատահած չէի: “Նէ այնքան սիրուն չէր, բայց ևս զեղեցկութեան վերաբերմամբ ևս ունիմ իմ համոզմունքս: “Նէ տոհմական շատ լաւ յատկութիւններ ունէր. իգական սեռի տոհմական յատկութիւնը, ինչպէս ձիերի մէջ, այդ մեծ բան է. այս գիւտը պատկանում է երիտասարդ Գրանսիսյին: “Նա, այսինքն, տոհմականութիւնը, և ոչ երիտասարդ Գրանսիսան, մեծ մասամբ երևում է քալուածքի, ուների և ձեռների մէջ. մանաւանդ քիթը մեծ նշանակութիւն ունի: Կանոնաւոր քիթ Ուուսաստանում աւելի քիչ կայ, քան կանոնաւոր մանր ուներ: Իմ երգչուհիս տասն և ութը տարուց աւել չէր լինի: “Նէրա հասակի անբնական ձկունութիւնը, մանաւանդ՝ նէրա յատուկ զլիսի ծռուածքը, երկար շէկ մազերը, նէրա արևակէզ զզի և թևերի ոսկու նմանող գոյնը, նամանաւանդ կանոնաւոր քիթը—այս բոլորը ինձ դիւթում էին: Թէ նէրա ծուռ հայեացքների մէջ ևս նկատում էի ինչ որ վայրենի և կասկածելի բան, թէ նէրա ժպիտը անբացատրելի մի բան էր, բայց նախապաշարմունքը այսպիսի ոյժ է—կանոնաւոր քիթը իմ խելքս տարաւ. ևս երևակայութեան այդ հրաշալի ծնունդը. և իրաւ, նէրանց շատ նմանութիւն կար. նոյն արտագ փոփոխումը սատարիկ անհանգստութիւնից դէպի անշարժութիւնը, նոյն դժուարիմանալի խօսակցութիւնները, նոյն ոստիւնները, տարօրինակ երգերը...

Երեկոյեան դէմ զբան մօտ ևս նէրան կանգնեցնելով սըկտիցի հետեւալ խօսակցութիւնը:

— Եսա, գեղեցկուհի, հարցը ևս, այսօր կտուրը դու-

ինչ էիր շինում:—Ես նայում էի, թէ քամին որ կողմից է փր-
չում:—Վեզ ի՞նչ հարկաւոր է, թէ որ կողմից է փշում:—Որ
կողմից որ փշում է քամին, այն կողմից էլ դալս է բաղդը,—
Ինչ մի՞թէ դու երգելով կանչում էիր բաղդը:—Որտեղ որ
երգ կայ, բաղդն էլ այնակող է:—Բայց եթէ պատահաբար երգե-
լով կանչես և վիշտը:—Ե՛հ, ի՞նչ որտեղ որ լաւը ցինի,
կլինի վատը, իսկ լաւը վատից հեռու չէ:

— Ո՞վ է սովորեցրել քեզ այդ երգը:—Ոչ ոք չէ սովորեց-
րել միաքս գալիս է երգում հմ: ում որ հարկն է, նա կլի՛-
իսկ ում որ հարկաւոր չէ՝ նա չի հասկանայ:—Ինչպէս է քո
անունդ, իմ երգում էի:—Ով որ մլլատելէ նա գիտէ: Ո՞վ է
մլլատել:—Ես ինչ գիտեմ: Նյապիսի մի ծածկամիտ: Այ, ես
ինչ որ բան իմացայ քո մասին. (նէ երեսի արտայայտութիւնը
չփոխեց և չշարժեց շրթունքները, կարծես խօսակցութիւնը
նէրս մասին չլինէր):

— Ես իմացայ, որ դու երեկ գիշեր գնացել էիր ծովի
ափը:—Եյստեղ ես նէրան շատ լուրջ կերպով պատմեցի, ինչ
որ տեսել էի, կարծում էի թէ նէ կշփոթուի, բայց ի զուր:
‘Նէ բոլոր ոյժով ինտաց:—Շատ բան էք տեսել, բայց քիչ
բան գիտեք. իւկ ինչ գիտեք, ամուլը պահեցէք ձեզ համար:—
Իսկ եթէ ես յայտնէի բերդապահին—ես այստեղ ընդունեցի
շատ լուրջ, մինչև անգամ խիստ արտայայտութիւն: Նէ յան-
կարծ ցատկեց, երգեց և անյայտացաւ ինչպէս մի թռչուն, որ
վախեցնելով թռչում է թփի տակից: Դմ վերջին խօսքերը
բոլորովին անտեղի էին. ես այն ժամանակ չէի կասկածում
նորանց նշանակութեան մասին, բայց վերջը դէպք ունեցայ
զղալու, որ ասացի:

— Էնց որ մութն ընկաւ, ես կօպակիս հրամայեցի ուղեութի
սովորութեամբ թէյնոցը տաքացնել. ես վառեցի մոմը և ծը-
լսելով ճանապարհորդական ծխափայտս նստայ սեղանի մօտ:
Թէյի երկրորդ բաժակը վերջացնելիս էր երբ յանկարծ գուռը
ձռոաց, շրերի թեթև խըշնոց և ոտի ձայն լսուեցաւ իմ
ետեւ. ես վեր թռայ և յետ գարձայ—տեսայ որ նէ էր, իս
հիւրին: Նէ հանդարտ և լուռ նստեց իմ գիմաց և աչքերը
յառեց իմ վերայ. չգիտեմ ինչու, բայց այս անգամ նէրա
հայեացքը ինձ շատ քնքոյշ թռւեց. նա ինձ յիշեցրեց այն

Հայեացքնելրը, որտնկը հին ժամանակը անձնիշխան կերպով խաղում էին իմ կեանքիս հետ: Այրեռւմ էր, որ նէ սպասում էր հարցմունքի, բայց անբացատրելի յուզումով լեցուած՝ լսում էի: “Նէրա երեսը ծածկուած էր խաւար դժգունութեամբ, որը հաստատում էր նէրա հոգեկան անհանգստութիւնը. նէրա ձեռը աննպատակ կերպով շարժվում էր սեղանի վերայ, և ես նկատեցի նէրա վերայ մի թեթե սարսուռ. նէրա կուրծքը երբեմն բարձրանում էր, երբեմն էլ երեռւմ էր, որ նէ բռնում էր իւր շնչառութիւնը: Եյս կատակը սկսում էր ինձ ձանձրացնել, և ես պատրաստ էի խանգարել այս բանաստեղծական լուութիւնը պաղ կերպով, այն է կամենում էի նէրան առաջարկել մի բաժակ թէյ, երբ նէ յանկարծ վեր ցաակեց, ձեռներա փաթաթեց պարանոցովս, և ջերմ ու կրակոտ համբոյրը զբոշմուեցաւ իմ շըթունքներիս վերայ: Իմ աչքերս մթնեցին, զլուխս պտոյտ եկաւ, ես իմ բոլոր երիտասարդական ցժերիս բոլրոքով սեղմեցի նէրան իմ զրկիս մէջ, բայց նէ օձի պէս դուրս սողաց իմ զրկից՝ ականջիս փսփսալով. «այս գիշեր հենց որ բոլոր կընեն՝ դուրս արի ափ», և նետի նման դուրս թռաւ սենեակից: “Նախասենեակում նէ վար ձգեց թէյնոցը և մոմը, որը տրուած էր յատակի վերայ: Եյսպիսի մի սատանայ աղջեկ» բղաւեց կօպակը, որը պառկած էր ծղնոտու վերայ և յցս ունէր մնացորդ թէյով տաքանալ:

Եյսեղ միայն ես խելքի եկայ:

Երկու ժամից յետոյ, երբ նաւահանգստում տիպեց լուութիւն, ես արթնացրի իմ կօպակիս: Աթէ ես ատրճանակ արձակեմ, ասայի նորան, խսկոյն վաղեր ափո: “Նա պշեց աչքերը և մեքենայաբար պատասխանեց. զում եմ, ձերդ մեծապատուութիւնո: Ես արթնանակը գարկի գօտիս և դուրս գնացի: “Նէ ինձ սպասում էր զառիվայրի ծայրին: “Նէրա հանդերձը աւելիք քան թեթե էր. փոքրիկ թաշինուկը պատել էր նէրա մէջքը:

— Երի՛ իմ ետեից, ձեռիցս բռնելով ասեց նէ, և մենք սկսեցինք վար իջնել: Զարմանում եմ, որ ես իմ զլուխս չջարողեցի. ցածը մենք ուզզուեցանք դէպի աջ և գնացինք նոյն ճանապարհով, որտեղ ես երէկ հետեռւմ էի կոյրին: Լուսինը դեռ ես չէր դուրս եկել, միայն երկու փոքրիկ աստղեր, ինչպէս երկու փրկարար փարոսներ, փայլում էին մուկ-կապոյտ

երկնակամարի վերայ: «Օանքաշարժ ալիքները միաչափ և հանգարտ ծփումէին մէկը միւսի ետեից, հաղեւ բարձրացնելով մի նաւակ, որ մօտեցած էր ափին: «Նստենք նաւակ», ասաց իմ ուղեկյունիս: Խո տատանվում էի—ես ծովի վերայ զգայական զրօսանքների տառածութու չեմ: բայց հրաժարուելու ժամանակ չէր: «Եէ ցատկեց նաւակը, ես նէրա ետեից. և դեռ ես ուշքի չէի եկած, երբ նկատեցի, որ մենք նաւում ենք: «Եյս ի՞նչ է նշանակում», բարկացած ասացի ես: «Եյս նշանակում է, պատասխանեց նէ ինձ նստարանին նստեցնելով և փարելով մէջքիս, այս նշանակում է, որ ես սիրում եմ քեզ... Եւ նէտա այտը շփուեցաւ իմիս, և ես իմ երեսիս վերայ զգացի ջերմ շնչառութիւն: Յանկարծ ինչ որ բան ազմկով ընկաւ ջուրը. ես ձեռս գօտուս—տեսնեմ ատրճանակս չկայ: Եյստեղ սաստիկ կասկած ծագեցաւ իմ մէջ, արիւնս գլուխս թռաւ: «Կայում եմ—մենք ափից յիսուն սաժէնի չափ հիւացած ենք. իսկ ես լոգալ չեմ իմանում: Ուղում եմ նէրան ինձանից հեռացնել. նէ ինչպէս կատու կպած էր իմ շորերիս, և յանկարծ սաստիկ հարուածը քիչ մնաց ինձ ծովը գլորէր: «Նաւակը տատանուեցաւ. բայց ես ուղղուեցայ. և մեր մէջ սկսուեց կատաղի կոխւ: Ատաղութիւնը աւելացնում էր իմ ցցիքը բայց ես շրւտով նկատեցի, որ ճարպիկութեամբ իմ հակառակորդից ես թոյլ եմ: Կ'ի՞ն կամենում անելը, բզաւեցի ես, նէրա փոքրիկ ձեռները սեղմելով, նէրա մատները ճկրտացին, բայց նէ չճշաց. նէրա օձի բնաւորութիւնը համբերեց այս տանջանքին:

— Դու տեսար, պատասխանեց նէ, դու կմատնես. և մի անհաւատալի ճիգով նէ ինձ ձգեց նաւակի եղբը. մենք երկուոս էլ մինչև գօտիներս նաւակից կախուած էինք. նէրա մազերը շփում էին ջրին. բոպէն վճռողական էր: Խո ծունկս նեցուկ տալով նաւելի յատակին մի ձեռով բռնեցի նէրա մազի հիւսից, միւսով կոկորդը, նէ բաց թողեց իմ շորերս, և ես մի ակնթարթում նետեցի նէրան ալիքների մէջ:

Բաւական մութ էր ալպէն. նէրա գլուխը մի երկու անդամ երեւեց ծովի փրփուրի մէջ, և ես այլ ես ուրիշ ոչինչ չտեսայ...

«Նաւակի յատակին ես գտայ հին թիւակի կէսը և երկար աշ-

խատելով հաղիւ հաղ մօտեցայ ափին։ Երբ ափով հիւզս էի գնում ակամայ նայում էի դէպի այն կողմը, որտեղ կոյրը նախընթած երեկոն սպասում էր զիշերուայ լուղորդին։ Լուսինը արդէն սահում էր երկնքի մէջ և ինձ թուաց, թէ ով որ սպիտակ շորերով նստած էր ափին. ես հետաքրիզութիւնից զրգուած ծածուկ մօտեցայ և ափի բարձրութեան վերայ պառկեցայ խոտի մէջ. գլուխս մի քիչ դուրս հանելով ես ժայռի վերայից կարողանում էի տեսնել բոլորը, ինչ որ վարը կատարվում էր, ես շատ զարմացայ, մինչև անդամ ուրախացայ երբ ճանաչեցի իմ հիւրուս։ «Նէ ծովային փրփուրը քամում էր իւր երկար մազերից. թաց շապիկը փակչել էր նէրա ձկուն հասակին և բարձր կուրծքին։ Հեռվում շուտով երևեց մի նաւակի, նա արագութեամբ մօտենում էր. նորա միջից ինչպէս նախնթաց օրը դուրս եկաւ թաթարական գլխարկով մի մարդ, բայց նորա գլուխը խուզած էր կօզակի պէս, և կաշուէ գտուց կախուած էր մի մէծ դանակ. «Եանկօ, ասաց նէ, ամեն բան կորաւ»։ Յետոյ նորանց խօսակցութիւնը շարունակուեց, բայց այնպէս կամաց, որ ես ոչինչ չէի կարողանում հասկանալ։

— Ա՞րտեղ է կոյրը, վերջապէս ձայնը բարձրացնելով ասաց Եանկօն։ «Ես նորան ուղարկեցի», եղաւ պատասխանը։ Մի քանի բոպէից յետոյ երևեց կոյրը բերելով շալակին մի պարկ, որը և դրին նաւակի վերայ։

— Լոիր կոյր, ասաց Եանկօն. — դու այն տեղը պահպանիր... գիտե՞ս, այնտեղ շատ ապրանք կայ... ասա (անունը ես լաւ չլսեցի), որ ես այլ ևս նորա ծառան չեմ. գործերը վատ են գնում, նա ինձ այլ ևս չի տեսնի. այժմ վտանգաւոր է. կզնամ մի ուրիշ տեղ գործ գտնելու, իսկ նա այլ ևս ինձ նման ձարպիկ չի գտնի։ Եւ ասա նորան, որ եթէ նա կանոնաւոր կերպով վճարէր աշխատութեանս փոխարէն, Եանկօն նորան չէր թողնի. իսկ իմ ճանապարհս ամեն կողմ բաց է, որտեղ որ քամին է փշում և ծովը աղմկում։

— Փոքր լրութիւնից յետոյ Եանկօն շարունակեց, նէ ինձ հետ կգայ. նէրան անկարեկի է այստեղ մնալ. իսկ պառաւին ասա, որ նէ չափազանց երկար է ապրում, մեռնելու ժամանակ է, պէտք է մարդ մի քիչ էլ խիզք ունենայ։ Մեղ այլ ևս չի տեսնի։

— Իսկ հ՞ս, ասաց կոյրը լաղագին ձայնով:

— Ի՞նձ ինչ, եղաւ պատասխանը:

Այդ ժամանակ իմ հիւրիս թռաւ նաւակի վերայ և ընկերոջը ձեռով նշան արեց. նա ինչ որ բան դրեց կոյրի ձեռը ասելով: «Ահա, կարկանդակ առա:—Եյդքան, ասաց կոյրը: «Եյէլ»,—և վայր ընկնող դրամը քարին զարնուելով Ճնկայ: Կոյրը նորան չվերցրեց: Խանկօն նստաւ նաւակը. քամին փչում էր ափից. նորանք բաց արին փոքր առադաստը և արագ հեռացան: Խրկար ժամանակ լուսնի լցոսի առջև մոյտ ալեքների մէջ փայլում էր առադաստը. կոյրը բոլոր ժամանակ նստած էր ափում և ահա ևս լսեցի ինչ որ հիծեծանքի նման բան. կոյր մանչը իրաւ որ լալիս էր, և երկար, երկար... Ինձ տխրութիւնը պատեց: Ինչու համար ինձ վիճակուած էր ընկնել առնիւ ճականներների խաղաղ շրջանը: Ինչպէս վծիտ աղբեիրը ընկնող մի քար ևս խանգարեցի նորանց խաղաղութիւնը. և ինչպէս քար քիչ մնաց ևս էլ յատակը գնայի:

Խս վերադարձայ տուն: «Խախասենեակում փայտեայ պնակի մէջ կրծտում էր հատած մոմը. իսկ իմ կօղակս, հակառակ իմ հրամանին, երկու ձեռներով ամուլք բռնած հրացտնը խորքնած էր: Խս նորան հանգիստ թողնելով առայ մոմը և մտայ խուղը: Աւազ, իմ արկղիկս, արծաթով հիւսուած թուրս, ընկերոջս նուիրած դաշտանի դաշոյնս, բոլորը անհետացել էին: Եյստեղ ևս հասկացայ, թէ ի՞նչ իրեր էին, որ տանում էր անիծած կոյրը: Աօղակիս բաւական անքաղաքաւար հարուածով զարթեցնելով հայհայեցի, բարկացայ, բայց ի՞նչ օգուտ: Խւ ծիծաղելի չէր լինի իշխանութեան գանգատուելը, որ կոյր մանչը դողութիւն է արել և տամնելութ արեկան աղջեկը քիչ էր մնացել ինձ խեղտէր: Փառք Սստծու, առաւոտեան կարելի եղաւ ձանապարհ ընկնել և ես թողի Տամանը: Ինչ եղաւ պառաւն ու կոյրը—չգիտեմ: Ե՞հ, ինձ ի՞նչ մարդկանց ուրախութիւնն ու թշուառութիւնը, ինձ, թափառող սպայի, այն էլ արքունական ուղիթուղթ ունեցողին....

ՄԵՐԻ ԻՇԽԱՆԱԴՈՒՍՏՐԵ

11 մայեսի

Երեկ ես հասայ Պետիգօրսկ, քաղաքի ծայրին ամենաբարձր տեղում Մաշուկի ստորոտին մօտ տուն վարձեցի. փոթորկի ժամանակ ամպերը կհասնեն մինչև իմ տան կտուրին: Եյսօր, առաւտօնեան հինդ ժամին, երբ բացարի իմ լուսամուտս, իմ սենեակս լցուեց փոքրիկ պարտիզում բնող ծաղիկների անուշահոտութեամբ: Օաղկած կեռասսինիների ճիւղերը նայում են լուսամուտից ներս, և երեխն քամին նորանց սպիտակ թերթիկները ցանում է գրասեղանիս վերայ: Երեք կողմից էլ տեսքը հրաշալի է, արևմտեան կողմում հինդ զլիսանի Բէշտուն կապտին է տալիս, ինչպէս «անցած մրկի ապրոապը վերջին»: Հիւսիսային կողմում, ինչպէս թաւ պարսկական գրիխարկ, երեւում է բարձր Մաշուկը, և ծածկում է երկնակամարի բոլոր այս կողմը, արևելքի տեսարանն աւելի ուրախ է: Վարը իմ առջե երեւում է նոր, մաքուր քաղաքը, աղմկում են բժշկաբար աղբիւրները, աղմկուն է այլալեզու ամբոխը: — իսկ հեռուն անփիթէատրօնի ձեռվ կուտակվում են լեռները մոխրագոյն և կապոյտ գոյներով, իսկ հորիզոնի ծայրում ձըգվում է ձիւնապատ գագաթների արծաթեայ շղթան, որոնք սկսվում են Աազբէից և վերջանում են երկգլխանի Եշրօրուսով... Աւրախալի է ապրել այդպիսի երկրում: Իմ բոլոր ջղերս մի տեսակ ուրախ զգացմունքով լեցուած են: Օզը մաքուր է և թարմ, ինչպէս մանուկի համբյուրը արել վառ է, երկինքը կապցյտ, սորանից աւել էլ ի՞նչ: Եյստեղ էլ ի՞նչ հոգս և ցանկութիւն և ստրջանք... Աակայն ժամանակի է: Գնամ Եղիսաբէթեթեան ջրակի մօտ, այնտեղ ասում են, որ առաւօտեան հաւաքուելու է ջրային ընկերութիւնը

Վաղաքի մէջտեղը իջնելով՝ գնացի ճեմելիքը, ուտեղ պատահեցի մի քանի տխուր խումբերի, որոնք դանդաղ կերպով բարձրանում էին սարը. դորանք մեծ մասամբ դաշտային հողատէրների ընտանիքներ էին: Եյդ իսկոյն կարելի էր հասկանալ նորանց տղամարդկանց քրիքուած հին տարազի զգեստներից, և կանանց ու աղջկների ձաշակաւոր արդուզարդից:

Երեսում էր, որ նորանց ջրային երիտասարդութիւնը սակաւաթիւ էր, որովհետև նորանք իմ վերայ նայում էին գողարիկ հետաքրքրութեամբ։ Օգեստիս Պետրուրդի ձեւը նորանց մոլորեցրեց, բայց շուտով ճանաչելով զինուորական ուսագիրներս, նորանք արհամարանքով երես դարձրին ինձանից։

Տեղական իշխանաւորների կանայքը, այսպէս ասած ջրերի տիրուհիները, աւելի բարեհամբոյր էին. նէրանք գրանի ակնոց էին գործածում. նէրանք աւելի քիչ են ուշագրութիւն գարձնում ձեւազգեստի վերայ. նէրանք սովոր են տեսնել համարակիր կոճակի տակ եռանդուն սիրտ, և սպիտակ զլիսարկի տակ լուսաւորուած զլութ։ Եյս տիկինները շատ բարի են և երկար ժամանակ բարի են. Նմեն տարի նէրանց երկրպագուները փոխվում են. և սորանում էլ գուցէ կայանում է նէրանց անխոնջ սիրայնութեան գաղտնիքը։ Կեղ շաւիզով դէպի Կղիսաբեթեան ջրակը բարձրանալով ես հասայ սոսկ քաղաքացիների և զինուորականների մի խմբի, որոնք, ինչպէս յետոյ լսեցի, ջրի շարժման ակնկալողների մէջ կազմում են մի առանձին խումբ։ Նորանք խօնում են—բայց ոչ ջուր, զբոնում են քիչ կանանց եաւելից են. ընկոււմ հարեւանցի կերպով. նորանք թուղթ են խաղում և ձանձրութիւնից գանդատվում։ Նորանք պՃնասէրներ են. իրենց ծղնօտով պատուծ բաժակները ծծմբային—թթու ջրի հորը կախելիս նորանք ընդունում են ձեմարանականի լուրջ կերպարանք. քաղաքացիները կապում են երկնադրոյն կապոյթ փողպատներ. նորանք արտայայտում են մեծ արհամարհանք դէպի գաւառական կանայք և ախ են քաշում մայրաքաղաքների ազնուականների ընդունարաններին համար, ուր նորանց չեն թողնում։

Վերջապէս ահա և ջրհորը, Հրապարակի մէջ, նորան մօտիկ, շնուրածէ ջրի աւազանին վերայ կարմիր կտուրով մի անակ և մի քիչ հեռուն սրահն է, որտեղ զբոսնում են անձրևային օրերը։ Մի քանի վիրաւոր զժզոյն և տիսուր սպաներ ցոււերը կշաերին նստած էին նստարանի վերայ։ Մի քանի տիկիններ հրապարակի վերայ արագ քայլերով ման էին գալիս, և սպասում էին, որ ջուրը ներգործէ։ Նէրանց մէջ երկու երեք գրաւիչ դէմքեր կային։ Խաղողի ծառուղիների մէջ, որոնք ծածկել էին Մաշուկի զառիվայրը, երբեմն երեսում էր

երկու հոգով առանձնացող սիրող կնոջ փեղյըք, որովհետև
և միշտ այդպէս փեղյըքի մօտ նկատում էի կամ զինուորա-
կան զլիսարկ, կամ անձոռնի կլոր զլիսարկ: Օռառիվայր ժայռի
վերայ, ուր շինուած էր ծածկոյթը, որը կազմում էր Խօլօսի
Վնարը, ման էին գալիս տեսարանների սիրահարները և ուղ-
ղում էին զիտակները Ելքօրուսի վերայ. նորանց մէջ գտնվում
էին երկու դաստիարակներ իրենց սաներով, որոնք եկած էին
բժշկուելու կարմրուկից:

Ես, եեքս բռնած՝ կանգ առայ սարի զառիվայրին մօտ,
և, տնակի անկիւնին յենուելով սկսեցի նայել գեղարուեստա-
կան շրջակաբէնն, երբ յանկարծ ետելիցս լսում եմ ծանօթ
ձայն.

— Պեչօրին, վաղո՞ւց է, որ այստեղ ես:

Ետ եմ դառնում. Պրուշնիցինէ: Մենք միմեանց գրկե-
ցինք: Ես նորա հետ ծանօթացել էի գործոն բանակի մէջ:
Նորա ոտը վերաւորուած էր և նա մի շաբաթ ինձանից ա-
ռաջ էր եկել ջրերը:

Պրուշնիցին ենթասպայ է: «Ես ընդամենը մի տարի էր,
ինչ ծառայութեան մէջ էր. մի առանձին պճնասիրութեամբ
հագած էր զինուորի հաստ վերարկու (շինել): «Ես ունէր
Պէօրդիւսի զինուորական խաչ: «Նորա կազմուածքը լաւ է,
ինքը թուխ և սե մազերով. նորան տեսքից կարելի էր համա-
րել 25 տարեկան, թէև հազիւ լինէր 21: «Ես երբ խօսում է
զլուխը յետ է ցնցում, և բոպէաբար ձախ ձեռով ոլլում է
բեխելը, որովհետեւ աջով յենքում է ցուպին: «Ես խօսում է
արագ և զարդարուն. նա այն տեսակ մարդկանցից է, որոնք
կեանքի ամեն զէպքերում ունին պատրաստի փքուած խօս-
քեր, որոց վերայ համարեա չէ ազգում զեղեցիկը, և որոնք գո-
ռողաբար ներկայացնում են իրենց ինչպէս առանձին զգաց-
մունքներ, վսիմ կըքեր և արտակարդ վշտեր ունեցողներ: Տպա-
ւորութիւն գործելը—նորանց բաւականութիւն է պատճա-
ռում. նորանք չափից դուրս դիւր են գալիս դաւառացի վիպա-
սանական կանանց: «Օերութեան ժամանակ նորանք գառ-
նում են կամ խաղաղ կարուածատէրներ, կամ հարբեցողներ,
երբեմն էլ երկուսը միասին: «Նորանք շատ անդամ լինում են
լաւ յատկութիւնների տէր, բայց բանաստեղծութեան մի կա-

թիւ էլ չարժեն։ Գրուշնիցկին տարփածու էր բեմասացութեան նա բառերի կուտակութիւնով քիչ կողող էր՝ հենց որ խօսակցութիւնը դուրս էր գալիս առանձին սովորական սահմանից։ նորա հետ վիճել ես երբէք չի կարող։ Նա ձեզ չէ լսում։ Հենց որ դուք կանգ էք առնում, նա սկսում է երկար ճոռոմաբանութիւնը, որ միայն աբաւաբինով կապ ունի ձեր ասածի հետ, և որը նորա նախկին խօսածի շարունակութիւնն է։

Նա բաւականին սրախոս է, նորա էպիգրամները շատ անգամ զուարծալի են, բայց երբէք չն լինում չարամիտ և կծու։ նա մի խօսքով ոչ ոքի չէ սպանում։ Նա չէ ճանաչում մարդկանց և ոչ նորանց թոյլ կողմերը, որովհետեւ ամբողջ կեանքը զբաղուել է միայն իրանով։ Նորա նպատակն է լինել վեպի հերոս։ Նա այնքան յաճախ աշխատել է ուրիշներին հաւատացնել որ ինքը աշխարհի համար ստեղծուած չէ, այլ մի էակ, նշանակուած խորհրդաւոր վշտեր կրելու՝ որ նոյն իսկ ինքն էլ զրեթէ սորան հաւատացած չէ։ Դորա համար էլ նա այդպէս հպարտ է հազնում զինուորի վերաբիուն։ Ես նորան ճանաչեցի, և դորա համար էլ նա ինձ չէր սիրում, թէև արտաքուստ մենք մօտ ընկերական յարաբերութեան մէջ էինք։ Գրուշնիցկին յայտնի է և իրբե լաւ կտրի՛. ես նորան տեսել եմ գործի մէջ։ Նա շարժումէ թուրը, բղաւումէ և աչքերը խփիսացնելով վազումէ առաջ։ Աս ինչ որ ոռւսական քաջութիւն չէ...

Ես նորան նոյնպէս չեմ սիրում եմ, որ մենք երբ և իցէ իրար կհանդիպենք—և մեզանից մէկի բանը վատ կլինի։ Նորա Կովկաս գալը նոյնպէս նորա վեպական մոլութեան հետևանքն է։ Ես հաւատացած եմ, որ նա հայրենի զիւղից դուրս գալու նախընթաց օրը տիսուր գէմքով ասած լինի մի սիրուն հարեւանուհու, թէ նա գնումէ ոչ թէ միայն ծառայելու, այլ փնտուումէ մահ, որովհետեւ... (այստեղ նա անպատճառ աչքերը ձեռքերով բռնած շարունակելիս կլինի), այսպէս «ոչ դուք (կամ դու) այս չպէտք է զիտենաք։ Չեր անմեղ հոգին կարսափի։ Եւ ի՞նչի համար։ Ես ձեզ համար ի՞նչ նշանակութիւն ունիմ։ դուք ինձ մի՞թէ կհասկանաք», և լու.

Նա ինքը ինձ ասում էր, որ իւր Ա. գունդը մտնելու պատճառը միշտ գաղտնիք կմնայ իւր և երինքի մէջ:

Սակայն, այն բոպէներին, երբ նա վերացից դէն է ձգում ողբերգական քղամիտը՝ Գրունիցին բաւականին սիրելի և զուարձալի է: Ինձ հետաքրքիր է նորան տեսնել կանանց հետ. այստեղ է նորա աշխատասիրութեան ասպարէզը:

Մինք միմեանց պատահեցանք ինչպէս հին բարեկամնել: Ես նորան սկսեցի հարցնել ջրերում անցկացրած կեանքի և երեւելի մարդկանց մասին:

Մինք բաւականին մի օրինակ կեանք էինք անցկացնում, հառաչելով ասաց նա. առաւտուեան ջուր խմողները—թոյլ են, ինչպէս բոլոր հիւանդները. իսկ երեկոյեան գինի խմողները—անտանելի են, ինչպէս բոլոր առողջները: Աանանց ընկերութիւններ կան. միայն թէ նորանից մի մեծ միխթարութիւն չկայ, նէրանք վիստ են քաղում, հանգնվում են վատ, և սասարիկ վատ են խօսում ֆրանսերէն: Եյս տարի Մոսկվայից եկած է միայն Լիփօվսկայեա իշխանուհին իւր աղջկայ հետ. բայց ևս նէրանց հետ ծանօթ չիմ: Իմ զինուորի վերարկուս—հրաժարականի նշան է: Եյն կարեկցութիւնը, որ վերարկուս զարթեցնում է՝ ծանր է ինչպէս ողորմութիւնը:

Եյդ ժամանակ մեր մօտով դէպի աղբիւրը գնացին երկու տիկին. մէկը չափահաս, միւսը գեռահաս և գեղեցկակաղմ: Նէրանց երեսը փեղյուների տակ ես չտեսայ. բայց նէրանք հագնուած էին ընտիր ճաշակի խիստ հետևողութեամբ, աւելորդ ոչինչ չկար: Երկրորդը հագած էր մինչև օձիքը ծածկած շոր gris de perles գոյնով. փոքրիկ մետաքսաման հիւսը փաթաթած էր նէրա փափուկ վղին: Առշիկները couleur ruse այնպէս սեղմել էին նէրա նիշար ոտը կոճիկի մօա, որ մինչև իսկ գեղեցկութեան գաղտնիքներին անծանօթ մարդիկ ա՛ և կքաշէին, դոնէ զարմանքից: Նէրա թեթև, բայց վայելուչ քայլուածքում մի ինչ որ մանկական բան կար, որ նկարազրելը դժուար է, բայց նկատելի է տեսութեան: Երբ նէ իմ մօտով անցկացաւ, նէրա վերացից բուրում էր մի տեսակ անուշահոտութիւն, որը գալիս է երբեմն նաղելի կնոջ նամակից:

— Եհա իշխանուհի Լիփօվսկայեան, ասաց Գրունիցին. իսկ նէրա հետինը իւր աղջեկն Մերին է, ինչպէս նէ նէ-

բան կոչում է անգլիական ձեռվ։ “Նէրսանք երեք օր է, ինչ
այստեղ են:

— Աակայն, նէրա անունը դու արդէն գիտես:

— Եյ՛, ես պատահմամբ լսել իմ, կարմրելով ասաց
նա:— Խոստովանվում եմ, որ ես չեմ ցանկանում նէրանց հետ
ծանօթանալ: Եյդ հպարտ ազնուականները մեզ— հետեւակ
զինուորականներիս վերայ այնպէս են նայում, ինչպէս վայրե-
նիների վերայ: Եւ նորանց ի՞նչ դործ է, թէ համարակիր
գլխարկի տակ կայ խելք, և հաստ վերարկուի տակ կայ սիրտ:

— Խեղճ վերարկու, ասացի ես ծիծաղելով: Իսկ ովէ այդ
պարոնը, որ գնումէ նէրանց մօտ և այդպէս խոնարհութեամբ
տալիս է բաժակը:

— Օօ, այդ մոսկվացի պՃնասէր Ուայեվիչն է: Նա թուղթ
խաղացող է. դա իսկոյն նկատելի է նորա մեծ ոսկեայ շղթայից,
որ կախուած է նորա կապտագոյն բաճկոնի վերայից: Բայց
ի՞նչ հաստ ձեռնափայտ է—կարծես հէնց Ուօբինզօն Արուղէի-
նը լինի. հա, և մօրուքը, և սանդրուածքը և առաջիկ (գե-
ղացնակ):

— Դու գրգռուած ես բոլոր մարդկութեան ցեղին դէմ:

— Եւ պատճառ կայ...

— Իրաւ:

Եյդ ժամանակ տիկինները հեռացան ազբիւրից և հաւասա-
րուեցան մեզ հետ: Վրուշիցկին ցուպերի օգնութեամբ ընդու-
նեց գրամատիկական դիրք և ֆրանսերէն ինձ բարձր պատաս-
խանեց.

— Mon cher, je hais les hommes pour ne pas les mépriser, car autrement
la vie serait une farce trop dégoûtante. (Սիրելիս, ես ատում եմ
մարդկանց, որպէսզի նորանց չարհամարհեմ, այլապէս կեանքը
մի շատ անհամ խեղկատակութիւն կդառնար):

Վեղեցիկ օրիորդը յետ դարձաւ և հռետորի վերայ ձգեց մի
երկար հետաքրիւսական հայեացք: Եյդ հայեացքի արտայայտու-
թիւնը շատ անորոշ էր, բայց ոչ ծիծաղելի, որի հետ ես ներ-
քին կերպով սրտանց նորան շնորհաւորեցի:

— Եյդ օրիորդ-իշխանուհի Մերին աննման գեղեցիկ է,
ասացի ես նորան:

— Նէ այնպէս թաւիշանման աչքեր ունի — բոլորովին

թաւիշանման. ես քեզ խորհուրդ եմ տալիս նէրա աչքերի մասին խօսելուս այս ոճը գործածել վարի և վերի թերթելը ները այնպէս երկար են, որ արեւի ճառագայթները չեն թափանցում նէրա բիբերը: Խս սիրում եմ այդպիսի աչքերը առանց փայլի. նորանք այնպէս քնքոյշեն, որ կարծես նորանք քեզ փայփայում են: Սակայն, իմ կարծիքով, նէրա երեսին վերաց միայն այդ էր գեղեցիկ... Խսկ նէրա ատամները սպիտամկ են: Եյդ շատ կարեռ է: Եսիսոս, որ նէ քո զարդարուն խօսքի վերաց չփառաց:

— Դու խօսում ես գեղեցիկ կնոջ մասին, ինչպէս անկըական ձիու մտսին, ասաց արհամարհանքով Գրուշնիցկին:

— Mon cher, պատասխանեցի ես, աշխատելով նորա ձեռվ (տօնով) խօսել. je méprise les femmes pour ne pas les aimer, car autrement la vie serait un mélodrame trop ridicule. (Սիրելիս, ես արհամարհանքում եմ կանանց, որպէս զի նէրանց չքայրեմ, այլտպէս կեանքը մի շատ ծիծաղելի գուսաներգութիւն կդառնար):

Խս գարձայ և նորանից հեռացայ: Կէս ժամի շափ ես ման եկայ խաղողի ծառուղիներում, կրային ժայռերի և նորանց մէջ կախ ընկած թուփերի մէջ: Ըսդը ընկաւ, և ես շտապեցի տուն: «Օժմբային—թթու աղբիւրի մօտից անցնելով ես ծածկուած սրահում կանգ առայ, որպէս զի նորա շուաքի տակ հանգստանամ, և այս առիթով ես ականատես եղայ մի բաւական հետաքրքրական արկածի: Գործող անձերը գոնիվում էին այսպիսի դրութեան մէջ. մայր իշխանուհին մօսկվացի պՃնասէրի հետ նստած էր ծածկուած սրահում նստարանի վերայ, և երկուսն էլ կարծես, զրաղուած էին լուրջ խօսակցութեամբ: Օրիորդ իշխանուհին խմելով վերջին բաժակը, մտածմունքի մէջ ընկղմած ման էր գալիս ջրհորի մօտ: Գրուշնիցկին կանդնած էր հինգ ջրհորի մօտ, հրապարակում ոչ ոք չկար:

Խս գնացի աւելի մօտիկ և թագ կացայ սրահի անկիւնի ետև: Եյդ ժամանակ Գրուշնիցկու ձեռից ընկաւ բաժակը տւաղի մէջ. նա ճապկում էր, որ վերցնէ. Նորա վերաւոր ոտը խանգալում էր: Խեղձը, ինչպէս ցուպին յնուելով տեսակտեսակ հնարներ էր գործ գնում որ վերցնէ, բայց ի զուր: Նորա զդայուն գէմքը ճիշտ որ սրտնեղութիւն էր արաացայտում:

Դշմանուհի Մերին այս բոլորը ինձանից լաւ էր տեսնում:
«Երաքու».

Թռոշունից արագ նէ նորա մօս վաղեց, կոտցաւ, վերցրեց
բաժակը և մի հիանալի շարժուածքով տուեց նորան. յետոյ
սաստիկ կարմիեց. նայեց սրահի վերայ և, համողուելով որ
նէրա մայրը ոչինչ չնկատեց, կարծես, թէ նոյն բոպէին հան-
տարգեց: Երբ որ Գրուշնիցին բերանը բացեց, որ նէրան
յայտնէ չնորհակալութիւնն, նէ արդէն հեռացած էր: Ո՞հ բո-
պէից յետոյ նէ իւր մօր և պՃնասէրի հետ դուրս եկաւ սրա-
հից, բայց Գրուշնիցիու մօտից անցնելով ընդունեց այնպիսի
մի վեհ և ծանր զիրք, որ մինչև անգամ յետ չ'այեց, մինչև
անգամ չնկատեց նորա տարբալի հայեացքը, որով նա եր-
կար ուղեկցումէր նէրան, մինչև որ սարից իջնելով, նէ
չ'ծածկուեցաւ կաղինների ծառուղու մէջ... Իայց ահա փողո-
ցից երեւաց նէրա վեզյուրը. նէ վաղեց զէպի տան դուռը,
որը Պետիզօրսկի լաւ տներից մէկնէ. նէրա ետեկից անցկացաւ
մայրը և տան մօս մնաք-բարով արեց Ո՞յցեվիչին:

Ո՞հիայն այդ ժամանակ խեղճ ենթասպան նկատեց իմ
նէրկայութիւնը:

— Դու տեսար, ասաց նա իմ ձեռս ամուր սեղմելով—
նէ կատարեալ հրեշատկէ:

— Ենքն համար, հարցրի ես, կեղծելով թէ ոչինչ չեմ
հասկանում:

— Ո՞հի թէ դու չտեսար:

— Այո, տեսայ. նէ բարձրացրեց քո բաժակդ: Եթէ այս-
տեղ լինէր պահապանը, նա էլ նոյնը կանէր, և աւելի շատ-
պով, յուսալով, որ օղու փող կսուանայ: Աակայն բոլորովին
անհասկանալի է, որ նէ խղճաց քո վերայ. դու նոյնպէս մի
սարսափելի խեղաթիւրութիւն արիր, երբ կանգնեցար վիրա-
ւորուած ուսիդ վերայ...

— Եւ դու ամենեւին չյուղուեցար, այդ բոպէին նէրա
վերաց նացելիս, երբ նէրա հօգին փայլումէր երեսի վերայ:

— Ո՞չ:

Ես սուտ խօսեցի. բայց ես ուղումէի նորան կատաղեց-
նել: Եթէ իմ ցանկութիւնս է հակառակախօսութիւնը. իմ
ամբողջ կեանքը մի շղթայ է ախուր հակառակախօսութեան
սրտի կամ դասողութեան դէմ: Ոգեսրութեան բացակայու-
թիւնը զգացնելէ տալիս ինձ ձմերացին սառնութիւն, և ես կալ-

Տում եմ, որ եթէ յաճախ յարաբերութիւն ունենայի մի թշլ
մաղասոտ անձի հետ՝ կատարեալ երազագէտ կդառնայի: Դար-
ձեալ խոստովանվում եմ, որ մի անախորժ և անծանօթ զգաց-
մունք անցաւ իմ մեջս. այդ զգացմունքը—նախանձ էր. և
համարձակ ասում եմ, ձախանձ, որովհետեւ սովոր եմ ամեն
բան անկեղծ խոստովանուել. և դժուար թէ գտնուի որևէ
գեռաշաս մարդ, որը պատահելով մի գեղեցիկ կնոջ, որ և
նէրանից գրաւուելով, երբ տեսնէ, որ այդ կինը նախապատ-
վութիւն է տալիս մի ուրիշ իրեն նոյնքան անծանօթ երի-
տասարդի, դժուար թէ ասում եմ, գտնուի այդպէս գեռա-
շաս մարդ (ի հարկէ, եթէ նա ընդելացածէ բարձր գասա-
կարդի կեանքին և սովոր է փայփայել իւր ինքնասիրութիւնը),
որ սորանով անախորժ կերպով չպատճուի:

Գրուշնիցկու հետ լուսթեամբ իջանք սարից և անցկա-
ցանք ձեւելիքով այն տան լուսամուտների մօտից, ուր մտել
էր մեր գեղեցկուհին. նէ նսաած էր լուսամուտի մօտ: Գրուշ-
նիցկին իմ թեւին զարնելով նէրա վերայ ձգեց այնպիսի մի
սրողուած — քնքոյշ հայեացք, որը այնպէս թշլ է ներգոր-
ծում կանանց վերայ: Ես ակնոց ուղղեցի նէրա վերայ և
նկատեցի, որ նէ նորա հայեացքից ժպտաց, և որ ակնոցով իմ յան-
դուզն նայուածքը նէրան կատարեալ բարկացրեց: Եւ մի՞թէ,
յիւաւի, կովկասիցի հետեւակ զինուորականը կարող է համար-
ձակուել մոսկվացի իշխանուհու վերայ ուղղել իւր ակնոցը...

13 մայիսի:

Եյս օր առաւօտեան դէմ իմ մօտս եկաւ. բժիշկը. նորա
անունը Անելներ է, բայց նա ուուէ: Եյստեղ ի՞նչ կայ զարմա-
նալու: Ես ձանաշում էի մի Խվանօվի, որը գերմանացի էր:

Անելները շատ պատճառներով երեկի մարդ է: Նա կաս-
կածուէ և նիւթապաշտ, ինչպէս գրեթէ բոլոր բժիշկները.
սորա հետ միասին նա լուրջ բանաստեղծէ, բանաստեղծ գոր-
ծով և յաճախ նաև խօսքով, թէկ իւր կեանքում երկու
տող ոտանաւոր էլ չունի զբած: Նա ուսումնասիրել էր մար-
դու սրտի բոլոր կենդանի լարերը, ինչպէս ուսումնասիրում
ևն զիակի ջեմը, բայց ամենեւին չգիտէր նա օգաուել իւր հըմ-
տութեամբ. ինչպէս երբեմն բնազննութեան լաւ հմուտ մար-
դը չէ կարողանում բժշկել ջերմը: Անելները սովորապէս գաղտնի

*

ծաղրում էր իւր հիւանդներին, բայց ես մի անգամ տեսայ, թէ նա ինչպէս լալիս էր մի մեռնող զինուորի վերայ... Նա խեղձ էր, և միլիօնների մասին էր մտածում, բայց փողի համար չէր անի մի աւելորդ քայլ: Նա մի անգամ ինձ ասաց, որ աւելի գիւրաւ մի ծառայութիւն կմատուցանէ իւր թրշնամուն, քան բարեկամին, որովհետև այս կնշանակէր իւր բարեգործութիւնը ծախսել, մինչդեռ միայն ատելութիւն սաստկանում է հակառակորդի մեծահոգութեան չափով: Նա չար լեզուունէր, նորա էպիգրամների շնորհիւ շատ բարեմիտ մարդիկ յիմարի կերպարանք էին ստանում: Նորա հակառակորդները ջրի նախանձուա բժիշկները լուր էին տարածել որ իր թէ նա նկարում է իւր հիւանդների ծաղրանկարները—հիւանդները սաստիկ բարկացան, և գրեթէ նորան բոլորովին թողին: Նորա բարեկամները, այսինքն, բոլոր իսկապէս կանոնաւոր մարդիկը, որոնք ծառայում էին Առվիասում, զուր էին աշխատում վերականդնեցնել նորա ընկած վարկը:

Նորա արտաքինը նայողի վերայ առաջին անգամ թողնում էր վատ տպաւորութիւն, բայց վերջը դիւր էր զալիս, երբ մարդու աչքը վարժվում էր անկանոն գծազրութեան մէջ կտրդալ փորձուած և բարձր հոգու արտայայտութիւնը: Նզած են օրինակներ, որ կնիկ մարդիկ այդպիսներին խելազարի նման սիրահարուած են եղել, և նորանց սյլանդակութիւնը չեն փախել ամենաթարմ և վարդազյն էնդումիունների գեղեցկութեան հետ: Երգարութիւնը պահանջում է խոստովանուել, որ կանայք հոգու գեղեցկութեան բնազդումն ունին, գորս համար էլ գուցէ, Վերների նման մարդիկ այնպէս սաստիկ սիրում են կանանց:

Վերները կարծահասակ էր, լզար ու թոյլ ինչպէս երեխայ. նորա մի ուղը միւսից կարձ էր, ինչպէս Ռայլոնինը. իրանի համեմատութեամբ նորա գլուխը շատ մեծ էր երեսում: Նա մազերը խուզում էր կարձ. և նորա գանգի անհաւասարութիւնները, որոնք նկատվում էին այս կերպով մերկացրած զլինն վերայ՝ կարող էին զարմացնել զանգարանին՝ հակասական յատկութիւնների միաւորուելովը: Նորա փոքր սև անհանդիստ աչքերը աշխատում էին թափանցել մարդու խորհուրդներին: Նորա շորերում նկատելի էին ճաշակն ու մաքրու-

թիւնը. Նորա նիշար, ջլոտ և փոքրիկ ձեռները ամփոփուած էին սպիտակ—դեղնագոյն ձեռնոցների մէջ: Նորա զգեսար, փողը պատը և բաճկոնը միշտ սև գոյնի էին: Երիտասարդութիւնը նորան կոչում էր Մեֆիստօֆել. Նո ցոյց էր տալխ, իբր թէ նեղանումէ իրեն այդպէս կոչելուն, բայց իսկապէս այս կոչումը փայփայում էր նորա ինքնասիրութիւնը: Մենք մէկ մէկի շուտով հասկացանք և դարձանք լու ծանօթներ, որովհետեւ ևս բարեկամութեան ընդունակ մարդ եմ: Երկու բարեկամներից անպատճառ մէկը միւսի ստրուկն է, թէև յաճախ նորանցից և ոչ մէկը այս բանը չէ յանձն առնում: Արուկ լինել ևս չեմ կարող իսկ հրամայել այս գէպքում ձանձրալի է, որովհետեւ սորա հետ միասին պէտք է և խաբել մանաւանդ որ ևս ունիմ սպասաւոր և փող: Ահա, թէ ի՞նչպէս մենք ծանօթներ եղանք. ևս Վերներին պատահեցի Ա...ում, բազմանդամ և աղմկալի երիտասարդութեան շըջանի մէջ, երեկոյթը վերջանալիս խօսակցութիւնը ընդունեց փիլիսոփայտան-գերբնական ուղղութիւն, խօսում էին համոզման մասին, իւրաքանչիւրը համոզուած էր մի բանի:

— Իսկ ինչ վերաբերում է ինձ, ևս համոզուած իմ մի բանի... ասաց բժիշկը:

— Կեզի, հարցրի ես, աշխատելով իմանալ այդ մարդու կարծիքը, որ մինչեւ այդ ժամանակ լռում էր:

— Առան պատասխանեց նա, որ վաղ թէ ուշ մի օր ևս մեռնելու եմ:

— Ես ձեղանից հարուստ եմ, ասացի ես, բացի դորանից ևս ունիմ էլի մի կարծիք, այսինքն, որ ես մի օր ծնուելու անբաղդութիւն եմ ունեցել:

Բոլորը նկատեցին, որ մենք դադարկ բան ենք խօսում, իսկ Շմարիստ նորանցից և ոչ մէկը սորանից խելացին չասաց: Այդ ըսպէից ամբոխի մէջ մենք նկատում էինք իրար: Մենք յաճախ գնում էինք միմեանց մօս և երկուով լրւրջ կերպով խօսում էինք վերացական նիւթերի մասին, մինչեւ որ երկուսս էլ նկատեցինք, որ մենք փոխադարձաբար խաբիրում ենք մէկ մէկի: Այն ժամանակ մենք ակնարկներ էինք ձգում միմեանց վերաց մի առանձին նշանակութեամբ, ինչպէս Վիկերօնի ասելով անում էին հռովմայեցի հաւահմաները, և սկսում էինք ծիծառել, և ծիծառելով մէր երեկոյթից դուզ մնացած բաժանվում էինք:

Ես պառկել էի բազմոցի վերայ աչքերս յառած ձեզունին և
ձեռներս դրած զլիստ տակ, երբ Ահեղները մտաւ իմ սենեակս: «Սա
նստեց բազկաթոռին վերայ, ձեռնափայտը զրեց անկիւնը, յօրան-
ջեց և յայտնեց, որ շոգն սկսվում է: Ես պատասխանեցի, որ ինձ
անհանգստացնում էին ձանձները, և մենք երկուսս էլ լոեցինք:

«Կատեցէք, սիրելի բժիշկ, ասացի ես, որ աշխարհս ա-
ռանց յիմարների շատ տիուր կլիներ...» Ես այցէք, այ, մենք
երկուսս խելացի մարդիկ ենք, մենք սկզբից գիտենք, որ ամեն
բանի վերայ կարելի է անվերջ վիճել դորս համար էլ չենք
վիճում: մենք միմեանց ամենաներքին մտքերը գիտենք, մի
խօսքը մեզ համար մի ամբողջ պատմութիւն է: մեր իւրա-
քանչիւր զգացմունքի ոկզբնակետը մենք տեսնում ենք երեք
տակ քօղի մշջից: Ենչ որ տիրալի է՝ մեզ համար ծիծաղելի
է, ծիծաղելին տիրալի է, և ընդհանրապէս, ծշմարիտն ասած,
մենք ամեն բանի մէջ բաւական սառնասիրում ենք, բայց մեզա-
նից: Եւ այնպէս, մեր մէջ չէ կարող լինել մտքի և զգաց-
մունքի փոփոխութիւն: մենք միմեանց մասին գիտենք այն,
ինչ որ կամենում ենք գիտենալ: իսկ տեկին գիտենալ չենք
ցանկանում: միում է միայն մի միջոց—պատմել նորութիւն-
ներ: Ուրեմն պատմեցէք որ և է նորութիւն:

Երկար պերճախօսութիւնից յոդնած ես փակիցի աչքերս
և յօրաննջեցի...

«Սա մտածելով պատասխանեց: ձեր ցնդաբանութեան մէջ
մի իմաստ կայ:

— Ոչ թէ մի, այլ երկու, պատասխանեցի ես:

— Դուք ինձ ասացէք մէկը, ես ձեզ կասեմ միւսը

— Լաւ ասացէք, ասացի ես, շարունակելով նայել առաս-
տաղը և մտքիս մէջ ինդալ:

— Դուք ուզում էք ջրերը դալողների մասին լսել զա-
նազան մանրամաննութիւններ, ես արդէն հասկանում եմ, թէ
դուք ում մասին էք աշխատում, որովհետեւ ձեր մասին այն-
ակա արդէն հարցնում էին:

— Բժիշկ, յերաւի մեզ կարելի չէ խօսակցել: մենք կար-
գում ենք միմեանց սրտի միջնը:

— Հիմա երկրորդը:

— Երկրորդ իմաստը այ, ես ցանկանում էի ձեզ մի բան

պատմել տալ առաջնոր, որովհետեւ լսելը աւելի քիչ է յոգնեց-
նում, երկրորդ, որ մարդ այս դէպքում բերանից խօսք չէ
թոցնում. երրորդ կարելի է խմանալ ուրիշի զաղանիքը. չոր-
րորդ, որովհետեւ այնպէս խելացի մարդիկը, ինչպէս գուք, աւելի
սիրում են լսողներ, քան պատմողներ: Հիմա զառնանք գոր-
ծին. իշխանուհի Նիգօվսկայեան ի՞նչ ասաց ձեզ իմ մասին:

— Դուք լաւ համոզուած եք, որ նէ իշխանուհի՞ն է... և
ոչ իշխանադուստրը:

— Ի՞ոլորովին համոզուած եմ:

— Խեցու համար:

— Որովհետեւ իշխանադուստրը հարցնում էր Գրուշնից-
կու մասին:

— Դուք մեծ ձիրք ունեք կշռադատելու: Իշխանադուստրը
ասաց, որ ինքը հաւատացած է, թէ այդ զինուորի վերարկուով
երիտասարդը մենամարտութեան պատճառով աստիճանից
ձգուած հասարակ զինուոր է դարձրած իբրև պատիժ:

— Յօյս ունեմ, որ գուք նէրան թողիք այս ախորժալի
պատմունքի մէջ...

— Ի հարկէ...

— Հիմքը ձգուած է, գոչեցի ես հիացած. իսկ այդ կա-
տակերկութեան վախճանին համար մենք կաշխատենք: Իազդը
յայտնապէս աշխատում է, որ ես չձանձրանամ:

— Ես նախազգում եմ, ասաց բժիշկը, որ խեղճ Գրուշ-
նիցին կինի ձեր զոհը...

— Յետոյ, բժիշկ...

— Իշխանուհին ասաց, որ ձեր դէմքը իրեն ծանօթ է:
Ես նէրան նկատեցի, թէ շատ կարելի է, որ ձեզ պատահել է
Պետերբուրգում, որևէ բարձր շրջանում... Ես ասացի ձեր
անունը: “Ես նէրան յայտնի էր: Կարծեմ, ձեր դէպքը այնտեղ
ահադին տղմուկ է առաջացրել: Իշխանուհին սկսեց պատմել
ձեր արկածների մասին, շատ հաւանական է, իւր նկատողու-
թիւնները աւելացնելով ունենոր հասարակութեան բամբասանք-
ներին վերայ... Եղջեկը լսում էր հետաքրքրութեամբ: “Նէրա
երեակայութեան մէջ գուք դարձաք նոր ճաշակի վեպասա-
նութեան հերոս... Ես ճաշկառակախօսեցի իշխանուհուն, թէն
դիտէի, որ նէ խելքից գուրս էր տալիս.

— Ճշմարիտ բազեկամ, նորան ձեռս մեկնելով ասացի ես:
Ծժիշկը իմ ձեռս սրտանց սեղմեց և շարունակեց.

— Եթէ ցանկանում էք, ես ձեզ կներկայացնեմ...

— Կ'նչ էք ասում, ծափ զարնելով ասացի ես. միթէ հերոս-
ներին ներկայացնում են: “Նորանք այլ ևս չեն ծանօթանում, ե-
թէ ոչ իրենց սիրելի էակը անխուսափելի մահից ազատելով...”

— Եւ դուք յիրաւի ցանկանում էք իշխանագուտեր ետեից
ընկնել...

— Ընդհակառակը, բոլորովեն... Ծժիշկ, վերջապէս ես
փառաւորվում եմ, դուք իմ միաքը չեք հասկանում... Աակայն
այս ինձ ցաւ է պատճառուում, բժիշկ, մի բովէ լոեցուց յետոյ
ասացի ես: Ոչ մի ժամանակ իմ գաղանիքներս ես բաց չեմ
անում, այլ սաստիկ սիրում եմ, նորանց հասկանան, որովհետեւ
այս կերպով պէտքը եկած ժամանակ՝ ես միշտ կարող իմ նո-
րանց ժիանել Աակայն, դուք պէտք է ինձ նկարագրէք մօրը
և աղջիան, թէ նէրանք ի՞նչ մարդիկ են:

“Եախ որ իշխանուշին քառասունուշինդ տարեկան մի
կինէ, պատասխանեց Վերները. նէ ունի լաւ սատանքս, բայց
արիւնը ապականուած է. այտերի վերայ կան կարմիր բծեր:
Իւր կեանքի վերջին կէսը նէ անցէկայցրել Ռօսկայում և
այստեղ անդորրութեան մեջ հաստացել է: “Նէ սիրում է եր-
կիմաստ անեկուաներ, և երեմն խօսում է անպարկեշտ ըս-
ներ, երբ աղջեկը չէ լինում սենեակում: “Նէ ինձ յայտնեց, որ
նէրա աղջեկը անմեղէ ինչպէս աղաւնի: Իմ ի՞նչ գործս է... Ես
ուղում էի նէրան պատասխանել, որ նէ հանդարս մնայ, որ
ես այս ոչ ոքի չեմ ասի: Իշխանուշին բժշկվում է ոսկա-
յաւից. խակ աղջեկը Վասուած դիաէ ինչից: Ես երկուսին
էլ հրամայեցի ամեն օր խմել երկու բաժակ ծծմբային—թթու-
ջուր և շաբաթը երկու անգամ լողանալ հանքային ջրով:
Իշխանուշին կարծես սովոր չէ հրամայելու. նէ հաւանում է
իւր աղջկայ խելքին և զիտութեան, որը անդիերէն կար-
դացել է Բայրօն և զիտէ հանրահաշիւ. Ռօսկայում, երեսում
է, որ օրիսրդները զիտական զառնալու ձգառում ունին, և
լաւ էլ անում են, Ճշմարիտ: Վեր տղամարդիկ ընդհանրապէս
այնքան անհամբոյը են որ նորանց հետ ալեվլիկ դալը խելացի
կնոջ համար անտանելի է: Իշխանուշին շտա սիրում է դեռահաս

մարդկանց, իսկ գուսարը նորանց վերայ նայում է մի տեսակ արշամարհանկով՝ Մօսկվայի սովորութիւն։ ‘Նէրանք Մօսկվայում միայն քառասուն տարեկան սրախօսներից գասեր են առնում։

— Իսկ դուք Մօսկվայում, եղած էք բժիշկ։

— Եյ՞, այնտեղ բաւական զործ եմ ունեցել։

— Կարունակեցէք։

— Ե, կարծես, ես բոլորն ասացի։ Հա, նորից, օրիորդ իշխանութիւն, կարծեմ, սիրում է խօսիլ զգացմունքների, կըրքերի և այլն մասին։ ‘Նէ մի ձմեռ եղած է Պետերբուրգում, և նա նէրան զիւր չէ եկել մանաւանդ հասարակութիւնը. նէրան, երեխ սառն են ընդունել։

— Դուք այսօր նէրանց մօտ ուրիշ ոչ ոքի չքը տեսել։

— Ընդհակառակը, կար մի ազիւտանտ, մի ժոկատդ թիկնապահ սպայ, և ինչ որ նորիէ տիկին, որը մարտու կողմից ազդական է իշխանութուն, շատ զեղեցիկ, բայց կարծեմ և շատ հիւանդուս... Ըրդհօք դուք նէրան ջրակի մօտ պատահած չքը. — Նէ միջաւասակ է, շիկահեր, կանոնաւոր գծազրութեամբ, երեսը թոքախտային գոյնով, և աջ այտի վերայ մի ու խալով նէրա կերպարանքն ինձ ապշեցրեց իւր կենդանութեամբ։

— Խալ, ասացի ես քթիս տակին։ Վիթէ։

Ծժիշկը նայեց իմ երեսին և ձեռը գնելով սրտիս հանդիսաւոր կերպով ասաց. ‘Նէ քեզ ծանօթ է»... իմ սիրաս իսկապէս բարախում էր սովորականից սաստիկ։

— Եյժմն փառաւորուելու հերթը ձերն է, ասացի ես, միայն թէ ես ձեզ վերայ յոյս ունեմ. դուք ինձ չքը դաւաճանի։ Ես գեռ ես նէրան չեմ տեսել բայց համոզուած եմ, ձեր նկարազրած կինը ինձ ծանօթ է, որին ես սիրում էի մի ժամանակ։ Իմ մասին նէրան ոչինչ չասէք. եթէ նէ կհարցնէ, իմ մասին վատ խօսեցէք։

— Համեցէք, ասաց Պետրով, ուսեկը վեր քաշելով։

Երբ նա գնաց, սաստիկ տիսրութիւնն իմ սիրաս պատեց։ Ըրդհօք բաղզը մեզ նորից Առկիաս բերեց, թէ նէ զիտմամիք եկաւ այստեղ, զիտենալով, որ ինձ այստեղ կպատահի... և ի՞նչպէս մենք միմեանց կպատահէնք .. և վերջապէս նէ՞ է արդհօք այդ կինը... իմ նախազդացմունքներս երբէք ինձ չեն խաբել։ Եշ խարհիս երեսին չկայ մի մարդ, որի վերայ անցեալը այնպիսի մի

աղղեցութիւն ունենայ, ինչպէս իմ վերայ: Իմ կրած վշտերի
կամ ուրախութեան իւրաքանչիւր յիշողութիւնը տիրապին զար-
նում են իմ հոգուն և հնչեցնում են նորանից միշտ միենոյն ձայ-
ները... Աս յիմար եմ ստեղծուած, ոչինչ չեմ մռանում—ոչինչ:

Ճաշից յետոյ մօտ վեց ժամին և զնացի ճեմելիքը այն-
տեղ ժողովուրդ կար. իշխանուհին և զուստրը նատել էին
նստարանների վերայ և շրջապատուած էին երիտասարդներով,
որոնք անդադար սիրաբանում էին ներանց հետ: Աս մի քիչ
հետաւորութեամբ նատայ միւս նստարանի վերայ, կանգնեցրի
երկու ծանօթ դրակօն սպաներին, և սկսեցի նորանց ինչ որ
սպատմել երեւում էր, ծիծաղելի էր, որովհետեւ նորանք սկսեցին
խելագարի նման ծիծաղել: Իշխանադուստեր շրջապատովնե-
րից մի քանիսն հետաքրքրուելով ինձ մօտ եկան. քիչքիչ և
բոլորը թողին ներան և միացան իմ շրջանիս հետ: Աս չէ:
լուում իմ պատմած անեկդոտներս չափազանց զուարձալի,
թէպէտ և չափազանց անմիտ բաներ էին. իմ երդիծարանու-
թիւններս մի քանի ինքն որոշ անցորդների մասին ծայրայեղ
էին: Աս շարունակում էի ամբոխը ուրախացնել մինչև արեկի
մայր մռնելը: Մի քանի անդամ իշխանադուստրը մօր հետ
թեանցուկ անցնում էր իմ մօտով, մի հօղակ ծերունու ու-
ղեկցութեամբ, մի քանի անդամ՝ ներա հայեացը իմ վերայ
ընկնելով արտայայտում էր սրտնեղութիւն, թէպէտ նկատվում
էր, որ նէ ուղում էր արտայայտել սառնարտութիւն...

— “Աս ձեզ ի՞նչ էր պատմում, հարցրեց նէ երիտասարդ-
ներից մէկին, որոնք քաղաքավարութեան համար վերադար-
ձել էին ներա մօտ, երեի մի շատ հետաքրքրական պատմու-
թիւն—ճակատամարտելում իւր քաջադութութիւնները: Նէ
այս տասց բաւականին բարձր և հաւանուցէն, ինձ վերաւորելու
մաքով: Ե՛ հէ, մտածեցի ես, զուք կատարեալ բարկացել էք, սի-
րեկի իշխանադուստր, սպասեցէք, զեռ. ևս շատ բան կահսնէք»:

Գրուշնիցին ներան հետեւում էր ինչպէս յափշտակող գա-
ղան, և ներանից աչք չէր հեռացնում. զրադ կդամ, որ վազը
նա կինողքէ, որ նորան որեւէ մէկը ներկայացնէ իշխանուհուն:
“Նէ կուրախանայ, որովհետեւ տիսուր է:

Յ. Վայուսականց:

(Ա. երջը երկրորդ գրքում):





ԳԻՒԼԻԶԱՐ

Հրաման ալ Արքային հանդիսին

ԱՐԴԱԳԱՆԳ ՄԻ ՍՅՈՑ ԱՇԽԱՐՀԵՆ

Ա.

Ի՞նչ արձագանգ լսել պիտի կարծէք Աշոյ աշխարհէն. նաև հատակ այդ երկիրն ուրիշ ի՞նչ ձայն ունի, եթէ ոչ հեծութեան ու տառապանաց, լացի ու վշտի, անարգանաց ու հալածանաց, հարստահարութեան և գերութեան: Կորովալից այն ձայնը, զոր երբեմն Աշոյ աշխարհը Առուշեղ Ամփկոնեանի բերանով կ'արձակէր ընդդէմ թշնամեաց, «Աի՛ զարթուցանէք զառիւծ, որ ի քուն է, և մի՛ զգայլ որ զիւր բարսն մոռացեալ է» չկայ այժմիկ. նա ուժասպառ՝ կարծես մահուան քնով կը խորդայ և չկայ ձեռք մի, որ յարուցանէ զայն: Վայդիսի հեծութեան արձագանգներէն է մշեցի Ա արդէնիս գիւղէն, պատուակորոյս մի աղջկայ հետեւալ արձագանգը, իւր եռամսեայ գերութեան մասին, որ կը թուչի Աշոյ աշխարհէն, և անցնելով Երաստաց պղտոր ալեաց վրայէն կուգայ հանդչել արդ ի ծոցդ «Արագած» հրապարակուելու ի լուր հայութեան, յանձնելու իւր կորուսած պատիւն ապագայ դատաստանին, գիտնալով որ իւր պատիւն աղդի պատիւն է: Ծաշուառ աղջկայ արտասուաց աղի այս կաթիլները, խնդրեմ առէ՛ք, խառնեցէ՛ք Այր-Արաքսու պղտոր ալեաց հետ: Ճամանակիս աղետալից պատութեան կենդանի մի յիշատակարան է դա, թող նա յաւէտ արձանացած մմայ «Արագած» ծոցի մէջ:

Ես կը լուեմ, թող պատմէ ինքը Գիւլիղարը:

Բ.

Կօաղկազարդի երեքշաբթին էր, չը լուսնէր էն օր, որ էդ անօրէն Առուսաբէկը եկաւ վըր մըր տան: Աընք քնուկ ենք, որ
«Արաքս».

թֆանքներու ձէն զաշխարհ բռնեց, գողերն եկեր, լցուեր էին
մըր գեղ, որ ըզմը տուն թալնին, երթան: Խդոնցից տասնըհինգ հոգի
վըր մըր օդի երդըքին կ'ելնան. Մուսաբէկ, Ըմըր բէկ ու ջազոն
փանջարից կը տեսնան զիմ պապ, որ պառկուկ է, կ'իմնան թէ իմ
հօրողբեր Միրոն է, երեք հատ թֆանք իրարու ետև կը զարկին.
թֆանք մի կ'առնէ ինք, սրտին կ'առնէ, պառեկէն կը թալէ
դուրս: Խմ պապ նը կիտայ, նը կ'առնէ, էնտեղ կը մեւնի: Տաս
մարդ լէ կ'ելնան վըր տան երդըքին, որ տնէն մարդ չ'ելնայ:
Մըր մարդիկ եբոր իմցան թէ ճոճ պապս զարկուիրի, ելան ի
դուրս, կը տեսնան որ երեսուն մարդ զդուռ բռներ են. թֆան-
քով կը զարկեն մըր մարդերուն. տասնըհինգ մարդ լէ երդըքէն
կը զարկին ի ներս, քառասուն, յիսուն մարդ լէ տանքից կը զար-
կեն գեղի մէջ, որ մարդ չի գայ հաւարի: Մուսաբէկ եբոր զիմ
պապն սպանեց, ինքը, Ըմըր բէկ, ջազոյ բէկ երեք լէ եկան տան
հատլին (բակ) վերէն մէկ քանի հոգու թալեցին հաւլից ցած.
էդոնք զդարգեան բացեցին միջու դիէն. Մուսաբէկ, Ըմըր բէկ
ու ջազոն եկան վըր մըր տան, զտան դուռ զարկին, կոտրեցին,
ճժերն ամէն մէկ դիհով փախան: Խդոնք ներս մտան, տեսան որ
մարդ չկայ տունը, Մուսաբէկ կպուց զճրադ, գացին ի յօտէն,
սանդուխները կոտրեցին, բերեցին զթեռներ լցին մէջ: Խն միւս
մարդեր լէ տան մէջ ինչ որ կեր չկեր զէնոնք լցին, յետոյ եկան
գեհ զիս: Խս փախեր էի մըր քեօշկ, մերկ ենք: Փախայ զիս թա-
լեցի հողմօրս մահիճքի տակ*). Աւրանք լէ եկան, լցուան ի քեօշկ
ու զիս լինչեցին, (բռնեցին), իմ քուր լէ իմ կուշտն էր, կը բո-
ռեր: Եբոր զիս բռնեցին, ձեռք թալեցին իմ քրոջ ծամեր. քուրս
ֆլուբառ (պրծաւ), ընկաւ թունդիր: Յետոյ ես բուացի ու ձեռք
թալեցի Միրոյի կնոջ փէշ, զէն լէ իմ հետ բռնեցին. բերան մի
(մեր) գոցեցին, փանարն ի ձեռքեր զմի երկուք հանեցին դուրս,
առան գացին: Միրոյի կնիկ շատ կիլէր, զընի զարկեցին Ա.
Արգսի կուշտ, քաշկըռնեցին, էն որ մի ձեռքնի կոտրաւ: Խը չը
կրցան տարան հետ ուրանց, զէնի թողեցին: Խս բոռացի «Եա-
ման Պատո՛, զիս տարան, գու օրի՞ հաւար մի չըս ենի»: Ընի
ընձի ջուար չը տուաւ, ուշքն լնցեր էր: Առւրբ Արգսի մօտ
զիս զարկեցի գետին. ըսի «Չըմ ի գայ»: Մուսաբէկ քաշեց զիսան-

*.) Ցարդ պատմածներն աղջիկը աւարառու քիւրերէն լսած կը պատմէ:

ջալ դրեց վըս սրտիս, ըսեց. «**Քաֆրի աղջիկ**, ըզքըզի կը սպանիմ հըմկայ»: Ըմէն եկան հոնի, զիս վերուցին ու փախան. կը վաղկեն. **Փէլ (ցեխ)** ու ձուն մինչեւ ի չոքեր կը հասնին մարդու. բոպիկ ու մերկ, մէկտակ Փստան ի վըրէս: Գացին, գացին, հասան Անեղագետի մօտ, որ Առաւանիայ ու Խըլներաս միջով կընցնի: Գետն ընցան, էստեղ նստան, հանդ առան: Յետոյ բերեցին Պըմոյի աղբեր Արլցի թունպան հանեցին, թալեցին վըրէս, ուրանց եազմեներուց երկու, երեք հատ փաթեցին իմ քիթ ու բերան. բրդէ ու չուխայ մի լէ հագուցին վերուցին զիս ու գացին:

Գացինք, հասանք Տախոսանիշը, Առուսաբէկի քեօշկը: Իներել տուեց երկու խուրձ ցախ. կրակ ենեց, վառեց, ընձի ըսեց Առուսաբէկ. «Ա՞ր կեր ձըր տուն. Արիրոն ու Երեցը (աղջկայ հօրեղբայրներն են) տունն էր»: Ծանցի «Արիրոն Առուշն էր, Երեց լէ փախաւ»: Ծնձի ըսաւ «զ'յա երկու խուրձ իրիցուն եա' Արիրոյի համար էնճք պահէ, որ բերենք, իրիցենք (այլէինք). ուր գոլուաթն էր որ չը կպաւ մըր ձեռք»: Ես կիլինք, ուրանք նստան տաքցան: Յետոյ Առուսաբէկ ընձի ըսաւ «Արիրոյի հարաներ ուր էին փախած, մտած, ես էնքան, ուրուտայ, չը գտայ»: Ես ըսեցի. «Ես ի՞նչ գինենք ուր էին մտած, ես քնթթախ էի, չընք գինենք ուր էին մտած»: «**Քու հօղբեր Արիրոն օրի՞ հմալ երեց իմ գլուխ**, ես անկնիկ իմալ էնիմ հյուս սար»: Ես վախեցայ: «Ա ախենաս, չը վախենաս, ես ըզքզի ընձի աբոն (համար) իմ բերի, չըմ թորկի երթաս, գու քանց իս աղի՞կ մի տը գտնաս»: Ճըմալ խօսաւ իմ կշտի հետ, յետոյ թալեց ուր ու երկեն արէն իմ վրէն որ չը մրախմ. ինք գնաց հո-լո-նո-ներո- (կողոպուտ) մօտ: Իր անթետակ կեր մի համայիլ, գրաւ գետին, երդում տուաւ, ըսաւ էշինեներան (իւրայնոց). «Ես զուրան ձըր պատիժը տայ, թէ գուք ինչ որ բերեր էք ուղղորդ չ'ասէք»: Երդուան զիդայ համայիլ և ինչ որ բերեր էին, գրեցին ուր առեջ: Կիսեց զմարդեր, զամէն գեղի մարդ ուրիշ ուրիշ գրեց. կապեց մէկ հատ կնկայ մը Շաֆնայ մեզար ուր վրայ, ինչ որ պետ ապրանք կեր ամէնքուն տուաւ, մնաց ոսկի ու պո-տո (զարդ). էնդրանցից լէ տուաւ ամէն մէկին, յետոյ երկու ջուխտ ոսկի ապրջան վերուց ուրեն: Ամէն մէկ զուր փայլ վերուց, գրեց գիսի տակ: Փետ կպուցին տաքցան, երկու հատ լէ ուրանց պահապան դրեցին. ուրանք պառկան: Աէկ քիչ մը մնացինք. երկու հատ Ե-պս-պայ

քուրդ և մէկ հայ ուրանց կորեկի հաց և մածուն բերեցին: Առուսաբէկն ելաւ, առաւ մէկ կորեկի հաց մը, եկաւ ինձի մօտ, ըսաւ «կե՛ր» ու նստաւ քովսի, յետոյ ըսաւ «Շնձի կը հաւնի՞ս, չըս հաւնի»: «Աղա՛, ըսեցի ես, խեղճ եմ, հեսիր եմ, գու օրի՞ կերնես հըմալ, թո՛ղ զիս երթամ»: «Խմ պապու գլուխն եղնի ըզքպի հըրի յաւիտեան չըմ թորկի»: Ուրիշ քրդեր լէ կ'ասէին «Ձմո՛ղ թըզ երթայ, քիչ բանէն շատ բան կը սուքուի»: «Ի՞նչ շատ բան կը սուքուի, հերսոտաւ վըզ քրդերուն, էդի աղջիկ մ'է, հուքմաթ պըստի անկաջ ենէ ըդ աղջկայ խօսքին. հուքմաթ չընցնա ըդրա խօսք»: Խդհաղ մըր տան գրքեր բերեց, գրեց իմ կուշտ իը ժժէր (զրոյց կ'անէր). Ըսաւ «Դուռ գինաս կարդալ»: Ծափ. «Չե՛, չըմ գինայ»: Յետոյ Արլոյի Արմօն կանչեց, ըսեց «Երկու հատ փէտ բի, կրակ վառենք, զիդա գրքեր իրիցենք: Խնչոր ծանդը գիրք էր, զենոնք վառեց, մանդրներ լէ բրդեց, թողուց հետ ջրին: Խդհաղ եկաւ դաստիճէժ (լուացումն) առաւ, և լընճ (աղօթք) ենեց, ու հեղ մը լէ եկաւ քովսի, գոշակ մի (անկողին) թալաւ իմ կուշտը, զուր արծթէ թուրն ու իր ֆըրշանկները դրեց ուր գլխի տակ, գրեց զգլուխ իմ չոքի վրայ, ըսաւ, «Օխմ գլուխ քթվայ»: Ես լացի ու ձեռք չը տուեցի: Հերսոտաւ, «Տե՛ս կրակն իմ կուշտն է ըզքպի լէ կ'ենեւմ Արգաւնուց հայի պէս*»): Ենկարելի բան էր, ես կիլենք, ինք կը հերսոտէր, «Քրդու գլուխ է, ձեռք չըսիտայ, քու սիրտ չերթայ, չըս գինայ որ ըզքպի ինձ արով իմ բերի»: (Աղջկան հառաչներ):—Խդհաղ ձեռք թալեց զզովսի, բերան թալեց աչքսի, խածեց, ես բոռացի՝ աչքսի թողեց: Ծնձի ըսաւ, «Չելնե՛ս իմ կշտէն երթաս ըզքպի կը սպանիմ»:—Խնքը էդ տեղ քնաւ հըրի կէս օր: Ելան զուրանց հուրումուր վերուցին. ուրիշ սար մը գացին. Ես լէ հետ ուրանց բոպիկ, ջուխտ մը չարուխ ուզեցի, բոպիկ չընք կըսնի քելի: Արագ-արաց չարուխ բերել տուեցին, զիս հագլցին, ելան Օվնդասին-րայ ժուլը (մացառներ) դացին. անձրև զարկեց վըզ ուրանց, մտանք քոլերու տակ: Յետոյ Առուսարէկ զկէս ճամբեց Արտաֆ. երկու բեռ ցորեն զուով բերեցին, ճամբեց Խառնայ ջաղաց, աղալ տուաւ որ հաց ենեն. կէս մը լէ առան զիս դարձան եկան Տախտանինը, ուր քեօշկ: Կէս գիշեր էր, ըշնիար

*) Զոր ինքը մի քանի ժամանակ առաջ այրել էր մի հայ Յովհան անունով:

Ներ կայնան դուռ, Առուսաբէկ զիս առաւ մտաւ քեօշկ. խոտ
թալաւ օդի մէջ, գօշակ լէ թալաւ վրոէն. ես խաչկպայ, կայ-
նայ օդի դուռ. ինք պառկաւ, ես չը գացի: Ընծի ըստ «Քաֆրի
աղջիկ», ես քըզի կը խանչիմ, դու օրի՞ չըս իգայ»: «Ճուր ի գամ»,
ըսեցի ես: «Ես իմ մօտ կը խանչիմ դու օրի՞ չըս իգայ»: Գի-
շեր է, ուր փախչիմ էդ անօրէն գաղանի ձեռքից չըմ գինայ, ես
լէ իմ մտաց մէջ ըսեցի «Ո՛վ ՏՇՇ Աստուած, ես ի՞նչ ենեմ իդա-
անօրէնի ձեռք. էս Աստըծո՞ւց էր թէ մարդուց որ իմ գլուխն
իդա ոյինն եկաւ»: Ճեղ մը լէ կիլենք, ինք պառկուկ հեղ մը
լէ ձէն տուեց—«Քաֆրի՝ աղջիկ, դու հմալ կ'ենիս որ ես իգամ
քու մօտ. դու ընչի լու հառնի, ո՞յ լու է գայ իմ ճափ պառնի, քու
քէփ ընծի չի ուղէ. հմալ կ'ենիս ըզքը կիտամ ըշխեսներու
ձեռք»: Եշաւ քաշեց զոռովէն, տարաւ պառկեցուց ուր մօտ:
Ես կիլենք, կը ծեծկուենք, բայց չը կրցայ ուր վըրէն: (Ճա-
ռաշնե՞ր, անհուն հառաչներ)....:

Դըռ. աղօթրան չըս բացուեր էր, քեօշկի կուշտ ջուր մը կեր,
ես գացի էնտեղ վլացուայ, աղօթք ենեցի. հոտի (այդտեղ) մէկ
քուրդ մը կեր ուրանց ընկեր, գնաց գանգատ երեց, թէ գացեր է
աղօթք կ'ենէ: Ես դարձայ ուր մօտ քեօշկի դուռ. ինք իմ ձեռքս
բոնեց, ըսեց «Դու օրի՞ կ'երթաս ի Կեմրութայ դէմ խաչ կը
հանես». ու դարձաւ քրեց զ'Ամրութ. ետքը եկան, կրակ վա-
ռեցին, տաքցան, հրի լուսցաւ: Ասադոն, որ չըմ ըսի, ընդուր
ըսեց «Գնա՞ ջուր բե՛ր, զգրա գլուխ լուանք, հըյդայտեղ ֆըլի
լէ կայ, զիմ վրայ իշ նարիճ (կը պասկեմ): Վուրդը գնաց պուտկի
համար, ես բուացի, լացի ու ըսի «Ես չըմ տաճկնայ, ինչ կ'ենէք
Աստուածոյ սիրուն երէք, ես հեսիր եմ ընձի թողէք երթամ»:
Վրտեր լէ ընկան ըտրա ոտքն ու ձեռքը, որ զիս թողէ երթամ:
Էլէ (բայց) չը թողեց. «Խմ պապու գլուխն եղնի». ըսեց, եա
ընձի է, եա իմ աղբօր ֆըլոյին»: Խորհուրդ ենեցին ուրանց մէջ,
որ ֆըլոյի վրայ մարին զիս: Խութն էր, ճամբեցին աղբօր ետե-
ւէն: Ես հեղ մը լէ կ'իլենք ու կը մորմըքենք. Առուսաբէկ լէ
ջուխտ ոտով քեօշկի գռան կը զարկեր, կը խնդանէր: Աէկ էլ տե-
սանք որ պըխայ (խորվու) մը բերին և շալակ մը կարայ. փայե-
ցին ուրանց վրայ: Առուսաբէկ կտոր մը խորվու բերեց ընձի
տուեց, նստաւ իմ կուշտ, ըսեց «պաս կի»: «Աղա, ես ըսեցի,
ոլլայ որ ընձի սպանիս, զիմ պաս չըմ ուտի»: Ես որ ըսեցի

Հմալ, ընձի ըսեց «Աիհ՝ քաֆրի՝ աղջիկ, սար տեղ պաս կը պահին»:—«Աղա, ես չըմ ուտի խորվու»: Օպաս քֆրեց էս տեղ, ու լոյնաց (ապտակ) մի զարկեց անկաջիս, զիսանջալ քաշեց, ինք բիոյ (անձամբ) ճղրդաւ գրեց իմ բերան: Ես իմ մտքէս ըսեցի. «Ով թագաւոր Աստուած էդ ի՞նչ բան էր իմ գլուխն ելաւ, էդի եղած բան է ձո՞ն պասն ուտել, ով Քրիստոս, ի՞նչ կ'ենես իմ մարմնուս գլուխն երէ, զիս իմ օրէնքէն իմ հաւատքէն չը հանես, չը դարձուս»: Ետք լէ մածուն բերեց, կերցուց զիս ու ելան առան զիս գացին, հըր իրկուն սարեր ոլորցուցին: Իրկուն տարան զիս Արքունեց. մէկ անհատիկ քրդու մը տունէ, գըուկէսներուն ըսեց «Օքդի լողկցուցէք են (կամ) իմ վրայ, են իմ աղբօր վրայ տը մարիմ»: Տներին զիս լողկցուցին, Զու (տեղաշոր) թալեցին հըրի լուս պառկեցայ: Ազօմբնեխառ կանչեց զիս Մուսաբէկ: Խլայ, գացի. շիշ մի տաճառ ձեռք՝ նստուկ էր կրակի մօտ, քակեց, լեցուց մէջ կոտկի (փոքրիկ աման) մը, ըսեց «Աիհ», ես հեղ մը լէ ասպասայ (յամառեցայ) չը կերայ. «Ոնձի լուսմըթի հաւէս չը կայ, դուր չի կայ», ըսեցի. չը կերայ. բլէ քիչ յետոյ հեղ մը լէ կերցուց: Ես երկու գիշեր ընցաւ, աղբեր դըռ չըր եկերի, Խութն էր: Հեղ մը լէ առան զիս ընկան սար ու ձոր, հըրի իրկուն ոլորտան ձներու մէջ: Իրկուն որ եղաւ զիս Մուսաբէկ գրեց երկու քրդու հետ գացինք Փառչվանդ Շեք Կառրու տուն: Հոդի նստայ, հանգ առայ, տեսայ Շեխ մտաւ գրսէն, զիս թալեցի Շեխի ոտաց, լացի, բոռացի, ըսեցի «Օիս Խլէ Մուսաբէկի մօտէն հինգ քիլայ ցորեն կը ձամբիսեմ կիտայ, որ Միրոն լսէ տասը քիլայ կիտայ»: Շեխն ըսեց: «Լաօ կը թալիմ զիս վըս ուր ոտայ, կ'ըսիմ. իմ խօսք ընցաւ, կընցնի, չընցաւ ես ի մալ ենեմ»: Մանցինք հըրի առաւօտուն, տեսայ ակրտանի էր (նախաճաշի ժամանակն էր) Մուսաբէկն իր ըշխեսներով եկաւ ըդ Շեխու տուն: Շեխը գնաց. թալաւ զինք վըս Մուսայի ոտաց. դարձաւ, եկաւ ըսաւ, «Չարայ չկայ լաօ, իմ ըուզան չընցաւ, ըսեց են իմ վըրէն կը մարեմ են իմ աղբօր վըրէն»: Հեղ մը լէ Շեխուն ըսեցի «Թարդ ուր վըրէն չը մարէ, ինչ կ'ենէ թըդ ենէ»: Աըհաթըմ մանցինք, աղբերն եկաւ: Աղբերն որ եկաւ, ուր դաւին սուփ եղաւ (իւր ուղածը վերջացաւ): Օօւով, քաշկըռնելով եկան զիս տարան որ մարեն վըս Ֆըդյին, ես չընք երթի: Մուսաբէկ թաք մինակ, արծըթէ թուր վըրէն, եկաւ, ընձի ըսաւ «Ես մարդ

կը ճամբիսեմ քու մօտ, դու չըս ի գայ, չըս գինայ անսպանել դու
իմ ձեռքէն չըս խըլըսի, կը սպանեմ. կ'երեցեմ; կ'ենեմ Արգաւ-
նուց Յովհանի պէս»։ Ես լէ ըսեցի. «Ես իմ ձեռքով զիէտ
կը ժողվեմ, կ'իրեցես, երիցէ»։ Ինչ երի չեղաւ. եկան գրկեցին,
տարան, քոման (ժողովեցան) վըր իրար, մար (պսակ) իրեցին ուր-
բանք ուրանց ու փըլան (ցրուեցան)։ Առուսարէկն եկան ձեռք
զարկեց իմ պառեկին, ըսեց, «Եղանք ես ու Արիրոն խնամի, մը-
կայ իմ գովլաթ ըմէն լէ Արլոյին է»։ Ու զիս գրեց երկու քրդի
հետ, ճամբեց Համապատիւր ուր քրոջ Արլյրի մօտ. Աանցինք դամ
մը (քիչ ժամանակ) հուգայ, Առուսարէկ, ըմէն եկան։ Իրկուն բե-
րին մէկտեղեցին, ես լացի։ Արլյրին երկու շախայ զարկեց ընձի,
տուեց ուր աղբօր Ջըղջի ձեռք, տարաւ։ Են գիշեր շատ ծեծ-
կոտեց և ինչ ենեց, երեց... (Հառաջներ, մտաց ապշութիւն, ար-
տասուալիր աչքեր)։

Աանցինք լուսուն, ուրանք քոման ելան, գացին սար, չորս
օր չեկան սարէն, ես մանցի Արլյրի մօտ։ Օր մը լուսմըթի
դըռկէք գացին ոչխար կթել, ես լէ մտայ տան մէջ, սողնակ փա-
կեցի, արախնձիս իջուցի, ու բանձր ձէնով լացի ու աղօթք ենեցի.
մէկ քուրդ մը տեսեր էր զիս որ աղօթք կ'ենենք. խաբար տուեց
Արլյրին թէ հընդա աղօթք կ'ենէ։ Արլյրին եկաւ, զիմ գին
քքրեց և թալից առջև կոնդուռեսներուն ու ծեծեց. իմ աչքն
էս աեղ սպիտկաւ։ Ես էն վախտն էր, որ քրդերու առժին (ծո-
մապահութիւն) սկսաւ։ Առուսարէկն եկաւ իմ կուշտ ըսեց որ
ոսժի պահեմ, լըմէժ ենեմ ու ինքը գնաց։ Տեղն եկաւ, տուեցին
ընձի սոժի պահել ես լէ առջի օր պահեցի, խելքսի խոպոս
(կամաւ) ընցուցի, որ ոսժի չը պահեմ։ Երկու օր հըմալ ընցուցի,
օր մը լէ պահեցի, մէկ էլ օրը կերայ։ Արլյրին կոահեց, հեր-
սոտաւ, ծեծեց և ըսեց թէ կը գանգըտիմ բէկին, մէկ էլ դըռ-
կէք շատ աղաչան, ըսեցին թէ խեղճէ, մ'ըսի. և տուեցին կերայ
զոսժին։ Վնդրայ ետև կերայ ըմ օր։

Արը Օատկի օրերն եկաւ. էդ Արլյրի տուն կեր մէկ հայ
կնիկ, էդ օր լէ Աւագ հինգշաբթին էր, կնկան ըսեցի, ի՞նչ
կ'եղնի երթաւ Խոութ իմ քեռեսներու մօտ, թըղ երկու հատ
հաւկիթ պատարագի առաջ մաս ենին, ընձի զրկին, յետոյ կապս
ենեն, որ էս քրդերու բերանը փակուի չխօսան իմ վրայ։ Անիկը
գնաց մասնաւորելու. Օատկի իրիկուն իթում երած. էր, և Յա-

յու-Աւան լուսուն իրիկուան դէմ եկաւ, երկու հաւկիթ բերեց եկաւ, ըսեց թէ «Ուլայ կապս շատ երած է և քու քեռի երեց վիճակի թալեր է, պըտի դու ազատուիս տասն օրէն ետքը»։ Երկու հաւկիթն առայ, դացի մեղրափեթկներու խեչ, նստայ ու լացի, աղաչայ որ Վուտուած ընձի մի չարայ ենէ։ Հանի մէկ հաւկիթ կերայ, մէկ էլ լէ պահեցի, չընք խիմիշնի ուտի, եգքը զըն հաւկիթ լէ կերայ, կապսն ի մնաց ձեռսի, չընք գինի (չէի գիտեր) ո՞ւր պահեմ։ Փեթակ մի կեր, թալեցի էդ փեթկի ետև։ Վուտուարէկ հեղ մը լէ եկաւ սարէն, իմցաւ որ ես լըմէժ չընք ենի, հըֆ (սպանալիք) գրեց ուր քրոջ թէ զըզի տաս լըմէժ եւնել թէ չիտաս կը սպանիմ։ Խդ կնիկ որ էդ տեղ բետանայ (աղախին) չէր, էն լէ մնաց էդ տեղ ինձ չետ ամիս մը լման։

Խդէն օրերն էր երբ Վուտուարէկը պըտի երթար Քաղաք (Բաղէշ)։ Հմալ հրամանք էր եղել։ Խդ վախտ զիս կուզէին Տըլըդուոց (քիւրդ աշիրաթ) մէջ ճամբել, որ չը բռնեն. Պըզոն չը թորկեց, ըսեց «Խդ իմ արզն է»։ և զիս ճամբեցին Շեմունան։ Ա եց օր մանցի էդ տեղ։ Վուտուան Ռամէկ (պատուէր) էր երէ որ ես լմէժի խօսքերն ի սորվիմ։ Խերեցին լըմէժի խօսքերն ի սորվեցուցին։ Շնձի հըմալ կ'երւար թէ էդ խօսքերն որ սորվեմ ընձի ու իմ հաւատքին մեղք է, խաստու հիւընդցայ, «սանջու եմ եղի» ըսի, զգուկէն խարեցի։ Խերին տուն որ պառկեմ։ Ժալին զտեղ, ես պառկայ։ Կ'ելենք կը բոռբռւենք խաստու, իմ ձեն զշաւէն (օդ) կը վերցուցէր։ Շատ բոռացի, բերեցին ցախ կպուցին, կրակ վառեցին, զիմ պառիկ ճմռեցին։ Պառկայ էն օր։ Օլուր լուսուն ջուաբ եկաւ թէ ըզքզի կը տանին խըներ։ Խդ օր եկանք Հաւատիք։ Երկու օր լէ մանցինք հըբամ լէ ճամբեցին երկու քուրդ ու ձի մ' եկան զիս տարան խըներ։ Հըբի էս օր զիս պայշեայ (հետիոտն) կ'ոլեցուցեն սարեր։ Ես օր եկայ խըւներ Վուտուարէկի քեօշկը զիս դրեցին։ Վընի մը օր մանցի, տեսայ Վուտուարէկն եկաւ Քաղքէն. Որ հասաւ քեօշկի դուռ, ես հասայ ճըգէն (զէնքեր) առայ ուր ձեռքէն, ըսեց «Վ. Փերիմիմ հարար ժիր է— վախտ վախտ հայերէն կը զրուցէր։ — Օր մը լէ տեսայ հայու կնիկ մը եկաւ ընձի խարար տուաւ, ըսաւ. «Օքու պատրաստութեն տե՛ս, ասկար (զինուոր) կիգայ ըզքզի կը տանէ։ Խս էն ժամանակն էր օր Վուտուարէկ կ'երթէր Ստամբուլ եկաւ, ընձի ըսեց «Լա՞ լըմէժ ենես, Հայութեն քո մտքէն թողես, երեց մերեց կիգան ըզքզի

կը համողին, անկած չը կոխիս, թէ ըզքզի տամ լէ, մըկայ ո՞ր քու վրայ կը հարցու: Ուլայ Հայերու ինադուն հըմայ Արդուում հասայ, հազար զուրուշի շոր կը կտրեմ, վացուն հատ լէ գլխի ոսկի կը դրկիմ» ու գնաց:

Ընդրայ ետև մէկ երկու օր ընցաւ, ես ջուաբ ճամբեցի իմ հօր տուն թէ «Ո՞ուսան դնաց օրի՞ չըն հարցու իմ վրայ»: Յուաբ եկաւ ընձի թէ «Իւլլքցւոց իսուք էինք ըսել, կիգեն ըզքզի կը տանեն, մըկայ որ Իւլլքցիք գան, մընք ըզմըր գործ կը կորցուցենք, պըտի հուքմաթին ըսենք, ինչ որ կ'եղնի, հուքմաթով կ'եղնի, քո մամ լէ գացերէ Իաղէշ և Ո՞իրոն ու Ո՞անիկ Պրիգորը գացերեն Ո՞ուշ»: Օչդ որ լսեցի, ես դայիմցայ: Վրդերն երոր իմցան թէ Ո՞իրոն ընձի աբով գացերի Ո՞ուշ, զիմ ոտք ու ձեռք կապեցին, տարան զիս սար՝ Տախտակներ:

Ա եց օր մնացի, Ոլին (կուսակալ բաղէշի) մուտուուն ու Ո՞ուսաբէկի հօղբէր Ո՞ահմատ բէկ զրկեր էր ինձի համար. Յ ըզոն լէ ըսեր էր թէ 500 լիրայի ապրանք առեր, փախերէ, չընք գինայ ո՞ւրէ գացեր: Ընդոնք երեք օր կը մնան էդ տեղ, հըբամ լէ կերթան. Քրդեր լէ նոր առան եկան զիս Խըներ: Ճամբին տեսայ որ ցորեն ու գարին կըռթեր էր, լսեցի «Ո՞վ Տէր Աստուած, ես որ գացի դըռ ձուն կար գետին, մըկայ ցորեն լէ հասաւ, ես դըռ գերի եմ»: Եկանք գեղ, հըրի լուսուն էն օր իմ քուն չերկաւ: Երոր մինակ եղնենք, աղօթք կ'ենենք, իմ քիթ ու բերան կը զարկենք ի գետին, որ Աստուած զիմ ձէն լսէ. յետոյ կը շըռ ջենք զշորերա, կը լուացուենք, որ քրտութեն երթայ ինձնէ ու ես իստըկուիմ: Լուսմըթին հայու մը տղայ ընցաւ քեօշկի տակավ, լսեցի «Տղայ, չըս կրնայ երկու հատ ցորենի կոռութ բերի»: Տղան գնաց, բերեց և փանջարից թալեց: Ես առայ իմ քովս, սուր քեցի խաչ, դրի մըջ թասին, գացի լուացուայ ու եկայ, իդհաղ չոքայ ըդրայ առաջ, լացի ու աղօթեցի, չէ՛ մըթ երկրի մէջ կայ պայչ (խաչ*), ես լէ կ'ալջթենք, որ գառնայ խաչ, ընձի ըսն մը ենէ. հեղ մէ լէ կը տեսնենք որ կոռութ էր: Երկու օր մնաց հըմալ կոռութ է ինչ, ու յետոյ զկոռութ կերայ: Հըբամ լէ տեսայ որ անծեղ մ'եկաւ նստաւ վըր փանջարին. «Եաման, անծեղ, Աստուծոյ հաւորիկ, գելակ (աղաչանք) մ'երէք Աստուծոյ, բըլքի

*) Աւանդական պողէ խաչ, որ մանկանց աղօթքով խաչ է դարձել բուն և հրաշք է գործել.

(գուցէ) Աստուած անդարձին դարձ ի տայ, զգելին գոթուց ազատի:
Տեսայ որ անծեղ մտաւ ներս, ես հասայ դռան եղև բռնեցի զան-
ծեղ, լացի. Ես գինենք թէ ետի կը զրուցէ: Յետոյ անծեղը ֆը-
լլուաւ (պիծաւ) իմ ձեռքէն, ոտքը ասրուաւ ձեռքիս մէջ, ես վա-
խեցայ թէ ընդրուր ոտքը կոտրաւ, իդհաղ (այդ ժամանակ) Աս-
տուած ընձի կ'անիծէ, զիս չազատէ հոսկուց, որ ուր հաւորիկ հմալ
եղաւ: Մանցինք մէկ քընի օր լէ ընդրայ ետև, լսեցի որ Միրոն
ասկար (զինուոր) կը զրկէ, որ առնէ երթայ զիս: Հեղ մը լէ առան
զիս գացին ուուշնելու (թափառական քիւրդեր) կոներու (վրան-
ներու) մէջ: Եդ օրեր ընձիկ երազ մ'եկաւ. «Ես ինչ որ մըր
տունն ենք, թաժայ կալուկուտ էր, կալեր ձգած են գետին. Մի-
րոյի կին, չէ ընդուր ձեռք կոտրաւ, թալուկ էր գետին, կը տքէր:
Գացի հոդ, ուր աչք որ յիս առաւ, ըսի «Ղազոն, իմալ կ'եղնի
էսպէս, հըր ե՞ր ես մնամ էս անօրէններու մէջ. հըր ե՞ր զիս չըք
ազատի»:—Ղարձաւ ընձիկ ըսաւ «Հոցկայ (աստի) հըրի աշուն
թէ դու չը պիծար, թըլ Աստուած զիմ երկու լուսն առնէ»: Ես
էստեղն ելայ գացի օդի (սենեակ) գրան մօտ, ինչ որ Մուսա-
բէկ կայսուկ էր իմ առաջ, քուրդ մը լէ ընդրայ կուշտ, իմ մամ
լէ ետև: Ըսեցի «Կանէ՛, եկ թալէ՛ ըզքզի վըր ուր ոտաց, որ
զիս պրծուցի»: Իմ մամ չիշնցաւ: Գացինք օդէն, տեսայ որ
իմ սպանած պապն եդ տեղ նստուկ էր բուխարիկ (վառարան պատի
մէջ) կշտին, խայլոնը ձեռք, չըր խօսի: Մուսաբէկն իմ մամուն
ըսեց «Ճորկիմ զքո՞ւ աղջիկ, չը թորկի՞մ»: Ես հեղ մը լէ
ըսեցի «Ճա՛ զքի վըր ուր ոտաց»: Մամն թալեց. բէկն ըսեց.
«Տուեցի Աստուծոյ խաթըրը», ու ելաւ գնաց: Ես իմ մամուն
ըսի «Կանէ՛, խնդիրք եմ ենի, երոր ես ազատուիմ, պըտի աղօթք
էնեմ հըրի ոլուր օր էն գահ»: Հալը (իբրև թէ) եկեղեցի կ'եր-
թենք, խրտայ, իմցայ որ երազ էր»:—Ըսդիր առան, եկան զիս ի
խըւներ: Ելայ, եկայ քեօշկը: Եդ տեղ առու մը կեր, թռայ,
պատայ գետին երեսս լուսպաւ (քեղըթուեցաւ), ուշքս ընցաւ,
բերին, զրեցին զիս մէջ տեղին մնացի լուսմըթին՝ երեսս ուռաւ:
Տերեցին բուրդ, եղի մէջ խանձուեցին, գրեցին վըրէն, ուռեցքն
ընցաւ:

(Օր մը լուս երկուշաբթին նստուկ ենք փանջարի դիմաց, գլուխսի
+Ենիշեցի (ծուեցի), իշկեցի երկու հատ ֆասով մարդ երեւաց, մէկ
մը լէ իշկեցի՝ տեսայ որ սպիտակ գլուխ մը լէ ընցաւ, Հաճի

Տայիբն էր. (Վշյ երևելի տաճիկներէն մին). ընդո՞ք որ ընցան,
զիս տեսան: Աւրանք ընցան ներսի դին, ես զիս թալի գե-
տին, խաստու քնայ: Տեսայ դըռքէք եկան, զիս կանչեցին. «Ե-
լի՛ր, երթանք ներսի դին, Զ անտըրմայ եկաւ, Զ ըզո՞ն ըզքզի
տեսնայ կը սպանէ»: Օ իս առան, դացին որ իշլցնեն մղաղեն
պահէն, բլէ ասկար զիս տեսեր էր: Հասայ Շարանջի (սանդուղ)
գլուխ, տեսայ զհաճի Տայիբ ըսեց. «Հայի աղջիկն ետայ է».
ըսեցին դըռքէք «Վէ»: բայց ես ըսեցի «Ե՛ս եմ»: Բռնեց զիմ
ձեռք առաւ տարաւ օդէն: Ինքը նստաւ, զիս կանդըցուց հար-
ցում ենելու: Ընձի ըսաւ «Ես քի աբով իմ եկի, դու հայ ես,
քուրդ ես»: Ես ըսեցի «Ես քուրդ եմ»: Ըստ «Ես ըզքզի կը
տանիմ հուքմալթ, Վիրոն ու Օմար բինբաշին դաւայ են հըդ-
իրար բոնած քու աբով, Վիրոն կըսէ. «Հայ է», Օմար կըսէ,
«տաճիկ է»: Վիրոյին լէ գրֆ գրած էնտեղ, ինչ դահ որ աղջիկ
քուրդ եղաւ, ըսեր են. ըզքզի կը սպանենք, Լաօ կիդա՞ս, չըս
ի գայ»: Ես ըսկի չընք աւտընի թէ հուքմըթի երես տ'ելնենք,
խաստու ըսեցի «Օ իս կտրտէք ես ըստեղաց չըմ ելնայ, երկու
հայ, երկու քուրդ թըդ եփան ըստեղ, ես թախրիր կիտամ, թըդ
երթան—Ես ուրանց տակը կ'առնենք, տեսնենք ի՞նչ կայ. ի՞նչ
չըկայ»:—Յետոյ ընձի ըսաւ. «Ես ըզքզի հայշամ (անպատճառ)
կը տանիմ, դու իմ աղջիկն ես, պըս ըզքզի տանիմ երթամ զիմ
երես սպիտկըցում, դարձում ի դամ»:—«Իտու իմ պապու տեղն
ես, ես քուրդ եմ, ես հայ չըմ եղնի, կիդամ, տար ու դարձու բեր»:
Խդհաղ ընձի հաւատարմութեն երեց, գացի իր ձեռք, (համբու-
րեցի իւր ձեռքը), տուաւ խրատ, որ չը գառնամ, չեղնիմ Հայ:
Ես բանի վըբէն ես շատ խնդացայ, եբ որ իմցայ որ զիս հուք-
մաթ կը տանին: Գացի ուրան տեղ թալեցի, ինքը գնաց պառ-
կաւ: Վէկ քիչ ըմ պառկաւ, քնաւ. մէկ էլ տեսնամ Զ ըզո՞ն գո-
ղութեան գացեր էր եկաւ, իմցաւ թէ ընձի հուքմաթ պըտի տա-
նին ըսաւ Վուսաբէկի կնկայ մամուն, որ էդ օր էդ տեղն էր.
«Ես զիս կըսպանիմ, մատ մատ կեղնեմ, զընի չըմ թորկի որ
հուքմաթ երթայ»: Ին լէ ըսաւ «Լաօ երթաս բոնուիս լէ կը
տանին, չերթաս լէ կը տանին. վախնանք աղջիկ լէ էն տեղ ըսէ
«Հայ իմ» (ես գողտուկ կը լսենք), էն դահ դու լէ կ'երթաս
մըր ձեռնէն, աղջիկ լէ»: Ելան փլան իրարուց գացին: Զ ըզո՞ն
եկաւ հարցուց ընձի «Քզի ո՞վ ցուցուց»: Ես լէ ըսեցի իմալ որ

Եղեր էր: Յետոյ ըսաւ «Հուքմաթ կուզին, Ե՞ս երթամ, գո՞ւ երթաս»: Ես ըսեցի «Կը դու գնա, Նը ես երթամ; մըզի ի՞նչ գործ կայ հուքմաթ». Հայեր հայուլ (մե՛ծ մարդիկ) են, թըլ իդան հոդայ, ես կ'ըսիմ թէ քուրդ իմ, թըլ ելնան երթան, (կուզենք զտակն առնել): Ես ըմէն ձեր անխելքութենէն եղաւ հմայ, օրով առէջ դու ընձի ըսեցիր ըզքզի կը տանեմ՝ Հ եխու տուն թախրիր կիտաս, որ տաներ, մըկայ փրծեր եկեր ենք»: Տ ըզոյի սիրտ դայիմցաւ իմ քրտութենի վրայ: Լուսմըթի զիմ գլուխ վլացին, գրին հետ հաճի Տայիրին, ընկանք ճամբայ: Աէսօրին հասանք «Արշն», գացինք իջանք Հ եխ Այիդի տուն: Ես տեղ գոկէք թափան վլրէս: Հիւանդ դոկէ (քրդի կին) մը եկաւ, զիմ գլուխ բացեց, ձեռք մաժեց վլր գլխուս ու ըսեց, «Հմայ կ'ենեմ որ շան (եանի Հայու) ոսկոր ուրնէ փախնի, եղնի քուրդ: Խղհաղ բերեցին մեծ հինք (քրդի աղջիկ) մը հետ զիս պար խաղցուցին: Խաղացի ու նստայ: Եդ օր էդ տեղ մանցինք. եր որ լուսոյ աստղ ելաւ, ելայ գացի դուռ վլացուայ, Լոթրան ըլնք ճանչնի, լուսու աստղի դէմ կայնայ, աղօթք ենեցի ու ետ դարձայ: Մարդ զրկեցի Հաճի Տայիրին ըսեցի «Լուսէ թըլ ելնի երթանք»: Հաճի Տայիր զրկեց երկու մշակ զձին թամբել տուեց, ըսեց «Պուք գացէք առէջ, ես հաց կ'ուտեմ կիդամ»: Մընք քիչ մը հեռացանք, արևն առաւ, նստանք ըռհաթանք Հաճի Տայիրն եկաւ, ելանք ընկանք ճամբայ գացինք: Դամբին ընձի ըմէն հեղ կը խրատէր ու կը հարցուցէր, «Լա՞ դու քո բըզդի տէ՞րն ես»: Ես լէ կը սենք. «Օրի՞ աշխարհ խաբնութենովէ ես ըզքզի ըլմ խաբի, ես քուրդ եմ ու քուրդ եմ»: — Գացինք, գացինք քարվընի մը թօզ ելաւ, Քաղքէն հաց կը բերէին, կը տանէին. տեսայ որ մը գեղացիքն էին, մօտեցայ մը գըզրի ձէնն ընկաւ անկաչս, ես ճանչցայ, Խաչ հանեցի, ըսի «Պրո՞»: Են ըսեց, «Վահ, Վուշն, դու Տրեշտակ էր երկնուց իջար»: Ես ըսի «Քաշուի որ քրդեր չը տեսնան, ետեանցն են, որ շքով չընկնեն (չկասկածին) վրէս»: Ըտի քաշուաւ: Տեսայ եկան մէկելտոնք, թափան իմ ձիու բուլոր: Ես ըսի. «Ես հայ քրիստոնեայ եմ, մը վախենէք: Իմ հօղքոր տղայ Պրիգոր մըջ էգոնց էր, զուր հացն ու տաւար տուել էր մէկելտոնց, ինքը ընկել ճամբայ, իմ ետեէն հասեր քաղաք: Երոր քաղաք հասանք, զիս տարան Հ եխ Ամինի տուն: Պրիգոր լէ գացեր էր ի դուքներ (վաճառատուն), Հայերուն խարար տուեր

թէ զաղջիկ բերեցին: «Քիչ մը նստայ չը նստայ, ես տեսայ Շենու լամուկ մտաւ գոնէն ըսաւ. «Առու մամ հընդէ (ահա) հոտայ, որ քու մամ ի գայ, դու խաչ քՓրէ, չըսիս դու իմ մամն ես, ըսէ ես քուրդ իմ»: Ես լէ ըսեցի, «Ես օրի՞ քՓրիմ, ինքուր տընին, ես իմ տընին»: «Առու իմ մամն եկաւ, երկու մշապիմ (սպայ) հետ, զիս տարան իմ մամու քով: Եբոր զիս կը տանէին, ես խանչեցի «Քրիստոն Աստուած ընձի լալ չի տաս իմ մամու քով, որ էս անօրէնք իմ վրէս շքով չընկնին. հըրի ես ազատուիմ: Իմ մամն որ զիս տեսաւ, զինք թալեց իմ վզով, ես ուր ականջովի ըսեցի Աւանէ ըսկի մի' վախենայ, ես Քրիստոնեայ եմ, հազար դիր լէ մնայ ես Հայ իմ»: Ընդտեղ իմ մամն ըսեց. «Լա՞ ընձի քՓրէ որ շքով չընկնին»: Ես ըսեցի «Ուլայ չըմ կրնայ, վախենամ քՓրեմ, քու խաթըր մնայ»: Կըսենք ու կը քելնք: Խդհաղ բանձր ձէնով ըսեցի իմ մամուն «Օրի՞ ես ընկի իմ ետև, հըրիր տարի մնայ, ես քու աղջիկ չեմ, հրի մըկայ քումն էի, մըկայ չէ»: Իմ մամն ելաւ, գնաց: Օխս հանեցին վեր, ընձի ըսեցին «Ափարիմ, շատ լաւ երեցիր, որ հուքմըթի դուռն էլ հմալ ենես քու երես սպիտակ»: Իմ մամ հեղ մը լէ եկաւ: Գացի իմ մամուն ըսեցի, ընձի գըֆըգեր ին, «Դուռ երկինք լէ ելնաս, մըր ձեռքէն չըս խըլըսի»: գէ՞հ գնա՞ շատ Հայ ժողվէ, որ երոր թախրիր իդամ, զիս առնեն ի գան»: Իմ մամ լէ ըսեց. «Շատ հայ կան ժողվուկ, հմայ դու զայիմ կեցի»: «Դրիգոր լէ էնտեղն էր. էն լէ ըսեց, «Լայիմ կեցի զՉոլոն (գոմշի անուն) մատաղ եմ կանչի»: Ասդեր լէ գացին: Լուսուն Հաճիբն եկաւ, զիս խանչեց համոզեց «Լա՞ ան չեղնի ըզքզի շաշ ենիս. իմալ որ քու մամուն ջուաբ տուեցիր, հմալ էլ էնտեղ տուր»: Ինքը գնաց հուքմաժ, զիս լէ հադրցին, դրին վըր ձիուն: Ոտս եբոր դրի վըր զագուին (ապստանդակ), ըսեցի «Եա՞ սուրբ Կարապետ, եօթը տարի զքու պաս գը պահեմ, զիս ազատէ, ո՞վ Քրիստոն Աստուած դու օդ նական եղնիս. Քու զօրութեն շատէ»: Հեծայ, սպիտակ գլուխ մոլէ մը առեջս, մէկը էս ոտաց դին, մէկը էն ոտաց, մէկ լէ բռնեց ձիու գեամը ու գացինք: Գացինք սարայի դուռ իջանք, շատ մարդ կեր, ես իմ սրտովս գինամ թէ էդոնք որ քոմուկ են էդ տեղ Հային. իջայ, շուտ շուտ քելեցի որ թախրիր խտամ ու դառնամ: բայց Աստուած ենեց որ չտուեցի. ըմէն լէ մուրք են, Հայ մարդ չը կեր, վախեցան են թէ ես քրդի միտք ունիմ: Ա եր

Հայեր կ'եղնին, ըսի էստեղ կ'երթամ»։ Տարան զիս Ոլու կուշտ,
էստեղ լէ Հայ չը կեր։ Ոլին ըսեց թէ, «Խօսացի»։ Ես լէ ըսեցի.
«Ի՞նչ խօսամ, էստեղ Հայ չը կայ»։ Դարձաւ մէկ լէ ըսեց «Ի՞նչ
որ կայ մըջ քու սրտին ըսէ»։ Ես լէ ըսեցի. «Հայեր օրի՞ իմ
ետև կ'ոլորտին էս երեք ամիս, հըրի չի գան հուտայ, թալսրիր
չըմ իսայ, հիմայ որ իտամ; հեղ մը լէ Հայեր կ'ընկնին իմ ե-
տևէն և ընձի կը տանին Ատամբոլ»։ Դարձաւ ըսաւ «Հայ լէ
մէկ է, քուրդ լէ մէկ է, ըսէ ինչ որ կայ մըջ քու սրտին, ըզքղի
զօրովէն է տարած»։ Ես լէ ըսեցի «Օօրովէն է տարած, բայց
իմ սիրտ դարձեր է. (Էնդուր համար ըսեցի, որ հայ չկեր էստեղ,
էստեղ չեղաւ իմ Հայութեն, թըլ եղնի Ատամբոլ)։ Ես գահ
իմ մամու ձէնն եկաւ, էդոնք զդուր փակեցին, որ ներս չը մըռ-
նայ։ Ես ըսեցի «Ինքն ուր տընեն, ես իմ տընեն, թողէք թըդ
իգայ ներս»։ Տացեցին զդուր, իմ մամն եկաւ ներս, զիս լէ փա-
թութած են դրած վըր քուրսուն, որ իմ մատ թիւայ չերեայ։ Օիմ
մամն որ տեսայ, թուայ, կայնայ ըսի «Ոլլայ, բիլլայ, թալլայ, ես Հայ
եմ, հայ լէ կը մեւնեմ; ես չըմ վախենայ, ինչ կ'ենէք, երեք,
էդ երկիր լէ գինայ, աշխարհ լէ գինայ, որ մարդ է սպաննուեր,
տուն է թալնուեր, զիս տկլող տարեր են, մըկայ ես Հայ եմ, որ
հայ եմ, զիս քերթէք, սպանէք ես հայ եմ; իմ կրօնքէն չըմ
գտառնայ»։ Ես ու իմ մամ փաթաթուանք ու լացինք։ Ոլին ըսեց,
«Որ դու Հայ ես, ըզքղի քու մամուն թասլիմ կ'ենենք»։ Ե՞տ
գահ տեսանք որ Արիոն ու Աանիկ Գրիգորը ներս մտան։ Յետոյ
մէկ մէկ գրեցին, ինչ որ ընցեր էր իմ գլուխն, իմ մատն լէ զար-
կեցի վըրէն։ Յետոյ զիմ շորերն հանեցին Ապրայի մէջ Հաճի
Տայիրն ու ուրիշ Շեխեր զիս մերկացուցին։ Դուրս ելանք, զիս
ասկիյուն (վերարկու) ծածկեցին։ Էստեղ հայն ու քուրդ պըտի
զարկեն զիրար, անջախ (հազիւ) Խըլըսցուցին թալեցին ի կարմ-
րորակ։ Տարան զիս Կարմրորակ։ Էստեղ աղօթեցի որ զիս ազա-
տեց Աստուած։ Երկու օր մանցինք եկեղեցի, 13 օր մանցինք
հայերու տուն գողտուկ։ Յետոյ 80 զանդըմայ (զինուոր)։ Եկան
ըզմղի տարան մըր տուն, չորս գիշեր զիս մըր տան պահեցին,
յետոյ ելանք Ճամբայ ընկանք, մըկայ տասնըմէկ ձիաւորով Վոր-

Գիւլիստ.

q.

Գերի այդ աղջկէլ Աստուծոյ օգնութեամբ, իւրայնոց աշխատութեամբ և առաւել իւր անվեհերութեան ու հնարագիտութեան շնորհիւ ազատուեցաւ գերութեան կապանքներէն։ Արդ իւր կորուսած պատիւն ու անունը մասամբ իւրիք յետ դարձելու վրէժինդրութեամբ լեցուած՝ կերթայ բախել արդարութեան դատաստանը։ Հասաւ Տարձր՝ այլքը հիւրընկալուեցաւ այնտեղ մի քանի օր, անցաւ սարերէն և ձորերէն, գետերէն ու ծովերէն, կոնեց սև ծովու սեաւ ալիքները, հասաւ Պոլիս, ուր կայ այժմիկ իւր պատույ թշնամին, զայն ոտնակոյն առնողն, չարագործն Առուսաբէկ, նորան դատախազ լինելու։ Իրեն հետ կան և ուրիշ Աշեցի թշուառներ այր և կին մանուկ և երիտասարդ։ Լրագիրներն աւետեցին Առուսաբէկի դատաստանի կանչուելը, հրաճուեցանք «Անօրէնը պիտի դատապարտուի», որովհետեւ անհնարին է նորա փրկութիւն դատաստանի առաջ։ Այսկայն ուր է արդարութեան դատաստանը։ Այն աւաղակը, որ ամբողջ մի երկիր ոտնակոյն է արել այրել քանդել, կողոպտել սպանել չարիք չէ մնացել որ չէ գործել, հետզիւտէ արդարութեան դատապարտն՝ առաջ անմեղ կը հրաժարակուի. մեղաւորն ու պարտաւորը դարձեալ Աշեցի թշուառն է։ «Առա Ճակատագիրն է այդ թող գրէ։ Առուսաբէկը իւր դատախազներու գէմ ցարդ անպարտ է հրաժարակուել համարեա, Գիւլիզարը գեռ չկայ հրապարակի վրայ. չգիտենք թէ ի՞նչ եղաւ։

1890 *Smith* 13.

Առաջուր Անհանդեցի Ուխտաւոր Ա. Կարապետի:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԵՐ

«ԱՐԱՔՍԻ» ԽՄՐԱՋՐԱՏԱԿԱՆԸ ՎԱՃԱՌՎՈՒՄԻՆ ՀԵՏԼԵԿԱԼ ԳՐՔԵՐԸ.

Исторический памятникъ состоянія Армянской области въ эпоху ея присоединенія къ Россійской имперіи. И. Шопена. С.-Петербургъ. 1852 г. 4°. եր. 1237. գինն է Ճանապարհածախսով 6 ռուբլի.

Սորա ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄՈՐԾ. գինն է 3 ռուբլի.

Грузія и Арменія. Три части. С.-Петербургъ, 8°. 1848 г. կազմած. գինն է 4 ռուբլի.

Всеобщая исторія Степана Таронского-Асохика. перев. Эминъ. գինն է 3 ռուբլի.

Կօտարք Հայոց Հաւաքեալ և ի լոյս ածեալ ձեռամբ Պ Կոնդ վարդապետի Փիրղալէմեան: Պոլիս, 1888. եր. 232. գինն է 1 ռ. 20 կ.

Ա Էպիր և Պատկերներ. Գէորգ Չուրար. Ուստող. 1889. գինն է 1 ռ. 50 կ.

Ամենապատիւ Խորիմեան Հայրիկի հետևեալ հրատարակութիւնները.

Դրախտի ընտանիք. Պոլիս. 1887. երկ. տպ. գինն է 60 կ.

Սիրաք և Աւանուել բարի հօր Կրթական գասեր. երկ. տպագրութիւն Պոլիս. 1887. գինն է 60 կոպ.

Մարգարիտ արքայութեան երկնից. Պոլիս. 1887. գ. տպ. գինն է 40 կ.

Յիսուսի վերջին շաբաթ և խաչի ճառ. Պոլիս. երկ. տպ. գինն է 40 կ.

Մ. Մսերեանց. Մանր Ուսումնաք աղդային եկեղեցական պատմութեան. Մոսկուայ, 1874. 8°. 56 եր. գինն է 30 կ.

Պետերբուրգում հրատարակուած «Ուանկավարժանոց» ամսագրի մարտ գրքոյկը ծախումէ «Արաքսի» Խմբագրատանը: Գինն է 40 կոպէկ. Ծովանդակութիւնն է, Գալուցի ոդին, Նորկաստանի և Բիրմանիոյ հայեր, Լաղիստանի հայեր, Տրապիզոնի կրթական վիճակի առթիւ, (Օտարակրօն հաստատութիւններ Կիլիկիայում, Խոսրաքիոյ և առանձինն Պոլսոյ հայ ժողովրդեան արդին վիճակը, «Ազգարար» անդրանիկ հայ ամսագիրը և նրա խմբագիր Յարութիւն քահանայ Ը մաւոնեան. Հայաստանի աշխարհագրական և ժողովրդագրական մատենագրութիւնն: «Օախու մնումէ 10 օրինակ:



L'URBAIN

ОБЩЕСТВО СТРАХОВАНИЯ ЖИЗНИ

Высочайшее допущенное къ деятельности въ Россіи.

...ՕՒՐՓԵՎ“

Կերպարագություն ըստ կազմության

ԲԵՐՅԵՎՈՑՆ ՀՐԱՄԱՆԵԼ ՍԱՍԻՇ է ՏՐՄ ԳՈՐԾՈՒՆԵԿՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍՍՏ-
ՆՈՒՄ 1889 թ. ՅՈՒՆԻՍ 2-ի 8:

ՄԱՅՐ ԳՈՒՐԾ 12.000.000 ՔՐԱՆՔ:

ՊԱՀԵՎԾԻ ԳՈՒՄԱՐ առ 1-Ն ՊՐԵՆ. 1889 թ., գոյացելէ 60,000,000 ֆր.

ՄԵՍՆԵՏՈՐ օժանդակ-ապահովութիւն ապահովագրեալ անձանց համար Ողուսաստանում՝

- 1) ԱՅՆԴ 500,000 ռուբլի պահտուած պետական գանձատունը
 2) ՄԱՍՆԱՌՈՐ ՊԱՀԵՍՏԻ ԳՐԱՄ և
 3) ՄԱՏՎԱՌՈՐ ՊԱՀԵՍՏԻ ԱՆՁԵՒՆԱՄԽԵԼԻ ԳՐԱՄ կայսերական բան-

Կայում:

Ըսկերութեան գործունէութեան վերայ կարգուած է մշտական պետական հսկողութիւն:

Բացի վերսիշեալ ապահովութիւններից Ուրբէն ընկ. առաջարիկում է բոլոր ապահովագրեալներին հետեւալ առաւելութիւնները կենաց ապահովագրական ուրիշ ընկերութեանց դէմ:

Վթէ հիւանդութիւն կամ որկեցէ անբաղդ արկած ապահովագրեալ անձին ենթարկէ լիովին կամ ժամանակաւոր անընդունակութեան աշխատելու և սորա մասին երկու ամսուայ ընթացքում Ընկերութեան յայտարարութեան օրից սկսած, ապահովագրեալ անձը Ընկերութեան բժշկի պահանջման վերայ ստիպուած լինի մնալ անկողնում կամ տանից դուրս չգալու, այն ժամանակ աղջեմանելը (բոռ-բոռ) հապո-ցառ-ճա ժամանակաւորապէս ընդհատվում է և Ընկերութիւնը ընդունում է պրեմեաները իր հաշուին, մինչև որ սոյն վիճակը շարունակուի: Այս դեպքում ապահովագրեալը չնայելով պրեմեաների չվճարելուն, չէ կորցնում իր իրաւունքները: Բայց այս չնայելով որ ապահովագրութիւնը արած է միայն մահուան դէմ, սակայն ապահովեալ դումարի երեք մասը տրվում է նոյն ապահովագրեալ անձին, եթէ որ և է մի անբաղդ արկած կամ հիւանդութիւն առաջ բերեն աշխատելու համար մշտական անընդունակութիւն, զօր, կիսամարմնեայ կաթուած կամ լեզուի, մտաւոր ընդունակութիւնների թուլութիւն, խլացումն և մինչև անդամ ձայնի կորուստ երգիչների, դերասանների, դաստիարակների, փառաբանների կամ թէ խելագարութեան կամ այլ հիւանդութիւնների դէմ, որոնք շարունակվում են երկու կամ երեք տարի: Ա երսյիշեալ այս բոլոր դեպքերում ապահովագրեալ անձը աղտամվում է յետագայ տուրքերի վճարելուց, սակայն դիտելու է որ ապահովեալ

գումարի վերջին չորրորդ մասը պէտք է հատուցանել ապահովագրութեան ժամանակամիջոցը հասնելուն պէս:

Ա-ԵԼ ճակաման առևլելուն լիշտակուած բոլոր արտօնութեան մասին, որ մայն այս ընթացութեան է յապո-ի Ա-Կամական, իսրել է իմանալ իրայ Ա-Երանական Գ-ործակալութեան մէջ.

С.-Петербургъ, Невскій проспектъ, д. № 13.

Գ-ործակալները դժուվում են տերութեան բոլոր նշանաւոր քաղաքներում:

ՆԿԱՐԻՉ ԱՆԴՐԵԱՍ ՄՈՒՍԱԵՎԵԱՆԻ ԱՐՔԵՍՏԱՆՈՑՈՒՄ

Ընդունվում է զանազան տեսակ պարտուերներ. եկեղեցական կամ պատմական իւղաներկ պատկերներ, իւղաբերներ, գրօշակներ, արքունական զինանշաններ, խանութների վերնագիրներ, անային ներկելու գործեր, պարկէտներ զանազան տեսակի մարմարիօնի, փայտեղնի գոյներով. Նաև երկամէ արկղներ, մահճակալներ և այլ իրեղններ: Պատուերները կատարվում են փայլուն մետաղներով և պարզ զարդարանքներով ժեստի, ցինկի, փայտի, ապակու, մարմարիօնի, կոտորի և մետաքսեղնի վերայ: Ծիշեալ ձեռագործները զանազանվում են առանձին մաքրութեամբ և շքեղութեամբ:

Գաւառներից գործ ունեցողները կարող են դիմել. Баку, Живописцу Андреасу Мусаилову.

РОССИЙСЬ ЦѢНЪ

ТОРГОВАГО ДОМА

„ЦЗИНЬ-ЛУНТЬ

СОЕДИНЕНИЕ ТОВАРИЩЕСТВО КИХТИНСКИХ ЧАЕТОРГОВЦЕВЪ».

Въ С.-Петербургъ:

Контора и Главный розничный магазинъ: Невскій, № 5. Оптово-розничное и развесочное отделение: Садовая, 51. Кладовая: Гостиный дворъ, № 144.

Адресъ для писемъ: Спб., Невскій 5—для телеграммъ Спб., «Цзиньлунть».

Телефонъ № 1483.

Черные байховые чаи собственной выписки изъ Китая:

Цзинь-юй 3 р. ф.; Цзинь-чженъ 2 р. 80 к.; Цзинь-моу 2 р. 60 к.; Цзинь-бао 2 р. 40 к.; Цзинь-ли 2 р. 20 к.; Цзинь-си 2 р.—ф.; Цзинь-юанъ 2 р.—ф.; (Чай отъ 2 р. 60 к. до 3 р. въ шелковыхъ мѣшкахъ).

Черные байхи вые Кихтинские

(приобретенные отъ китайцевъ въ Маймачинѣ) разныхъ существующихъ фамилий За фунтъ отъ 2 р. 20 к. до 1 р. 48 к. или ящиками по прейс-куранту оптового склада.

Чай зеленые, жемчужные, цветочноис и др., въ шелковыхъ, лакированныхъ, крашенныхъ ящикахъ и плетушкахъ разной вместимости, а также яичные черные отъ 1 до 10 ф. въ каждомъ—продаются согласно мѣтокъ конторы на каждомъ помѣщеніи.

Чай пресованный въ Китаѣ русскими торговыми домами изъ высѣвокъ байхового, въ оптовой торговѣ такъ называемый «Кирпичный Черный» плитками: отъ 2 до 2½ фунтовъ по разчету за фунтъ 50 к; такой же, плитка въ 1 фунтъ 60 к; ½ фунта 30 к; ¼ фунта 15 к;

Чай плиготочный, пресованный въ Китаѣ русскими торговыми домами изъ отборныхъ высѣвокъ байхового чая, плитка въ ¼ фунта (раздѣлена на 8 частей) цѣною, смотря по положенію чайного рынка.

«ՀԱՅԱՍՏԱՆ», բերան հայկական հայրենասիրաց ընկերութեան, հրատարակվում է հայերէն և ֆրանսերէն լեզուներով. իւրաքանչիւր ամսի 1-ին և 15-ին: Տարեկան բաժանորդագինն է 5 ռուբլի: Խմբագրապետ Մ. Արվազլեան, քաղաքական տնօրէն. Յ. Պրուսալեան: Հասցէն. Redaction du journal «Le Haïas-dan» 8, Thanet Place, Strand, W. C. Londres.

«L'Arménie», journal politique et littéraire, paraissant le 15 de chaque mois. Rédacteur en chef Minas Tscheraz. Prix de l'abonnement (payable d'avance), un an, 10 schellings. A la rédaction, 28 Bedford Place, Russell Square Londres S. W.

«L'Arménie» քաղաքական և գրականական ամսաթերթ: Արտադրակվում է ֆրանսերէն լեզուով և անգլուով իւրաքանչիւր ամսի 15-ին, 1889 թ. Նոյեմբերի 15-ից: Խմբագրութեամբ Մ. Զերպ: Տարեկան գինն է 10 շիլլինգ (5 ռուբլի). Հասցէն. A la rédaction, 28, Bedford Place, Russiel Square, Londres, S. W.

СЪ 1-ГО ИЮЛЯ ОТКРЫВАЕТСЯ ПОЛУГОДОВАЯ ПОДПИСКА И
ПРОДОЛЖАЕТСЯ ПОДПИСКА НА 1890 ГОДЪ
на ежемѣсячный литературно-научный и политический журналъ
„СЪВЕРНЫЙ ВѢСТИНИКЪ“.

УСЛОВІЯ ПОДПИСКИ: Годовая цѣна безъ пересылки и доставки 12 р. Съ доставкою въ Петербургѣ 12 р. 50 к., съ пересылкой въ предѣлахъ Имперіи 13 р. 50 к. На полгода: 7 р. 50 к. На четверть года 4 р. За границу: 15 р.

Для подписавшихся чрезъ Главную Контору разсрочка допускается на слѣдующихъ условіяхъ: при подпіскѣ—5 р. 50 к., къ 1-му апрѣля—4 р., къ 1-му іюля и къ 1-му октября по 2 р.

Учащимся, духовенству, сельскимъ учителямъ и учительницамъ журналъ по прежнему высылается на льготныхъ условіяхъ, т. е. со скідкою по 2 р. съ годовой цѣнѣ.

ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ въ С.-Петербургѣ: въ Главной Конторѣ журнала Троицкая улица, д. № 9 и въ отдѣленіяхъ конторы—въ книжномъ магазинѣ Н. П. Карбасникова: въ С.-Петербургѣ—Литейная, д. 46, Москва—Моховая, д. Кохъ; Варшава—Новый Свѣтъ, д. № 67, а также въ книжн. магаз. И. А. Розова: въ Кіевѣ—Крестатикъ, д. Марръ, въ Одессѣ—Дерибасовская ул.; въ Казани въ книжн. магаз. А. А. Дубровина—Гостиный дворъ, № 1.—Книгопродавцамъ уступка 50 к. съ годовой цѣнѣ экземпляра.

Редакторъ А. М. Евреинова.

Издатель Б. Б. Глинскій.

ВЫСОЧАЙШЕ УТВЕРЖДЕННОЕ ВЪ 1881 Г.

СТРАХОВОЕ ОБЩЕСТВО „РОССІЯ“

въ С.-Петербургѣ, Большая Морская, № 13.

Основной и запасные капиталы 12,000,000 руб.

Страхование жизни

на особо выгодныхъ условияхъ и съ участіемъ страхователей въ прибыляхъ Общества.

Страхование отъ несчастныхъ случаевъ какъ отдельныхъ лицъ, такъ и коллективная страхование служащихъ и рабочихъ на фабрикахъ,—съ уменьшениемъ страховыхъ взносовъ вслѣдствіе зачета дивиденда.

Страхование отъ огня
движимыхъ и недвижимыхъ имуществъ всякаго рода.

Страхование транспортовъ
рѣчныхъ, сухопутныхъ и морскихъ.

Заявленія о страхованиіи принимаются и всякаго рода свѣдѣнія сообщаются въ Правлениіи въ С.-Петербургѣ (Большая Морская, № 13), въ Главныхъ Агентствахъ и во всѣхъ Агентствахъ Общества.

Страховые билеты по страхованию пассажировъ отъ несчастныхъ случаевъ во время путешествія по желѣзнымъ дорогамъ и на пароходахъ выдаются также на станціяхъ желѣзныхъ дорогъ, на пароходныхъ пристаняхъ и въ главныхъ гостинницахъ въ городахъ Российской Имперіи.

Брошюры о страхованиіи жизни и отъ несчастныхъ случаевъ выдаются и высылаются по требованію бесплатно.

ՊԵՇՏՈՆԸԿԱՆ ՑԵՇՏԵՐԵՐՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾՍԴԻՐ ՄՆԵՑՈՒՆ ՑԵՆՉԵՇՈՂՈՎՅՈՅՑ Յ. ԻԶՄԻՐԵԵՆՑ ԿՏԸԿԻՆ

Ըստ կտակի բարեյիշատակ Յովսէփայ Խղմիրեանց՝ Գյործարդիր Մնայուն Յանձնաժողովս պատիւ ունի հրաւիրել այն հեղինակներն ու բանասէրներն՝ որք ազդային գպրութեան և պատմութեան վերաբերեալ ո՞ր և է աշխատութեամբ մը կը փափաքին մասնակցիլ Աահակ-Մեսրոպեան գրական Արցանակարաշնութեան, հաճին իրենց աշխատութիւններն յուղարկել մինչև յառաջիկայ 1891 տարւոյ Յունվարի վերջ առ Ամենապատիւ Արբազան Պատրիարք Հայրն, Յանձնաժողովոյս հասցէին:

Տպագրեալ աշխատութիւնք պէտք է երեք օրինակ յուղարկուին. իսկ ձեռագիրք բնաւ յետ չեն դարձուիր:

Ե. Ակորտխողովի տպարանը, որը յայտնի է Հայ ընթերցող հասարակութեանը իր ընտիր և շքեղ հրատարակութիւններով, տպագրութեան համար ընդունում է Հայերէն զանազան հրատարակութիւններ: Տպարանը այժմ աւելցրած լինելով տառերի քանակութիւնը, այսուհետեւ կարող է աւելի փութով կատարել իրեն եղած պատուելները: Տպագրութեան պայմանների մասին գիտելու է տպարանին ուղղակի կամ թէ «Երաքսի» խմբագրութեան միջոցով:

Ենորհակալութեամբ ստացանք. Պ. Լեռն Աարգսեսնանցից «Այց Թիւբքաց Հայաստանին» Թիֆլիս, Պ. Խ. Մալումեանից «Մաքի Մշակու» Թիֆլիս, Պ. Խ. Կուսիկեանից «Մեր Ճանանչնիրը», կոմեդիա երեք արարուածով և երկու պատկերով Թիֆլիսի կեանքից». Թիֆլիս, Պ. Խ. Տօմոնից. Историческая грамматика современного армянского языка города Тифлиса, С.-Петербургъ, 1890. Պ. Խ. Քունդից. Յիշատակ ողբացեալ տիկնոջ Նեկտար դր Քունդ տսպետուհւոյ, Պոլիս:

«Երաքսի» այս զիլքը բաղկանում է 17 տպագրական թերթից, փոխանակ 12-ի և 21 նկարից փոխանակ 8-ի:

Հետևեալ անձինք «Արաքսի» ներկայ 1890 տարուայ գրքերից նուիրում են մի մի օրինակ հետևեալ աղքային հաստատութիւններին և ընկերութիւններին.
Պէտքէն բնակչութիւն.

Վերին ագուլիսեցի նուխուաբնակ Քըլոպափոք Սարդուեան թանձասէանցի կողմից. Առևխուայ տղայոց գպրոցին, Ագուլիսի տղայոց գպրոցին, և Ըվէյցարիոյ հայ ուսանողներին:

Թանձասէան Սարդուեան թանձասէանցի կողմից. Փարիզի հայ ուսանողաց գրատարանին և Ըամախու հայոց գպրոցին.

Ա. Տ. Յ.—ից. Պարսի երկսեռ գպրոցին:

Սարդէն Յովանէփէանցից. Ողնախու հայոց օրիորդական գպրոցին.

Ուշըրաբնակ Յովանէն Ներքուեանցից. Մեղրի գիւղի գպրոցին.

Արմանելից.

Ակնեն Առժէնեանցից. Արմաւիրի օրիորդաց գպրոցին.

Մասկուայցի.

Ա. Ա. Ռ.-ից Մեծ-Պարաքիլսէի գպրոցին.

Եղիք. Ժամհարըեանցներից. Ծուշու բարեգործական ընկերութեան գրատարանին, երկու օրինակ:

«Արաքս», որպէս նուէր, կուղարկենք այս պարէ հետևեալ հաստատութիւններին և ընկերութիւններին.

Ա. Խջմիածնի մատենագարանին, Առւչովաքաղաքի Մնի ընկերութեան, Առմանի հայոց գպրոցին, Գալացի հայոց գպրոցին, Ա. արնայի հայոց գպրոցին, Ա. արնայի ընկերութեան գրատարանին, Տոթուշանի աղքային գպրոցին, Գոքշանի հայոց գպրոցին, Եաշի հայ լեզուի ուսուցչին, (Օ)դեսայի քաղաքական գրատարանին, Լայրցիկի ուսանողաց, Արա-Եղիքասնդրիոյ, Իհգայի և Պորպատի հայ ուսանողներին, (Ճ)իֆլիսի Խժանագին գրատարանին, Ականու վանքի միաբանութեանը:

«Արտօնի պատրաստախանիք.

Ա. լադիկաւկազ. Ա. Խո-ին. Հանդ. օր. Եղիսաբէթ Արայեանցի բանաստեղծութիւնների մասին կ'գրենք ձեզ նամակով:

Աստրախան. Յ. Ա.-ին. Զեր բանաստեղծութեանց մասին յետոյ:

Պոլիս. Լ. Ա. Ատացանք «Զկնավաճառ» վիպակը:

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ



Plano urbano de la Ciudad de Méjico

Alonso de Herrera





Անտառ աշնան ժամանակ, նկար Արիժիցիու:


Հրատ. «Արարա» հանդիսի:





РУССКИЙ ДОМЕНЬ.





ԲԱԽՉԻՍԱՐԱԿԻ ՏԵՍԱՐԱՆԸ

Հայոց անդամական համելինի:



Geographie der indischen Hohen Landes.

Geographie der





Կոմիսարն ահապան, նկար Լազօրի:

Հրատ. ՅԱՐԱՐՈՒ ՀԱՆԳԻՒԲԻ





THE HISTORICAL LIBRARY

THE LIBRARY







Ոռելիուման աղի տեսարանը, նկար Լազօրիո:

Հրատ. և Արտադ. Հանգիսի:



Figure 1
Histogram



1000 - 1000

1000 - 1000

1000 - 1000







Շիկացեր զլուխ, նկար Առաջինինի: Հայելուն նայող երեխաներ, նկար
Լավիրեցկու:

Գլուխնկար, նկար Վակովսկիի:

Տրուտ. «Արարակ» հանդիսի:

